

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏԻԳՐԱՆ ՈՒԲԵՆԻ ԵՓՐԵՄՅԱՆ

ՀՈՒԳՈ ԳՐՈՏԻՈՒՄ. ՊԱՏՄԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՆՈՐ ՀԱՐԱՑՈՒՅՑԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ (17-ՐԴ ԴԱՐԻ ԿԵՍ – 19-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԻՉԲ)

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Է.00.02 «Համաշխարհային պատմություն ունի, միջազգային հարաբերություններ» մասնագիտություն ամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար

Գիտական ղեկավար՝
պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **ԱԼԲԵՐՏ ԱՆԴՐԱՆԻԿԻ**
ԱՏԵՓԱՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ - 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒ ԹՅՈՒՆ

ՆԵՐԱՃՈՒ ԹՅՈՒՆ	3
ԳԼ ՈՒ ԽԱՌԱՋԻՆ	21
ԴԱՐԱՇՐՋԱՆՆԵՐ ԵՎ ԱՃԽԱՐՅԱԿԱՐԳԵՐ	21
1.1 ԵՎՐՈՊԱՆ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ. ՊԵՏՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՓՈԽՅԱՐԱԲԵՐՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ	22
1.2 ԵՐԵՍՆԱՄՅԱ ՊԱՏԵՐԱՉՄԸ ԵՎ ՎԵՍՏՖԱԼ ՅԱՆ ԽԱՂԱՂՈՒ ԹՅՈՒՆԸ. ԱՐԴԻ ԱՃԽԱՐՅԱԿԱՐԳԻ ՄԵԿՆԱՐԿԸ	29
1.3 ԱՉԳ-ՊԵՏՈՒ ԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՈՒՂԻՆ	40
ԳԼ ՈՒ ԽԵՐԿՐՈՐԴ	54
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՃԽԱՐՅԱԿԱՐԳԻ ՆԱՊՈԼԵՈՆՅԱՆ ՉԱՐԱՑՈՒ ՅՅԸ ԸՆԴԴԵՄ ՄԵԾ ՏԵՐՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՄԵՐԱՃԻՈՒ ԹՅԱՆ	54
2.1 ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՃԽԱՐՅԱԿԱՐԳԻ ՆԱՊՈԼԵՈՆՅԱՆ ՉԱՐԱՑՈՒ ՅՅԸ	56
2.2 ՎԻԵՆՆԱՅԻ ԱՃԽԱՐՅԱԿԱՐԳԸ ԵՎ ՄԵԾ ՏԵՐՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԻ «ԵՎՐՈՊԱԿԱՆ ՉԱՄԵՐԱՃԻՈՒ ԹՅՈՒՆԸ»	79
ԳԼ ՈՒ ԽԵՐՐՈՐԴ	92
ՉՈՒԳՈ ԳՐՈՏԻՈՒՄ. ՏԵՍՈՒ ԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՄՈՒ ԹՅՈՒՆ	92
3.1 ՉՈՒԳՈ ԳՐՈՏԻՈՒՄՆ ԱՐԴԻ ԱՃԽԱՐՅԱԿԱՐԳԻ ՊԱՏՄՈՒ ԹՅԱՆ ՉՈԼՈԿՈՒ ՅԹՈՒՄ	93
3.2 ԱՉԳԱՅԻՆ ԻՆՔՆԻՃԻՄԱՆՈՒ ԹՅԱՆ ԳՐՈՏԻՈՒ ՍՅԱՆ ԸՄԲՈՒՆՈՒ ՄԸ ԵՎ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱԿՈՒՆՔԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՉԵՏԱԳԻԾԸ	113
3.3 ԵՎՐՈՊԱՅԻ ՄԻԱՍՆՈՒ ԹՅԱՆ ԳՐՈՏԻՈՒ ՍՅԱՆ ՏԵՍԼ ԱԿԱՆԸ	133
ԵԶՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ	149
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒ ԲՆԵՐԻ ԵՎ ՉԵՏԱՉՈՏՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ	155
ՉԱԿԵԼՎԱԾ	I
ՉԱԿԵԼՎԱԾ 1. ՉՈՒԳՈ ԳՐՈՏԻՈՒՄԻ ՉԱԿԻՐՃ ԿԵՆՍԱԳՐՈՒ ԹՅՈՒՆԸ	II
ՉԱԿԵԼՎԱԾ 2. ՉՈՒԳՈ ԳՐՈՏԻՈՒՄԻ ՈՒՂԵՐՉԸ «ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՃԽԱՐՅԻ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻՆ ԵՎ ԱՉԱՏ ՈՒ ԱՆԿԱԽԱՉԳԵՐԻՆ» (ՉԱՏՎԱԾ)	VII
ՉԱԿԵԼՎԱԾ 3. ՊԵՏՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՉԱՎԵՐԺԱԿԱՆ ԽԱՂԱՂՈՒ ԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՆՏՅԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ	IX

ՆԵՐԱՆՈՒ ԹՅՈՒՆ

Արդի աշխարհակարգի ձևավորումը մեկնարկել է հարդյունս 1648 թ. Վեստֆալյան պայմանագրերի, որով շահագրգիռ պետությունները կնքեցին ոչ թե հերթական խաղաղությունը, այլ մշակեցին համակեցության նորմերի և հարաբերությունների նոր հարացույց ու համակարգ՝ հիմնված երեք հիմնական սկզբունքների վրա՝ **պետական ինքնիշխանություն, ինքնիշխան պետությունների իրավահավասարություն և ինքնիշխան պետությունների ներքին գործերին չմիջամտելու պարտավորություն**: Վեստֆալյան պայմանագրերով ինքնիշխան պետությունները դարձան եվրոպական քաղաքական համակարգի հիմնական միավորները: Պատմական հեռանկարում Վեստֆալյան խաղաղությունը ուղենշեց *պատմական կարգի (պատմական կարգի)* անցումը **Քրիստոնեական աշխարհից** դեպի արդիական **Եվրոպա** Այս անցումը տեսականացվեց հոլանդացի խոշոր մտածող Յոհան Գրոտիուսի (1583-1645 թթ.)¹ կողմից, ով արդարացիորեն համարվում է արդի միջազգային իրավունքի և հարաբերությունների համակարգի ճարտարապետը և գաղափարախոսը:

Արևմտյան քրիստոնեական աշխարհի կառույցի ապամիասնականացման և երկու կենտրոնական հաստատությունների՝ պապականության և կայսրության խարխլման պայմաններում Գրոտիուսը զարգացրեց եվրոպական աշխարհակարգի այլ ընտրանքային հարացույցը՝ ձևակերպելով «**ինքնիշխան ազգերի հանրույթ**» հղացքը: Այն է՝ ինքնիշխան պետությունները միմյանց հարաբերություններում կապակցված են ընդհանուր համակեցական նորմերով և կազմում են մեկ միասնություն: Ըստ այդմ, մի կողմից պետությունները համարվում էին ինքնիշխան և ենթակա չէին կենտրոնական վերաբնակյալ իշխանության, մյուս կողմից՝ նրանք դուրս էին բերվում «բնական վիճակից»՝ մաս կազմելով «**մարդկության մեծ համայնքին**» (*magna communitas humani generis*): Այս կերպ առանց կենտրոնական հաստատությունների՝ պետությունները, ժողովուրդներն ու նրանց կառավարությունները կարող էին միասին կազմել «**հասարակություն և առանց կառավարության**»: Մեր

¹ Յոհան Գրոտիուսի հակիրճ կենսագրականը տե՛ս հավելված 1, Էջ II-VI:

դիտարկմամբ՝ Գրոտիուսն իր «ազգերի հասարակություն» հղացքի շրջանակներում նկատի ուներ առաջին հերթին Եվրոպան և նրա միավորման հեռանկարները: Վերջին գրեթե չորս հարյուրամյակների ընթացքում՝ ունենալով իրենց տարբեր դրսևորումները և ենթարկվելով կերպափոխությունների, Գրոտիուսյան տեսական մշակումները շարունակում են բնութագրական լինել ժամանակակից աշխարհակարգի համար:

Մինչև 1648 թվականը ևս եղել են այսպիսի միջպետական համակարգերի ստեղծման ինչպես իրական, այնպես էլ իդեալական փորձեր. Յին Յունաստանը իր քաղաք-պետություններով, հելլենիստական թագավորությունների համակարգը և այլ նման ընկերային-պատմական իրողություններ: Սկզբունքներն ամենուրեք տարբեր էին: Վեստֆալյան համակարգը մինչ այդ գոյություն ունեցող տեղական (լոկալ) աշխարհակարգերից միակն էր, որ դարձավ համաշխարհային: Այս առումով կարևորում ենք աշխարհակարգի այս շրջափոխությունում նախորդությունը, քանզի այն անկապտելիորեն կապված է մերօրյա աշխարհում ընթացող համակարգային փոխակերպությունների հետ, որոնց ապագան դեռևս տարտամ է: Ներկայումս աշխարհում ընթացող տարածաշրջանային միասնականացման և կառուցվածքային փոփոխությունները ենթադրում են փոխակերպություններ նաև **պետական ինքնիշխանություն և ազգ-պետություն** ըմբռնումներում:

Վեստֆալյան պայմանագրերով ձևավորված արդի աշխարհակարգը մի քանի կերպափոխություններ է ապրել, որոնցից յուրաքանչյուրը խոշոր ռազմական կամ սոցիալական ցնցումների հետևանք էր: Երեսնամյա պատերազմից հետո այդպիսի խոշոր ցնցում դարձան Ֆրանսիական մեծ հեղափոխությունը և Նապոլեոնյան պատերազմները: Իբրև համաշխարհային պատմության ամենավառ դերակատարներից Նապոլեոն Բոնապարտը (1769-1821 թթ.) գրավել է բազմաթիվ հետազոտողների ուշադրությունը: Նրա անձին և ժամանակաշրջանին վերաբերվող աշխատություններն ու հետազոտությունները բազմաթիվ են և բազմազան: Ուսումնասիրությունների մի մեծ հատված վերաբերվում է Նապոլեոնյան ճակատամարտերին, պատերազմներին և նվաճումներին:

Մեկ այլ նշանակալի հատված նվիրված է նրա անձին. ռազմական-քաղաքական գործիչ և կայսր: Այդուհանդերձ քիչ ուշադրություն է դարձված, մեր կարծիքով, ժամանակաշրջանի ամենաառանցքային խնդիրներից մեկի՝ **Եվրոպայի միասնականացման նապրլեոնյան քաղաքականությունը և եվրոպական միության մասին Նապրլեոնի ըմբռնումներին**: Համեմատաբար նվազ ուշադրություն է արժանացել նաև նապրլեոնյան ժամանակաշրջանի մեկ այլ կենտրոնական խնդիր՝ Ֆրանսիական հեղափոխության արտահանման միջոցով Եվրոպայի ընդհանուր կերպափոխության, հասարակական նորացման և արդիականացման հարցը: Հանգամանք, որը մեր համոզմամբ անհրաժեշտ էր **Եվրոպայի միասնականացման և եվրոպական ազգերի ընտանիքի գաղափարների** ձևավորման տեսանկյունից: Նապրլեոնյան ժամանակաշրջանում էր, որ Ֆրանսիական հեղափոխությունից ծնված նոր քաղաքական հանրույթը փորձեց տարածել առաջնթացի և քաղաքակրթության մասին իր իդեալները եվրոպական աշխարհամասի տարբեր հատվածներում: Նապրլեոնի բարեփոխումները եվրոպական մասշտաբով դարձան արդիության խոշորագույն խթանը: Այլ որե՛ն՝ նապրլեոնյան ժամանակաշրջանը Եվրոպայում նշանավորեց անցումը հին կարգերից արդիականություն: Քաղաքական փոփոխությունները և նոր հարացույցի վարչական արդիականացումը «Ֆրանսիական ուղիով» Եվրոպայի կերպափոխության նախադրյալներից էր: Ֆրանսիացիների կայսրը ձգտում էր ստեղծել Ֆրանսիայի պատկերով նորացված և Ֆրանսիացիների գերիշխանության շրջանակներում միասնականացած Եվրոպա: Եվրոպական տարբեր երկրներում հաստատված նապրլեոնյան վարչախմբերի խնդիրն էր համոզել իրենց կառավարման տակ հայտնված ժողովուրդներին միասնականացման և ընդօրինակելի ասոցիացիայի օգուտներն ու առավելությունները Ֆրանսիական հարացույցի գերազանցության ցուցադրմամբ: Այս գործընթացը բացառությամբ առանձին երկրների (Իսպանիա, Պորտուգալիա և Նեապոլ) հիմնականում խաղաղ էր ընթանում՝ կախված ժողովուրդների ակտիվ փոխգործակցության կամ համագործակցության աստիճանից: Ավելին, նապրլեոնյան ժամանակաշրջանը Եվրոպայում կարևորագույն նշանակություն ունեցավ նաև ազգերի ինքնորոշման իրավունքի գաղափարական

ճանաչման տեսանկյունից: Ըստ այդմ, փորձ է կատարվում հստակ համադրությամբ մեկտեղել ֆրանսիացիների գերիշխանության և ֆրանսիական հարացույցի կիրարկման փորձառությունները ողջ եվրոպայում:

Ներկա աշխատանքում փորձ է արվել ուրվագծել քաղաքական ինքնորոշման գաղափարի և եվրոպական աշխարհակարգի հարացույցների պատմությունը Վեստֆալյան պայմանագրերից ընդհուպ ՅՅԷԼ սինկիի եզրափակչ ակտը: Տեսական հիմք ենք ընդունել աշխարհակարգի վերաբերյալ Յոն Գրոտիուսի հղացքները, որոնք հանդես եկան իբրև նոր աշխարհակարգի հարացույց: Մեր մեկնակետը **պատմական կարգ** (historical order) հասկացությունն է, որը պարառում է ինչպես ներհասարակական, այնպես էլ միջհասարակական հարաբերությունների համալիրը:

Ատենախոսության **ժամանակագրական շրջանակն** ընդգրկում է երեք տարբեր պատմական հարթություններ: Նախ քննության ենք առել միջնադարյան եվրոպայի *պատմական կարգից* անցումը արդի ինքնիշխան պետությունների Վեստֆալյան համակարգին: Ապա ուսումնասիրել ենք եվրոպական աշխարհակարգի Նապոլեոնյան հարացույցի ձևավորման հիմնական միտումները և դրանց կատարումը Վիեննայի եզրափակիչ կարգավորումներով: Այնուհետև համակողմանիորեն ուսումնասիրել և վեր ենք լուծել Գրոտիուսի տեսությունը եվրոպայի արդի պատմության համատեքստում: 20-րդ դարում եվրոպական *պատմական կարգի* համաշխարհայնացմանը և հետագա կերպափոխումներին անդրադարձել ենք գիտաթեման ամբողջացնելու նպատակով:

Ըստ նշված շրջափոխների՝ որոշարկվել է **հետազոտության առարկան**, որի շրջանակներում ուսումնասիրվել են նոր ձևավորվող աշխարհակարգի հիմնարար սկզբունքներն ու հարացույցերը, որոնց հիմքով համակողմանիորեն լուսաբանվել են Գրոտիուսի տեսության շրջանակները:

Ատենախոսության **նպատակն է՝ ինքնիշխան ազգերի հասարակության** Գրոտիուսյան հղացքի համակարգային կիրարկման Վեստֆալյան, Նապոլեոնյան և Վիեննայի փորձի համալիր վերլուծությամբ ուսումնասիրել եվրոպայի միասնականացման

տեսլականները, ներկայացնել ազգային ինքնիշխանության և ազգերի ինքնորոշման իրավունքի ձևավորումը և զարգացումը: Ըստ այդմ՝ աշխատանքում առաջ են քաշվել հետևյալ **խնդիրները**.

- դիտարկել ինքնիշխանության փոխանցման գործընթացը վերազգային հաստատության ներքինը՝ պապականությանը և կայսրությանը, դեպի ներքև և անդրազգային ֆեոդալական ու քաղաքացիական միավորներից դեպի վերև՝ պետության ներքին,
- ներկայացնել Եվրոպայում իրավահավասար և ինքնիշխան պետության ներքին համագոյակցության Վեստֆալյան համակարգը,
- ուսումնասիրել *քաղաքական համայնքների ինքնորոշման իրավունքի* ճանաչման ակտերը Վեստֆալյան խաղաղությանամբ ու դրանց պատմական նշանակությունը,
- վերլուծել և մեկնաբանել *Եվրոպական հավասարակշռության* հղացքը և *պետության ներքին ինքնորոշման իրավունքը* (ըստ Ուտրեխտյան խաղաղության),
- համեմատականորեն վերլուծել *բացարձակապետության* և *ազգ-պետության* ձևավորման հիմնական փուլերը և ուսավորական մտքի համատեքստում,
- գնահատել Յուզո Գրոտիուսի գաղափարների ազդեցությունը և ուսավորության դարաշրջանի մտածողների վրա,
- գնահատել Ֆրանսիական մեծ հեղափոխության և Նապոլեոնի դերը *ազգերի ինքնորոշման իրավունքի* և ազգային ինքնիշխանության գաղափարների տարածման ու ամրապնդման գործում,
- վերհանել և ուսումնասիրել *Եվրոպական աշխարհակարգի Նապոլեոնյան հարացույցը* և *Եվրոպայի միասնականացման Նապոլեոնի տեսլականը*,
- համակողմանիորեն հետազոտել *միջազգային հանրության* կամ *ինքնիշխան ազգերի հանրույթի* և Եվրոպայի միության մասին Գրոտիուսի գաղափարները,
- ցույց տալ, որ *ազգերի ինքնորոշման իրավունքի* գաղափարն առկա էր Գրոտիուսի մոտ և ուրվագծել ու մեկնաբանել ինքնորոշման իրավունքի ձևավորման պատմությունը մինչև 1975 թ. ՅԵԼՍԻԿԻԻ եզրափակիչ ակտ:

Նման մոտեցումը պայմանավորել է անտենախոսության **կառուցվածքը**: Այն բաղկացած է Ներածությունից, երեք գլուխներից (որոնցից առաջինը բաղկացած է երեք, երկրորդը՝ երկու, երրորդը՝ երեք ենթագլուխներից), Եզրակացությունից, Օգտագործված սկզբնաղբյուրների և հետազոտությունների ցանկից, Հավելվածներից: Առանձին ուշադրություն է հատկացվել Հուլիոս Գրոտիուսի տեսական մտքին և նոր աշխարհակարգի հղացքին: Այնուհետև, մտածողի առաջադրած հղացքների, մեթոդների, հայեցակարգերի ու հարացույցերի կիրարկմամբ նորլույսի ներքո ենք ներկայացրել *ազգերի կամ կազմակերպված քաղաքական համայնքների* ինքնիշխանություն և ինքնորոշման հիմնախնդիրը:

«Ժողովուրդների ինքնորոշման» իրավունքը հաճախ է գործածվում մ Արցախյան (Լեռնային Ղարաբաղի) հակամարտության կապակցությամբ: Բոլոր միջազգային հիմնարար փաստաթղթերում տարածքային ամբողջականության սկզբունքը ձևակերպվել է արտաքին ազդեցության ներքին ապահովագրման համար և չի հակասում ազգերի ինքնորոշման իրավունքին կամ սահմանափակում այն: Բացի այդ Արցախի Հանրապետությունը անկախության տարիների ընթացքում կայացել է որպես փաստացի (de facto) պետություն: Սակայն աշխարհաքաղաքական նպատակահարմարությունից ելնելով՝ միջազգային հանրության առաջատար պետությունները երբեմն թելադրում են երկակի ստանդարտներ: Այս կերպ ճանաչվեց Կոստվոյի ինքնորոշումը, իսկ Արցախի ժողովրդի ինքնորոշման փաստի ճանաչումը դեռևս մնում է առկախված: Մեր դիտարկմամբ՝ Արցախյան հիմնահարցը ոչ միայն միջազգային հարաբերությունների և դիվանագիտության, այլ և համաաշխարհային պատմության հարց է: Թերևս սառու սուսաստիքման միանգամայն այլ առարկա է և դուրս է սույն աշխատանքի նպատակային շրջանակներից:

Անտենախոսությունը գրվել է պատմաքննական և պատմահամարական վերլուծության **մեթոդների** կիրառմամբ՝ դրանց հաղորդելով մեկնաբանական բնույթ: Պատմաքննական մեթոդի դիտանկյունից ներկայացվում են խնդրո առարկայի վերաբերյալ գոյություն ունեցող հարացույցերը և հայեցակարգերը որպես տեսական նշանակություն ունեցող գիտախնդիրներ: Այս ամենը մեզ թույլ է տվել տրամաբանական քննության ենթարկել աշխարհակարգի հիմնական հաստատությունների, հիմնարար սկզբունքների, հղացքների և տեսական ավանդույթների ձևավորման ու կիրարկման գործընթացը, ինչպես նաև արդի պատմության հոլովույթում համակողմանի քննության ենթարկել աշխարհակարգի վերաբերյալ Հուլիոս Գրոտիուսի ձևակերպած հղացքը և տեսական ավանդույթը: Իսկ

գիտահամադրական մեթոդի դիտարկմամբ հնարավոր է դառնում ի մի բերել գիտաթեմայի պատմական մեկնաբանության ընդհանրական սկզբունքներն ու արդյունքները: Այս համատեքստում խնդրո առարկա հիմնարար հղացքների և հարացույցերի ուսումնասիրությունը կառուցվում է Գրոտիուսի և 16-19-րդ դարերի եվրոպական այլ մտածողների ըմբռնումների վրա՝ «քրիստոնյա ժողովուրդների հանրապետություն», «մարդկության մեծ համայնք», «պետական ինքնիշխանություն», «ինքնիշխան հավասարություն», «եվրոպական հավասարակշռություն», «եվրոպական համակարգ», «միապետների սենատ», «հավերժական խաղաղություն», «ազգային ինքնիշխանություն», «ինքնիշխան ազգերի համագործակցություն», «եվրոպայի միասնականացում», «ազգերի հանրույթ», «հանրային դաշինք», «ազգերի ինքնորոշում» և այլն:

Աշխատանքի ընթացքում կարևորվել է նաև **միջգիտակարգային մոտեցումը**, որի արդյունքում մի շարք երևույթներ դիտարկվել են նաև միջազգային հարաբերությունների, աշխարհաքաղաքականության, քաղաքագիտության, քաղաքական տնտեսագիտության, իմաստասիրության, ընկերաբանության և միջազգային իրավունքի հարթություններում: Արդյունքում միջազգային հարաբերությունները դիտարկում ենք իբրև համաշխարհային պատմության կայացման արդյունական միջավայր:

Ատենախոսությունը գրված է հայերեն, անգլերեն, ֆրանսերեն և ռուսերեն լեզուներով հրատարակված տարաբնույթ սկզբնաղբյուրների և գիտական հետազոտությունների հիման վրա: Ներկա ատենախոսության համար առանցքային **սկզբնաղբյուրների** շարքում առաջին հերթին հարկ է առանձնացնել Յուրգո Գրոտիուսի աշխատությունները: Յեղիսակի հիմնարար աշխատությունը՝ «Պատերազմի և խաղաղության իրավունքը» (De Jure Belli ac Pacis, 1625)², հրատարակվել է 1625 թ. Փարիզում: Գրքի հրատարակումը ազգերի իրավունքի և գաղափարների համաշխարհային պատմության մեջ

² **Grotius H.** (1625), *The Rights of War and Peace, Including The Law of Nature and of Nations*. Translated from the original Latin of Grotius with notes and illustrations by A. C. Campbell, with an introduction by David J. Hill, Adamant Media Corporation, Elibron Classics, 2005 (This Elibron Classics Replica Edition is an unabridged facsimile of the edition - Washington & London: M. Walter Dunne, 1901).

նշանավորեց նոր դարաշրջան՝ ստեղծելով համընդհանրական սկզբունքների համակարգ և ուրվագծելով ինքնիշխան տիրակալների ու ազգերի խաղաղ համակեցության և ընդհանուր համաձայնության ուղիները: «Պատերազմի և խաղաղության իրավունքը» գրվեց Երեսնամյա պատերազմի ընթացքում, երբ «Քրիստոնեական աշխարհի» ապամիասնականացումն այլևս իրողությունն էր և չկար վերագրվել իշխանություն: Գրոտիուսը ելքը տեսավ համակեցության ընդհանուր սկզբունքների շուրջ փոխզիջման մեջ: Համաեվրոպական պատերազմի և ընդհանուր ավերման պայմաններում Գրոտիուսը նկատեց, որ Եվրոպան շարունակում է պահպանել մեկ ընդհանուր կապ, իր նախկին միության հետքը՝ «մարդկային միտքը»:

Հետազոտողները ընդգծում են Գրոտիուսի գաղափարների բազմիմաստությունը: Մի շարք հետազոտողներ «Պատերազմի և խաղաղության իրավունքը» աշխատությունը համարում են դժվար ուսումնասիրվող և բարդ գիրք: Այստեղ դժվար է գտնել հստակ ձևակերպումներ: Այն միջազգային իրավունքի համակարգման առաջին համապարփակ փորձերից էր՝ լինելով իրավական հանրագիտարան, այն նաև պարունակում էր օրինակներ անտիկ դարաշրջանի պատմությունից և մեջբերումներ հունահռոմեական հեղինակներից: Գրոտիուսի համար քաղաքականության մեջ բարոյական որակը կախված է անհատից, ով պատասխանատու է հասարակության առջև: Ի հակադրություն դրա՝ լուսավորականության դարաշրջանի նշանավոր մտածողների մոտ, այդ թվում Կանտի և Ռուսոյի, շեշտվում են անհատական պարտականությունները՝ երկրորդված հասարակության ընդհանուր կամքին³:

Սույն ատենախոսության համար իբրև սկզբնաղբյուր Գրոտիուսի աշխատություններից առանձնակի արժեք ունի նաև «Ազատ ծով» (Mare Liberum, 1608)⁴ տրամախոսությունը⁵: Աշխատության

³ **Wight M.**, Four Seminal Thinkers in International Theory: Machiavelli, Grotius, Kant, and Mazzini. Edited by Gabriele Wight and Brian Porter; Foreword by Sir Michael Howard, C.H. Introduction by David S. Yost. Oxford and New York: Oxford University Press, 2005, p. 53.

⁴ **Grotius H.** (1608), The Freedom of the Seas or the Right Which Belongs to the Dutch to Take Part in the East Indian Trade. Translated with A Revision of the Latin Text of 1688 by Ralph Van Deman Magoffin, Edited with an

մեջ հեղինակը պաշտպանում և հիմնավորում էր Յուլիանոսյան Արևելահնդկական ընկերության առևտրային իրավունքները Իսպանիայի ու Նիդերլանդների միջև բանակցություններում և 1609 թ. Անտվերպենի Տասներկուամյա զինատարարի պայմանագրի կնքման ընդամաք: «Ազատ ծով» աշխատությունը դարձավ Գրոտիուսի կողմից առաջին համակարգված տրակտատը ազգերի իրավունքի վերաբերյալ:

Պետական և ազգային ինքնիշխանության, հարատև խաղաղության, ազգերի համագործակցության, եվրոպայի միասնականացման, ազգերի ինքնորոշման և ժողովրդավարական խաղաղության հղացքների ուսումնասիրման գործում որպես կարևոր սկզբնաղբյուրներ են ծառայել 16-19-րդ դարերի եվրոպական հեղինակների՝ Նիկոլո Մաքիավելիի, Ուիլիամ Փենի, Ջոն Լոկի, Շառլ Մոնտեսքյոյի, Ժան Ժակ Ռուսսոյի, Իմմանուել Կանտի, Էդմոնդ Բըրքի և Ջուզեպե Մաձինիի աշխատությունները⁶:

Օգտագործված սկզբնաղբյուրների հաջորդարժեքավոր խումբն են կազմում միջազգային համակարգաստեղծ պայմանագրերի տեքստերը: Այդպիսիք են Վեստֆալյան խաղաղության պայմանագրերը, Ուտրեխտյան խաղաղության պայմանագրերը, Վիեննայի վեհաժողովի եզրափակիչ ակտը, Ազգերի լիգայի և Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությունները,

Introductory Note by James Brown Scott. New York: Oxford University Press, 1916 (This is version 1.0 of the Frellock Book Series edition, Oslo: 2008).

⁵ Ի սկզբանե այն մտածողի «Մեկնաբանություն ավարի իրավունքի մասին» (*De Jure Praedae Commentarius*, 1604) ծավալուն աշխատության հատվածն էր, որը չհրատարակվեց իր կենդանության օրոք: Այս ձեռագիր աշխատությունը հայտնաբերվեց միայն 1864 թ. աճուրդի ժամանակ: Գրոտիուսի կենդանության օրոք իբրև առանձին գիրք հրատարակվեց և լայնորեն շրջանառության մեջ մտավ միայն այս աշխատության 12-րդ գլուխը՝ վերնագրված «Ազատ ծով»: **Grotius H.**, *Commentary on the Law of Prize and Booty*. Edited and with an Introduction by Martine Julia van Ittersum (The text of this edition is a reprint of the translation of *De Jure Praedae* by Gwladys L. Williams originally published by the Carnegie Endowment for International Peace: Oxford: Clarendon Press, 1950). Indianapolis: Liberty Fund, Inc., 2006.

⁶ **Machiavelli N.** (1513), *The Prince*. Translated with an introduction by Harvey C. Mansfield. - 2nd ed. Chicago and London: The University of Chicago Press, 1998. **Penn W.** (1693), *An Essay Towards the Present and Future Peace of Europe*. Washington: The American peace society, 1912. **Locke J.**, *Two Treatises of Government*. Edited by Thomas Hollis. London: A. Millar et al., 1764. **Montesquieu Ch. S.** (1748), *The Spirit of Laws*. Translated by Thomas Nugent (1752). Kitchener: Batoche Books, 2001. **Rousseau J. J.** (1762), *On the Social Contract*. Translated by G. D. H. Cole. New York: Dover Publications, 2003. **Rousseau J. J.**, *Extrait du Projet de Paix perpétuelle de Monsieur l'Abbé de Saint-Pierre*. Geneve, 1761. **Kant I.** (1795), *Toward Perpetual Peace and Other Writings on Politics, Peace, and History*. Edited and with an introduction by Pauline Kleingeld; translated by David L. Colclasure. New Haven and London: Yale University Press, 2006. **Burke E.**, *Select Works of Edmund Burke: a new imprint of the Payne edition / foreword and biographical note by Francis Canavan*. Vols. 1- 3 originally published: Oxford: Clarendon Press, 1874-1878. This edition is published - Indianapolis: Liberty Fund, Inc., 1999. **Mazzini G.**, *A Cosmopolitanism of Nations: Giuseppe Mazzini's Writings on Democracy, Nation Building, and International Relations (1805–1872)*. Edited and with an introduction by Stefano Recchia and Nadia Urbinati; translations by Stefano Recchia. Princeton and Oxford: Princeton University Press, 2009.

Յեւսիսկիի եզրափակիչ ակտը⁷: Բացի այդ իբրև սկզբնաղբյուրներ կարևոր նշանակություն ունենաւանձին դարակազմիկ հռչակագրեր (1776 թ. «ԱՄՆ-ի անկախության հռչակագիր», 1789 թ. Ֆրանսիական «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիր»)՝, ինչպես նաև պետական այրերի (կարդինալ Ռիշելիե, Ն. Բոնապարտ, Վ. Վիլսոն) գրույթներ, հրամանագրեր և ելույթներ⁸:

Ուսումնասիրվող հիմնախնդրի վերաբերյալ օգտագործված նյութերի մյուս մասը **գիտական հետազոտություններն** են՝ ինչպես գիտախնդրի հիմնական, այնպես էլ նրա առանձին կողմերին վերաբերվող: Յուրաքանչյուր հրավաքաղաքական և տեսափրավական մտքի ուսումնասիրության համար առանձնակի կարևորություն ունեն Յեւի Ռուլի և Մարտին Ուայթի աշխատությունները¹⁰: Յեւի Ռուլը համակարգային մեկնաբանության է ենթարկում Գրոտիուսի գաղափարները, միջազգային հանրության և աշխարհակարգի

⁷ **Treaty of Westphalia: Peace Treaty between the Holy Roman Emperor and the King of France and their respective Allies.** Yale Law School, Lillian Goldman Law Library, the Avalon Project: Documents in Law, History and Diplomacy. URL: http://avalon.law.yale.edu/17th_century/westphal.asp (28.05.2015). **A Collection of Treaties between Great Britain and Other Powers.** Edited by Chalmers G., London: J. Stockdale, 1790. **The Great European Treaties of the Nineteenth Century.** Edited by Oakes A. and Mowat R. B., With An Introduction by H. Erle Richards. Oxford: The Clarendon Press, 1930. **The Covenant of the League of Nations** (Including Amendments adopted to December, 1924). Yale Law School, Lillian Goldman Law Library, The Avalon Project: Documents in Law, History and Diplomacy. URL: http://avalon.law.yale.edu/20th_century/leagcov.asp (08.01.2016). **Charter of the United Nations and Statute of the International Court of Justice.** San Francisco, 1945. **Եվրոպայի ու մանվտանգության և համագործակցության խորհրդաժողով. Եզրափակիչ ակտ, Յեւսիսկի 1975:** Յայ երեւն թարգմանություն նույնականությունը հաստատվել է ՅՅ արտգործնախարարության կողմից: Երևան, ՅՅ Արտաքին գործերի նախարարություն, 2005:

⁸ **The Text of the Declaration of Independence,** Philadelphia: July 4, 1776. A Century of Lawmaking for a New Nation: U.S. Congressional Documents and Debates, 1774 - 1875, Journals of the Continental Congress, Vol.5, pp. 510-515. **Déclaration des Droits de l'Homme et du Citoyen de 1789.** Conseil Constitutionnel de la République Française, Site officiel URL: <http://www.conseil-constitutionnel.fr/conseil-constitutionnel/francais/la-constitution/la-constitution-du-4-octobre-1958/declaration-des-droits-de-l-homme-et-du-citoyen-de-1789.5076.html> (02.03.2016).

⁹ **Richelieu,** Political Testament (extracts from Louis Andre's edition, Paris, 1947). In *The Thirty Years' War: Problems of Motive, Extent, and Effect.* Problems in European Civilization, Edited with an Introduction by Theodore K. Rabb, Harvard University. Boston: D. C. Heath & Company, 1964, pp. 76-80. **Acte de médiation** fait par le Premier Consul de la République française, entre les partis qui divisent la Suisse. Paris, 19 février 1803, 112 p. **Acte additonal aux Constitutions de l'Empire du 22 avril 1815.** Conseil Constitutionnel de la République Française, Site officiel URL: <http://www.conseil-constitutionnel.fr/conseil-constitutionnel/english/la-constitution/les-constitutions-de-la-france/acte-additonal-aux-constitutions-de-l-empire-du-22-avril-1815.5103.html> (20.19.2015). **Décret - 11283. Camp impérial de Berlin, 21 novembre 1806.** Correspondance de Napoléon I^{er}. Tome 13 / publiée par ordre de l'Empereur Napoléon III. Paris: H. Plon et J. Dumaine, 1863, pp. 555-557. **Wilson W.,** Address of the President of the United States Delivered at a Joint Session of the Two Houses of Congress, April 2, 1917. Washington: Government Printing Office, 1917. **Wilson W.,** Address of the President of the United States Delivered at a Joint Session of the Two Houses of Congress, January 8, 1918. Washington: Government Printing Office, 1918.

¹⁰ **Bull H.** (1977), *The Anarchical Society: A Study of Order in World Politics*, 3rd edition (New York: Palgrave, 2002). **Wight M.,** *International Theory: the Three Traditions.* Ed. by Gabriele Wight and Brian Porter. Leicester: Leicester University Press, 1994. **Bull H., Kingsbury B., Roberts A.** (eds), *Hugo Grotius and International Relations.* Oxford: Oxford University Press, 1992. **Wight M.,** *Four Seminal Thinkers in International Theory: Machiavelli, Grotius, Kant, and Mazzini.* Edited by Gabriele Wight and Brian Porter; Foreword by Sir Michael Howard, C.H. Introduction by David S. Yost. Oxford and New York: Oxford University Press, 2005.

հիմնախնդիրներն ու հաստատությունները: Գրոտիուսի գործունեության, քաղաքական իմաստասիրության և տեսաիրավական մտքի ուսումնասիրության տեսանկյունից կարևոր տեղ ունեն նաև Ջեֆրի Ռենեի, Ռիչարդ Թաքի, Յամիլթոն Վրիլանդ Կրտսերի, Էրիկ Ուիլսոնի, Ջեյմս Ջոնսոնի, Բիթ Ջենի, Էդվարդ Քինի և Ալեքսանդր Վենտի ուսումնասիրությունները¹¹:

Երեսնամյա պատերազմի սկիզբը, ընթացքն ու ավարտը հանգամանորեն և համակողմանիորեն ներկայացված է բրիտանացի պատմագետ Ջեֆրի Փարկերի կողմից խմբագրված աշխատությունում, որը գրվել է Եվրոպական տարբեր երկրներ ներկայացնող տվյալ ժամանակաշրջանի պատմության առաջատար մի խումբ մասնագետների ջանքերով¹²: Արդյունքում ստացվել է տվյալ ժամանակաշրջանի Եվրոպայի պատմության հիմնարար վերլուծված տեքստ: Երեսնամյա պատերազմի թեմայի տեսանկյունից կարևոր են նաև Ռիչարդ Բաննի և Ջերիմի Բլեքի աշխատությունները, ինչպես նաև Ջոն Քոլպերի խմբագրած Քեմբրիջի համալսարանի հրատարակության արդի պատմության 4-րդ հատորը: Յարկ է առանձնացնել նաև Օլաֆ Ասբախի և Փիթր Շոյոդերի խմբագրած 17-րդ դարի Եվրոպայում պատերազմի, պետության և միջազգային իրավունքի վերաբերյալ հետազոտությունների ժողովածուն¹³:

Եվրոպայում բացարձակապետությունների առաջացման վերաբերյալ առանցքային ուսումնասիրությունն է բրիտանացի

¹¹ **Jeffery R.**, Hugo Grotius in International Thought. New York: Palgrave Macmillan, 2006. **Tuck R.**, The Rights of War and Peace: Political Thought and the International Order from Grotius to Kant. Oxford and New York: Oxford University Press, 2002. **Tuck R.**, Natural Rights Theories: Their Origin and Development. Cambridge and New York: Cambridge University Press, 1981. **Vreeland H. Jr.**, Hugo Grotius, Diplomatist. The American Journal of International Law, Vol. 11, No. 3 (American Society of International Law, Jul., 1917). **Wilson E.**, Mare Liberum and Opinio Juris: A Grotian Reading of the North Sea Continental Shelf Cases. *Monash University Law Review* (Vol. 28, No 2, 2002). **Johnson J. T.**, “Grotius and His Impact: The Westphalian Settlement, the Idea of the “law of Nations,” and the Emergence of the Territorial Idea of Sovereignty”. *Sovereignty: Moral and Historical Perspectives*. Washington: Georgetown University Press, 2014. **Jahn B.** (ed.), *Classical Theory in International Relations*, Cambridge, New York, Melbourne: Cambridge University Press, 2006. **Keene Ed.**, *Beyond the Anarchical Society: Grotius, Colonialism and Order in World Politics*. Cambridge: Cambridge University Press, 2002. **Wendt A.**, *Social Theory of International Politics*. Cambridge, New York, Melbourne: Cambridge University Press, 1999.

¹² **Parker G.** (ed.), *The Thirty Years’ War*, Second edition. London and New York: Routledge, Taylor & Francis e-Library, 2006.

¹³ **Bonney R.**, *The Thirty Years’ War 1618-1648*. Oxford: Osprey Publishing, 2002. **Black J.** (ed.), *War in the Early Modern World 1450-1815*. London and New York: Routledge, Taylor & Francis, 2005. **Cooper J. P.** (ed.), *The Decline of Spain and the Thirty Years War 1609-48/59: The New Cambridge Modern History Vol.IV*. Cambridge: Cambridge University Press, 1970. **Asbach O. and Schröder P.** (ed.), *War, the State, and International Law in Seventeenth-Century Europe*. Farnham, Burlington: Ashgate Publishing, 2010.

պատմագետ Փերրի Անդերսոնի աշխատությանը¹⁴: Վեստֆալյան խաղաղության և Ֆրանսիական հեղափոխության միջև ընկած ժամանակաշրջանի եվրոպայի ընդհանուր պատմությանը համակողմանիորեն ներկայացված է Ջեֆֆրի Թեթլերի ծավալուն աշխատության մեջ¹⁵: Այստեղ հեղինակը համակարգված ներկայացնում է արդի եվրոպայի ձևավորման ընթացքը՝ հատուկ ուշադրություն դարձնելով այնպիսի կարևոր հիմնախնդիրների ինչպիսիք են վաղ կապիտալիզմը, վաղ արդյունաբերական հեղափոխությունը, անդրծովյան առևտուրը, կրոնական զարգացումները, նոր գաղափարները, գիտությունը և տեխնոլոգիաները, իշխանության հիմնախնդիրներն ու բացարձակապետությունը, պատերազմները և դիվանագիտությունը: Վաղ արդի դարաշրջանի եվրոպայում կատարվող խորքային տնտեսական և ընկերային փոփոխությունների, արդի կապիտալիզմի ձևավորման չծրագրված ու չհամակարգվող գործընթացի վրա բողոքական բարոյագիտության ազդեցության, ինչպես նաև իշխանության և քաղաքական համակարգերի օրինականության տեսանկյանի վերաբերյալ առանցքային նշանակություն ունեն Մաքս Վեբերի աշխատությունները¹⁶:

Վեստֆալյան համակարգի կայացման համակարգային և տեսական հիմնախնդիրների տեսանկյունից կարևորում ենք Ջերիմի Լարկինսի աշխատությանը¹⁷: Տեսականացնելով Վեստֆալյան համակարգի բաղադրիչ «տարածքային սահմանագծված պետություն» հղացքը՝ հեղինակն առանձնացնում է երեք հիմնախնդիրներ՝ հասարակական-քաղաքական խոսույթ, մշակույթ և պատմություն: Լարկինսը նաև վերլուծում է միջնադարյան եվրոպական աշխարհակարգի՝ Քրիստոնեական աշխարհի (Christendom) աստիճանակարգային բնույթը՝ ռեֆորմացիան ներկայացնելով որպես հակասաստիճանակարգային գործընթաց: Վեստֆալյան և

¹⁴ **Anderson P. R.**, Lineages of the Absolutist State. London and New York: Verso, 1979.

¹⁵ **Treasure G.**, The Making of Modern Europe, 1648–1780. London and New York: Routledge, Taylor & Francis e-Library, 2003.

¹⁶ **Weber M.**, The Protestant Ethic and the Spirit of Capitalism; Translated by Talcott Parsons with an introduction by Anthony Giddens; London and New York: Routledge Taylor & Francis e-Library, 2005. **Weber M.** (1922), Economy and Society: An Outline of Interpretive Sociology. Edited and translated by Guenther Roth and Claus Wittich. Los Angeles and London: University of California Press, 1978.

¹⁷ **Larkins J.**, From Hierarchy to Anarchy: Territory and Politics before Westphalia. New York: Palgrave Macmillan, 2010.

Վիեննայի խորհրդաժողովների միջև ընկած ժամանակաշրջանում մեծ տերությունների վերելքի, նրանց քաղաքականության ու դերի վերաբերյալ հետազոտություններից կարևորում ենք Դերեք Մըկքեյի և Յեմիշ Սքոթի ուսումնասիրությունը¹⁸: 1500-2000 թթ. շուրջ 500-ամյա ժամանակահատվածի ռազմական հակամարտությունների և տնտեսական փոփոխությունների համաշխարհային պատմության, ինչպես նաև մեծ տերությունների վերելքի և անկման հարցերի վերաբերյալ առանցքային ուսումնասիրությունն է բրիտանացի նշանավոր պատմագետ Փոլ Քենեդիի հիմնարար աշխատությունը¹⁹:

Միջկրթանքային և միջհարացույցային համընկնումը Վեստֆալյան խաղաղության նշանակության շուրջ պատմական լեգիտիմությունն է հաղորդում Վեստֆալյան համակարգի վերաբերյալ լայնորեն ընդունված պատումին: Այդուհանդերձ, ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ համակողմանի աշխարհայացի ձևավորման տեսանկյունից կարևորում ենք քննադատական տեսությունները: Վեստֆալյան համակարգի վերաբերյալ քննադատական ուսումնասիրություններից հատկապես առանձնանում է բրիտանացի տեսաբան Բեննո Թեշքեի աշխատությունը՝ 17-18-րդ դարերում եվրոպական աշխարհակարգի հիմնարար սոցիալ-քաղաքական և աշխարհաքաղաքական կերպափոխությունների վերաբերյալ²⁰: Յեղիևակը նեոմարքսիստական քննադատական տեսության և համեմատական պատմական ընկերաբանության շրջանակներում քննության է առնում նաև բացարձակապետության դարաշրջանի եվրոպայի միշարք սոցիալ-պատմական գործընթացներ ու իրողություններ:

Վեստֆալյան համակարգի ուսումնասիրությամբ զբաղված Ռուսաստանյան հետազոտողներից կցանկանայինք առանձնացնել Սերգեյ Կորտուևովի, Տաոյանա Չոնովայի, Մարինա Լեբեդևայի և

¹⁸ **McKay D. and Scott H. M.**, *The Rise of the Great Powers 1648-1815, 2nd edition*, London and New York: Routledge Taylor & Francis Group, 2014.

¹⁹ **Kennedy P. M.**, *The Rise and Fall of the Great Powers: Economic Change and Military Conflict from 1500 to 2000*. London, Sydney and Wellington: Unwin Hyman, 1988.

²⁰ **Teschke B.**, *The Myth of 1648: Class, Geopolitics, and the Making of Modern International Relations*. London and New York: Verso, 2003.

Պավել Ցիգանկովի աշխատանքները²¹: Եվրոպայի միասնության մասին գաղափարների պատմության և խաղաղության հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններից մեր աշխատանքի համար առանձնակի կարևորություն ունի ակադեմիկոս Ալեքսանդր Չուբարյանի ուսումնասիրությունը²²:

Եվրոպայում ազգ-պետությունների առաջացման պատմական և քաղաքակրթական ազդակների, ինչպես նաև ազգի իբրև ընկերային-քաղաքական երևույթի դիտարկման առումով հարկ է առանձնացնել Չարլզ Թիլիի, Ֆեռնան Բրոդելի, Մայքլ Մանի և Բենեդիկտ Անդերսոնի ուսումնասիրությունները²³: Թեմայի ըմբռնման տեսանկյունից կարևորում ենք նաև գերմանացի ընկերաբան-իմաստասեր, «Ֆրանկֆուրտյան դպրոցի» նշանավոր ներկայացուցիչ Յուրգեն Չաբերմասի աշխատությունները²⁴: Յեղիսակը իրեն բնորոշ խորաթափանցությամբ քննում է ազգային պետության և ազգի գաղափարական ըմբռնման անցյալի, ներկայի ու ապագայի մի շարք կարևորագույն հիմնախնդիրներ: Չաբերմասը քննության է առնում նաև Ի. Կանտի «հավերժական խաղաղության» հղացքը: Յեղիսակը կարևոր գուճահեռներ է անցկացնում միջազգային իրավունքի Կանտյան նախազօծի և Վոլդրոֆիլ սոնի քաղաքական նախաձեռնության ու տեսլականի միջև:

Նապրլեոնյան ժամանակաշրջանի եվրոպայի վերաբերյալ օգտագործված ուսումնասիրություններից ցանկանում ենք առանձնացնել Սոյոլարտ Վոլլֆի և Ալեքսանդր Գրաբի աշխատությունները: Անգլիացի պատմագետ Սոյոլարտ Վոլլֆը իր

²¹ **Кортунов С. В.**, Крушение Вестфальской системы международных отношений и становление нового мирового порядка. В кн.: Мировая политика. Москва: Изд. дом ГУ-ВШЭ, 2007, с. 75-117. **Зонова Т. В.**, Духовные основы и идеологические постулаты российской дипломатии. Под ред. А. Чубарьяна, Религия и политика в XX веке. Москва, 2006, с. 260-281. **Зонова Т. В.**, Вестфальская система. *Вестник МГИМО – №1*, 2008, с. 78-80. **Лебедева М. М.**, Что угрожает Вестфалю? *Международные процессы: Журнал теории международных отношений и мировой политики*, Т. 6, №1(16), январь-апрель 2008, с. 117-121. **Цыганков П. А.** (Рук. авт. колл.), Международные отношения: социологические подходы. Москва: Гардарика, 1998.

²² **Чубарьян А. О.**, Европейская идея в истории. Проблемы войны и мира. Москва: Междунар. отношения, 1987.

²³ **Tilly Ch.**, Coercion, Capital, and European States, AD 990–1990. Cambridge, MA: Basil Blackwell, 1990. **Tilly Ch.** (ed.), The Formation of National States in Western Europe. Princeton, New Jersey: Princeton University Press, 1975. **Braudel F.**, A History of Civilisations. Translated by Richard Mayne. New York, London, Auckland: The Penguin Press, 1994. **Mann M.**, The Sources of Social Power, Vol.II, The Rise of Classes and Nation-States, 1760-1914. Cambridge and New York: Cambridge University Press, 2006. **Anderson B.**, Imagined Communities Reflections on the Origin and Spread of Nationalism, Revised Edition, London and New York: Verso, 1991.

²⁴ **Хабермас Ю.**, Вовлечение другого. Очерки политической теории. Пер. с немецкого Ю. С. Медведева, под ред. Д. В. Складнева. Санкт Петербург: Наука, 2001. **Хабермас Ю.**, Расколотивый Запад. Пер. с нем. Москва: Изд. Весь Мир, 2008.

աշխատությունները²⁵ հիմնավոր ուղարկություններն է դարձնում տվյալ ժամանակահատվածում՝ մի կողմից՝ ֆրանսիայի ներքին զարգացումներին և մյուս կողմից՝ նրա սահմաններից դուրս ֆրանսիացիների վարչարարության ներքո գտնվող երկրների զարգացումների միջև փոխազդեցություններին: Այս կերպ Վոլլֆը նաև բացահայտում է Նապոլեոնի ծավալապաշտական քաղաքականության իդեալներն ու տեխնոլոգիաները, ինչպես նաև ֆրանսիացիների գերիշխանության ներքո հայտնված տարբեր եվրոպական հասարակությունների նմանություններն ու տարբերությունները, և թե ինչպես էին նրանք պատասխանում ֆրանսիացիների ներկայությանը. փոխգործակցությունն, դիմադրությունն, տնտեսական հնարավորություններ, ընկերային պրակտիկաներ և կրոն: Ամերիկացի պատմագետ Ալեքսանդր Գրաբը իր աշխատության²⁶ մեջ Նապոլեոնի քաղաքականությունները դիտարկում է եվրոպայի պատմության համատեքստում՝ պնդելով, որ Նապոլեոնը նույնքան եվրոպական պատմության դերակատար է, որքան՝ ֆրանսիականի: Բացահայտելով եվրոպայի ընդհանուր կերպափոխության նապոլեոնյան քաղաքականության երկվությունը՝ Գրաբը մի կողմից վերլուծում է եվրոպական տարբեր երկրներում նապոլեոնյան բարեփոխումների առաջադիմական բնույթը, իսկ մյուս կողմից՝ զարգացնում քննադատական տեսությունը՝ ըստ որի Նապոլեոնի պատմական դերակատարումն էր՝ եվրոպայում ֆրանսիացիների գերիշխանության համախմբումն իր իշխանության ներքո: Գրաբը համեմատական վերլուծության է ենթարկում Նապոլեոնի բարեփոխումների փոխազդեցությունները ֆրանսիայում և եվրոպական ինքնուրույն երկրներում: Եվրոպայում ֆրանսիացիների գերիշխանության հարցերի շուրջ առանձնակի ուղարկության է արժանի իտալացի մտածող Անտոնիո Գրամշիի աշխատանքը²⁷: Նապոլեոնի վերաբերյալ այլ արժեքավոր ուսումնասիրություններից կցանկանայինք առանձնացնել Տիերի

²⁵ **Woolf S. J.**, Napoleon's Integration of Europe. London and New York: Routledge, Taylor & Francis e-Library, 2003.

²⁶ **Grab A.**, Napoleon and the Transformation of Europe. New York: Palgrave Macmillan, 2003.

²⁷ **Gramsci A.**, Selections from the Prison Notebooks. Edited and translated by Quentin Hoare and Geoffrey Nowell. London: Smith Lawrence & Wish art, 1971.

Լենցի, Ֆրեդերիկ Շնեյդի, Ֆրենկ Մըքլիսի և Ալբերտ Մանֆրեդի աշխատությունները²⁸: Ֆրանսիայում նրա բարեփոխումների և պետական կառավարման համակարգի արդիականացման վերաբերյալ կցանկանայինք առանձնացնել Արա Գասպարյանի աշխատանքը²⁹: Օսմանյան կայսրությունում Ֆրանսիական հեղափոխության գաղափարների ազդեցության և հայերի ու այլ քրիստոնյա ժողովուրդների դերի մասին կարևոր աշխատանքներ են Բառնար Լյուիսի, Մարդին Շերիֆի և Քարթեր Ֆինդլիի հոդվածները³⁰:

1814-1815 թթ. Վիեննայի վեհաժողովի և հետևապլեոնյան եվրոպայի վերակառուցման վերաբերյալ վերջին ուսումնասիրություններից արժեքավոր տեղ ունի Ֆրանսիացի պատմագետ, Նապլեոնի ֆոնդի տնօրեն Տիերի Լենցի աշխատությունը³¹: Լենցը հանգամանորեն վերլուծում է Վիեննայում վերբարձրացված եվրոպական հավասարակշռության և միապետների համերաշխության հղացքները, ինչպես նաև օրինականության ու փոխառուցման սկզբունքները և Ֆրանսիայի դերը վերակառուցվող եվրոպայում: Յեղիևակը հատուկ ուշադրություն է հատկացնում Մետերնիխի պահպանողական հավասարակշռության և Քեսլրիի պրագմատիկ հավասարակշռության հղացքներին, որոնց հաղթահարմանն էին միտված Թալեյրանի օրինականության և Ալեքսանդր 1-ինի փոխառուցման սկզբունքները: Վիեննայի աշխարհակարգում մեծ տերությունների քաղաքականությանը հաստատված *ինքնիշխան անհավասարություն և օրինականացված գերիշխանություն* հասկացությունների

²⁸ **Lentz T.**, Napoléon Diplomate. Ouvrage publié sous la direction de Guy Stavridès. Paris: CNRS Éditions, 2012. **Ленц Т.**, Наполеон. Пер. с фр. Е. Калантаровой. Москва: АСТ, Астрель, 2008. **Schneid F. C.**, Napoleon's Conquest of Europe: the War of the Third Coalition. Westport and London: Praeger Publishers, 2005. **McLynn F.**, Napoleon: A Biography. London, Sydney and Auckland: Pimlico, 1998. **Մանֆրեդ Ա. 2.**, Նապլեոն Բոնապարտ: Երևան, Հայաստանի հրատ., 1975:

²⁹ **Գասպարյան Ա.**, Ֆրանսիական Նապլեոն Բոնապարտի կառավարման տարիներին (1799-1814) (Կառավարման համակարգի արդիականացման մոդելը): Երևան, ԵՊՀ հրատ., 2013:

³⁰ **Lewis B.**, The Impact of the French Revolution on Turkey: Some Notes on the Transmission of Ideas. Journal of World History, Vol.I, N 1, Juillet 1953. **Mardin S.**, The Influence of the French Revolution on the Ottoman Empire. International Social Science Journal, Vol.41, issue 1, 1989. **Findley C. V.**, A Quixotic Author and His Great Taxonomy: Mouradgea D'Ohsson and His Tableau General De L'empire Othoman, 19th International Congress of Historical Sciences 6-13 August 2000, University of Oslo. URL: <http://www.oslo2000.uio.no/program/papers/mlb/mlb-findley.pdf> (20.02.2015).

³¹ **Lentz T.**, Le congrès de Vienne: Une refondation de l'Europe 1814-1815. Paris: éditions Perrin, 2013.

վերաբերյալ կարևոր է Ձերրի Սիմփսոնի ուսումնասիրությունը³²: Սիմփսոնը հետաքրքիր գուգահեռներ է անցկացնում նաև տարբեր ժամանակահատվածներում մեծ տերությունների վարած քաղաքականության ու հավաքական գործողությունների միջև և վերլուծում պետությունների համակարգում գերիշխանության օրինականության երևույթը: Վիեննայի համակարգի վերաբերյալ ուսումնասիրություններից հարկ է նշել Փոլ Շրոդերի աշխատանքները, ինչպես նաև ֆրանսիացի պատմագետներ Էրնեստ Լավիսի և Ալֆրեդ Ռամբոյի խմբագրած 19-րդ դարի պատմության 3-րդ հատորը³³: Վիեննայի և Վերսալյան աշխարհակարգերի ուսումնասիրման տեսանկյունից հատկապես արժեքավոր է պատմագետ և դիվանագետ, 1973-1977 թթ. ԱՄՆ-ի պետքարտուղար Յենրի Բիսինջերի հիմնարար աշխատությունը³⁴: Գրքում իրապաշտության (ռեալիզմի) տեսության շրջանակներում քննության են ենթարկվում 17-րդ դարից սկսած արդի աշխարհակարգում համաշխարհային քաղաքականության և դիվանագիտության կարևորագույն անցքերը:

Գիտաթեմային Արցախյան հիմնախնդրի առնչությամբ կապակցությամբ՝ ժողովուրդների ինքնորոշման և տարածքային ամբողջականության վերաբերյալ կցանկանայինք առանձնացնել Էդվարդ Լավրանդյանի, Արա Պապանի, Տիգրան Թորոսյանի, Յելգե Բլակկիստրուդի և Փալ Կոլստոյի հոդվածները³⁵:

Գիտական նորույթը: Ամենևին չթերագնահատելով հայ հեղինակների գիտական ձեռքբերումները՝ պետք է նկատենք, որ այս ասպարեզում անդրադարձները հատվածային են և դուրս են

³² **Simpson G.**, Great Powers and Outlaw States: Unequal Sovereigns in the International Legal Order. New York: Cambridge University Press, 2004.

³³ **Schroeder P. W.**, The Transformation of European Politics, 1763-1848. Oxford History of Modern Europe, New York, Oxford: Oxford University Press, 1999. **Schroeder P. W.**, Did the Vienna Settlement Rest on a Balance of Power? The American Historical Review, Vol. 97, No. 3 (The University of Chicago Press, Jun., 1992). **Лависс Э., Рамбо А.** (под. ред.), История XIX века. Пер. с фр., изд. под. ред. Е. В. Тарле, т. 3, Время реакции и конституционные монархии. Москва: ОГИЗ, 1938.

³⁴ **Kissinger H. A.**, Diplomacy. New York, London, Toronto, Sydney, Tokyo, Singapore: Simon & Schuster, 1994.

³⁵ **Nalbandian E.**, Nagorno-Karabakh: Is A Solution Visible? *Politique Internationale*, N-146, winter 2014-2015, RA MFA Official website URL: http://www.mfa.am/u_files/file/politic/Edward%20Nalbandian's%20article%20in%20the%20Politique%20Internationale%20magazine.pdf (10.01.2015).

Պապան Ա., Հայրենասիրությունը. Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները և հարակից հարցեր (հոդվածների ժողովածու): Երևան: Մոդուս վիվենդի կենտրոն, 2012: **Papian A.**, On the Principles of Self-Determination and So-Called "Territorial Integrity" In Public International Law (The Case of Nagorno-Karabakh). «21st Century», № 2 (8), 2010, pp. 21-37. **Թորոսյան Տ. Ս.**, Ինքնորոշման իրավունքի կարգավիճակը, կիրառման չափանիշներն ու պայմանները. Լրաբեր Հասարակական Գիտությունների, № 1, 2008, էջ 18-37: **Kolsto P., Blakkisrud H.**, De facto States and Democracy: The case of Nagorno-Karabakh. *Communist and Post-Communist Studies*, Vol.45, Issues 1-2, March-June 2012, pp. 141-151.

համաշխարհային պատմության ընդլայն հեռապատկերից: Ուստի սույն աշխատանքը հայոց մեջ Եվրոպայի պատմության տվյալ շրջափուլին վերաբերող համալիր և ամբողջընկալական մոտեցման առաջին փորձն է, ուր հստակ ընդգծվում է աշխարհակարգի վերաբերյալ Յուլիոս Գրոտիուսի տեսության շրջանակները, որի եզրերը ձգվում են Վեստֆալյան խաղաղությանը մինչև Յուլիոս Գրոտիուսի եզրափակիչ ակտ և Եվրոպայի միասնականացման նախագծեր:

Միանգամայն այլ է պատկերը Եվրոպական, ամերիկյան և ռուսական պատմագիտության մեջ: Այնուամենայնիվ, կարիք է զգացվում այնպիսի համալիր հետազոտությունների, որոնք ներկայացնում են ազգերի ինքնորոշման իրավունքի վերաբերյալ Գրոտիուսի ըմբռնումները, Եվրոպայի միասնության Գրոտիուսյան տեսլականը և Եվրոպայի միասնականացման Նապոլեոնի նախագիծը: Սույն աշխատանքով նաև փորձ է արվել նորովի մեկնաբանել և ուսումնասիրության մեկ տեքստով ուրվագծել քաղաքական ինքնորոշման գաղափարի զարգացման տրամաբանությունը Վեստֆալյան խաղաղությանը մինչև Յուլիոս Գրոտիուսի եզրափակիչ ակտ և ինքնորոշման գաղափարի կիրարկման համեմատական վերլուծությունը:

ԳԼՈՒԽԱՌԱՋԻՆ

ԴԱՐԱՇՐՋԱՆՆԵՐ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԵՐ

Վեստֆալյան պայմանագրերը շրջադարձային նշանակություն ունեցան նորդարյա եվրոպայի պատմության մեջ: 1648 թվականից հետո ինքնիշխան պետությունների միջև ձևավորված հորիզոնական հարաբերությունները փոխարինեցին Սրբազան հռոմեական կայսրության և Կաթոլիկ եկեղեցու աստիճանակարգությամբ քողարկված տարասեռ \$եոդալական միավորների միջև ուղղաձիգ-աստիճանակարգային հարաբերություններին: Պետական ինքնիշխանության համախմբումը և հարկադրանքի միջոցների մենաշնորհումը պետական իշխանություններին տվեցին բացառիկ վերահսկողություն արտաքին քաղաքականության գործիքների (բանակ, դիվանագիտություն) նկատմամբ: Քաղաքական դաշտը տարանջատվեց ներքին և արտաքին ոլորտների՝ հենված ներքին քաղաքական աստիճանակարգության և արտաքին աշխարհաքաղաքական անիշխանության վրա: Վեստֆալյան պայմանագրերից հետո ոչ-տարածքային քաղաքական միավորները (\$եոդալական տիրույթներ, ազատ քաղաքներ և այլ) դուրս մնացին միջազգային քաղաքականության հից: Սկսվեց միջազգային հարաբերությունների հաստատությունացումը (institutionalization): Քաղաքականության և կրոնի տարանջանումն ու ինքնորոշման գաղափարն ի վերջո հանգեցրեցին միջազգային հանրության իրավահավասար անդամների խաղաղ գոյակցության սկզբունքին: Կայսերական համընդհանրական հայեցակարգին և քրիստոնեական հանրապետության (res publica christiana) համատեքստում բարոյահոգևոր գերիշխանության պապական ձգտումներին փոխարինեց ուժերի հավասարակշռության սկզբունքը՝ բազմաբևեռ, անիշխան միջավայրում իբրև միջազգային հարաբերությունների բնական կարգավորիչ: Վեստֆալի (1648 թ.) և Ուտրեխտի (1713 թ.) պայմանագրերի միջև ընկած ժամանակահատվածում սկսեցին ձևավորվել արդի միջպետական հարաբերությունները³⁶:

³⁶ Տե՛ս **Teschke B.**, The Myth of 1648: Class, Geopolitics, and the Making of Modern International Relations. London, New York: Verso, 2003, p. 3.

Ուստի, այս գլխում քննության ենթառել միջնադարյան եվրոպայի աստիճանակարգված-համընդհանրական աշխարհակարգի անցումը ինքնիշխան պետությունների արդի հորիզոնական համակարգին: Այս անցումը նշանավորվեց վերագային և անդրագային հաստատություններից ինքնիշխանության փոխանցման և պետությունների կողմից ինքնիշխանության համախմբման գործընթացներով: Այս ժամանակաշրջանի պատմության քննության համապատկերում փորձ է արվում նաև ուրվագծել ինքնորոշման գաղափարի սաղմնավորման և զարգացման հետագիծը՝ նախ **դավանական ու քաղաքական համայնքների ինքնորոշման իրավունքի** (Վեստֆալյան պայմանագրեր) ճանաչման տեսքով, ապա **պետությունների ինքնորոշման իրավունքի** (Ուտրեխտի պայմանագիր) իրացման տեսքով: Այնուհետև վերոհիշյալի համապատկերում կներկայացնենք աշխարհակարգի կառուցվածքային նորմիավորի՝ **ազգ-պետության**, ձևավորման գործընթացը: Հավելենք, որ Վեստֆալյան համակարգը մինչ այդ գոյություն ունեցող տեղային (լոկալ) աշխարհակարգերից միակն էր, որ դարձավ համաշխարհային (գլոբալ):

1.1 ԵՎՐՈՊԱՆ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ. ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՓՈԽԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխարհակարգի միջնադարյան հարացույցը կամ մինչ վեստֆալյան աշխարհակարգը եվրոպայում ներկայանում էր իբրև **«Քրիստոնյա ժողովուրդների հանրապետություն»** (Res Publica Gentium Christianorum): Այս աշխարհակարգի համընդհանրական «կարգավորողներն» էին Հռոմի պապը և Սրբազան հռոմեական կայսրության կայսրը³⁷: ժամանակաշրջանի մտածողների և պետական գործիչների խոսույթում համակարգին վերաբերող **«Քրիստոնեական աշխարհ»** և **«Եվրոպա»** եզրույթներն ունեին տարաբնույթ նշանակություն. առաջինը՝ մշակութային, քաղաքական և հաստատութենական (պապականություն և կայսրություն), երկրորդը՝ լոկալ աշխարհակարգի³⁸: Ասենք, որ միջնադարյան

³⁷ Տե՛ս **Зонова Т. В.**, Вестфальская система. *Вестник МГИМО – №1*, 2008, с. 78.
³⁸ Տե՛ս **Ghervas S.**, La paix par le droit, ciment de la civilisation en Europe? La perspective du siècle des Lumières, in Antoine Lilti et Céline Spector (éds.), *Penser l'Europe au XVIIIe siècle: Commerce, Civilisation, Empire*. Oxford:

Եվրոպայում գործող երկու հաստատություններից՝ **պապականությունը** ու **կայսրությունը** բացի մնացած բոլոր տեսակի հարաբերությունները անհատական փոխհարաբերություններ էին և տեղի էին ունենում «ավանդական օրինականության» հիմքով: Աստիճանաբար ավանդական անհատական հարաբերությունների համալիրին պետք է փոխարիներ օրինական-բանական բյուրոկրատական համակարգը:

Միջնադարյան Եվրոպայում միայն Յոհան Գուտենբերգը էր ինքնիշխան համարվում: Մյուս տիրակալները (թագավորներ, դուքսեր, կոմսեր) հանդես էին գալիս պապական վասալների դերում: Սա բրգածև, **աստիճանակարգված աշխարհակարգ** էր, որի գագաթին պապականությունն էր, այնուհետև՝ մյուս տիրակալները: Բուրգիներում հարաբերությունները ուղղահայաց-աստիճանակարգային էին³⁹: Միջնադարում՝ Արևմտյան քրիստոնեական աշխարհի քաղաքական համակարգում, ոչ մի կառավարիչ կամ պետությունն արդի իմաստով ինքնիշխան չէր, քանզի նրանք չէին իրականացնում գերագույն իշխանությունն որոշակիորեն սահմանափակված տարածքի վրա կամ որոշակի բնակչության նկատմամբ: Պետություններից յուրաքանչյուրի կառավարիչները կիսում էին իշխանությունը իրենց վասալ կառավարիչների հետ ներքևում և Յոհան Գուտենբերգի սրբազան կայսեր հետ վերևում: Ըստ ընդհանուր ընկալման՝ միջնադարյան քրիստոնեական աշխարհում **իշխանության ակունքը համարվում էր Աստված** և քաղաքական համակարգը հիմնականում թեոկրատական (աստվածապետական) երանգ ուներ: Այս համակարգը **«համընկնող իշխանության և բազմակի հավասարմունքի»** (“a system of overlapping authority and multiple loyalty”) համալիր էր⁴⁰:

Սրբազան հռոմեական կայսրությունը իր հզորության գագաթնակետին էր հասել Կառլոս 5-րդ կայսեր (1519-1556 թթ.) օրոք, ով միաժամանակ նաև Իսպանիայի թագավորն էր: Կենտրոնական Եվրոպան

Voltaire Foundation, 2014, pp. 48-49. Տե՛ս նաև **Soutou G.-H.**, L'identité de l'Europe du point de vue de l'historien. *Outre-Terre* 2004/2 (no 7), pp. 31-42.

³⁹ Տե՛ս **Ghervas S.**, La paix par le droit, ciment de la civilisation en Europe? La perspective du siècle des Lumières, pp. 48-49.

⁴⁰ Տե՛ս **Bull H.** (1977), *The Anarchical Society: A Study of Order in World Politics*, 3rd edition. New York: Palgrave, 2002, p. 245.

համարյա ամբողջությամբ ներառված էր Յապոնիայի և Բրիտանիայի տիրապետության շրջանակներում՝ Բրանդենբուրգից Լոմբարդիա և Բուրգունդիայից Բոհեմիա: Կենտրոնը Վիեննան էր⁴¹: Այս ընդարձակ տարածքում կառավարող իշխանները ենթակա էին Յոնի պապի հոգևոր և Յոնմեական սրբազան կայսեր քաղաքական իշխանությանը⁴²:

Ողջ միջնադարում կայսրության հետհռոմեական առասպելը կարևոր նշանակություն ունենր: Ինչպես որ գոյություն ունենր մեկ կրոնական համայնք, որը ղեկավարվում էր մեկ եկեղեցու կողմից, այնպես էլ կար մեկ կառավարչի կողմից ղեկավարվող միայն մեկ քաղաքական համայնք⁴³:

Ռեֆորմացիայի հետևանքով (16-17-րդ դդ.) այս առասպելը վերջնականապես վերվեց,⁴⁴ իսկ Երեսնամյա պատերազմի և Վեստֆալյան խաղաղության շնորհիվ պետությունները դարձան միակ օրինական (լեգիտիմ) քաղաքական միավորները: Պետությունները ղեկավարվում էին ինքնիշխանների կողմից, որոնք չէին ճանաչում այլ ինքնիշխանություն ոչ իրենց վերևում և ոչ էլ ներքևում: Պետությունների շուրջ սկսեց զարգանալ արդի դարաշրջանին բնորոշ նոր տեսակի քաղաքական կյանքը⁴⁵:

Դեռևս 15-16-րդ դարերից Եվրոպայում սկսվել էր ազատ քաղաքների ազատությունների սահմանափակման գործընթաց: Ազատ քաղաքները ստիպված էին փոխանցել իրենց իրավունքների և արտոնությունների մի մասը կենտրոնական պետական իշխանություններին, որպեսզի պահպանեին իրենց իրավունքների մյուս հատվածը: Իբրև փոխհատուցում՝ քաղաքային համայնքները

⁴¹ Տե՛ս **McKay D., Scott H. M.**, *The Rise of the Great Powers 1648-1815, 2nd edition*. London and New York: Routledge Taylor & Francis Group, 2014, pp. 1-2. Իսպանական թագավորությունը ժամանակաշրջանի ամենահզոր տերություններից էր և բացի Պիրենեյան թերակղզուց, Եվրոպայում տիրում էր Իտալիայի զգալի մասին՝ նրառյալ Նեապոլն ու Միլանը, Բալեարյան կղզիներին, Սիցիլիա և Սարդինա կղզիներին, Բուրգունդիային, հարավային Նիդերլանդներին, Լյուքսեմբուրգին և Ֆրանշ Կոմտեին, ինչպես նաև ուներ հսկայական գաղութային կայսրություն Ամերիկայում:

⁴² Տե՛ս **Moita L.**, *A Critical Review on the Consensus around the Westphalian System. JANUS.NET e-journal of International Relations*, Vol. 3, No. 2, 2012, pp. 21-22.

⁴³ Տե՛ս **Եվրեմյան Տ.**, Վեստֆալյան համակարգը իբրև արդի Եվրոպական քաղաքականության շրջադարձային հանգրվան: Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն, № 3 (18), 2015, էջ 31-47:

⁴⁴ Տե՛ս **Backman C. R.**, *The Worlds of Medieval Europe*. New York: Oxford University Press, 2003, pp. 387-394.

⁴⁵ Տե՛ս **Ringmar E.**, *Identity, Interest and Action: A Cultural Explanation of Sweden's Intervention in the Thirty Years War*. Cambridge, New York, Melbourne: Cambridge University Press, 1996, p 10.

մուտք էին գործում արդի պետության սահմանած նոր առավելությունների աշխարհ, որը ենթադրում էր ավելի մեծ ծավալների առևտուր, շահավետ վարկեր ու փոխառություններ, իսկ որոշ դեպքերում նաև պետական կամ հանրային հաստատությունների կառավարմանը մասնակցելու հնարավորություն: Աստիճանաբար պետական (տարածքային) տնտեսությունը աճեց՝ փոխարինելով քաղաքային տնտեսությունը⁴⁶: Այդուամենայնիվ, արդի տարածքային պետությունները եվրոպայում սկսեցին ամբողջապես ձևավորվել միայն հետագայում՝ 17-րդ դարից սկսած, սկզբում բացարձակ միապետությունների, իսկ այնուհետև ազգ-պետությունների տեսքով:

Տարածքային պետությունները հենվում էին «զանգվածների հավատարմության և համաժողովրդական նվիրվածության» վրա: Չանգվածները ի դեմս միապետի և պետության տեսնում էին իրենց բնական պաշտպանին ընդդեմ եկեղեցու և ազնվականների: Պետությունը այլևս չէր ճանաչում իրենցից ավելի բարձր իշխանություն՝ ո՛չ Սրբազան հռոմեական կայսրությունը, և ո՛չ էլ պապականությունը: Պետությունները ձգտում էին անկախության՝ հետևելով իրենց պետական շահերին⁴⁷:

Կառլոս 5-րդ կայսրը պատերազմներ է մղել Ֆրանսիայի և Օսմանյան կայսրության դեմ, ճնշել ապստամբություններ Իսպանիայում և Նիդերլանդներում⁴⁸: Նրա կապակցությամբ կիրարկելի է Ֆերնան Բրոդելի հետևյալ միտքը. «Արդի պետությունը վեր է խոյացել պատերազմի նոր և հրամայական կարիքներից. հրետանին, ռազմական նավատորմերը և ավելի մեծ բանակները մարտական գործողությունները ավելի թանկարժեք դարձրեցին: Պատերազմը՝ ամեն ինչի մայրը (*bellum omnium mater*), նաև ծնեց արդի աշխարհը»⁴⁹:

Աստիճանաբար աշխարհիկ տիրակալները սկսեցին ձգտել ինքնիշխանության իրենց տիրույթներում և այդպիսով հակամարտության մեջ մտան Յոնի հետ: Իսկ արդեն Երեսնամյա

⁴⁶ Տե՛ս **Braudel F.**, *A History of Civilisations*. Translated by Richard Mayne. New York, London, Auckland: The Penguin Press, 1994, p. 322.

⁴⁷ Տե՛ս Նոլյն տեղում, էջ 323:

⁴⁸ Տե՛ս **McKay D., Scott H. M.**, նշվ. աշխ., էջ 2:

⁴⁹ **Braudel F.**, նշվ. աշխ., էջ 323:

պատերազմից հետո՝ 1648 թվականի Վեստֆալյան հաշտության պայմանագրով, «ինքնիշխանություն» եզրը այլևս բնութագրական էր ոչ թե կաթոլիկ եկեղեցու առաջնորդության քրիստոնեական համայնքի միասնության, այլ անկախ քաղաքական համայնքների բազմազանության համար, թեպետ պայմանագրերը ձևակերպվեցին համընդհանրական քրիստոնեական և եզրվի կանոններով⁵⁰:

Վեստֆալյան համաձայնագրերը խորհրդանշում են միջնադարյան քրիստոնեական աստիճանակարգային կառույցների վրա հիմնված քաղաքական իշխանության համակարգի փոխակերպումը տարածքային **ինքնիշխան պետությունների հորիզոնական կարգի** (horizontal system of sovereign states): Քաղաքական իշխանության բնույթի այսպիսի կառուցվածքային կերպափոխումը, որին նպաստեցին Վերածնունդի Ռեֆորմացիան, առաջացրեց խորը վերափոխումներ քաղաքական միավորների և թեև անց տարածքայնության հղացքի մեջ⁵¹:

Այս գործընթացները նպաստեցին եվրոպայի հետագա տարաբաժանմանը առանձին պետությունների: Դավանական բաժանումը պահպանվեց, և նախառեֆորմացիոն շրջանի համակարգ վերադարձնելու բոլոր փորձերը ձախողվեցին: Սակայն 17-րդ դարի ընթացքում **«համընդհանրական միապետություն»** հղացքը դեռևս պահպանվում էր բացարձակ միապետությունների քաղաքական օրակարգում, բայց սամիայն նշանակում էր մեկ միապետի գերիշխող դիրք պետությունների համակարգում (երբ միապետը հավակնում էր մեկից ավելի ինքնիշխան պետությունների գահերի) և ոչ թե եվրոպական գերպետություն⁵²:

Եվրոպայում միջնադարյան քաղաքական մշակույթի անկումը պայմանավորված էր նաև **հոլահռոմեական ժառանգության վերածննդով**: Ռեֆորմացիայի շնորհիվ փլուզվեց նաև ճշմարտության նկատմամբ եկեղեցական մենաշնորհը⁵³: Բողոքական

⁵⁰ Տե՛ս **Dekker I. F., Werner W. G.**, Governance and International Legal Theory. Leiden and Boston: Martinus Nijhoff Publishers, 2004, pp. 135-136.

⁵¹ Տե՛ս **Larkins J.**, From Hierarchy to Anarchy: Territory and Politics before Westphalia. New York: Palgrave Macmillan, 2010, pp. 3-4.

⁵² Տե՛ս **Black J.** (ed.), War in the Early Modern World 1450-1815. London and New York: Routledge, Taylor & Francis, 2005, p. 194.

⁵³ Տե՛ս **Backman C. R.**, նշվ. աշխ., էջ 427-435: Արդյունքում մերժվեցին կամ կասկածի տակ դրվեցին գործող կարգերը: Միաժամանակ, եվրոպան, նվաճելով նոր

երկրներում միջնադարյան գիտության, կրթության, կրոնի և դիվանագիտության համընդհանրական լեզուն՝ լատիներենը, փոխարինվեց ազգային լեզուներով⁵⁴:

Արդի արևմտյան քաղաքակրթական և մշակութափոխ նորմերը ձևավորվեցին հենց այս ժամանակաշրջանում՝ Ռեֆորմացիայի հետևանքով: Վերջինիս արդյունքում առաջացած մշակութային երևույթներից ինդիվիդուալիզմը (անհատապաշտություն) և շուկայական տնտեսությունը զարգացան հատկապես **բողոքականության ազդեցությամբ**: Ըստ գերմանացի նշանավոր սոցիոլոգ Մաքս Վեբերի (1864-1920 թթ.)՝ արդի կապիտալիստական հարաբերությունների առաջացման և զարգացման վրա առանցքային ազդեցություն ունեցավ բողոքական (հատկապես կալվինական) բարոյագիտությունը: Բողոքական ռացիոնալիզմն (բանապաշտություն) էր, որ ծնունդ տվեց «կապիտալիզմի ոգուն»:
Բողոքական աշխատանքային բարոյագիտությունը կարևոր ազդակ էր արդի կապիտալիզմի ձևավորման չծրագրված և չհամակարգվող գործընթացում⁵⁵: Բողոքական մշակույթը Եվրոպայում տիրապետող դարձավ ոչ միայն համոզմունքների և գիտակցումի միջոցով, այլ և երկարատև կրոնական պատերազմների արդյունքում: Եվ, ըստ էության, աշխարհում տարածվող արևմտյան մշակույթը գերազանցապես բողոքական մշակույթն է⁵⁶:

Մաքս Վեբերն առանձնացնում է իշխանության և քաղաքական համակարգի օրինականության (լեգիտիմության) երեք տարատեսակ՝ իրավական-բանական (լեգալ-ռացիոնալ), ավանդական և քարիզմատիկ: Իրավական-բանական իշխանության օրինականությունը ձևավորվում է իրավական գործընթացների՝ վարչական նշանակման կամ ընտրությունների միջոցով և հիմնված է բյուրոկրատական արդյունավետության վրա: Ավանդական իշխանության օրինականությունը հիմնված է իշխանության ժառանգման հանգամանքի և դրա շարունակականության վրա: Քարիզմատիկ իշխանության օրինականությունը հիմնվում է առաջնորդի անհատական որակների՝ տաղանդի, հերոսականության, մարգարեության և հեղինակության վրա: Ըստ Վեբերի՝ իշխանության օրինականության հիմնավորումները ենթակա են

հայ տնագործված աշխարհամասերը, իրեն ենթարկեց նաև նրանց մշակույթները՝ սկիզբ դնելով աշխարհի վերափոխմանը:

⁵⁴ Տե՛ս Ringmar E., նշվ. աշխ., էջ 146:

⁵⁵ Տե՛ս Weber M., The Protestant Ethic and the Spirit of Capitalism. Translated by Talcott Parsons with an introduction by Anthony Giddens. London and New York: Routledge Taylor & Francis e-Library, 2005, pp. 13-39; 53-80; 102-125.

⁵⁶ Տե՛ս Цыганков П. А. (Рук. авт. колл.), Международные отношения: социологические подходы. Москва: Гардарика, 1998, с. 113.

փոփոխության՝ կախված ժամանակի պահանջներից և տվյալ պատմական պայմաններից⁵⁷:

Դիտարկվող դարաշրջանում ավանդական անձնական հավատարմության և հարաբերությունների վրա հիմնված վարչաքաղաքական համակարգերը իրենց տեղը զիջում էին **իրավական-բանական բյուրոկրատական հարաբերություններին**: Ի տարբերություն ավանդական ֆեոդալական հարաբերությունների, նոր պաշտոնեությունը հիմնված էր ոչ-անձնական, իրավական պարտավորությունների վրա⁵⁸: Պատմականորեն պետությունների բյուրոկրատական ապարատի զարգացումը ճանապարհ էր հարթում ֆեոդալական արտոնությունների հաղթահարման և ժողովրդավարական համակարգերի կայացման համար: «Բանական բյուրոկրատիայի ոգու» ընդհանրական բնութագրերն էին ֆորմալ իզմը և անկախբանականության միտումը⁵⁹:

Արդեն 17-րդ դարում պետական գործիչների և մտավորականների կողմից «Քրիստոնեական աշխարհ»-ին զուգահեռ կիրառում ստացավ **«Եվրոպա»** հղացքը որպես մշակութային և քաղաքական ընդհանրություն՝ հիմնականում ինկատի առնելով քրիստոնյա պետությունների այն համայնքը, որ ներկայումս կոչվում է **Արևմտյան քաղաքակրթություն**: Այս հղացքից դուրս մնացին Օսմանյան կայսրության քրիստոնյա ժողովուրդները: Մյուս կողմից, թեպետ ուղղափառ Ռուսաստանը սովորաբար համարվում էր «Քրիստոնեական աշխարհ»-ի մաս, սակայն հաճախ բացառված էր «Եվրոպա» հղացքից: Ռուսաստանը ընդունվեց եվրոպական համայնք միայն 18-րդ դարի սկզբից, երբ Ռոմանովները ամուսնական կապեր հաստատեցին գերմանական արքայատների հետ, քանզի, համաձայն հաստատված սովորույթի, եվրոպական ինքնիշխան տիրակալը պետք է կապված լիներ այլ եվրոպական ինքնիշխան տիրակալների հետ⁶⁰:

Վեստֆալյան աշխարհակարգը, ի տարբերություն միջնադարյանի, արտացոլում էր միանգամայն նոր իրողություն:

⁵⁷ Տե՛ս Weber M. (1922), *Economy and Society: An Outline of Interpretive Sociology*. Edited and translated by Guenther Roth and Claus Wittich. Los Angeles and London: University of California Press, 1978, pp. 215-270. Տե՛ս Bendix R., Max Weber: An Intellectual Portrait, with an Introduction by Bryan S. Turner, Vol. 2. London and New York: Routledge, 1998, pp. 287-330.

⁵⁸ Տե՛ս Weber M. (1922), *Economy and Society: An Outline of Interpretive Sociology*, pp. 220-223.

⁵⁹ Տե՛ս Նոլյն տեղում, էջ 225-226:

⁶⁰ Տե՛ս Bromley J. S. (ed.), *The New Cambridge Modern History Vol.VI: The Rise Of Great Britain And Russia 1688-1715/25*. Cambridge: Cambridge University Press, 1971, pp. 167-169.

Այս տեղ այլևս չկար բարձրագույն համընդհանրական իշխանություն, և միջպետական հարաբերությունների գլխավոր «կարգավորիչը» դարձավ ուժերի հավասարակշռության սկզբունքը⁶¹: Սկսած 15-րդ դարից՝ հավասարակշռություն տեսությունը մշակել են նշանավոր մտածողներ Գվիլարդիսին, Մաքիավելլին, Ջենտիլյեն:

*Գվիլարդիսին Թուկիդիդեսի⁶² ուժերի հավասարակշռության տեսությունը նախ կիրարկեց Ապենինյան թերակղզում Լորենցո դի Մեդիչիի քաղաքականությունը նկարագրելու համար. իտալական պետությունները դաշինքներ կամ միություններ էին կազմում միմյանց դեմ, որոնք փոփոխվում էին կախված կողմերի ուժային հարաբերակցությունից: Այսպես կոչված «իտալական հարացույցը» եվրոպայում, ապա նաև աշխարհում վերածվում է միջպետական հարաբերությունների հարացույցի, որի գլխավոր չափորոշիչներն էին աշխարհիկ **ինքնիշխանությունը, ինքնիշխան հավասարությունը** և **աշխարհիկ ինքնիշխան տիրակալների միջև ուժերի հավասարակշռությունը**⁶³: Դենց այս չափորոշիչներն էլ ընկան Զոլգո Գրոտիուսի մշակած նոր աշխարհակարգի հղացքի և աշխարհիկ ազգերի իրավունքի հիմքում⁶⁴:*

1.2 ԵՐԵՆԱՄՅԱ ՊՍԵՐԱՉՄԸ ԵՎ ՎԵՍՏՖԱԼՅԱՆ ԽԱՆՆՈՒԹՅՈՒՆԸ. ԱՐԴԻ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԻ ՄԵԿՆԱՐԿԸ

Պետությունների՝ իբրև պատմության հիմնական դերակատարների տեսության ձևավորման գործընթացում բեկումնային նշանակություն ունեցան 1618 թ. Եվրոպայում

⁶¹ Տե՛ս **Зонова Т. В.**, Вестфальская система, с. 78-80.

⁶² Տե՛ս **Behr H.**, A History of International Political Theory: Ontologies of the International. London, New York: Palgrave Macmillan, 2010, p. 23. Զոլյն պատմիչ Թուկիդիդեսը (թ.ա. 460-395 թթ.) իր «Պելոպոնեսյան պատերազմի պատմություն» աշխատությանը համարվում է ռեալզմի տեսության առաջին ներկայացուցիչը: Թուկիդիդեսն ունի երեք հիմնական ընդհանրություններ արդի ռեալզմի տեսության հետ՝ միջազգային քաղաքականության հիմնական միավորները պետություններն են, պետությունները ձգտում են իշխանության կամ ինքնանպատակ, կամ որպես միջոց այլ նպատակների իրականացման, պետությունների վարքագիծը բանական է, հետևաբար՝ հասկանալի: Տե՛ս **Waltz K.**, Theory of International Politics. London, Amsterdam and Sydney: Addison-Wesley Publishing Company, 1979, pp. 102-161.

⁶³ Տե՛ս **Larkins J.**, նշվ. աշխ., էջ 7-12:

⁶⁴ Գաղափարական առումով արդի պետությունների ձևավորումը հիմնավորվեց նաև ժամանակի այլ խոշոր իրավագետների և քաղաքական իմաստասերների աշխատություններում: Ժան Բոդենը իր «Վեց գիրք հանրապետության մասին» աշխատությունում գարգարեց «պետական ինքնիշխանություն» հասկացությունը, ըստ որի՝ «ինքնիշխանությունը պետության բացարձակ և մշտական գործառույթն է իր հպատակների և քաղաքացիների նկատմամբ»: Մեծ նշանակություն ունեցան նաև Թոմաս Զոբբսի և Բենեդիկտ Սպինոզայի աշխատությունները: Տե՛ս **Bodin J.** (1576), Six Books of the Commonwealth (Les Six livres de la République). Abridged and translated by M. J. Tooley. Oxford: Blackwell, 1955. Տե՛ս **Скирбекк Г., Гилье Н.**, История философии. Пер. с англ. В.И. Кузнецова; Под ред. С.Б. Крымского. Москва: Гуманит. изд. центр ВЛАДОС, 2003, с. 263-298. **Гоббс Т.**, Левиафан, или Материя, форма и власть государства церковного и гражданского. Сочинения, в 2 томах, т. 2, пер. с лат. и англ., сост. ред., авт. примеч. В. В. Соколов. Москва: Мысль, 1991. **Спиноза Б.** Избранные произведения: в 2-х томах. Т. 2. Политический трактат. Пер. с лат. С. М. Роговина и Б. В. Чредина, ред. Ф. Стронгина. Москва: Госполитиздат, 1957.

բռնկված Երեսնամյա պատերազմը (1618-1648 թթ.) և դրա ավարտն ավետող Վեստֆալյան պայմանագրերը (1648 թ.): Քաղաքական առումով Երեսնամյա պատերազմը կարելի է համարել նաև «պետականաշինության պատերազմ»: Այն ոչ թե ամբողջապես ձևավորված պետության ներքին առճակատում էր, այլ տարբեր քաղաքական դաշինքների միջև ընթացող հակամարտության էր, որի շնորհիվ իբրև քաղաքական միավորներ կայացան պետության ներքինը⁶⁵:

Ա Պատերազմը: 1618 թ. ապստամբությունը Բոհեմիայում Յաքսբուրգների իշխանության և ընդհանրապես կաթոլիկների գերիշխանության դեմ բոլորքեց պատերազմների շարք, որը հայտնի է որպես **Երեսնամյա պատերազմ**⁶⁶: Այն համաեվրոպական առճակատում էր. սկսվեց իբրև կրոնական պատերազմ Գերմանիայի կաթոլիկ ու բողոքական խմբավորումների միջև, և իր քաղաքական համատեքստը ստացավ, երբ Յոնմեական սրբազան կայսրության տիրակալ Յաքսբուրգները փորձեցին իրենց ազդեցությունը տարածել ողջ Եվրոպայում: Իսկ Ֆրանսիան, թեպետ կաթոլիկ երկիր, այս վտանգը չեզոքացնելու համար միացավ բողոքական ճակատին⁶⁷: Կաթոլիկ ճակատի ամենահզոր դաշնակիցն էր իսպանական Յաքսբուրգների տերությունը, որի իշխանությունը տարածվում էր հարավային Եվրոպայի մեծ մասի վրա⁶⁸: Այս կերպ Ֆրանսիայի համար եվրոպական քաղաքականության մեջ գերիշխում էին երկու հիմնական

⁶⁵ Տե՛ս **Po-chia H. R.** (ed.), *A Companion to the Reformation World*. Melbourne: Blackwell Publishing, 2004, p. 277.

⁶⁶ Տե՛ս **Mortimer G.**, *The Origins of the Thirty Years War and the Revolt in Bohemia, 1618*. London: Palgrave Macmillan, 2015, pp. 118-176. 1618 թ. մայիսի 23-ին Բոհեմիայի բողոքական իշխանների խորհրդի մասնակիցները կոմս Տուրնի գլխավորությամբ Պրահայի դոմակի թագավորության խորհրդի նիստերի դահլիճի պատուհանից՝ շուրջ 21 մետր բարձրությունից, դուրս նետեցին Սրբազան հռոմեական կայսրության և անձամբ Բոհեմիայի թագավոր Ֆերդինանտ Շտիրիացու կաթոլիկ ներկայացուցիչներ կոմս Վիլեմ Սլավատային, կոմս Յարոսլավ Բորգիտային ու նրանց քարտուղար Ֆիլիպ Ֆաբրիցիուսին: Վերջիններս հրաշքով փրկվեցին և կարողացան իրենց ոտքով փախչել: Կաթոլիկ եկեղեցին նրանց փրկությանը վերագրեց Աստվածային օգնությունը նրանց արդար գործում: Այս պատմական իրադարձությունը հայտնի է որպես Պրահայի 1618 թ. կամ երկրորդ դեֆեստրացիա (Second Defenestration of Prague), որը դարձավ բոհեմական ապստամբության սկիզբը և բոլորքեց Երեսնամյա պատերազմը: Տե՛ս նաև **Wilson P. H.**, *The Thirty Years War: A Sourcebook*. London and New York: Palgrave Macmillan, 2010, pp. 33-38. **Wilson Ch.**, *The Transformation of Europe, 1558-1648*. Berkeley and Los Angeles: University of California Press, 1976, p. 247.

⁶⁷ Տե՛ս **Bonney R.**, *The Thirty Years' War 1618-1648*. Oxford: Osprey Publishing, 2002, p. 7.

⁶⁸ Տե՛ս **Ведюшкин В. А., Юсим М. А.** (отв. ред.), *Мир в раннее Новое время: Т. 3, 2013*. Всемирная история: В 6 т., гл. ред. А. О. Чубарьян; Ин-т всеобщ. истории РАН. Москва: Наука, 2011, с. 17-518.

խնդիրներ՝ ճեղքել Յաբսբուրգների «օղակը» և կանխել Նիդերլանդները վերանվաճել ու Իսպանիայի նկրտումները⁶⁹:

Երեսնամյա պատերազմում այս կամ այն չափով ներքաշվեցին գրեթե բոլոր եվրոպական պետությունները, իսկ ուժերի հարաբերակցությունը անընդհատ փոփոխվում էր: Կաթոլիկ խմբավորումը՝ Սրբազան հռոմեական կայսրության կաթոլիկ իշխանություններ, Պապական պետություն, Յուրանգարիա, Իսպանական կայսրություն, Լեհ-լիտվական պետություն, առաջնորդում էին ավստրիացի Յաբսբուրգները: Նրանց դիմակայում էր բողոքական դաշինքը՝ գերմանական բողոքական իշխանությունները, Շվեդիան, Դանիան, Նիդերլանդները, Անգլիան, կաթոլիկ Ֆրանսիան (1635 թ.-ից)⁷⁰:

Սրբազան հռոմեական կայսրության կայսրեր Ֆերդինանդ 2-րդի (1619-1637 թթ.) և Ֆերդինանդ 3-րդի (1637-1657 թթ.) կայսրությունը փրկելու փորձերը ձախողվեցին: Այստեղ գլխավոր դեր կատարեց Ֆրանսիան՝ ի դեմս կարդինալ Ռիշելիեյի (1624-1642 թթ.) դիվանագիտության: Կարդինալը պաշտպանեց բողոքական երկրներին՝ առաջնորդվելով Ֆրանսիայի գերակա **պետական շահերով**⁷¹: Մյուս կողմից սրան նպաստեց նաև Յուրանգարիայի պապ Ռոբերտոս 8-րդի (1623-1644 թթ.) աշխարհիկ քաղաքականությունը, որը ավելի շատ հետաքրքրված էր Իտալիայում Յաբսբուրգների ազդեցության թուլացմամբ, քան «կաթոլիկ խաչակրաց արշավանքով»⁷²:

Կարդինալ Ռիշելիեյն ձգտում էր Ֆրանսիական անվտանգությունը կառուցել **եվրոպական հավաքական անվտանգության համակարգի** համատեքստում, ինչը շահեկան էր

⁶⁹ Տե՛ս **Cooper J. P.** (ed.), *The Decline of Spain and the Thirty Years War 1609-48/59: The New Cambridge Modern History Vol. IV.* Cambridge: Cambridge University Press, 1970, p. 306.

⁷⁰ Տե՛ս **McKay D., Scott H. M.**, նշվ. աշխ., էջ 3: Երեսնամյա պատերազմի սկիզբը ընդունված է համարել 1618 թ. մայիսի 23-ին Պրահայում սկսված բողոքական ապստամբությունն ընդդեմ Սրբազան հռոմեական կայսրության: Ընդունված է պատերազմի ընթացքը բաժանել հետևյալ չորս փուլերի՝ բողոքական ապստամբությունը և Պֆալցի նվաճումը (1618-1623 թթ.), դանիական շրջանը (1625-1629 թթ.), շվեդական (1630-1635 թթ.) և Ֆրանսիական շրջափուլերը (1635-1648 թթ.): Տե՛ս **Cooper J. P.** (ed.), նշվ. աշխ., էջ 307: Տե՛ս **Bonney R.**, նշվ. աշխ., էջ 35-37: Տե՛ս **Parker G.** (ed.), *The Thirty Years' War*, Second edition. London and New York: Routledge, Taylor & Francis e-Library, 2006, pp. 42-44. Տե՛ս **Ringmar E.**, նշվ. աշխ., էջ 4-5: Տե՛ս **Kampmann Ch.**, *Peace Impossible? The Holy Roman Empire and the European State System in the Seventeenth Century.* Asbach O. and Schröder P. (ed.), *War, the State, and International Law in Seventeenth-Century Europe.* Farnham, Burlington: Ashgate Publishing, 2010, pp. 202-204. Տե՛ս **Веджвуд С. В.**, Тридцатилетняя война. Пер. с англ. И. В. Лобанова. Москва: АСТ, Астрель, Полиграф-издат, 2012, с. 293-359.

⁷¹ Տե՛ս **Kissinger H. A.**, *Diplomacy.* New York, London, Toronto, Sydney: Simon & Schuster, 1994, p. 59.

⁷² Տե՛ս **Treasure G.**, *The Making of Modern Europe, 1648–1780.* London and New York: Routledge, Taylor & Francis e-Library, 2003, p. 176.

բոլոր պետությունների համար⁷³: Ըստ այդմ, նա պնդում էր, որ իր բոլոր դաշնակիցները պետք է ընդգրկվեն խաղաղության բանակցություններում, հետևաբար նաև վերջնական կարգավորմանը: Ավելին, նա պահանջում էր կայսրության միավորների կամ առնվազն Ֆրանսիայի դաշնակիցների մասնակցությունը խաղաղության համաժողովին և պայմանագրի կնքմանը: Ռիշելիեն կարևորում էր **«ազնիվ խաղաղության»** և **«համընդհանուր խաղաղության»** (pax honesta, pax universali) գաղափարները: Նա համոզված էր, որ նույնիսկ «լրջագույն և վտանգավոր հանգամանքներում» Ֆրանսիայի համար ընդունելի կարող էր լինել բացառապես ազնիվ խաղաղությունը (pax honesta), ինչն անհնար էր առանց դաշնակիցների⁷⁴: Ռիշելիյեն գրում է. «Թագավորները պետք է լավագույնս գործեն մինչև պայմանագրերի կնքումը, սակայն այն կնքելուց հետո նրանք պետք է կրոնական խաղաղամբ հետևեն դրանց»⁷⁵:

Փաստորեն երեսնամյա պատերազմի բոլոր կողմերը հայտարարում էին, որ **«պատերազմի նպատակը խաղաղությունն է»** (finis belli pax esto)⁷⁶: Միևնույն ժամանակ երեսնամյա պատերազմի ընթացքում իսկապես գոյություն ունեցող պետությունների համակարգ և մշտական կապու բանակցելու պատրաստակամություն: Վերնախավի շրջանում բացակայում էր միմյանց ոչնչացնելու մղումը: Սակայն այս ամենը չկանխեց պատերազմական աղետը⁷⁷:

Երեսնամյա պատերազմին զոհ գնացավ էլի քան 7 մլն մարդ⁷⁸: Պատերազմի սարսափները փոխեցին ժամանակաշրջանի պետական գործիչների, զինվորականների և մտավորականների պատկերացումները՝ ռազմական հաղթանակների վերաբերյալ. ավելի բանական է պատերազմները հաղթահարել խորամանկ խուսանավմամբ և դիվանագիտությամբ: Աստիճանաբար պատերազմը սկսեց դիտվել

⁷³ Տե՛ս **Rowen H. H.**, The Peace of Westphalia Revisited. *The Journal of Modern History* Vol. 33, No. 1 (The University of Chicago Press, Mar., 1961), pp. 53-56.

⁷⁴ Տե՛ս **Kampmann Ch.**, նշվ. աշխ., էջ 207-208:

⁷⁵ **Richelieu**, Political Testament (extracts from Louis Andre's edition, Paris, 1947) in *The Thirty Years' War: Problems of Motive, Extent, and Effect*. Problems in European Civilization, Edited with an Introduction by Theodore K. Rabb, Harvard University. Boston: D. C. Heath & Company, 1964, p. 79.

⁷⁶ Տե՛ս **Kampmann Ch.**, նշվ. աշխ., էջ 205:

⁷⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 210:

⁷⁸ Տե՛ս **Parker G.** (ed.), նշվ. աշխ., էջ 178: Պատերազմն առաջացրեց ժողովրդագրական ահռելի փոփոխություններ: Ըստ վերջին հաշվարկների՝ Սրբազան հռոմեական կայսրության բնակչությունը նվազեց 20 տոկոսով, ինչը վերականգնվեց միայն 1700 թ.:

որպես դիվանագիտության գործիք: Յատկանշական է՝ Երեսնամյա պատերազմի ընթացքում պատերազմի իրավունքը մեկնաբանվում էր իբրև «**արքաների ծայրահեղ փաստարկ**» (Ultima ratio regum)՝ այն է հակամարտության լուծման վերջին մեթոդը, երբ մյուս բոլոր խաղաղ միջոցներն իրենց սպառել էին⁷⁹:

Երեսնամյա պատերազմը դրսևորվեց իբրև համալիր գործողությունների շարք: Խոշոր ռազմական ծախսերը և ներդրումները խթանեցին նոր տեխնոլոգիաների զարգացմանը ու դինաստիական գինված ուժերի փոխակերպությանը կանոնավոր պետական զորակոչային բանակների⁸⁰: Չինված ուժերի կազմավորման և պահպանման այս հայեցակարգը պետք է դառնար տիրապետող հետագա դարաշրջանի ընթացքում⁸¹: Երեսնամյա պատերազմի արդյունքում փոխվեցին նաև պաշտպանական մարտավարության մասին պատկերացումները⁸²:

Բ. Խաղաղությունը: Վեստֆալի խաղաղության համաժողովը պաշտոնապես բացվեց 1643 թ. հունիսի 11-ին⁸³: Այն, կարելի է ասել, համաեվրոպական էր. ներկայացված էին Եվրոպայի բոլոր նշանակալից քաղաքական ուժերը՝ բացի Անգլիայից, Լեհաստանից,

⁷⁹ Տե՛ս **Wendt R.**, The Principle of “Ultima Ratio” And/Or the Principle of Proportionality. *Oñati Socio-Legal Series*, Vol. 3, N. 1 (2013), p. 84. Յաճախ այս բանաձևով արդարացվում էին ռազմական գործողությունները, երբ հակամարտության լուծման նախորդ խաղաղ փորձերն արդյունք չէին տվել: Կարդինալ Ռիշելիեն հրամայել էր այս լատիներեն արտահայտությունը ձուլել հրանոթների փողերին:

⁸⁰ Տե՛ս **Neiberg M. S.**, *Warfare in World History (Themes in World History)*. London and New York: Routledge, Taylor & Francis Group, 2001, pp. 36-40. Սրավառ օրինակն էր Գուստավ Ադոլֆի շվեդական բանակը, որը դրսևորում էր տարբեր գորատեսակների արդյունավետ համագործակցությունն հրետանու և փոքր զինատեսակների համակցությամբ: Չարգացվեց հրացանակիրների գծային մարտակարգը, ինչը հաջորդական և համախումբ կրակատերթի հնարավորությունն էր ընձեռում: Մեծացավ հրետանու դերը, բազմազանեցվեց հրանոթների տրամաչափերը, հեռահարությունը և շարժունակությունը: Կատարելագործվեցին հրացանները (մուշկետները), որոնցով զինվում էին հրացանակիր հետևակայիները, և ատրճանակները հեծյալների համար: 1630 թվականից սկսեց լայն տարածում ստանալ ամբողջական փամփուռների կիրառումը, որոնք թղթե տարայի մեջ միավորում են գնդակը և վառոդի չափաբաժինը: Կատարելագործվեց գինված ուժերի կազմավորման, զինվորական աստիճանակարգության ու զինվորական կարգապահության համակարգը: Տե՛ս **Wilson P. H.**, *The Thirty Years War: Europe's Tragedy*. Cambridge, Massachusetts: Harvard University Press, 2009, pp. 85-99.

⁸¹ Տե՛ս **Burkhardt J.**, “The Thirty Years’ War”, In *A Companion to the Reformation World*. Edited by R. Po-chia Hsia, 272-290, Blackwell companions to European history. Melbourne: Blackwell Publishing, 2004, p. 282.

⁸² Տե՛ս **Neiberg M. S.**, նշվ. աշխ., էջ 42-44: Լուի 14-րդի օրոք Ֆրանսիացի նշանավոր ռազմական ինժիներ Սեբաստիան դե Վոբանը սահմանային բնագծերում ամրոցաշինության միջոցով նպատակ էր հետապնդում անջատել ռազմադաշտը բնակավայրերից: Վոբանի նորարարական ճարտարապետական լուծումներով կառուցված պաշտպանական ամրությունների համակարգն ըստ էության գծեց արդի Ֆրանսիական պետության սահմանները:

⁸³ Տե՛ս **Bonney R.**, նշվ. աշխ., էջ 86:

Ռուսաստանից⁸⁴ և Օսմանյան կայսրությունից⁸⁵: Վեստֆալյան բանակցություններում դերակատարների ուժերի հավասարակշռումը (equilibrium) դարձավ ընդհանուր ապահովության քաղաքականության առաջնային կանոն: Երբ մեկը հզորանում է, մյուսները ընդդիմադիր միություններ և դաշինքներ են կազմում հավասարակշռությունը պահպանելու համար: Նույնիսկ պապական կուրիան 1632 թ. իր դիվանագետներին հիշեցնում էր, որ ուժերի հավասարակշռությունը «Ջոմեական եկեղեցու շահերից» է բխում⁸⁶:

Կաթոլիկ պետությունների ներկայացուցիչները բանակցելու համար հավաքվել էին Վեստֆալիայի կաթոլիկ հատվածում՝ Մյունստերում, իսկ բողոքականները՝ Օսնաբրյուկում⁸⁷: Նիդերլանդների և Իսպանիայի միջև անջատ հաշտության պայմանագիրը կնքվեց 1648 թ. հունվարի 30-ին, որով ճանաչվեց Նիդերլանդների ինքնիշխանությունը: Սրբազան հռոմեական կայսեր և Շվեդիայի միջև պայմանագիրը կնքվեց 1648 թ. մայիսի 15-ին Օսնաբրյուկում: Կայսեր և Ֆրանսիայի միջև խաղաղության պայմանագիրը կնքվեց 1648 թ. հոկտեմբերի 24-ին Մյունստերում: Խաղաղությունը ավելի հարատև դարձնելու համար **1648 թ. հոկտեմբերի 24-ի** Ֆրանսիայի և Սրբազան հռոմեական կայսեր միջև 128 հոդվածներից բաղկացած ծավալուն հաշտության պայմանագրի մեջ ընդգրկվեցին նաև Շվեդիայի ու կայսեր միջև, ինչպես նաև համաժողովին մասնակից կայսրության միավորների հետ կնքված

⁸⁴ Տե՛ս Cooper J. P. (ed.), նշվ. աշխ., էջ 352:

⁸⁵ Օսմայնյան տերությունը հարյուրամյակներ շարունակ օկուպացնելով Չարավարենյան եվրոպայի զգալի հատվածը այդ ընթացքում երբեք չի նտեգրվեց եվրոպական մշակութային, ընկերային և քաղաքակրթական համակարգին: Չատկանշական է՝ ժամանակաշրջանի եվրոպացի մտածողները Օսմանյան պետությունն օգտագործում էին որպես հակաթեզիս եվրոպական պետությունների հետ համեմատության մեջ: Ինչպես Փերի Անդերսոնն է նշում, Օսմանյան «իսլամական ներխուժումը քրիստոնեական աշխարհի ցայսօր դժվարակիր խնդիրներ է առաջացրել մայրցամաքի ունիտար պատմությունները ներկայացնելու տեսանկյունից»: Տե՛ս Anderson P. R., *Lineages of the Absolutist State*. London and New York: Verso, 1979, pp. 397-400.

⁸⁶ Տե՛ս Parker G. (ed.), նշվ. աշխ., էջ 159:

⁸⁷ Տե՛ս Նույն տեղում, էջ 156: Նախնական պայմանագիրը Սրբազան հռոմեական կայսեր և Ֆրանսիայի միջև ստորագրվել էր Մյունստերում 1646 թ. սեպտեմբերի 13-ին, վերջնականը՝ 1648 թ. հոկտեմբերի 24-ին: Կայսեր և Շվեդիայի միջև նախնական պայմանագիրը ստորագրվել էր 1647 թ. փետրվարի 18-ին Օսնաբրյուկում, վերջնականը՝ 1648 թ. մայիսի 15-ին, ինչը համապատասխան էր Ֆրանսիայի հետ նախնական պայմանագրի տեքստին:

պայմանագրերի շատ դրույթներ⁸⁸: Արդյունքում ստացվեց փոխկապակցված փաստաթղթերի ամբողջություն՝ հաստատելով «Վեստֆալյան խաղաղությունը» (Pax Westphalica)⁸⁹:

Վեստֆալի պայմանագրով⁹⁰ Սրբազան հռոմեական կայսրության իշխանություններն իրենց տարածքներում ստացան գերիշխանություն, բայց ոչ ինքնիշխանություն: Նրանք իրավունք ստացան վարելու իրենց սեփական արտաքին քաղաքականությունը, սակայն նրանց թույլատրված չէր գործելու «ի վնաս կայսեր կամ կայսրության»⁹¹: Բայց գործնականում նրանք կարող էին և գործում էին՝ հարաբերվելով նաև արտաքին դաշինքների հետ⁹²: Իսկ կայսրը պահպանում էր հակաօրինական գործողության դեպքում իշխանությունների կառավարիչներին գահընկեց անելու իրավունքը: Նա կորցրեց առանց կայսերական սեյմի համաձայնության պատերազմ հայտարարելու, խաղաղություն և կնքելու և հարկեր սահմանելու իրավունքը⁹³:

Երեսնամյա պատերազմի ընթացքում ինքնորոշման և ինքնիշխան պետականաշինության առումով կարող ենք առանձնացնել Նիդերլանդների, Շվեյցարիայի և Բոհեմիայի

⁸⁸ Տե՛ս **Treaty of Westphalia: Peace Treaty between the Holy Roman Emperor and the King of France and their respective Allies**, *Yale Law School; Lillian Goldman Law Library, The Avalon Project: Documents in Law, History and Diplomacy*. URL: http://avalon.law.yale.edu/17th_century/westphal.asp (28.05.2015).

⁸⁹ Տե՛ս **Cooper J. P.** (ed.), նշվ. աշխ., էջ 433: Վեստֆալյան պայմանագրերի լեզուն լատիներենն էր: Շուտով ֆրանսերենը փոխարինեց լատիներենին՝ իբրև դիվանագիտության, գիտության և եվրոպայի ընդհանուր լեզու: Տե՛ս **Treasure G.**, նշվ. աշխ., էջ 5:

⁹⁰ 1648 թ. Մյունստերի և Օսնաբրյունկի պայմանագրերը, որոնք միասին հայտնի են որպես Վեստֆալի պայմանագիր, ձևավորեցին աշխարհակարգի և միջազգային իրավունքի նոր հարացույց ու համակարգ՝ հիմնված երեք հիմնական սկզբունքների վրա՝ պետական ինքնիշխանության սկզբունք, ինքնիշխան պետությունների իրավահավասարություն և ինքնիշխան պետությունների ներքին գործերին չմիջամտելու պարտավորություն: Տե՛ս **Rosenau J. N., Czempiel E.-O.** (ed.), *Governance without government: order and change in world politics*. Cambridge, New York: Cambridge University Press, 2003, p. 59. Տե՛ս **Hassan D.**, *The Rise of the Territorial State and the Treaty of Westphalia*. *Yearbook of New Zealand Jurisprudence*, ed. Gay Morgan, Vol. 9, 2006, pp. 62-70. Տե՛ս **Лебедева М. М.**, *Что угрожает Вестфалю? Международные процессы: Журнал теории международных отношений и мировой политики*, Т. 6, №1(16), январь-апрель 2008, с. 117-121.

⁹¹ Տե՛ս Article LXV - **Treaty of Westphalia: Peace Treaty between the Holy Roman Emperor and the King of France and their respective Allies**. Տե՛ս նաև **Croxton D.**, *The Peace of Westphalia of 1648 and the Origins of Sovereignty*. *The International History Review*, Vol. 21, No. 3, Taylor & Francis, Ltd., Sep., 1999, pp. 569-852.

⁹² Տե՛ս **Sonnino P.**, *Mazarin's quest: the Congress of Westphalia and the coming of the Fronde*. Cambridge, Massachusetts, London: Harvard University Press, 2008, p. 8.

⁹³ Տե՛ս **McKay D., Scott H. M.**, նշվ. աշխ., էջ 5: Այսպիսով, կայսրությունը ժառանգական բացարձակ միապետության վերածելու Յապոնիայի փորձերը ձախողվեցին: Միաժամանակ լուծարվեց նաև 1617 թ. Օնտարի պայմանագրով ձևակերպված իսպանական և ավստրիական Յապոնիայի համընդհանրական միությունը: Տե՛ս **Teschke B.**, նշվ. աշխ., էջ 244: Տե՛ս **Po-chia H. R.** (ed.), նշվ. աշխ., էջ 278-286:

օրինակները: 1648 թ. Վեստֆալյան խաղաղութամբ ճանաչվեցին միայն Նիդերլանդների և Շվեյցարիայի ինքնիշխանության իրավունքները⁹⁴: Մեր դիտարկմամբ՝ ճանաչման այս ակտերը կարելի է համարել **ազգերի ինքնորոշման իրավունքի ճանաչման նախորինակներ**:

Վեստֆալյան կարգավորումներով հիմնարար կերպով վերանայվեց 1555 թ. Աուգսբուրգի հաշտության պայմանագրի «**ուժմ տարածքը, նրա դավանանքը**» (*cuius regio, eius religio*)⁹⁵ դրույթը և կրոնական հարցերի «ինքնիշխանությունը» հանվեց տիրակալների հայեցողություններից: Սրբազան հռոմեական կայսրության համար Վեստֆալի պայմանագիրն ըստ էության աշխարհիկ, ազատական սահմանադրությունն էր⁹⁶: Այստեղ դրսևորվեց դավանական ազատության գաղափարը:

Մեր համոզմամբ՝ Վեստֆալյան խաղաղությանամբ **դավանական համայնքների ինքնորոշման իրավունքի** և Նիդերլանդների ու Շվեյցարիայի օրինակներով **քաղաքական համայնքների ինքնորոշման իրավունքների** ճանաչման ակտերը հիմնարար նշանակություն ունեցան **քաղաքական ինքնորոշման գաղափարի** զարգացման տեսանկյուններից:

⁹⁴ Մասնավորապես, 1618 թ. մայիսի 23-ին Պրահայի ամրոցի պատուհանից կայսրության ներկայացուցիչների դեֆենեստրացիան (լատիներենից՝ de-fenestra - պատուհանից դուրս նետում) դարձավ Բոհեմիական ինքնիշխանության հաստատման փաստացի և պաշտոնական խորհրդանիշը, որը մինչ այդ դրսևորվում էր միայն քվադրիպետական մակարդակում: Կայսրություններից առանձնացավ և իբրև ինքնիշխան պետություն ձևավորվեց Շվեյցարական համադաշնությունը: Ինչպես շվեյցարական կանտոններն էին հաստատել Յելվետական համադաշնությունը (Confoederatio Helvetica), այնպես էլ Բոհեմիայի, Մորավիայի, Սելիզիայի և Վերին ու Ստորին Լուսատիաների իշխանությունները հիմնեցին Բոհեմիական համադաշնությունը (Confoederatio Bohemica): Համանման գործընթացների արդյունքում էր ձևավորվել նաև Նիդերլանդների միացյալ պրովինցիաների հանրապետությունը: 1620 թ. բոհեմիական ապստամբությունը, որը բորբոքել էր Երեսնամյա պատերազմը, ճնշվեց և բոհեմիական պետականաշինությունը ձախողվեց: Երեսնամյա պատերազմի ավարտին 1648 թ. Վեստֆալյան խաղաղութամբ իրավաբանորեն ճանաչվեցին միայն Նիդերլանդների և Շվեյցարիայի ինքնիշխանության իրավունքները: Սա ամրապնդեց այն համոզմունքը և պատասխանատվությունը, որ միայն համաեվրոպական կոնգրեսը կարող է վավերացնել պետությունների ստեղծումը կամ վերացումը: Տե՛ս **Burkhardt J.**, նշվ. աշխ., էջ 277-278: Տե՛ս **Cooper J. P.** (ed.), նշվ. աշխ., էջ 358:

⁹⁵ Տե՛ս **Parker G.** (ed.), նշվ. աշխ., էջ 157:

⁹⁶ Տե՛ս **Straumann B.**, The Peace of Westphalia as a Secular Constitution. *Constellations*, Vol.15, Number 2, Blackwell Publishing Ltd., 2008, pp. 173-188.

Այս ախտով, 1648 թվականը⁹⁷ փորձ էր իրավականացնել ու եվրոպական քաղաքականությունը՝ երաշխավորված Ֆրանսիայի և Շվեդիայի կողմից, որոնք ստացան իրավարարի և միջամտողի վերադաս իրավունքներ: **Չայսմ՝ կարող ենք անդել, որ վեստֆալյան կարգավորումները փաստացի չվերացրեցին եվրոպական համակարգի ասիմետրիկ կարգված բնույթը, քանզի նրա հիմնական գաղափարը խաղաղությունն էր, ոչ թե պետությունների ինքնորոշումը:** Այդուամենայնիվ, այն ոչ թե հերթական պայմանագիր էր հակամարտ կողմերի միջև, այլ եվրոպայում միջպետական հարաբերությունների կայուն համալիր էր ուղենշում, որն ապագայում պետք է ուղենշեր նաև համաշխարհային քաղաքականությունը:

Եվրոպական համակարգի կառավարող սկզբունքները դարձան *պատերազմը, ուժերի հավասարակշռությունը* և *դիվանագիտությունը*՝ առանցքային տերությունների դերակատարությունը: Ընդ որում, այս սկզբունքներից առանցքայինը՝ *ուժերի հավասարակշռությունը*, հանդես էր գալիս ոչ թե իբրև տերությունների համաստեղություն, որը գործում էր որոշակիորեն սահմանված կանոններով, այլ որպես գիտակցական և շարունակական գործընթաց, որի ընթացքում դերակատարները մշտապես վիճարկում էին *հավասարակշռության* իմաստը⁹⁸:

Վեստֆալյան խաղաղությունից հետո եվրոպայում դրսևորվեցին ինչպես պետությունների իրավահավասար համակեցության սկզբունքը, այնպես էլ դրա խաթարման փորձերը: Ամենանշանավորը թերևս Ֆրանսիայի արքա Լուի 14-րդի փորձն էր, որն ավարտվեց «Իսպանական ժառանգության համար» (1701-1714 թթ.) պատերազմով⁹⁹: Պատերազմը և այն եզրափակող **Ուտրեխտի 1713 թ.**

⁹⁷ Եվրոպայում պատերազմը չավարտվեց անմիջապես 1648 թ.: Ֆրանսիայի համար դեռևս պահպանվում էր իսպանական Յարսբուրգների սպառնալիքը, որոնք դեռ գերիշխում էին Յարսվային եվրոպայում: Ֆրանս-իսպանական հակամարտությունը շարունակվեց մինչև 1659 թ. նոյեմբերի 7-ի Պիրենեյների հաշտության պայմանագիրը՝ ավարտվելով Իսպանիայի դիրքերի թուլացմամբ: Տե՛ս McKay D., Scott H. M., նշվ. աշխ., էջ 7-9: Տե՛ս Bonney R., նշվ. աշխ., էջ 88, 90: Տե՛ս Ward W. R., Christianity under the Ancien Re'gime, 1648–1789: New Approaches to European History, series editors William Beik and T. C. W. Blanning. Cambridge: Cambridge University Press, 2004, pp. 34-35.

⁹⁸ Տե՛ս Bull H., նշվ. աշխ., էջ 13-14:

⁹⁹ Տե՛ս Kennedy P. M., The Rise and Fall of the Great Powers: Economic Change and Military Conflict from 1500 to 2000. London, Sydney and Wellington: Unwin Hyman, 1988, pp. 41, 88: Տե՛ս McKay D., Scott H. M., նշվ. աշխ., էջ 20-35: Տե՛ս Bromley J. S. (ed.), նշվ. աշխ., էջ 201-220, 223-253: Ведюшкин В. А., Юсим М.

հաշտության ունը պետության ունեցած Եվրոպական համակարգի կայացման կարևոր հանգրվան հանդիսացան¹⁰⁰: Պատերազմի ավարտին¹⁰¹ հաստատված խաղաղության ամբ Ֆիլիպ 5-րդը ճանաչվեց Իսպանիայի թագավոր, սակայն առանց Ֆրանսիական գահը ժառանգելու իրավունքի: Պահպանվեց Եվրոպական հավասարակշռության ունը և մշակվեց վերջինիս պահպանման ճկուն մեխանիզմ. այսուհետ որևէ տերության կողմից **«Եվրոպական հավասարակշռության ունը»** նետված մարտահրավերը պետք է պատասխան ստանար «նոր դաշինքների կողմից»¹⁰²: **Ուժերի հավասարակշռության** սկզբունքը դարձավ Եվրոպական համակարգի ճանաչված նորմ¹⁰³:

Կարող ենք ձևակերպել, որ, ի տարբերություն Վեստֆալյան խաղաղության, Ուտրեխում հիմնական գաղափարը պետության ունեցած ինքնորոշման իրավունքն էր, ոչ թե խաղաղությունը: Քանզի Եվրոպայում գերիշխանության հասնելու Ֆրանսիայի փորձերը սպառնում էին խախտել Վեստֆալյան խաղաղության հաստատված **ինքնիշխան պետության ունեցած օրինական համակարգը**¹⁰⁴:

Մեր ձևակերպած պետության ունեցած ինքնորոշման իրավունքը հասկացության ամրապնդման համար կիրարկելի է գերմանացի նշանավոր իմաստասեր Իմանուել Կանտի (1724–1804 թթ.) մշակած պետության ունեցած միջև հավերժական խաղաղության մասին

A. (отв. ред.), և զվ. աշխ., էջ 530-533: Տե՛ս **Занова Т. В.**, Духовные основы и идеологические постулаты российской дипломатии. Под ред. А. Чубарьяна, Религия и политика в XX веке. Москва, 2006, с. 263-265. Տե՛ս **Burkhardt J.**, Wars of States or Wars of State-Formation? Asbach O. and Schröder P. (ed.), War, the State, and International Law in Seventeenth-Century Europe. Farnham, Burlington: Ashgate Publishing, 2010), p. 27. Տե՛ս **Anderson P. R.**, և զվ. աշխ., էջ 397-400:

¹⁰⁰ Տե՛ս **Lesaffer R.**, The Peace of Utrecht, the Balance of Power and the Law of Nations. *Tilburg Law School Legal Studies Research Paper Series*, No. 05/2014, pp. 4-5.

¹⁰¹ Տե՛ս **Bromley J. S.** (ed.), և զվ. աշխ., էջ 384-398, 410-445: Պատերազմի առիթ էր հանդիսացել 1700 թ. Իսպանիայի վերջին Յապոնիայի թագավորի՝ անժառանգ Կառլոս 2-րդի մահը, ով Իսպանիայի գահը կտակել էր Ֆրանսիայի արքայազն Լուի 14-րդի թոռ Անժոյի դուքս Ֆիլիպին: Սամեժ առավել ունը էր ընձեռում Բուրբոնների արքայատանը և Լուի 14-րդին անձամբ: Լուի 14-րդը հրաժարվեց հեռացնել Ֆիլիպին Ֆրանսիական գահի ժառանգության իրավունքից հնարավոր դարձնելով Ֆրանսիայի և Իսպանիայի ապագա միավորումը մեկ միապետի իշխանության ներքո: Այս հանգամանքը Անգլիան, Նիդերլանդները, Ավստրիան, Պրուսիան, Պորտուգալիան և այլ Եվրոպական պետությունները ընկալեցին իբրև սպառնալիք «Եվրոպական հավասարակշռության ունը» և վերաձևակերպեցին իրենց «Մեծ դաշինքն» ընդդեմ Լուի 14-րդի: «Իսպանական ժառանգության համար» համաեվրոպական պատերազմի արդյունքում Եվրոպայում համընդհանրական միապետության հաստատման Լուի 14-րդի նկրտումները ձախողվեցին: Տե՛ս **Kennedy P. M.**, և զվ. աշխ., էջ 104:

¹⁰² Տե՛ս **Bromley J. S.** (ed.), և զվ. աշխ., էջ 446-479: Իսպանիան պահպանեց իր գաղութային կայսրության ունը Ամերիկայում, սակայն զրկվեց իր Եվրոպական տիրույթներից (Յարակային Նիդերլանդներից, Նեապոլից, Միլանից, Սարդինիայից, Սիցիլիայից, Ջիբլարթարից և Մինորկայից) և վերածվեց երկրորդական կարգի Եվրոպական պետության:

¹⁰³ Տե՛ս **Teschke B.**, և զվ. աշխ., էջ 233:

¹⁰⁴ Տե՛ս **Watson A.**, Systems of States. *Review of International Studies*, Vol.16/Issue 02, April 1990, pp. 106-107.

պայ մանագրի նախագծի հետևյալ դրույթը. «ժառանգական միապետությունը չի նշանակում պետություն, որը կարող է ժառանգվել այլ պետության կողմից, միայն պետությունը կառավարելու իրավունքը կարող է ժառանգությամբ փոխանցվել այլ ֆիզիկական անձի: Պետությունն է ձեռք բերում կառավարիչ, այլ ոչ թե ինչ-որ անձը (ով տիրում է այլ պետության) ձեռք է բերում տվյալ պետությունը: Քանզի հանրահայտ է՝ վերջին ժամանակներում ինչպիսի վտանգ է եվրոպայի համար այն հանգամանքը, որ անգամ պետությունները կարող են ամուսնանալ, ինչը դիտվում է իբրև առանց ավելորդ ջանքերի սեփական հզորությունը ավելացնելու կամ տիրույթները ընդարձակելու նոր միջոց»¹⁰⁵: Իսպանական ժառանգության համար պատերազմում հակաֆրանսիական խմբավորման կողմնակիցները ցանկանում էին ամրագրել, որը պետությունները չեն կարող ժառանգվել, այլ միայն պետությունը կառավարելու իրավունքը կարող է ժառանգվել:

Հայ սմ՝ Եվրոպայում հավասարակշռության պահպանման գաղափարն ընդունվեց որպես եվրոպական համակարգի անդամ պետությունների¹⁰⁶ ընդհանուր նպատակ և «**Քրիստոնեական աշխարհի հանրային կամքի**» դրսևորում¹⁰⁷: 18-րդ դարի սկզբին Իսպանական ժառանգության համար և Հյուսիսային պատերազմների արդյունքում առաջին անգամ Վեստֆալյան համակարգը լուրջ վերափոխման ենթարկվեց: Պետությունների եվրոպական համակարգում ուժերի նոր հարաբերակցություն հաստատվեց: Եվրոպական առանցքային դերակատարներ Ֆրանսիային և Շվեդիային իբրև հակակշիռներ հանդես եկան Մեծ Բրիտանիան, Ավստրիան, Պրուսիան և Ռուսաստանը¹⁰⁸: Իբրև պետությունների

¹⁰⁵ **Kant I.** (1795), *Toward Perpetual Peace and Other Writings on Politics, Peace, and History*. Edited and with an introduction by Pauline Kleingeld; translated by David L. Colclasure. New Haven and London: Yale University Press, 2006, pp. 67-68.

¹⁰⁶ Մեծ Բրիտանիան, Ուտրեխտի պայմանագրով ստանալով Ջիբրլարթարը և Միևորկա կղզին, հրաժարվեց մայրցամաքային Եվրոպայում տարածքային պահանջներից և պատրաստակամություն ու կարողություն ցուցաբերեց կարգավորելու եվրոպական հարաբերությունները «ակտիվ հավասարակշռման» իր նոր քաղաքականությամբ: Տե՛ս **Teschke B.**, նշվ. աշխ., էջ 259: Տե՛ս **Bromley J. S.** (ed.), նշվ. աշխ., էջ 275-276:

¹⁰⁷ Սա արտահայտվեց 1713 թ. Ուտրեխտի պայմանագրի նախաբանում Լուի 14-րդի գերիշխանական հավակնությունները զսպելու համար համախմբված հակաֆրանսիական դաշինքի անդամ պետությունների կողմից: Տե՛ս **A Collection of Treaties between Great Britain and Other Powers**. Edited by Chalmers G., London: J. Stockdale, 1790, pp. 340-342. Տե՛ս **Bull H.**, նշվ. աշխ., էջ 102: Հստակեցնելով նշենք, որ Ուտրեխտում ստորագրված միջաբերկողմ հաշտության պայմանագրերից միայն երկուսում կարողակի հղում «ուժերի հավասարակշռություն» սկզբունքին՝ Իսպանիայի և Մեծ Բրիտանիայի միջև կնքված պայմանագրում, ինչպես նաև Իսպանիայի ու Սափոյայի միջև պայմանագրում: Տե՛ս **Lesaffer R.**, նշվ. աշխ., էջ 2-3:

¹⁰⁸ Տե՛ս **Чубарьян А. О.**, նշվ. աշխ., էջ 72-73, **Rosenau J. N., Czempel E.-O.** (ed.), նշվ. աշխ., էջ 48:

փոխարարությունները սկզբունքներ վերահաստատվեցին պետական (կամ ազգային) շահը և ուժերի հավասարակշռությունը¹⁰⁹:

1.3 ԱԶԳՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊՍՏՄԱԿԱՆ ՈՒՂԻՆ

Եվրոպական աշխարհակարգի կառուցվածքային կերպափոխություններին զուգահեռ ընթանում էր դրա հիմնական միավորի՝ **արդի պետության**, ձևավորման գործընթացը, որը սկզբում ձևակերպվեց իր դինաստիական կամ բացարձակապետական, իսկ այնուհետև ազգային մակարդակով:

Ա. Բացարձակապետությունը: 14-15-րդ դարերում եվրոպական հասարակության և տնտեսության խորքային ճգնաժամը վերհանեց Ֆեոդալական արտադրանական սահմանափակ հնարավորությունները: Վերածննդի դարաշրջանի խոշորագույն քաղաքական մեթոդաբան Նիկոլո Մաքիավելին (1469-1527 թթ.) ձևակերպեց պետության **տիրակալի և բյուրոկրատական ապարտի արդյունավետության ուղիները:** Նա քաղաքական գործչի վարվելակերպի ու քաղաքականության հիմքում տեսնում էր բանականությունը, այլ ոչ թե քրիստոնեական բարոյագիտությունը, որը կարելի էր արհամարհել հանուն պետական շահի: Ըստ այդմ՝ լավ տիրակալի առաջնային պարտականությունը պետք է լինի արտաքին ու ներքին սպառնալիքներից պետության պաշտպանությունը և կայուն ու արդյունավետ կառավարման ապահովումը: Մաքիավելին կերտում էր **ինդեպական բացարձակ միապետի կերպարը**, որը բոլոր միջոցներով՝ խաբեությամբ և արդարությամբ, դաժանությամբ և գթասրտությամբ, խորամանկությամբ և ուժով ապահովում է իր իշխանության ամրապնդումը և ընդարձակումը¹¹⁰: Ըստ Մաքիավելիի՝ խելամիտ կառավարիչը չի կարող հավատարիմ մնա իր երդմանը կամ հաշտության պայմանագրերին, եթե դավնասում է պետական շահերին: Նա գտնում է, որ տիրակալին անհրաժեշտ է ունենալ բոլոր հայտնի առաքինությունները, սակայն անհրաժեշտ է երևալ այդ

¹⁰⁹ Մեկը կախված էր մյուսից: Որևէ մի պետության կողմից առաջինին չափից դուրս ջանասիրաբար հետևելը առաջացնում էր երկրորդի անհրաժեշտությունը: Տե՛ս **Kissinger H. A.** (1994), *Diplomacy*, p. 66.

¹¹⁰ Տե՛ս **Machiavelli N.** (1513), *The Prince*. Translated with an introduction by Harvey C. Mansfield, 2nd ed. Chicago and London: The University of Chicago Press, 1998, pp. 3-105.

առաքինության ներքին կրող: Խոսելով պատերազմի արդարության մասին՝ Մաքիավելին ձևակերպում է. «Այն պատերազմն է արդար, որն անհրաժեշտ է, և այն զենքն է սրբազան, որի վրա է միակ հույսը»¹¹¹: Իսկ «պաշտպանության միայն այն միջոցներն են լավ, հիմնավոր և հուսալի, որոնք կախված են քեզանից և քո քաջությանից»¹¹²: Մաքիավելին պետությանը դիտարկում է իբրև քաղաքական իրադրություն: Ըստ նրա՝ իշխանության ակունքները երկուսն են՝ ազնվականությունը և ժողովուրդը, որոնց հակադրությունն առկա է բոլոր պետություններում¹¹³:

16-րդ դարի ընթացքում Արևմտյան Եվրոպայում մեկնարկեց բացարձակապետության կենտրոնացված քաղաքական կառույցի և ուղղահայաց իշխանության համակարգի ձևավորումը¹¹⁴: Իսկ 17-րդ դարը բնական քաղաքական մտքի, փորձարարական գիտության և իմաստասիրության ժամանակաշրջան էր: Այս հանգամանքները մեծապես ազդեցին բացարձակապետության երկայն վրա¹¹⁵: Երեսնամյա պատերազմը և դրան հաջորդած մյուս երկարատև պատերազմները նպաստեցին Եվրոպայում բացարձակապետական միտումների ու ժեղացմանը: Այս պատերազմները աննախադեպ կերպով ավելացնում էին պետական ծախսերը: Անընդատ աճող պետական ծախսերը պահանջում էին նոր հարկատեսակների սահմանում, որի համար անհրաժեշտ էր համայնքային ժողովների համաձայնությունը: Այս անհրաժեշտությունը վերացվեց, ինչը կարևորագույն քայլ էր համայնքային-ներկայացուցչական կարգից դեպի բացարձակ միապետությանն անցմանը: Միջնադարյան «խառը միապետական» կառույցը, որը ներառում էր արիստոկրատական և ժողովրդավարական կառավարման տարրեր, փոխարինվեց միապետին պատկանող **«միասնական և անբաժան ինքնիշխանություն»** հղացքով¹¹⁶:

Լուի 14-րդի (1643-1715 թթ.) ժամանակաշրջանի Ֆրանսիան բացարձակապետության դասական օրինակ է համարվում, որը ընդօրինակման առարկա հանդիսացավ ժամանակի այլ Եվրոպական

¹¹¹ Նոլյն տեղում, էջ 103:

¹¹² Նոլյն տեղում, էջ 97:

¹¹³ Նոլյն տեղում, էջ 38-42:

¹¹⁴ Տե՛ս Anderson P. R., նշվ. աշխ., էջ 15:

¹¹⁵ Տե՛ս Cooper J. P. (ed.), նշվ. աշխ., էջ 129:

¹¹⁶ Տե՛ս Ведюшкин В. А., Юсим М. А. (отв. ред.), նշվ. աշխ., էջ 482-483:

միապետությունը ներքին համար: Արքայի ձեռքերում էր կենտրոնացված պետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները: Պետական ինքնիշխանության համախմբումը Ֆրանսիայում սկսվել էր դեռևս կարդինալ Ռիշելիեյի օրոք՝ Երեսնամյա պատերազմի ընթացքում: Նրա ջանքերով դրվեցին նոր կառավարման համակարգի հիմքերը, որը թույլ տվեց ևս շուրջ 150 տարի պահպանել թագավորական իշխանությունը Ֆրանսիայում: Այս գործընթացը ուղեկցվում էր ինչպես տեղերում կենտրոնական կառավարության տեղական վարչական մարմինների ուժեղացմամբ, այնպես էլ թագավորական դատական համակարգի ամրապնդմամբ¹¹⁷:

Ժամանակաշրջանի պատմության վերաբերյալ Վոլտերը գրում է. «Բանական իմաստասիրությունը ոչ միայն երևան եկավ այս շրջանում, այլև ճշմարիտ կլինի ասել, որ կարդինալ Ռիշելիեյի վերջին տարիներից մինչև Լուի 14-րդի մահվանը հաջորդած տարիները ընդհանուր կերպափոխություն տեղի ունեցավ ինչպես մեր արվեստներում, մտքերում և սովորույթներում, այնպես էլ մեր կառավարման մեջ... Այս բարերար ազդեցությունը սահմանափակվեց ոչ միայն Ֆրանսիայով, այլև անցավ Անգլիա՝ ոգեշնչելով արդյունավոր մրցակցություն, այն լավ ճաշակ ներմուծեց Գերմանիա և գիտություններ Ռուսաստան, այն անգամ վերածնեց Իտալիան... և Եվրոպան Լուի 14-րդի արթունքից է ընդօրինակել և՛ բարքերը, և՛ ընկերային ոգին...»¹¹⁸

17-րդ դարի երկրորդ կեսը և 18-րդ դարի սկիզբը առանձնացավ բացարձակապետական քաղաքական համակարգերի հաղթարշավով գրեթե բոլոր նշանակալի եվրոպական միապետություններում: **Լուսավորյալ միապետները**, որոնք հաղորդակից էին 18-րդ դարի լուսավորական շարժման գաղափարներին, կարծում էին, որ կարող են իրենց առաքելությունն իրականացնել միայն իրենց ձեռքերում բացարձակ իշխանություն կենտրոնացնելու պարագայում¹¹⁹: Յիմնական ընդհանրություններից բացի, տարբեր երկրներում

¹¹⁷ Տե՛ս Anderson P. R., նշվ. աշխ., էջ 98-106: Կենտրոնական կառավարության հարկային քաղաքականության և վարչարարության խստացման արդյունքում Փարիզի պառլամենտն ու ազնվականությունը ընդհիմադիր դիրք գրավեցին: Սկսվեց մեծագույն ներհասարակական ճգնաժամ: Այսպես. 1648-1649 թթ. առաջացավ «պառլամենտական ֆրոնդան», որին շուտով փոխարինեց «իշխանների ֆրոնդան» (1650-1653 թթ.): Սկսվեց ռազմական առճակատում կառավարության և ազնվականության միջև: Ֆրոնդայի պատրույթները ճանապարհ հարթեց Լուի 14-րդի կողմից բացարձակապետության հաստատման համար: Տե՛ս Sonnino P., Mazarin's quest: the Congress of Westphalia and the coming of the Fronde. Cambridge, Massachusetts, London: Harvard University Press, 2008, pp. 152-171. Տե՛ս Ведюшкин В. А., Юсим М. А. (отв. ред.), նշվ. աշխ., էջ 484:

¹¹⁸ **Voltaire**, The Age of Louis XIV (extracts from Everyman's Library Edition, translated by Martyn P. Pollack) in *The Greatness of Louis XIV: Myth or Reality?* Problems in European Civilization, Edited with an Introduction by William F. Church, Brown University. Boston: D. C. Heath & Company, 1959, pp. 34-35.

¹¹⁹ Տե՛ս Карп С. Я. (отв. ред.), Мир в XVIII веке. Т. 4 - 2013. Всемирная история: В 6 т. гл. ред. А.О. Чубарьян; Ин-т всеобщ. истории РАН. Москва: Наука, 2011, с. 113-121, 174.

բացարձակապես տակալան համակարգն ունեւորեալն իր դրսևորման յ ուրահատկությունները: Պրուսիայի համար բնութագրական էր խիստ ռազմականացումը¹²⁰: Այստեղ լուսավորչաբացարձակապետությունը նույնացվում է Ֆրիդրիխ 2-րդ (1740-1786 թթ.) արքայի անվան հետ:

Կայսրուհի Մարիա Թերեզայի (1740-1780 թթ.) և կայսր Յոզեֆ 2-րդի (1765-1790 թթ.) կառավարման օրոք Ավստրիական բազմազգ կայսրությունում ստեղծվեց արդյունավետ կառավարման համակարգ¹²¹: Ավստրիական բացարձակապետությունը արտահայտում էր ավստրիական կայսրության տարածքների քաղաքական բազմազանությունը, որն այդպես էլ չհաջողվեց մեկ շրջանակի մեջ դնել¹²²: Ավստրիացի Չաբսբուրգներին հաջողվեց իրենց բացարձակ իշխանությունը հաստատել Սրբազան հռոմեական կայսրության միայն որոշակի հատվածներում՝ Ավստրիայում, Խորվաթիայում, Բոհեմիայում և Յուգոսլավիայում¹²³:

Ռուսաստանը ևս անմասն չմնաց այս համաեվրոպական միտումից: Առավել ամրապնդվեց ցարական ինքնակալությունը, իսկ արդեն 1653 թ.-ից հետո Չամերկրյա ժողովներ (Земский собор) այլևս չէին գումարվում¹²⁴: Ռուսաստանում լուսավորչաբացարձակապետության հիմնադիր ներկայացուցիչն էր Պետրոս 1-ինը (1682-1725 թթ.), ով կրճատեց տոհմիկ ավագանու (բոյարներ) իշխանությունը՝ ստեղծելով պետության կառավարման արդիական բյուրոկրատական համակարգ: Այս կերպ ուժեղացավ ինքնակալ կայսեր կենտրոնական իշխանությունը¹²⁵: Ռուսական բացարձակ միապետությունն ունեւորեալն իր դրսևորման առանձնահատկությունները: Ի տարբերություն Լուի 14-րդի Ֆրանսիայից, պետությունը առանձնացվում էր ինքնիշխանի անձից: Ռուսական կողմը հայտարարում էր, որ իրենք «միակ ուղղափառ քրիստոնյաներն են, Մոսկվան երրորդ և վերջին Յոզեֆն է, ցարը՝

¹²⁰ Տե՛ս Anderson P. R., նշվ. աշխ., էջ 244-266:
¹²¹ Տե՛ս Карп С. Я. (отв. ред.), նշվ. աշխ., էջ 143:
¹²² Տե՛ս Anderson P. R., նշվ. աշխ., էջ 299:
¹²³ Տե՛ս Ведюшкин В. А., Юсим М. А. (отв. ред.), նշվ. աշխ., էջ 487-492:
¹²⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 491, 643:
¹²⁵ Տե՛ս Карп С. Я. (отв. ред.), նշվ. աշխ., էջ 172:

միակ քրիստոնյա կայսրը»¹²⁶: Այս բացարձակապետությանը սահմանափակվեց միայն 20-րդ դարի սկզբին՝ 1906 թ. սահմանադրությամբ:

Ֆրանսիայում Լուի 14-րդից հետո մինչև 1789 թ. ընկած ժամանակահատվածը **բացարձակապետությունը աստիճանաբար դառնում էր նվազ արդյունավետ** Սրան զուգընթաց բուրժուազիան ամրապնդում էր իր դիրքերը: Սակայն հոգևորականության, ազնվականության ու երրորդ դասի ընկերային դիրքերը շարունակում էին կաղապարված մնալ ֆրանսիական պետության ընկերային և քաղաքական կառույցում¹²⁷: Սա արգելակում էր ընդհանուր զարգացումը և հանգեցրեց համակեցական ճգնաժամի: Նույնիսկ այն եվրոպական երկրներում, ուր արդեն իսկ քաղաքական ազատությունները հաղթանակել էին, միևնույն է ներհասարակական ճգնաժամերը դեռևս շարունակվում էին, քանզի այդ ազատություններից կարող էին օգտվել միայն որոշ արտոնյալ խմբեր: Այդպիսին էր իրավիճակը Նիդերլանդներում 1648 թ. Վեստֆալի պայմանագրից հետո: Այդպիսին էր նաև իրավիճակը Անգլիայում 1688 թ. Փառահեղ հեղափոխությանից հետո: Անգլիական պառլամենտը ներկայացնում էր ոչ թե ամբողջ երկիրը, այլ «երկակի ազնվականությունը»՝ վիգերին (բուրժուազիա) և թորիներին (ազնվականություն)¹²⁸:

Միայն Ֆրանսիական հեղափոխությունը հանձին իր հիմնարար փաստաթղթի՝ ««Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրի»

¹²⁶ Cooper J. P. (ed.), նշվ. աշխ., էջ 113:

¹²⁷ Նեոմարքսիստական քննադատական տեսության համաձայն՝ բացարձակապետության դարաշրջանի եվրոպայում 1648 թվականից հետո էլ առաջնորդվում էին ոչ թե ազգային, այլ դինաստիական շահերով: Պետությունների եվրոպական համակարգի կայացումը, գործունեությունը և կերպափոխումը գերազանցապես ղեկավարվում էին սոցիալական ունեցվածքային հարաբերություններով: Դիվանագիտության բարձրագույն մեխանիզմը դինաստիական ամուսնություններն էին, որոնք ոչ միայն բնութագրում էին պետությունների հարաբերությունները, այլև հաստատում էին իշխողների շահավետ ծավալ ապաշտական ռազմավարությունը: Ինչպես Բենեդիկտ Թեյքեն է նշում. «Սա աշխարհաքաղաքական կարգ էր, որում «պետությունները» կարող էին ամուսնանալ «պետությունների» հետ»: Այս միություններն ապահովում էին տարբեր տարածքային պետությունների ներգրավվածությունը մեկ քաղաքական միջավայրի մեջ: Այս առումով եվրոպական քաղաքականությունը Յաքսբուրգների, Բուրբոնների, Սոյունարտների, Յոհենսգոլլերների, Ռոմանովների, Վիտելսբախների և այլ արքայատների հարաբերություններ էր: Բացի այդ, կարևոր դեր ունեին նաև անդրազգային միջազնվականական միությունները: Teschke B., նշվ. աշխ., էջ 225:

¹²⁸ Տե՛ս Braudel F., նշվ. աշխ., էջ 325:

շրջադարձային հանգրվան դարձավ ազատության պատմության մեջ, հիմնարար ուղենիշ Եվրոպական քաղաքակրթության զարգացման համար»¹²⁹:

Բ. Ազգ-պետության ունը: 15-16-րդ դարերում բացարձակապետությանը զուգահեռ Եվրոպայում մեկնարկում է **Նոր տեսակի ընկերային-պատմական միավորի**՝ ազգ-պետության, ձևավորման գործընթացը¹³⁰: Մինչև Վեստֆալյան համակարգի հաստատումը, Եվրոպայի պատմությունը հիմնականում տարբեր քաղաքների, տերության ներկայամեկեղեցական տիրապետության ու հակամարտության պատմությունն էր: Պետությունների կողմից ռազմական ուժի մենաշնորհումը և բյուրոկրատական համակարգի կայացումը կարևորագույն նշանակություն ունեցավ ազգաշինության գործընթացում¹³¹: Սկսվեց տարածքների միավորում միասնական վարչական կենտրոնների շուրջ և **պետական սահմանների հստակ ընդգծում**: Պետական իշխանությունները ձգտում էին ձևավորել միատար ազգային բնակչություն՝ օգտագործելով ինչպես հարկադրանքի ֆիզիկական (բանակ, ոստիկանություն), այնպես էլ «խորհրդանիշային» միջոցներ (կրթություն, կրոն, սոցիալական օգնություն և այլն)¹³²: Աստիճանաբար (միապետական խորհրդանիշերը պահպանող) պետությունները ազգային ինքնիշխանության զարգացմանը զուգահեռ փոխակերպվում են ազգային պետությունների¹³³:

Ըստ Ֆ. Բրոդելի՝ Եվրոպայում արդի տարածքային պետությունների կայացմանը զուգահեռ Եվրոպական քաղաքակրթությունը ևս դարձավ տարածքային: Իսկ 17-րդ դարում մշակութային վերածնունդն իր արտահայտությունը գտավ արդեն ոչ թե նախկինի պես առանձին քաղաքների, այլ ամբողջական երկրների մակարդակում¹³⁴: Սկսում են հասունանալ ազգային պետությունները՝ Ֆրանսիան, Անգլիան,

¹²⁹ Նույն տեղում, էջ 329:

¹³⁰ Տե՛ս **Кортунов С. В.**, Крушение Вестфальской системы международных отношений и становление нового мирового порядка. В кн.: Мировая политика. Москва: Изд. дом ГУ-ВШЭ, 2007, с. 75-117.

¹³¹ Տե՛ս **Kennedy P. M.**, նշվ. աշխ., էջ 75:

¹³² Տե՛ս **Калхун К.**, Национализм. Пер. А. Смирнова. Москва: Издательский дом «Территория будущего», 2006, с. 139-141.

¹³³ Տե՛ս **Tilly Ch.**, Coercion, Capital, and European States, AD 990–1990. Cambridge, MA: Basil Blackwell, 1990, pp. 91-93.

¹³⁴ Տե՛ս **Braudel F.**, նշվ. աշխ., էջ 324: Այս համառոտում հատկապես կարևոր էր մայրաքաղաքների դերը, որոնք պետությունների կառավարման համակարգի կենտրոնացմանն ու արդիականացմանը համընթաց վերածվեցին նաև համապետական կամ համազգային քաղաքական, տնտեսական և մշակութային կենտրոնների: Փարիզը, Լոնդոնն ու Մադրիդը սկսեցին արտացոլել իրենց երկրների քաղաքական կշիռները և հավաքական մշակութային կերպարները:

ծվեղիան, Նիդերլանդները, Իսպանիան, Պորտուգալիան և այլն: Բոլոր այս պետությունները էլի մի քանի հարյուրամյակ կշարունակեն մնալ իբրև գաղութային կայսրություններ: Սակայն այս տեսակ կայսրություններն այլ ևս դասական կայսրություններ չէին. գաղութները նվաճվում կամ հիմնվում էին ոչ թե վերագրային ամբողջությունն ստեղծելու համար, այլ բացառապես ազգային պետությունների զարգացման նպատակով¹³⁵: Սրանք ազգ-պետություններ էին, որոնք տիրապետում էին կայսրությունների: Թեպետ և այս քաղաքականությունը հոլյժ վարպետորեն քողարկվում էր իրենց քաղաքակրթական առաքելության մասին գաղափարաբանությամբ:

Կրկնենք մեկ անգամ էլ. պետություններում իշխանության կենտրոնացումը, բյուրոկրատական ապարատի կատարելագործումը և տնտեսական փոփոխությունները հանգեցնում են ֆեոդալական հարաբերությունների քայքայման: Տարբեր ընկերային խմբեր սկսում էին միմյանց հարաբերվել **դաշինքների և պարտավորությունների ավելի նոր կերպերով**¹³⁶: Ռեֆորմացիայի հետևանքով և 1555 թ. Աուգսբուրգյան հաշտությամբ Քրիստոնեական աշխարհը բաժանվեց «ուժ տարածքը, նրա դավանանքը» սկզբունքով, այն է՝ կրոնը պետք է ենթարկվեր ինքնիշխան տիրակալի տարածքային վերահսկողությանը: Հանգամանք, որը միավորեց քաղաքական և հոգևոր իշխանությունները՝ տարածելով պետական աշխարհիկությունը (secularism): Այս պայմաններում ժամանակի մտավորականները **ազգային պետության գաղափարը սկսեցին դիտարկել իբրև բնական և քաղաքացիական հասարակության կազմակերպման լավագույն կերպ**՝ կոչված պաշտպանելու ընդհանուր ազգային շահերը: Այնուամենայնիվ, դանդաղ զարգացող ընկերային միտումներից և իմաստասիրական դատողություններից զատ ազգաշինության գործընթացի ամենաառաջնային խթանը պատերազմներն էին: Ռազմական և աշխարհաքաղաքական գործոնները նպաստեցին պետությունների տարածքային և ազգային սահմանների ձևավորմանը¹³⁷: Չարլզ Թիլիի հայտնի բնորոշմամբ՝ «պատերազմը ստեղծեց պետությունը և ընդհակառակը»¹³⁸: Արդի պետությունների

¹³⁵ Տե՛ս և Кортунов С. В., նշվ. աշխ., էջ 75-85: Տե՛ս և Зюганов Г. А., География победы: Основы российской геополитики. Москва, 1997, с. 64.

¹³⁶ Տե՛ս և Tilly Ch., Coercion, Capital, and European States, AD 990–1990, p. 75.

¹³⁷ Տե՛ս և Kennedy P. M., նշվ. աշխ., էջ 70:

¹³⁸ Tilly Ch., Coercion, Capital, and European States, AD 990–1990, pp. 67-90.

ձևավորման գործընթացում կարևոր նշանակություն ունեցավ նաև աշխարհաքաղաքական մրցակցությունը¹³⁹:

17-րդ դարի առաջին կեսին վարձու բանակներին փոխարինեցին ազգային բանակները, որոնք համապատասխանում էին կենտրոնացված պետական կառավարման պահանջներին¹⁴⁰: Ինչպես Փոլ Քենեդին է նշում. «Ռազմական ճիգերը ոչ միշտ են բխել ազգ-պետությունների «գոյության շահերից», սակայն դրանք, անկասկած, եղել են նրանց կայացմանը միտված ամենաթանկարժեք և խթանող գործունեությունը»¹⁴¹:

17-րդ դարի կեսերին ֆեոդալական միավորներից ինքնիշխանության փոխանցումը կենտրոնական թագավորական մարմնին հանգեցրեց պետությունների ներքին տարածքային համախմբմանը: Քաղաքական իշխանության կուտակման այս գործընթացը հանգեցրեց **անձնավորված ինքնիշխանության**՝ Լուի 14-րդի արտահայտությամբ «**Պետությունը ես եմ**»: Այսպիսի ընկերային ռեժիմի համատեքստում հանրային և մասնավոր, տնտեսական և քաղաքական ոլորտների բաժանում չկար, քանզի արքան ամենը դիտարկում էր իբրև իր ժառանգական սեփականություն, իսկ պետական շահը արքայի շահն էր¹⁴²:

Արևմտյան Եվրոպայի ազգ-պետությունները, այդ թվում Ֆրանսիան, Անգլիան, Նիդերլանդները, Իսպանիան, Պորտուգալիան, սկսեցին ձևավորվել արդեն 1648 թ. Վեստֆալի պայմանագրով ավարտուն տեսք ստացած տարածքային պետությունների ներսում¹⁴³: «Ուշացածները»՝ առաջին հերթին գերմանացի և իտալացի ազգերը, անցան զարգացման այլ ճանապարհ, ինչը բնորոշ էր նաև Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի ազգային պետությունների ձևավորմանը, որտեղ դրան նախորդում էր ազգային

¹³⁹ Տե՛ս **Asbach O. and Schröder P.** (ed.), *War, the State, and International Law in Seventeenth-Century Europe*. Farnham, Burlington: Ashgate Publishing, 2010, p. 42.

¹⁴⁰ Տե՛ս **Cooper J. P.** (ed.), նշվ. աշխ., էջ 224:

¹⁴¹ **Kennedy P. M.**, նշվ. աշխ., էջ 71:

¹⁴² Տե՛ս **Asbach O. and Schröder P.** (ed.), նշվ. աշխ., էջ 50:

¹⁴³ Տե՛ս **Tilly Ch.** (ed.), *The Formation of National States in Western Europe*. Princeton, New Jersey: Princeton University Press, 1975, p. 15. Սկսվում է ազգային հիմքով պետությունների համախմբման և նրանց ծավալ ապաշտության գործընթաց: Եթե 1500 թ. դրությամբ Եվրոպայում կային շուրջ հինգ հարյուր անկախ քաղաքական միավորներ, ապա արդեն 1900 թվականին՝ շուրջ քսանհինգը: Պետական իշխանությունները ձգտում էին ձևավորել միատար ազգային բնակչություն՝ օգտագործելով ինչպես հարկադրանքի ու համոզումի ուժային, այնպես էլ խորհրդանիշային միջոցներ:

ինքնագիտակցության և գաղափարաբանության քարոզչական տարածումը¹⁴⁴:

«Ազգ-պետություն» հասկացությունը ձևավորող երկու բաղադրիչները՝ պետությունը և ազգը, միաձուլվել են ազգային պետության մեջ միայն 18-րդ դարի վերջի ամերիկյան և Ֆրանսիական հեղափոխություններից հետո¹⁴⁵: Եվրոպայում ազգ-պետությունների արդի համակարգը ձևավորվեց միայն 18-19-րդ դարերում այն պետություններում, որտեղ հետզհետե գերիշխող էր դառնում արդյունաբերական հասարակությունը¹⁴⁶: Աստիճանաբար կապիտալիստական կուտակման գործընթացները պայմաններ ստեղծեցին իշխանության նոր կառույցների ձևավորման համար: Անգլիայում 1688 թ. Փառահեղ հեղափոխությամբ և հաջորդած մի շարք փոխզիջումային ակտերի միջոցով պառլամենտը դարձավ ինքնիշխանության կրողը, իսկ Ֆրանսիայում 1789 թ. հեղափոխությամբ ինքնիշխանության ակունք հռչակվեց ազգը¹⁴⁷:

Մեր դիտարկմամբ, մարդու բնական և ընկերային իրավունքների, ազգերի ինքնիշխանության իրավունքի, հասարակական դաշինքի, իշխանությունների տարանջատման և ինքնիշխանության բաժանելիության վերաբերյալ գաղափարները Յուզո Գրոտիուսի փոխանցմամբ մեծապես ներազդեցին լուսավորական մտքի վրա:

Հայտնի է, որ բնական իրավունքի գաղափարը կար դեռևս Արիստոտելի մոտ¹⁴⁸: Յ. Գրոտիուսը հանդես է գալիս բնական իրավունքի իր ուրույն մեկնաբանությամբ. «**բնական իրավունքը ճշմարիտ բանականության թելադրանքն է**»¹⁴⁹: Հետևաբար բնական

¹⁴⁴ Տե՛ս **Хабермас Ю.**, Вовлечение другого. Очерки политической теории. Пер. с немецкого Ю. С. Медведева, под ред. Д. В. Скляднева. Санкт Петербург: Наука, 2001, с. 197.

¹⁴⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 201-204: «Համաձայն դասական հռոմեական իմաստի՝ *natio* (լատ. ազգ) հասկացությունը *gens* (ցեղ) հասկացության նման հակադրվում էր *civitas* (պետություն) հասկացությանը: «Ազգերը» հանրությաներ էին՝ կապված ամենից առաջ ծագմամբ, աշխարհագրորեն, մշակույթով, ընդհանուր լեզվով, բարքերով ու ավանդույթներով, բայց դեռ ոչ քաղաքականապես: Միջին դարերում և նոր ժամանակների սկզբում այս իմաստը դեռ պահպանվում էր ամենուր, որտեղ *natio*-ն նույնացվում էր *lingua*-ի՝ լեզվի հետ»: Տե՛ս նաև **Хардт М., Негри А.**, Империя, Пер. с англ., под ред. Г. В. Каменской, М. С. Фетисова. Москва: Праксис, 2004, с. 97-98:

¹⁴⁶ Տե՛ս **Moita L.**, նշվ. աշխ., էջ 38:

¹⁴⁷ Տե՛ս **Teschke B.**, նշվ. աշխ., էջ 253:

¹⁴⁸ Տե՛ս **Tuck R.**, *Natural Rights Theories: Their Origin and Development*. Cambridge and New York: Cambridge University Press, 1981, pp. 58-81.

¹⁴⁹ **Grotius H.** (1625), *The Rights of War and Peace*, p. 21.

իրավունքի մայրը մարդկային բնությանն է¹⁵⁰: Բնական օրենքները բնական են և հիմնված են մարդկային էակների բնության վրա¹⁵¹: Ուստի, ազգն իբրև «մարդկանց կատարյալ հասարակություն» կարող է ունենալ ինքնիշխանության իրավունք, եթե անգամ այն ճանաչված չէ այլ ոչ կողմից¹⁵²:

Լուսավորական շարժման ներկայացուցիչները հիմնավորեցին *քաղաքական ազատության* գաղափարը: Ազատականության տեսության հիմնադիրներից անգլիացի նշանավոր իմաստասեր Ջոն Լոկը Գրոտիուսի նման պնդում էր, որ քաղաքական իշխանության և ինքնիշխանության իրավունքների ակունքը բնական իրավունքն է: Ըստ Լոկի՝ բնական վիճակը (state of nature) կատարյալ ազատության և հավասարության իրավիճակ է, որը չի նշանակում ամենաթողություն: Քանզի նույնիսկ բնական վիճակն ունի իր օրենքները ղեկավարվելու համար՝ «բնության օրենքը (Law of Nature), որը պարտավորեցնում է բոլորին» և սովորեցնում իրեն ապավինած ողջ մարդկությանը լինել հավասար ու ազատ, և «ոչ ոք չպետք է վնաս հասցնի ուրիշի կյանքին, առողջությանը, ազատությանը կամ սեփականությանը» (“life, health, liberty, or possessions”)¹⁵³:

Լոկը նաև գտնում էր, որ բնական իրավունքները միայն բավական չէին մարդկային համակեցական կյանքը կազմակերպելու համար: Ուստի մարդիկ իրենց ընդհանուր կամքով ձևավորում են **քաղաքական հասարակություն**. նրանք միավորվում են **քաղաքացիական հասարակության** մեջ, և յուրաքանչյուրը **հանուն հանրային բարիքի** համայնքին է հանձնում իր բնական իրավունքների մի մասը, հաստատում ընդհանուր օրենքներ և ձևավորում իշխանություն: Յետևաբար, ըստ հեղինակի, օրենսդիր և

¹⁵⁰ Տե՛ս **Чубарьян А. О.**, նշվ. աշխ., էջ 95:

¹⁵¹ Տե՛ս **Wight M.**, Four Seminal Thinkers in International Theory: Machiavelli, Grotius, Kant, and Mazzini. Edited by Gabriele Wight and Brian Porter; Foreword by Sir Michael Howard, C.H. Introduction by David S. Yost. Oxford and New York: Oxford University Press, 2005, p. 39.

¹⁵² Տե՛ս **Wendt A.**, Social Theory of International Politics. Cambridge, New York, Melbourne: Cambridge University Press, 1999, p. 208.

¹⁵³ **Locke J.**, Two Treatises of Government. Edited by Thomas Hollis. London: A. Millar et al., 1764, pp. 195-198. Յետագայում անօտարելի իրավունքները խորհրդանշող այս արտահայտությունը պետք է իր արտահայտությունը գտնենք 1776 թ. հունիսի 4-ին ԱՄՆ-ի անկախության հռչակագրում «կյանք, ազատություն և երջանկության ձգտում» (“Life, Liberty and the pursuit of Happiness”) տարբերակով: Տե՛ս **The Text of the Declaration of Independence**, Philadelphia: July 4, 1776. A Century of Lawmaking for a New Nation: U.S. Congressional Documents and Debates, 1774 - 1875, Journals of the Continental Congress, Vol.5, pp. 510-515.

գործադիր իշխանության ակունքը քաղաքական կամ քաղաքացիական հասարակությունն է: Այս կերպ է ստեղծվում հանրապետությունը (common-wealth)¹⁵⁴: Լուսավորականության դարաշրջանի մտածողներից Լոկն առաջինն էր, որ ձևակերպեց **իշխանությունների տարանջատման** հղացքը: Նատարբերում էր **օրենսդիր** և **գործադիր** ու **Ֆեդերատիվ** իշխանությունները: Լոկը պնդում էր, որ լավ համակարգված հանրապետություններում հանուն ընդհանուր բարիքի օրենսդիր և գործադիր իշխանությունները պետք է տարանջատվեն¹⁵⁵: Նա ընդգծում էր, որ ժողովուրդը, մասնավորապես քաղաքական համայնքն է գերագույն իշխանության ակունքը և հանուն իր ազատությունների ու սեփականատիրության այն կարող է փոխել իշխանությունը¹⁵⁶:

Ֆրանսիացի լուսավորական ճառլ Լոկի Մոնտեսքյոն իր «Օրենքների ոգին» նշանավոր աշխատության մեջ ձևակերպում է ազատության և անկախության տարբերությունները: Քաղաքական ազատության հաստատման համար Մոնտեսքյոն ևս կարևորում էր իշխանությունների տարանջատման սկզբունքը: Ի տարբերություն Լոկի, Մոնտեսքյոն ձևակերպում է **եռակողմ համակարգը** (tripartite system)՝ առանձնացնելով օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները: Նա պնդում էր, որ **իշխանության տարանջատումը գործադիր, օրենսդիր ու դատական** ճյուղերի և դրա հետևանքով առաջացած **փոխզստմաների ու հակաշիռների** (“checks and balances”) համակարգը հնարավոր կդարձնե քաղաքական ազատությունը¹⁵⁷: Ըստ Մոնտեսքյոյի՝ պետության օրենսդրությունը պետք է հետևի «ազգի ոգուն» և չպետք է հակասի կառավարման սկզբունքներին¹⁵⁸:

¹⁵⁴ Տե՛ս **Locke J.**, նշվ. աշխ., էջ 267-272:

¹⁵⁵ Տե՛ս Լոկն տեղում, էջ 324-327: Ֆեդերատիվ իշխանությունը ևս գործադիր իշխանության ճյուղ էր՝ պատասխանատու գաղութների կառավարման, միությունների, դաշինքների, արտաքին հարաբերությունների, պատերազմի ու խաղաղության հարցերի համար:

¹⁵⁶ Տե՛ս Լոկն տեղում, էջ 328-330: Տե՛ս նաև **Jahn B.** (ed.), *Classical Theory in International Relations*. Cambridge, New York, Melbourne: Cambridge University Press, 2006, pp. 157-162, 163-177. Տե՛ս **Beitz Ch. R.**, *Political Theory and International Relations: With a New Afterword by the Author*, 1999. Princeton, New Jersey: Princeton University Press, 1979, pp. 59-60.

¹⁵⁷ Տե՛ս **Montesquieu Ch. S.** (1748), *The Spirit of Laws*. Translated by Thomas Nugent (1752). Kitchener: Batoche Books, 2001, pp. 171-201.

¹⁵⁸ Տե՛ս Լոկն տեղում, էջ 321-344:

Արդի դարաշրջանի սկզբում հասարակական դաշինքի կարևոր տեսություններ էին զարգացրել դեմևս Յուզո Գրոտիուսը, Թոմաս Յոբսոնը, Ջոն Լոկը և այլք: Այդուամենայնիվ, ժան ժակ Ռուսսոն էր, որ իր **«Հասարակական դաշինք»** (1762 թ.) նշանավոր աշխատությամբ ստեղծեց հասարակական դաշինքի համապարփակ տեսություն և հստակ իմաստասիրական համակարգ, որը հետագայում պետք է օրինակ հանդիսանար արդի աշխարհի սահմանադրական պետությունների համար: Յանրային դաշինքի տեսության Ռուսսոյի տեսլականը արտահայտում էր մարդու և քաղաքացու քաղաքական իրավունքները հիմնված **ժողովրդական ինքնիշխանության բացարձակության** վրա: Ըստ հեղինակի՝ անհատ անձինք հասարակական դաշինքով վայր են դնում իրենց բնական ազատությունը, ստեղծում են բարոյական ու հավաքական մարմին՝ փոխարենը ձեռք բերելով քաղաքացիական ազատություն, ընդհանուր ինքնություն, կյանք և կամք: Այս «բարոյական մարմին» անդամները հավաքականորեն կոչվում են ազգ, իսկ անհատապես քաղաքացիներ: Ազգն իբրև բարձրագույն իշխանության կրող կառավարության հետ կնքում է հասարակական դաշինք, ինչի հետևանքով էլ ստեղծվում է պետությունը: Ընդ որում, երբ իշխանությունը խախտում է հասարակական դաշինքը, ազգն իրավունք ունի ընդվզել և փոխել պետության ղեկավարությանն իր ընդհանուր կամքով¹⁵⁹: Յայսմ՝ «հասարակական դաշինքը պետության ներսում բոլոր իրավունքների հիմքն է»¹⁶⁰:

Ազգ-պետություն և հղացքն իր հետագա գաղափարական հիմնավորումը ստացավ ի դեմս ազգայնականության (nationalism), որը պետք է դառնար տիրապետող գաղափարաբանություն 19-րդ դարի ազգ-պետություններում: Այսպիսի բարձրացավ 1789 թ. Ֆրանսիական հեղափոխությամբ, որը զանգվածային ընդվզմամբ հաստատեց Ֆրանսացիների հանրապետության գաղափարական հիմքերն ու ազգային ինքնության և հավատարմության նոր հարացույցը: Սատարածվեց և ամրապնդվեց հեղափոխական ու նապրլետոյան

¹⁵⁹ Տե՛ս **Rousseau J. J.** (1762), *On the Social Contract*. Translated by G. D. H. Cole. New York: Dover Publications, 2003, pp. 9-11. Փորձելով սահմանել հասարակական դաշինքը՝ Ռուսսոն գրում է. «Մեզանից յուրաքանչյուրը իր անձն ու իր ողջ իշխանությունը դարձնում է ընդհանուր՝ այն դեպքում ընդհանուր կամքի գերագույն ղեկավարման ներքո, և մեր կորարարած կարողության մեջ մենք ընդունում ենք յուրաքանչյուր անդամին իբրև ընդհանուրի անբաժանելի մաս»:

¹⁶⁰ **Rousseau J. J.** (1762), *On the Social Contract*, pp. 12-13, 20-23.

պատերազմների ընթացքում և դարձավ ուղենշային նաև այլ ազգերի համար¹⁶¹: 19-րդ դարում եվրոպայի քաղաքական և ընկերային կարգերի բարեփոխումների ու վերակառուցման լուսավորականության գաղափարները բյուրեղացան քաղաքական գաղափարաբանությանների՝ լիբերալիզմի (ազատականության), սոցիալիզմի (ընկերավարության) և նացիոնալիզմի մեջ: Այս գաղափարաբանությանները միտված էին եվրոպայում ազգ-պետությանների կայացմանը¹⁶²:

Իտալական ազգային վերածննդի (Risorgimento) քաղաքական ոգեշնչողներին Ջուզեպպե Մաձինի (1805-1872 թթ.) ազգ-պետության գաղափարը հիմնավորում է քաղաքական իմաստով՝ իբրև հանուն ընդհանուր բարիքի համագործակցության միջավայր (commonwealth): Նա սահմանում է. «Յավասարություն, ազատություն, ընկերակցություն. միայն այս երեք տարերը միասին կարող են սահմանել իրական ազգը: Իբրև ազգ նկատի ունենք քաղաքացիների ամբողջություն, որոնք խոսում են նույն լեզվով և կապված են հավասար քաղաքացիական ու քաղաքական իրավունքներով, հասարակական բոլոր ուժերի ու նրանց գործունեության աստիճանական կատարելագործման և զարգացման ընդհանուր նպատակով: Ազգը միակ ինքնիշխանն է»¹⁶³:

Այսպիսով, թեպետ ակնհայտ նվաճումների, բացարձակապետությանը պատմական ընդլայն հեռանկարի դիտանկյունից փակուղային էր: Նոր կարգի հաստատման հեղափոխական պիքը հասունացել էր հատկապես Ֆրանսիայում, որտեղ պետական գաղափարախոսության և մտավորականության միջև անջրպետը ամենախորն էր¹⁶⁴: Բացարձակ միապետության ժառանգական հարացույցը այս ընթացքում պահպանվում էր շնորհիվ միայն քաղաքական ուժերի հատուկ փոխզիջման: Յետդիտե ազգային ինքնագիտակցության բարձրացման ազդեցությամբ ձևավորվեց այն մշակութային և իրավական համատեքստը, որով հպատակները կարող էին դառնալ քաղաքականապես ակտիվ քաղաքացիներ: Ժառանգական բացարձակ միապետության ազգային պետության փոխակերպմանը գուցե ընթաց հպատակի (subjectus) Ֆեոդալական կարգը իր տեղը զիջեց

¹⁶¹ Տե՛ս **Crevelde M.**, The Rise and Decline of the State. Cambridge and New York: Cambridge University Press, 2004, pp. 336-337. Տե՛ս **Mann M.**, The Sources of Social Power, Vol. II, The Rise of Classes and Nation-States, 1760-1914. Cambridge and New York: Cambridge University Press, 2006, pp. 7, 74, 102, 119, 215-216.

¹⁶² Տե՛ս ևս **Геллер Э.** Пришествие национализма. Мифы нации и класса. В *Андерсон Б., Бауэр О., Хрох М. и др.*, *Нации и национализм*. Пер с англ. и нем. Л. Е. Переяславцевой, М. С. Панина, М. Б. Гнедовского. Москва: Практис, 2002, с. 146-166.

¹⁶³ Տե՛ս **Mazzini G.**, A Cosmopolitanism of Nations: Giuseppe Mazzini's Writings on Democracy, Nation Building, and International Relations (1805–1872). Edited and with an introduction by Stefano Recchia and Nadia Urbinati; translations by Stefano Recchia. Princeton and Oxford: Princeton University Press, 2009, pp.14, 50.

¹⁶⁴ Տե՛ս **Treasure G.**, նշվ. աշխ., էջ 190:

քաղաքացու (cives) դիսցիպլինար կարգին: Այս քաղաքական կարգը կայունացվեց և ամրացվեց ազգային ու էթնիկ ինքնությունամբ՝ մշակույթով, հավաքական հիշողությամբ և տարածքային ու լեզվական ընդհանրությամբ¹⁶⁵: Ինչպես Բենեդիկտ Անդերսոնն է սահմանում, «Ազգը երևակայական քաղաքական համայնք է, և երևակայված է իբրև ըստ էության սահմանափակ և ինքնիշխան... Այն երևակայված է իբրև համայնք, քանզի չնայած գործնական անհավասարությանը, ազգը միշտ ընկալվում է որպես խորը և հորիզոնական ընկերություն»¹⁶⁶:

Ամփոփենք: 1648 թ. Վեստֆալի խաղաղության համաժողովը հաջողությամբ ամփոփեց «պետականաշինության պատերազմը»՝ ձևափոխելով միջազգային իրավունքը և ներկայացնելով իրավահավասար և ինքնիշխան պետությունների համագոյակցության նոր հարացույցը՝ իբրև Եվրոպայի կազմակերպման օրինական միջոց: Այս կերպ՝ Վեստֆալյան համաձայնագրերը խորհրդանշում են միջնադարյան համընդհանրական-աստիճանակարգված աշխարհակարգի փոխակերպումն ինքնիշխան պետությունների հորիզոնական համակարգի: 17-19-րդ դարերում Եվրոպայում *պատմական կարգի* նոր հարացույցի հաստատմանը զուգահեռ ձևավորվեց վերջինիս կառուցվածքային բաղկացուցիչ ընկերային-պատմական նոր միավորը՝ ազգ-պետությունը:

¹⁶⁵ Տե՛ս Хардт М., Негри А., նշվ. աշխ., էջ 98-99:

¹⁶⁶ Anderson B., Imagined Communities Reflections on the Origin and Spread of Nationalism, Revised Edition. London and New York: Verso, 1991, pp. 5-7.

ԳԼՈՒԽԵՐԿՐՈՐԴ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ ԱԿԱՐԳԻ ՆԱՊՈԼԵՈՆՅԱՆ ՀԱՐԱՑՈՒ ՅՅՆ ԸՆԴԴԵՄ ՄԵՑ ՏԵՐՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԵՐԱՇԽՈՒ ԹՅԱՆ

Երեսնամյա պատերազմի արդյունքում Վեստֆալյան պայմանագրերով ձևավորված աշխարհակարգը մի քանի կերպափոխություններ է ապրել, որոնցից յուրաքանչյուրը խոշոր ռազմական կամ սոցիալական ցնցումների հետևանք էր: Երեսնամյա պատերազմից հետո այդպիսի խոշոր ցնցում դարձան Ֆրանսիական մեծ հեղափոխությունը և նապոլեոնյան պատերազմները, որոնք արդյունք էին **«Եվրոպական հավասարակշռության»** հղացքով կազմակերպված հին կարգերի (ancien régime) և **«Եվրոպական համակարգի»** Ֆրանսիական հարացույցի բախման¹⁶⁷: Հեղափոխական Ֆրանսիան պատերազմներ էր վարում նախ պաշտպանել ու, ապա տարածել ու համար հանրապետական արժեքները: Հանրապետական Ֆրանսիայի բանակները կերպափոխում էին Եվրոպան համաձայն ազատության (Liberté), հավասարության (Égalité) և եղբայրության (Fraternité) արժեքների:

Հեղափոխական Ֆրանսիան մարտահրավեր էր հին կարգերին, որին ի պատասխան կազմվեցին յոթ խոշոր հակահեղափոխական դաշինքներ (1792–1815 թթ.)՝ կասեցնել ու համար Եվրոպայի համակարգային կերպափոխությունը¹⁶⁸: Սա հանգեցրեց համաեվրոպական հակամարտության: 1799 թ. բրյուսելյան 18-ին (նոյեմբերի 9-ին) գեներալ Բոնապարտը կատարեց պետական հեղաշրջում և հռչակեց հեղափոխության ավարտը՝ ձևավորելով ավտորիտար կառավարություն և պահպանելով «Ժողովրդավարական արարողակարգերը»¹⁶⁹: Անհրաժեշտ էր իրավական ձևակերպում տալ

¹⁶⁷ Տե՛ս **Лениц Т.**, Наполеон. Пер. с фр. Е. Калантаровой. Москва: АСТ, Астрель, 2008, с. 97. Ըստ բրիտանացիների՝ «Եվրոպական հավասարակշռության» հղացքը հետևյալն էր՝ Եվրոպան բաղկացած է միջին կարգի տերություններից, որոնք հավասարակշռելով չեզոքացնում են միմյանց՝ Մեծ Բրիտանիայի համար ազատ արտեվրոպական էքսպանսիայի հնարավորությունն ստեղծելով: Ֆրանսիայում «Եվրոպական համակարգ» ասելով նկատի ունենին մեկ կամ երկու մեծ տերությունների շուրջ համախմբված Եվրոպական պետությունների համակարգ:

¹⁶⁸ Տե՛ս **Esdaile Ch. J.**, The French Wars, 1792-1815. London and New York: Routledge, Taylor & Francis e-Library, 2005, pp. 84-92.

¹⁶⁹ Տե՛ս **Hause S. and Maltby W.**, Western Civilization: A History of European Society, 2nd edition. Thomson Wadsworth, 2004, p. 408.

հեղափոխությանը հաստատված համակցության նոր իրողություններին: Նապոլեոնի **Տրանսիպան հեղափոխության արտահանման քաղաքականության**¹⁷⁰ նպատակը **Տրանսիպանոլորդմամբ եվրոպական ազգերի համագործակցության** ստեղծումն էր¹⁷¹:

Սույն գլխում քննության ենթարկում Նապոլեոնի քաղաքականությանը առաջ եկած եվրոպայի պատմության նոր հարացույցի հիմնական գծերը, միտում, որ կասեցվեց Վիեննայի եզրափակիչ կարգավորումներով: Այս ժամանակահատվածում էր, որ առաջին անգամ աշխարհիկ արժեքների հիման վրա ներկայացավ **«եվրոպական ազգերի ընտանիքի»** գաղափարը, որը, սակայն, Վիեննայում փոխարինվեց **«եվրոպական մեծ տերությունների համերաշխության»** հղացքով:

Մեր դիտարկմամբ՝ 18-19-րդ դարերում աշխարհիկ արժեքների հիմքով եվրոպայի միասնականացման նախագծերի կարևոր նախապայմաններից էր ընկերային-պատմական նոր իրողության՝ ազգ-պետությունների մոտեղ եվրոպական քաղաքականության: Արդի դարաշրջանում եվրոպայի միասնականացման գաղափարը առաջին անգամ գործնական քաղաքականության մակարդակի բարձրացավ շնորհիվ Նապոլեոն Բոնապարտի: Այստեղից էլ եվրոպայի պատմության տվյալ ժամանակաշրջանի համակարգային ուսումնասիրության համար կարող ենք առաջադրել նոր՝ **եվրոպական աշխարհակարգի Նապոլեոնյան հարացույց** հղացքը: Իբրև վերջինիս բնութագրիչներ կարելի է առանձնացնել **ազգերի ինքնիշխանության հռչակումը, Տրանսիպանոլորդմամբ եվրոպական ազգերի համագործակցությունը և եվրոպայի միասնականացումը**: Ըստ այդմ Նապոլեոնի եվրոպական համակարգը դիտարկում ենք ըստ աշխարհագրական և սոցիալ-տնտեսական համալիրների:

¹⁷⁰ Տե՛ս **Conner S. P.**, The Age of Napoleon. Westport. London: Greenwood Press, 2004, p. 21.

¹⁷¹ Տե՛ս **Kissinger H. A.**, Diplomacy. New York, London, Toronto, Sydney: Simon & Schuster, 1994, p. 74.

2.1 ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԻ ՆԱՊԸ ԵՈՆՅԱՆ ՀԱՐԱՏՈՒ ՅՑԸ

18-րդ դարի վերջին Ֆրանսիական մեծ հեղափոխությունը որակապես նոր իրավիճակ սահմանեց Եվրոպայում: 1789 թ. հեղափոխության գաղափարները խորքային ազդեցություն ունեցան ինչպես Եվրոպական քաղաքական մտքի, այնպես էլ Եվրոպայի հետագա պատմական զարգացման վրա¹⁷²: 1789 թ. օգոստոսի 26-ին «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրում» (Déclaration des Droits de l’Homme et du Citoyen)¹⁷³ ասվում էր, որ Ֆրանսիացի ազգի ներկայացուցիչները՝ կազմակերպված իբրև Ազգային ժողով (Assemblée Nationale), ճանաչում և հռչակում են.

ա «Մարդիկ ծնվում և մնում են ազատու իրավասավասար: Ընկերային տարբերությունները կարող են հիմնվել միայն ընդհանուր բարիքի նկատառումների վրա:

բ. Յուրաքանչյուր քաղաքական ընկերակցության նպատակն է մարդու բնական և անքապտելի իրավունքների պահպանումը: Այս իրավունքներն են՝ ազատությունը, սեփականությունը, անվտանգությունը և դիմադրությունը՝ ընդդեմ բռնատիրության:

գ. **Ամենայն ինքնիշխանության ակունքը ազգն է:** Ոչ մի կորպորատիվ մարմին, ոչ էլ անհատ չի կարող իրականացնել որևէ իշխանություն և, որևէ ուղղակիորեն չի բխում նրանից»¹⁷⁴:

Եվրոպայում քաղաքական և սոցիալական ուժերի նոր հարաբերակցության պայմաններում ձևավորվեցին նոր հեղափոխական հաստատություններ, սկզբունքներ ու հարաբերություններ Նորմեր: Հատկապես կենտրոնական նշանակություն ունեցավ ազգային ինքնիշխանության սկզբունքի, հանրապետական կառավարչաձևի հիմնավորումը: Հենվելով այս հիմնարար դրույթների վրա՝ Ֆրանսիական հեղափոխության գաղափարախոսները փորձեցին ձևակերպել նաև միջազգային հարաբերությունների նոր սկզբունքներ: Ֆրանսիական հեղափոխության առավել հետևողական գաղափարախոսները (մասնավորապես՝ Ժիրոնդիստները) հեղափոխությունը դիտարկում էին իբրև ելակետ Եվրոպայի կերպափոխման համար¹⁷⁵:

¹⁷² Տե՛ս **Schroeder P. W.**, The Transformation of European Politics, 1763-1848. Oxford History of Modern Europe. New York, Oxford: Oxford University Press, 1999, pp. 53-56.

¹⁷³ Հռչակագիրը բաղկացած է նախաբանից և 17 հոդվածներից:

¹⁷⁴ **Déclaration des Droits de l’Homme et du Citoyen de 1789**, Conseil Constitutionnel de la République Française, Site officiel URL: <http://www.conseil-constitutionnel.fr/conseil-constitutionnel/francais/la-constitution/la-constitution-du-4-octobre-1958/declaration-des-droits-de-l-homme-et-du-citoyen-de-1789.5076.html> (02.03.2016).

¹⁷⁵ Հեղափոխության գաղափարները իրենց արտահայտությունը գտան նաև 1791 թ. և 1793 թ. ընդունված Ֆրանսիական հանրապետության սահմանադրություններում ու այլ հռչակագրերում: Տե՛ս **Чубарьян А. О.**, Европейская идея в истории. Проблемы войны и мира.

Ֆրանսիական հեղափոխության գաղափարներին համահունչ բարեշրջման էին ենթարկվում Եվրոպայի միության մասին պարկերացումները: Ըստ այդ պարկերացումների՝ իբրև միասնականացման գործուն միավորներ պետք է հանդես գային ազգերը՝ խորացնելով միմյանց միջև համագործակցությունը:

Յեղափոխական Ֆրանսիայի արտաքին դիվանագիտական նկրտումները ևս ձևակերպվեցին «մեծահոգության» դիրքերից. «ազգ, որը չունի այլ տարածքային հավակնություններ, քան իր «բնական սահմանները» (limites naturelles), մտադիր է ամենուր հետամուտ լինել **«ազգերի իրքնորոշման իրավունքի»** («droit des peuples à disposer d'eux-mêmes») իրականացմանը»¹⁷⁶: Յեղափոխական և հանրապետական գաղափարաբանությունից անդին այս մոտեցումներն իրենց հստակ ձևակերպումը և կիրարկումը գտան նաև Նապոլեոնյան ժամանակաշրջանում¹⁷⁷:

18-րդ դարի վերջին՝ դեռևս Ֆրանսիական հեղափոխությունից առաջ, ազգերի ինքնորոշման իրավունքի տարածման այլ ընտրանքային մեկ այլ հնարավորություն նշմարվեց օվկիանոսից անդին ամերիկյան ազատագրական պատերազմով, որի արդյունքում առաջացավ Արևմտյան կիսագնդի առաջին ազգ-պետությունը՝ հռչակելով ազատության, իրավահավասարության և ազգերի ինքնորոշման համընդհանրական գաղափարները¹⁷⁸: Դրանց արտահանումը, սակայն, պետք է սկսվեր միայն 20-րդ դարի սկզբին, իսկ այդժամ ԱՄՆ-ի հիմնադիր հայրերը կարծում էին, որ միջազգային կարգուկանոնը կախված է հակամարտ ազգային շահերի միջև հավասարակշռության պահպանումից և ոչ թե հավաքական անվտանգությունից: Քանի որ Եվրոպայում ուժերի հավասարակշռության պահպանումը ամերիկյան անկախության երաշխիքներից էր, ԱՄՆ-ը ղեկավարվում էր ուժերի հավասարակշռության պահպանման սկզբունքով՝ ոչ միայն անկախության պահպանման, այլև պետական սահմանների ընդարձակման և մայրցամաքում գործողությունների ազատության համար¹⁷⁹: Ավելի քան մեկ դար Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականությունը հետևում էր այս սկզբունքին, իսկ ամերիկյան հասարակական միտքն ավելի երկար:

18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին ցամաքային պատերազմի խորագիտակ Նապոլեոն Բոնապարտը իր «համակարգը»

Москва: Междунар. отношения, 1987, с. 146-154. Տե՛ս **Schroeder P. W.**, The Transformation of European Politics, 1763-1848, pp. 67-73.

¹⁷⁶ **Lentz T.**, Napoléon Diplomate. Ouvrage publié sous la direction de Guy Stavridès. Paris: CNRS Éditions, 2012, p. 12.

¹⁷⁷ Տե՛ս **Manas J.**, Napoleon on Project Management: Timeless Lessons In Planning, Execution, and Leadership. Nashville, Tennessee: Thomas Nelson, Inc., 2006, pp. 44-55.

¹⁷⁸ Տե՛ս **The Text of the Declaration of Independence**, Philadelphia: July 4, 1776. A Century of Lawmaking for a New Nation: U.S. Congressional Documents and Debates, 1774 - 1875, Journals of the Continental Congress, Vol.5, pp. 510-515. Ազգերի ինքնորոշման իրավունքի քաղաքական ծագումը գալիս է Ամերիկայի Միացյալ Նահանգների անկախության հռչակագրից (4 հունիսի, 1776 թ.):

¹⁷⁹ **Шлезингер А.**, Циклы Американской Истории, пер. с англ. Москва: «Прогресс-Академия», 1992, с. 81.

ներդրեց «Եվրոպայի մեծ մասում»¹⁸⁰: Նա ոտնահարում էր միապետերի ինքնիշխանությունը, սակայն հարգում՝ ազգերի իրավունքները, ինչը գործնականում դրսևորվում էր բարեփոխումների տեսքով¹⁸¹: Ֆրանսիացիների կայսրը ներկայանում էր իբրև ազգերի իրավունքների պաշտպան: Կրկին հիշեցնենք՝ **ազգերի ինքնորոշման իրավունքի իրացման միջոցով Ֆրանսիան ձգտում էր միավորել Եվրոպական ազգերին իր գերակայության շրջանակներում**¹⁸²:

Ա Իշխանության հիմնավորումը: 1800 թ. օգոստոսին Պետական խորհրդում Յանրապետության առաջին կոնսուլ Նապոլեոն Բոնապարտը հռչակեց իր քաղաքական ծրագիրը. «Իմ քաղաքականությունն այսպիսին է՝ ես ղեկավարում եմ մարդկանց այնպես, ինչպես դա ուզում է մեծամասնությունը: Կարծում եմ՝ հենց դա է ժողովրդի բարձրագույն իշխանության ճանաչումը: Որպես կաթոլիկ ես ավարտում եմ պատերազմը Վանդեյում, որպես մուսուլման ես հաստատվում եմ Եգիպտոսում, որպես ուլտրամոնտան ես նվաճեցի ուղեղները Իտալիայում: Եթե ես կառավարեի հրեա ժողովրդին, կվերականգնեի Սողոմոնի տաճարը»¹⁸³: Յատկանշական է՝ դեռևս իր իտալական արշավանքի ժամանակ, երբ Փարիզից դիրեկտորիան պահանջեց գահընկեց անել Յոզեֆ Կապոլեոն 6-րդին և վերացնել Պապական պետությունը, գեներալ Բոնապարտը իբրև «բարեպաշտ կաթոլիկ» չենթարկվեց¹⁸⁴: Իսկ 1798-1799 թթ. նվաճելով Եգիպտոսը՝ Բոնապարտը ներկայանում էր իբրև «Ալլահին սիրելի»¹⁸⁵: Յարկ է նշել նաև, որ Նապոլեոնը Ֆրանսիայի, Նիդերլանդների, Արևմտյան Գերմանիայի և Իտալիայի հրեաներին շնորհել էր քաղաքացիական իրավունքներ՝ ապահովելով

¹⁸⁰ Տե՛ս **Ленн Т.**, նշվ. աշխ., էջ 108-109:

¹⁸¹ Տե՛ս **Grab A.**, Napoleon and the Transformation of Europe. New York: Palgrave Macmillan, 2003, pp. 1-2, 19-33.

¹⁸² Տե՛ս **Եվրեմյան Տ.**, Նապոլեոն Բոնապարտը և ազգերի ինքնորոշման իրավունքը՝ ընդդեմ մեծ տերությունների Եվրոպական համերաշխության: Վեմ համահայկական հանդես, (ԺԳ) տարի, թիվ 4 (52), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2015, էջ 97-119:

¹⁸³ **Ленн Т.**, նշվ. աշխ., էջ 69:

¹⁸⁴ Տե՛ս **Grab A.**, նշվ. աշխ., էջ 6: Միայն հետագայում՝ 1798 թ. փետրվարին, հակաֆրանսիական հուզումներ հրահրելու մեղադրանքի պատրվակով Դիրեկտորիայի հրամանով գեներալ Լուի Բերտիեն մտավ Յոզեֆ և հռչակեց Յոզեֆական հանրապետությունը, իսկ Յոզեֆ Կապոլեոն 6-րդն արտաքսվեց:

¹⁸⁵ Տե՛ս **Ленн Т.**, նշվ. աշխ., էջ 40-48:

հավասարությունն օրենքի առաջ և հնարավորությունն մասնակցելու հանրային ու քաղաքական կյանքին իբրև ազատմարդ¹⁸⁶:

Նապոլեոնը հավատում էր, որ Ֆրանսիացիները կամ մյուս եվրոպացիները ցանկանում են ոչ թե ազատություն, այլ ձգտում են հավասարության՝ օրենքի առաջ և \$եոդալական աստիճանակարգային իրավունքների վերացում: Ֆ. Բրոդելի խոսքերով՝ «Ազատություններից ազատության. այս արտահայտությունը մարմնավորում է եվրոպայի պատմության մեջ ամենահիմնարար խթաններից մեկը: Ազատությունը, դեռևս վերացական և տեսական գաղափար էր, որը սկսեց իր զարգացումը Վերածննդից ու Ռեֆորմացիայից մինչև Ֆրանսիական հեղափոխություն և առավել զորեղ ու ամբողջական դարձավ, երբ ձևակերպվեց «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրում»: Ազատականության ձևակերպմամբ այն դարձավ հայեցակարգ»¹⁸⁷:

Նապոլեոնյան կառավարման համակարգում **ազգային ինքնիշխանության ամենալատ դրսևորումը հանրաքվեներն էին**: Ինչպես կարևորագույն իրավական ակտերը, այնպես էլ Սահմանադրությունը ենթական էին հանրաքվեով հաստատման: Ըստ այդմ՝ 1800 թ. փետրվարին հանրաքվեով հաստատվեց 1799 թ. Սահմանադրությունը¹⁸⁸: Երբ 1802 թ. օգոստոսի 2-ին Բոնապարտը ընտրվեց ցմահ առաջին կոնսուլ, իրեն հաճախակի տրվող հարցին, թե ով է լինելու իր ժառանգորդը, պատասխանում էր. «Իմ բնական ժառանգորդը Ֆրանսիացի ժողովուրդն է»¹⁸⁹: Այդուհանդերձ, 1804 թ. գարնանը առաջին կոնսուլը լուրեր տարածեց, թե ինքը կհամաձայնի թագ ընդունել, եթե իրեն այն առաջարկեն: Այդ թագը չէր կարող լինել թագավորական, որովհետև տասնմեկ տարի առաջ օրենք էր հրապարակվել, որ Լուի 16-րդը Ֆրանսիայի «վերջին թագավորն է»: Ուստի, որոշվեց հռչակել «կայսրություն», որն իր առջև ուներ նաև եվրոպայի ընդհանրական միության տեսլականը: Արդ՝ «կայսրություն» եզրը նշանակում էր տարածք, որի վրա իշխում էին

¹⁸⁶ Տե՛ս **Schwarzfuchs S.**, Napoleon, the Jews and the Sanhedrin. London, Boston and Henley: Routledge & Kegan Paul, 1979, pp. 1-44, 179-194.

¹⁸⁷ **Braudel F.**, A History of Civilisations. Translated by Richard Mayne. New York, London, Auckland: The Penguin Press, 1994, p. 329.

¹⁸⁸ Տե՛ս **Hause S. and Maltby W.**, նշվ. աշխ., էջ 409:

¹⁸⁹ **Woloch I.**, Napoleon and His Collaborators: The Making of a Dictatorship. New York and London: Norton & Company, 2001, p. 98.

Ֆրանսիացիները: Յետևաբար Նապոլեոնը ղեկավարելու էր **«Ֆրանսիացիների կայսրությունը»**¹⁹⁰: Սկսվեց Յանրապետության միապետականացումը: 19-րդ դարասկզբի մարդկանց համար (ովքեր ծնվել էին ժառանգական բացարձակ միապետության պայմաններում) «նորարարական» մոտեցում էր:

1804 թ. մայիսի 18-ին սահմանադրության համաձայն՝ Սենատը «Յանրապետության կառավարությունը» վստահում է կայսերը, ով կընդունի «Ֆրանսիացիների կայսր տիտղոսը»¹⁹¹: 1804 թ. հունիսին կայացած հանրաքվեն ձայների բացարձակ մեծամասնությամբ հաստատեց Սենատի որոշումը¹⁹²: **Ազգը Ֆրանսիական հանրապետությունը ղեկավարելու համար ընտրեց իր ներկայացուցչին՝ ի դեմս կայսեր:** 1802 և 1804 թվականների հանրաքվեների միջոցով Նապոլեոնը ցույց էր տալիս, որ ինքնիշխանության ակունքը ազգն է¹⁹³:

Թեպետ կայսրության գոյության համար իրավաբանորեն բավական էր Սենատի կողմից հռչակումը և հանրաքվեով հաստատումը՝ միջազգային հարթակում երևույթին օրինականություն հաղորդելու համար Նապոլեոնը որոշեց թագադրման արարողակարգ անցկացնել Փարիզի Աստվածամոր տաճարում: Յանդիսությունը շարունակվեց Մարսյան դաշտում՝ հեղափոխական ավանդույթները պատվելու և շեշտելու նպատակով: 1804 թ. դեկտեմբերի 2-ին հանդիսավոր պայմաններում Յոզեֆ պապ Պիոս 7-րդի օրհնությամբ Նապոլեոնը, ինչպես և նախատեսված էր, ինքն իրեն թագադրեց իբրև Ֆրանսիացիների կայսր, այնուհետև արտասանեց քաղաքացիական երդումը: Այժմ նա կայսր էր **«Աստուծո կամոք և Յանրապետության սահմանադրությամբ»**¹⁹⁴: Կայսեր քաղաքացիական երդմամբ՝ Նապոլեոնը պարտավորվում էր պաշտպանել Յանրապետության ամբողջականությունը, հարգել

¹⁹⁰ Տե՛ս Лещ Т., նշվ. աշխ., էջ 79-82:

¹⁹¹ **Մանֆրեդ Ա. 2.**, Նապոլեոն Բոնապարտ: Երևան, Յայաստանի հրատ., 1975, էջ 454-455:

¹⁹² Տե՛ս Conner S. P., նշվ. աշխ., էջ 33-35:

¹⁹³ Տե՛ս Woloch I., նշվ. աշխ., էջ 109-110:

¹⁹⁴ Տե՛ս Лещ Т., նշվ. աշխ., էջ 83-86:

քաղաքացիների հավասարությանը, քաղաքացիական ազատությանն են որևէ իրավունքները¹⁹⁵:

Նապոլեոնի բարեփոխիչ քաղաքականությանը խթանեց եվրոպական պետությանն են և հասարակությանն են արդիականացման գործընթացին: Անհրաժեշտ էր իրավական ձևակերպում տալ հեղափոխությանը հաստատված համակեցական նոր իրողությանն են: Այս առումով **Նապոլեոնը հաջողության հասնում է իրավական ձևակերպումներ տալ հեղափոխության գաղափարներին:** Դեռևս իր ժամանակին ժան ժակ Ռուսսոն ձևակերպել էր. «Ուժեղագույնը երբեք բավականաչափ ուժեղ չէ միշտ տիրելու համար, քանի դեռ իր ուժը չի փոխակերպում իրավունքի, իսկ հնազանդությանը պարտականության»¹⁹⁶: Իբրև Ռուսսոյի գաղափարական հետևորդ Բոնապարտը մեծ կարևորություն էր տալիս «Հանրային դաշինքի» գաղափարներին, դրանց օրինականացմանը և իրականացմանը¹⁹⁷: Եվ այս բարեփոխումների գլխավոր փաստաթուղթը դարձավ Նապոլեոնի **«Քաղաքացիական օրենսգիրքը»** (1804 թ.), որը թարգմանվեց բազմաթիվ լեզուներով և կիրառվեց բազում երկրներում¹⁹⁸: Այս կերպ, «Քաղաքացիական օրենսգիրքը» հավերժացրեց հեղափոխության ձեռքբերումները¹⁹⁹:

19-րդ դարասկզբի **արդիականացումը եվրոպայում նշանակում էր՝** արդյունավետ բյուրոկրատական համակարգով կենտրոնացված պետությանն են, միակերպ դատական, հարկային և մաքսային համակարգ, համընդհանուր միջնակարգ կրթության, կշռի և չափի միասնական համակարգեր, գորակոչային ազգային բանակներ,

¹⁹⁵ Տե՛ս **Ashby R.**, Napoleon against Great Odds: the Emperor and the Defenders of France. Santa Barbara: ABC-CLIO, 2010, pp. 79-86. Հատկանշական է «ազգային գվարդիայի» (Garde nationale) պահպանումը, որը, ի տարբերություն եվրոպայում տարածված «թագավորական գվարդիաների», «ազգի պահպաններն» էին, ոչ թե դինաստիաների: Ազգային գվարդիայի համագրեցումը արտահայտում էր ֆրանսիական հանրապետության եռագույնի գույները: Գվարդիականներն իրենք պետք է հոգային իրենց ծառայողական ծախսերը, ինչը ենթադրում էր անդամությանը մեծամասամբ ունևոր քաղաքացիներից: Հեղափոխության տարիներին Ազգային գվարդիան կարևոր բոլորակական հաստատության էր:

¹⁹⁶ **Rousseau J. J.** (1762), On the Social Contract. Translated by G. D. H. Cole. New York: Dover Publications, 2003, p. 3.

¹⁹⁷ Տե՛ս **Bernard S.** (ed.), The Code Napoleon and the Common-law World. New Jersey: The Lawbook Exchange, 1998, pp. 7-8.

¹⁹⁸ Տե՛ս **Broers M., Hicks P. and Guimerá A.** (eds.), The Napoleonic Empire and the New European Political Culture. Basingstoke, Hampshire: Palgrave Macmillan, 2012, pp. 5-9.

¹⁹⁹ Տե՛ս **Conner S. P.**, նշվ. աշխ., էջ 41-44:

նստիկանություն, ազնվականության արտոնյալ կարգավիճակի վերացում, հոգու տպետության եկեղեցու իրավունքների կրճատման միջոցով պետության և եկեղեցու տարանջատում, բուրժուական իքադաբական և սոցիալական դերի բարձրացում, իրավական հավասարություն, երաշխավորված սեփականատիրական իրավունքներ, տնտեսության ազատականացում, ներքին մաքսերի վերացում, ազգային շուկաների ձևավորում և այլ ²⁰⁰:

Նապոլեոնյան պետությունը աշխարհիկ պետություն էր, որում իրավաբանորեն ճանաչվում էր կրոնական ինքնորոշման գաղափարը: Ֆրանսիայում ընկերային կայունությունն հաստատելու նպատակով Նապոլեոնը փորձեց հաշտեցնել կրոնը և քաղաքականությունը ²⁰¹: 1801 թ. հունիսի 15-ին նա կոնկորդատ ²⁰² կնքեց Յոնմի պապի հետ, որով պետությունը ճանաչեց, որ կաթոլիկությունը «ֆրանսիացիների մեծամասնության կրոնն է» (այլ ոչ թե պետության) ²⁰³: Պիոս 7-րդ պապը ստիպված էր համաձայնել, որ Ֆրանսիայի բոլոր հոգևորականները պետական վարձատրությամբ ծառայողներ են և հավատարմության երդում են տալիս պետությանը ²⁰⁴: Բոնապարտի համակարգային բարեփոխումները, որոնք ընդգրկում էին հասարակության բոլոր շերտերը, նպաստեցին լայն միջին խավի ձևավորմանը և նրա ժողովրդականության բարձրացմանը իբրև ազգային ղեկավարի:

Այսպիսով, Նապոլեոնյան Ֆրանսիան իրավական պետություն էր և իր ժամանակի ավանդական միապետություններից տարբերվում էր կենտրոնացված արդյունավետ կառավարման համակարգով, աշխարհիկությամբ, հավասարության սկզբունքի կիրառման հետևողականությամբ և հանրաքվեի միջոցով «աբսոլյուտիզմի

²⁰⁰ Տե՛ս **Գասպարյան Ա.**, Ֆրանսիան Նապոլեոն Բոնապարտի կառավարման տարիներին (1799-1814) (Կառավարման համակարգի արդիականացման մոդելը): Երևան, ԵՊՀ հրատ., 2013, էջ 12-46:

²⁰¹ Տե՛ս **Rayapen L. and Anderson G.**, Napoleon and the Church. *International Social Science Review*, Vol. 66, No. 3 (Summer 1991), pp. 117-127.

²⁰² Տե՛ս **Dwyer P. G. and McPhee P.** (eds.), *The French Revolution and Napoleon: A sourcebook*. London and New York: Routledge, Taylor & Francis e-Library, 2003, pp. 149-152.

²⁰³ Տե՛ս **Ленн Т.**, նշվ. աշխ., էջ 70: Տե՛ս նաև **Minnerath R.**, *Le concordat de Bonaparte et son actualité. Napoleonica. La Revue* 2015/2 (N° 23), pp. 4-20.

²⁰⁴ Տե՛ս **Hause S. and Maltby W.**, նշվ. աշխ., էջ 409-410:

ժողովրդավարացմամբ»²⁰⁵: Եվ այս առումով Ֆրանսիան հեղափոխական Երմնում Եվրոպայի համար:

Բ. Գերիշխանության տարածատիպական աստիճանը: 1801 թ. փետրվարի 9-ի Լուսնեվիլի (Սրբազան հռոմեական կայսրության հետ) և 1802 թ. մարտի 25-ի Ամիենի (Մեծ Բրիտանիայի հետ) պայմանագրերով խաղաղության պարտադրելով երկրորդ հակահեղափոխական խմբավորմանը, Յանրապետության առաջին կոնսուլ Բոնապարտը ձեռնարկեց Եվրոպայում Ֆրանսիական գերիշխանության (*hégémonie*)²⁰⁶ հաստատման քաղաքականությունը²⁰⁷: Ֆրանսիական հեղափոխության ընդհանրականացման համար ելակետային Երևրա առաջնորդների համոզմունքը մարդկության միասնության իմաստասիրական և իրավական հղացքների վերաբերյալ: Ըստ այդ համոզմունքների՝ *ազատության, հավասարության և եղբայրության* գաղափարները հանդիսանում են քաղաքացիական իրավունքների հենքը ոչ միայն Ֆրանսիայում, այլ նաև մյուս երկրներում²⁰⁸:

Ըստ վերը առաջադրված հիմնախնդրի՝ նախ կքննարկենք Եվրոպայի կերպափոխության խնդիրն ըստ տարածաշրջանների: Այնուհետև կհամակարգենք Եվրոպայի միասնականացման նաարլեոնյան փորձառությունը: Հարկ է նշել, որ ըստ

²⁰⁵ Տե՛ս և **Ленин Т.**, նշվ. աշխ., Էջ 118: Տե՛ս նաև **Richter M., Baehr P.** (eds.), *Dictatorship in History and Theory: Bonapartism, Caesarism, and Totalitarianism*. Cambridge, New York: Cambridge University Press, 2004, pp. 29-53.

²⁰⁶ **Գերիշխանության սեսությունը** ձևակերպել է նշանավոր իտալացի մտածող Անտոնիո Գրամշին (1891–1937 թթ.): Նագրում է. «Գերիշխանության յուրաքանչյուր հարաբերությունն անհրաժեշտաբար կրթական հարաբերությունն է և տեղի է ունենում ոչ միայն ազգի ներսում այն քաղաքող տարբերությունների միջև, այլ նաև միջազգային ու համաշխարհային ասպարեզում ազգային և մայրցամաքային քաղաքակրթությունների համալիրների միջև»: Նկատենք՝ հարաբերությունների տվյալ համակարգի պահպանման նպատակով նապոլեոնյան Ֆրանսիայի համար չափազանց կարևոր էր ապահովել ներդաշնակ երկխոսություն իրականացվող հարկադրանքի և համոզումի քաղաքականության շրջանակներում: Թեպետ հարկադրանքի և համոզումի միջոցները չեն համապատասխանում միմյանց, այդուհանդեռ դրանք իրարամերժ չեն: Եվ այն ազգը կամ պետությունը, որը ձգտում է առաջնորդել, պետք է զուգահեռաբար կիրառի այս հղացքները: Քանզի գերիշխանական հարաբերությունների յուրաքանչյուր համակարգ պահպանվում է ոչ միայն հարկադրանքով, բայց նախ և առաջ ակտիվ համաձայնությանամբ, որի պարագայում գերիշխանի քաղաքական ու մշակութային արժեքները ողջ ախտիության միջոցով ընդունվում և յուրացվում են խոնարհների կողմից: Արդյունքում առաջանում է համերաշխություն: Այստեղ չափազանց կարևոր էր գաղափարաբանության դերը: Մանրամասն տե՛ս **Gramsci A.**, *Selections from the Prison Notebooks*. Edited and translated by Quentin Hoare and Geoffrey Nowell. London: Smith Lawrence & Wish art, 1971, pp. 254-260, 302, 309, 445-556, 666.

²⁰⁷ Տե՛ս **Woolf S. J.**, *Napoleon's Integration of Europe*. London and New York: Routledge, Taylor & Francis e-Library, 2003, p. 23.

²⁰⁸ Տե՛ս **Чубарьян А. О.**, նշվ. աշխ., Էջ 149:

տարածաշրջանների Նապոլեոնի քաղաքականությունը տարբերվում էր:

1. **Իտալիա** Բոնապարտի մոտեցումները գործնականում դրսևորվեցին սկսած իտալական արշավանքից (1796-1797 թթ.): 1796 թ. մայիսի 15-ին Միլանում Բոնապարտը, դիմելով ժողովրդին, հայտարարեց. «Ֆրանսիական հանրապետությունը կգործադրի բոլոր ջանքերը, որպեսզի ձեզ երջանկացնի և վերացնի դրա ճանապարհին եղած բոլոր խոչընդոտները: Միայն ծառայություններն են տարբերելու մարդկանց, որոնք համախմբված կլինեն եղբայրական հավասարության և ազատության միասնական ոգով»²⁰⁹: Նա կարծում էր, որ անհրաժեշտ է ստեղծել Ֆրանսիային բարեկամ և նրա հետ կապված հանրապետությունների համակարգ:

Բոնապարտը նվաճված իտալական տարածքներում ստեղծեց Լիգուրիական հանրապետությունը (Ջենովա, 1797 թ.) և Տիզալայան հանրապետությունը (Միլան, 1797 թ.)²¹⁰: Դրանք ձևակերպվեցին նույն Ֆրանսիական հարացույցով. նույն սահմանադրությունը, դիրեկտորիա, երկու օրենսդիր խորհուրդ, տեղական ինքնավարության միևնույն համակարգը և այլն²¹¹: 1797 թ. հոկտեմբերին Կամպո-Ֆորմիոյի պայմանագրով վերջին Սրբազան հռոմեական կայսր Ֆրանց 2-րդը ճանաչեց Ֆրանսիական հանրապետության ծավալ ապաշտության արդյունքները և քույր հանրապետությունները²¹²:

1801 թ. փետրվարի 9-ի Լուսեվիլի պայմանագրով Ավստրիան ճանաչեց Նան Տիզալայան, Լիգուրիական, Բատավիական (Բելգիա) և Յելվետական (Շվեյցարիա) հանրապետությունները²¹³: Ֆրանսիայի դիրքերը ամրապնդելու համար ստեղծվեց իտալական բանակ և հիմք

²⁰⁹ **Սանֆրեդ Ա. 2.**, նշվ. աշխ., էջ 167:

²¹⁰ Տե՛ս **Schroeder P. W.**, *The Transformation of European Politics, 1763-1848*, pp. 169-170, 183.

²¹¹ Թեև Փարիզից եկող դիրեկտորիայի հրահանգները գեներալին պարտավորեցնում էին այդ տարածքները պահել Ֆրանսիայից ուղղակի կախվածության մեջ, այդուամենայնիվ, Բոնապարտը նպաստում էր իտալական ինքնիշխան հանրապետությունների ստեղծմանը, որոնք Ֆրանսիայի հետ կապված պետք է լինեին շահերի ընդհանրության մեջ: Տե՛ս **Սանֆրեդ Ա. 2.**, նշվ. աշխ., էջ 416:

²¹² Տե՛ս **Hause S. and Maltby W.**, նշվ. աշխ., էջ 408: Յատկանշական է՝ երբ Կամպո-Ֆորմիոյի բանակցությունների ժամանակ ավստրիական կողմը իբրև զիջում առաջարկեց ճանաչել Ֆրանսիական հանրապետությունը, Բոնապարտը բացականչեց. «Արևը ճանաչման կարիք չունի» («Le soleil n'a pas besoin d'être reconnu»): **Nothomb J.-B.**, *Traité de paix entre la Belgique et la Hollande du 23 janvier 1839: discours prononcé dans la séance de la chambre des représentans du 4 mars. Bruxelles: Chez Deltombe Imprimeur, 1839, p. 44.*

²¹³ Տե՛ս **Grab A.**, նշվ. աշխ., էջ 8:

Նախապատրաստվեց Իտալական հանրապետության հռչակման: Բոնապարտը Տիզալայան հանրապետության մեջ տեսնում էր ապագա միացյալ Իտալիայի հիմքը: 1802 թ. հունվարին, այն անվանափոխվեց Իտալական հանրապետության, և Ֆրանսիական հանրապետության առաջին կոնսուլ Նապոլեոն Բոնապարտն ընտրվեց Իտալական հանրապետության նախագահ²¹⁴:

2. Բելգիա և Յուլանդիա Բելգիան կամ ավստրիական Նիդերլանդները առաջին երկիրն էր, որ 1795 թ. միացվեց հեղափոխական Ֆրանսիային և նրա կազմում մնաց մոտ քսան տարի: Յեղափոխությունը Բելգիայում բարենպաստ պայմաններ էր ստեղծել նապոլեոնյան բարեփոխումների համար: Ֆրանսիական իշխանությունը Բելգիայում վերացրեց ավանդական պրովինցիալ ինքնավարությունը՝ ներդնելով կենտրոնացված կառավարման համակարգ: Նախորդյալներ ստեղծվեցին արդիական բելգիական հասարակության և պետության համար: Դա էլ ճանապարհ հարթեց 1830 թ. Բելգիայի անկախության համար²¹⁵:

Դեռևս 1795 թ. Ֆրանսիական զորքերի միջամտությամբ իրականացված հոլանդական հեղափոխությամբ հռչակվել էր Բատավական հանրապետությունը (1795-1806 թթ.), որը դարձավ հեղափոխական Ֆրանսիայի առաջին «քույր հանրապետությունը»: Այստեղ իրականացվեցին բարեփոխումներ նույն Ֆրանսիական հարացույցով: 1806 թ. կայսր Նապոլեոնը Բատավական հանրապետությունը դարձրեց Յուլանդիայի թագավորություն՝ բատավական կառավարության «պաշտոնական խնդրագրի» հիման վրա թագավոր կարգելով իր եղբայր Լուի Բոնապարտին: 1810 թ. Նապոլեոնը միացրեց Յուլանդիան Ֆրանսիացիների կայսրությանը՝ գեներալ-նահանգապետ նշանակելով Շառլ Լեբրունին: Նապոլեոնի

²¹⁴ Տե՛ս **Schneid F. C.**, Napoleon's Conquest of Europe: the War of the Third Coalition. Westport and London: Praeger Publishers, 2005, pp. 68-69. Տե՛ս նաև **Stock P.**, Imposing on Napoleon: the Romantic appropriation of Bonaparte. *Journal of European Studies*, 36 (3), SAGE Publications 2006, pp. 363-388. Իտալիայում Նապոլեոնի բարեփոխումները ամենահաջողվածներից էին: Ֆրանսիական գերիշխանության երկու տասնամյակները և Նապոլեոնյան ժամանակաշրջանը Ապենինյան թերակղզում դրեցին Իտալիայի միավորման և անկախության քաղաքական, հաստատությունական ու գաղափարական հիմքերը: Քանզի ողջ Իտալական թերակղզին շնորհիվ Նապոլեոնի հռոմեական ժամանակներից ի վեր առաջին անգամ հայտնվեց միանման օրենսդրական, ռազմական, վարչաքաղաքական և մաքսային համակարգի ներքո: Տե՛ս **Grab A.**, նշվ. աշխ., էջ 174-175:

²¹⁵ Տե՛ս **Grab A.**, նշվ. աշխ., էջ 76-84:

գերիշխանությունը հիմք հանդիսացավ արդի հոլանդական ազգ-
պետության ձևավորման համար²¹⁶:

3. Շվեյցարիա Շվեյցարիայում Նապոլեոնի քաղաքականությունը փոխզիջումային բնույթ ուներ: 1803 թ. փետրվարին «**Միջնորդության ակտով**» (Acte de médiation)²¹⁷ վերացվեց Յելվետական հանրապետությունը իր ունիտար կառուցվածքով և վերականգնվեց համադաշնային համակարգը իր կանտոնային ինքնավարությամբ: Ճանաչվում էր 19 իրավահավասար կանտոնների գոյությունը: Ֆրանսիացիների կայսրն իբրև «միջնորդ» պահպանում էր Յամադաշնության գործերով զբաղվելու իրավունքը: Յետագայում (1809 թ.) Նապոլեոնը ստացավ «**Շվեյցարական համադաշնության միջնորդ**» (“Médiateur de la Confédération Suisse”) տիտղոսը²¹⁸:

4. Գերմանիա Գերմանացի մտավորականների մեծ մասը խանդավառությամբ ողջունեցին Ֆրանսիական հեղափոխությունը՝ այն դիտարկելով իբրև մարդկության պատմության նոր ժամանակաշրջան: Կանտոնային համարեց «բարոյական ակտ», Յեգելը՝ «բանականության ակտ»: Լյուդվիգ վան Բեթհովենը Նապոլեոնին էր ձոնել իր «**Ազգերի օրհներգը**» (Երրորդ կամ Յերրոսական սիմֆոնիան), քանզի նրան համարում էր Ֆրանսիական հեղափոխության հանրապետական և հակաբռնապետական արժեքների խորհրդանիշ²¹⁹:

Մինչև Նապոլեոնի միջամտությունը Գերմանիան ավելի քան 300 պետություններից կամ իշխանություններից և ազատ քաղաքներից բաղկացած թույլ համադաշնություն էր՝ ի դեմս Սրբազան հռոմեական կայսրության: Նապոլեոնի վարչաքաղաքական և տնտեսական բարեփոխումների արդյունքում վերացվեցին 112 փոքրիկ պետություններ ու միացվեցին առավել խոշորներին, 51 ազատ քաղաքներից մնացին միայն 6-ը: Տարածքային խոշորացումներից հետագայում մեծապես շահեց Պրուսիան: Ի

²¹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 62-74:

²¹⁷ Տե՛ս **Acte de médiation** fait par le Premier Consul de la République française, entre les partis qui divisent la Suisse: Paris, 19 février 1803, pp. 96-112.

²¹⁸ Տե՛ս **Grab A.**, նշվ. աշխ., էջ 117-120:

²¹⁹ **George C. T.**, The Eroica Riddle: Did Napoleon Remain Beethoven's Hero? A Great Myth: Beethoven the Democrat vs. Napoleon the Tyrant. Beethoven: Letters, Journals and Conversations. *Napoleonic Scholarship: The Journal of the International Napoleonic Society*, Vol. 1, N. 2 (December 1998). http://www.napoleon-series.org/ins/scholarship98/c_eroica.html (01.09.2016).

հակակշիռ Ավստրիայի և Պրուսիայի՝ Նապոլեոնը ձևավորեց այսպես կոչված «երրորդ Գերմանիան»՝ բաղկացած մի շարք միջին կարգի պետություններից, որոնք զգալի ուժ էին ներկայացնում: Դրանք էին Բավարիան, Վյուրտեմբերգը, Վեստֆալիան, Բադենը, Յեսսեր-Դարմշտադը և Նասսաուն, որոնք մի շարք ավելի փոքր իշխանապետությունների հետ միասին մաս կազմեցին Նապոլեոնի ձևավորած Յռենոսյան համադաշնությանը (1806-1813 թթ.): Գերմանիայում դրվեցին հասարակական և պետական արդիականացման հիմքերը: Եվ այս առումով Վեստֆալիայի թագավորությունը, ուր թագավոր էր կարգվել Նապոլեոնի կրտսեր եղբայր Ժերոմ Բոնապարտը (1807-1813 թթ.), ֆրանսիական համակարգի վրա հիմնված «մոդելային պետություն» էր²²⁰:

5. Լեհաստան: 1806 թ. հաղթանակ տանելով Պրուսիայի նկատմամբ՝ ֆրանսիական զորքերը մտան Լեհաստանի այն հատվածը, որն օկուպացված էր Պրուսիայի կողմից²²¹: 1807 թ. հունվարի 2-ին Նապոլեոնը մտավ Վարշավա: Լեհերը ոգևորությամբ դիմավորեցին ֆրանսիացիներին՝ հույս ունենալով վերականգնել իրենց անկախ պետությունը: Լեհ ժողովուրդը նաև փախագում էր Նապոլեոնի օգնությամբ ազատվել ֆեոդալական կարգերից: Լեհաստանում Նապոլեոնը որոշեց հենվել ոչ թե ժողովրդական զանգվածների, այլ հզոր և երկազնվականության աջակցության վրա՝ ձգտելով ունենալ կայուն քաղաքական միավոր Ռուսաստանի սահմանին: Նապոլեոնի ջանքերով ֆրանս-ռուսական 1807 թ. Տիլզիտի պայմանագրով հիմնադրվեց Վարշավայի մեծ դքսությունը: Այն ենթակա իշխանություն էր, որը չուներ արտաքին հարաբերություններ: 1807 թ. հուլիսին Նապոլեոնը հռչակեց դքսության սահմանադրությունը՝ հիմնված ֆրանսիականի վրա, որում ընդգրկված էին ավանդական և երկազնվական պառլամենտական համակարգի տարրեր: Մասնավորապես սենատում տեղերն ամրագրված էին

²²⁰ Տե՛ս **Grab A.**, նշվ. աշխ., էջ 85-93, 99: 1807 թ. Նապոլեոնը գրում է իր եղբայր Վեստֆալիայի թագավոր Ժերոմին. «Անհրաժեշտ է, որ քո ժողովուրդը վայելի ազատությունը, հավասարությունը և Գերմանիայի ժողովրդին անհայտ բարեկեցության մյուս պտուղները... Այդ դեպքում ո՞ր ժողովուրդը կցանկանա վերադառնալ Պրուսիայի իշխանության տակ, եթե նրանք արդեն տեսել են իմատուն և ազատական վարչարարության համը»:

²²¹ Տե՛ս **Leggierre M. V.**, Napoleon and Berlin: the Franco-Prussian War in North Germany, 1813. Vol. 1, Campaigns and Commanders series. Norman: University of Oklahoma Press, 2002, pp. 19-20.

բացառապես ազնվականների համար: Նապոլեոնի օրենսգրքով վերացվեցին ֆեոդալական իրավունքները և հաստատվեց իրավական հավասարություն: Այդուհանդերձ ճանաչվեցին ազնվականության քաղաքական իրավունքները և կառավարական հաստատությունները թողնվեցին նրանց ձեռքերում: Նապոլեոնյան ժամանակաշրջանը կարևոր խթան հանդիսացավ լեհական ինքնիշխան ազգային պետության ստեղծման համար²²²:

6. Իսպանիա և Պորտուգալիա Նապոլեոնի կոնսուլություն հենց առաջին տարիներից Իսպանիան դարձել էր Ֆրանսիայի արբանյակ պետություններից²²³: 1808 թ. Ֆրանսիական զորքերը նվաճեցին Իսպանիան: Նապոլեոնը իսպանական գահը հանձնեց իր ավագ եղբայր Ժոզեֆ Բոնապարտին: Իբրև Իսպանիայի թագավոր Ժոզեֆը (1808-1813 թթ.) սկսեց կյանքի կոչել Նապոլեոնյան բարեփոխումները. հաստատվեց Ֆրանսիական մոդելի սահմանադրություն, վերացվեցին ֆեոդալական իրավունքներն ու ինկվիզիցիան, կատարվեցին ազատական տնտեսական ու վարչաիրավական բարեփոխումներ: Ֆրանսիացիների գերիշխանության տակ գտնվող երկրներից Իսպանիան ամենախնդրահարույցն էր՝ շարունակական ապստամբություններով և ընդվզումներով: Ֆրանսիական հեղափոխության գաղափարները և հասարակական նորացման քաղաքականությունը անհասկանալի էին իսպանացի ժողովրդի համար: Ընդվզումն առաջնորդվում էր «կրոն, երկիր և թագավոր» կարգախոսով: Յոգևորականությունը կարևոր դեր ուներ ապստամբության առաջնորդության գործում: Այդուհանդերձ Նապոլեոնյան ժամանակաշրջանը կարևոր նշանակություն ունեցավ ազատական արժեքների տարածման, իսպանական պետության և հասարակության արդիականացման համար²²⁴:

1807 թ. Նապոլեոնի հրամանով Ֆրանսիական զորքերը գեներալ Ժուլնոյի հրամանատարությամբ ներխուժեցին Պորտուգալիա և նվաճեցին Լիսաբոնը: 1808 թ. փետրվարին Ժուլնոն չեղյալ

²²² Տե՛ս Grab A., նշվ. աշխ., էջ 177-187: 1809 թ. Ֆրանս-ավստրիական պատերազմից հետո վարչավայի դքսություն տարածքն աճեց՝ հասնելով 151 հազ. քառ. կմ-ի:

²²³ Այս հանգամանքը հատկապես ամրապնդվեց 1800 թ. Սան Իլդեֆոնսոյի պայմանագրով, որով Ֆրանսիան նաև հետվերադարձրեց Լուիզիանան: Տե՛ս Schneid F. C., նշվ. աշխ., էջ 25-33:

²²⁴ Տե՛ս Grab A., նշվ. աշխ., էջ 125-143:

հայ տարարեց հին կարգերը, ներկայացրեց ֆրանսիական մոդելի սահմանադրությունը՝ հռչակելով իրավական հավասարությունը, կրոնական և անձնական ազատությունը: Իսպանացիների նման, պորտուգալացիներն ընդվզեցին ֆրանսիական վերափոխումների դեմ: Շուտով 1808 թ. ամռանը ընդհանուր ապստամբություն բռնկվեց ֆրանսիական գերիշխանության դեմ, որին շտապեցին օգնել անգլիացիները: Նապոլեոնի նվաճած երկրներից Պորտուգալիան ֆրանսիացիների գերիշխանության տակ ամենակարճ ժամանակահատվածն անցկացրեց²²⁵:

7. Բալկաններ և Օսմանյան կայսրություն: Ֆրանսիական հեղափոխությունը Արևմտյան քաղաքակրթության առաջին ընդլայն գաղափարական շարժան էր, որն իր ազդեցությունը թողեց նաև Օսմանյան կայսրության վրա²²⁶: Հեղափոխական գաղափարներն իրենց արձագանքները ստանում էին հատկապես կայսրության քրիստոնյա ժողովուրդների շրջանում: Սակայն դա բավական չէր սոցիալական տեղաշարժերի համար, քանզի եկեղեցական իշխանությունը և ունևոր ընտրախավը պահպանողական դիրք ունեին: Այնուամենայնիվ, հեղափոխության գաղափարներն իրենց ազդեցությունը թողեցին, հատկապես այն դեպքերում, երբ ֆրանսիացիները սկսեցին ուղակիորեն անդրադառնալ հունական կամ այլ ազգային ձգտումներին: 1820-ական թվականներին Հունաստանի անկախության շարժումը սրավառ օրինակներից է²²⁷: Ֆրանսիական հեղափոխության ազդեցությամբ այստեղ **ազատություն** բառը ստացավ նոր քաղաքական և գաղափարաբանական

²²⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 146-151:

²²⁶ Տե՛ս **Lewis B.**, The Impact of the French Revolution on Turkey: Some Notes on the Transmission of Ideas. *Journal of World History*, Vol. I, N 1, Juillet 1953, pp. 105-106. Հեղափոխության գաղափարների հաջողությունը Օսմանյան կայսրությունում մեծապես պայմանավորված էր դրանց աշխարհիկ և համամարդկային բնույթով: Քանզի ֆրանսիական հեղափոխությունը առաջին անգամ սոցիալական ցնցումն էր եվրոպայում, որն ուներ ոչ կրոնական տրամաբանություն: Ընդհակառակը, սա խզում էր քրիստոնեության և պետությունների միջև՝ ստեղծելով ազգային ինքնության և հավատարմության նոր հարացույց: Ըստ Բեռնարդ Լյուիսի՝ այդ հարացույցը կարելի է ամփոփել «ազատություն, հավասարություն և ազգություն» գաղափարներով: Արևմտյան քաղաքակրթության տեխնոլոգիական առաջընթացը ու ֆրանսիական հեղափոխության գաղափարները մի կողմից և իսլամի քաղաքակրթության բյուրեղացումը մյուս կողմից ուժերի նոր հարաբերակցություն էին հաստատել:

²²⁷ Տե՛ս **Mardin S.**, The Influence of the French Revolution on the Ottoman Empire. *International Social Science Journal*, Vol.41, Issue 1, 1989, p. 17.

բովանդակությունն՝ վերածվելով ինչպես ներքին բռնատիրության դեմ պայքարի, այնպես էլ ազգային ազատագրական մարտակոչի²²⁸:

Կոստանդնուպոլսի հունական և հայկական ընտրախավերը, հանդիսանալով արևմտյան քաղաքակրթական արժեքների կրող և ունենալով կայսրությունում եվրոպական լեզուների իմացության մենաշնորհ, վայելում էին բացառիկ դիրք Օսմանյան տերությունում և, հատկապես, տնտեսությունում: Հուններն ու հայերը մերձ էին արևմտյան մշակույթին, ոմանք կրթություն էին ստացել եվրոպական համալսարաններում և պատրաստ էին ընդունել ու լուսավորական գաղափարները²²⁹:

Օրինակ, հայ հայ տնի թարգման, դիվանագետ և պատմագետ Մուրադեա դ'Օսսոնը²³⁰ ազդեցություն ուներ Ֆրանսիական հանրապետության նկատմամբ Օսմանյան քաղաքականության վրա²³¹, ինչը հետագայում կենսական նշանակություն ունեցավ Բալկանյան ժողովուրդների շրջանում հեղափոխության գաղափարների ներթափանցման և ազգային ազատագրական շարժումների սկսման տեսանկյունից²³²: Հատկանշական է՝ 1798 թ. Մուրադեա դ'Օսսոնը փորձում էր Բարձր Դռանը համոզել, որ Բոնապարտի եգիպտական արշավանքն անվտանգ է տերություն համար²³³: Նապոլեոնի հաղթանակները եվրոպայում և

²²⁸ Տե՛ս Lewis B., նշվ. աշխ., էջ 107-108: Հավասարության գաղափարը իր արձագանքը գտավ Օսմանյան հասարակության կորպորատիվ բնույթի պարագայում և վերաճեց ազգերի միջև հավասարության, հետագայում՝ ազգերի ինքնորոշման իրավունքի պահանջի: Օսմանյան հասարակությունը բաժանված էր միլեթների՝ իրավաբանորեն ճանաչված կրոնական համայնքների, ինչպիսիք էին իսլամի միլեթը (ոչ թե թուրքական կամ արաբական), հունյն քրիստոնյաները, հայ քրիստոնյաները և հրեաները:

²²⁹ Պոլսում հայ թարգման Բետտոսի ղեկավարությամբ ակտիվ գործում էր Ֆրանսիական տպագիր մամուլը, որը փորձում էր Օսմանյան կայսրության ժողովուրդներին ներկայացնել հանրապետականության և ազատության առավելությունները: Տե՛ս Lewis B., նշվ. աշխ., էջ 116:

²³⁰ Մուրադեա դ'Օսսոն (Mouradjea d'Ohsson (Tosunyan), 1740-1807 թթ.), հայ ազգի դիվանագետ և պատմագետ, Արևելքի և Օսմանյան կայսրության պատմության ժամանակի ամենարժեքավոր աշխատությունների (*Tableau Historique de l'Orient. 2 Vol.s; Tableau Général de l'Empire Othoman. 7 Vol.s.* Firmin Didot, Paris 1788-1824) հեղինակ: 1792 թվականից դ'Օսսոնը սերտ հարաբերությունների մեջ էր Պոլսում գործող Յակոբինյան շրջանակների հետ և ջանում էր, որ Բարձր Դռանը ճանաչի Ֆրանսիական հանրապետությունը: 1992 թ. նա գործերի հավատարմատար էր (Chargé d'affaires), իսկ արդեն 1795 թ. Շվեդիայի դեսպանն էր Պոլսում: Հատկապես հարկ է առանձնացնել դ'Օսսոնի «Օսմանյան կայսրության ընդհանուր պատկերը» պատմական հետազոտությունը Օսմանյան կայսրության ու նրա հպատակների կյանքի տարբեր կողմերի մասին: Թայեյրանի խոսքերով նրա աշխատությունները «նոր լույս սփռեցին թուրքերի իշխանության և բարքերի վրա»: Տե՛ս Findley C. V., A Quixotic Author and His Great Taxonomy: Mouradjea D'Ohsson and His Tableau General De L'empire Othoman, 19th International Congress of Historical Sciences 6-13 August 2000, University of Oslo, URL: <http://www.oslo2000.uio.no/program/papers/m1b/m1b-findley.pdf> (20.02.2015), pp. 6, 20-27: Տե՛ս **Չուլպյան Մ. Կ.**, Հայ ժողովրդի XIII—XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների [Պատ. խմբ. Վ. Ա. Բայբուրդյան]; ՀՀ ԳԱ Պատմ. ին-տ. Գիրք Ա: Երևան, ՀՀ ԳԱ հրատ., 1990, էջ 62-63: Տե՛ս **Բախչեան Ա. Յ.**, Նապոլեոն Բոնապարտը և հայերը: Երևան, ԳԱԹ. հրատ., 2003:

²³¹ Տե՛ս Jamgocyan O., La Révolution française vue et vécue de Constantinople (1789-1795). *Annales historiques de la Révolution française*. N°282, 1990, p. 463.

²³² Տե՛ս Lewis B., նշվ. աշխ., էջ 113-115:

²³³ Տե՛ս Findley C. V., նշվ. աշխ., էջ 26:

Ֆրանսիական դիվանագիտության ջանքերը Կոստանդնուպոլսում նպաստեցին, որ 1805 թ. Օսմանյան սուլթանը ճանաչի Նապոլեոնին իբրև կայսր: Իսկ արդեն 1806 թ. Պոլսում Նապոլեոնի դեսպան գեներալ Սեբաստիանին կարողացավ Բարձր Դռանը պատերազմի մեջ ներքաշել և՛ Ռուսաստանի, և՛ Մեծ Բրիտանիայի դեմ²³⁴:

Ֆրանսիական հեղափոխության գաղափարների Բալկաններ ներթափանցման նոր հնարավորություն բացվեց 1797 թ. Կամպո Ֆորմիոյի պայմանագրից հետո, երբ Բալկանյան թերակղզում Ֆրանսիական հանրապետության գերիշխանության տակ անցան տարածքներ՝ Օսմանյան կայսրության անմիջական հարևանությամբ: 1809 թ. հոկտեմբերին Ֆրանս-ավստրիական Շոնբրունյան պայմանագրով այս տարածքները Իլլիրիական պրովինցիաներ անվամբ Ֆրանսիացիների կայսրության վարչատարածքային միավոր դարձան: Հաստատվեց Նապոլեոնի օրենսգիրքը և ձեռնարկվեցին Ֆրանսիական մոդելի բարեփոխումներ: Նապոլեոնը խուսափեց այստեղ արմատական կերպով վերացնել Ֆեոդալական կարգերը, սակայն առավել կարևոր քայլ դարձավ կրթական բարեփոխումների ծրագիրը: Հաստատվեց միակերպ դպրոցական համակարգ, իսկ դպրոցներում ուսուցումը պետք է կատարվեր տեղական լեզուներով²³⁵: Այս կերպ Ֆրանսիական հետախուզությունը հողյաների և բալկանյան մյուս ժողովուրդների շրջանում տարածում էր ազատության, հավասարության և ազգային ինքնիշխանության գաղափարները²³⁶:

8. Ռուսաստան: Եվրոպայի ընդհանուր կերպափոխման Նապոլեոնյան ծրագրերը հիմնովին ձախողվեցին Ռուսաստանի ուղղությամբ: Հատկանշական է՝ դեռևս 1808 թ. Էրֆուրտյան խորհրդաժողովին թալեյրանը, Նապոլեոնից շուտ ժամանելով և հանդիպելով ռուսաց Ալեքսանդր 1-ին (1801-1825 թթ.) ցարին, ասել էր. «Ձերդ Մեծություն, ինչի՞ համար եք եկել այստեղ: Ձեզանից է կախված Եվրոպայի փրկությունը, և դուք միայն հաջողություն կունենաք Նապոլեոնի դեմ հանդես գալով: Ֆրանսիացի ժողովուրդը

²³⁴ Տե՛ս Lewis B., նշվ. աշխ., էջ 124:

²³⁵ Տե՛ս Grab A., նշվ. աշխ., էջ 188-196: Նապոլեոնի շնորհիվ Օսմանյան և Ավստրիական կայսրություններից դուրս սլովեները, խորվաթները և սերբերը առաջին անգամ միավորվեցին մեկ վարչաքաղաքական միավորի մեջ: Այս առումով Նապոլեոնի ստեղծած միակերպ Իլլիրիական պրովինցիաներ միավորը խթան հանդիսացավ հարավսլավական միության գաղափարին:

²³⁶ Տե՛ս Lewis B., նշվ. աշխ., էջ 120: Տե՛ս նաև Nicolaidis D., La France et les Grecs sous la Révolution et l'Empire, étude d'une représentation à l'échelle de peuples. *Annales historiques de la Révolution française*, N° 286, 1991, pp. 515-537.

քաղաքակիրթ է, նրա կառավարիչը՝ ոչ, Ռուսաստանի ինքնակալը քաղաքակիրթ է, նրա ժողովուրդը՝ ոչ: Այնպես որ Ռուսաստանի ինքնակալի գործն է լինել ֆրանսիացի ժողովրդի դաշնակիցը»²³⁷: Ռուսաստանի բնակչության համար անհասկանալի էր ֆրանսիական հեղափոխության բարձրացրած հասարակական նորացման ալիքը, որը Նապոլեոնը տարածում էր Եվրոպայի տարբեր հատվածներում: Երբ 1812 թ. հունիսին Նապոլեոնի ստեղծած Եվրոպական ազգերի «Մեծ բանակը» ներխուժեց Ռուսաստան, բացի ցարական բանակից այն հանդիպեց նաև ռուս ժողովրդի համառ դիմադրությանը: Նապոլեոնի ավելի քան 600,000-անոց բանակից փրկվեց միայն 100,000-ը²³⁸: Ազատության, հավասարության և եղբայրության գաղափարներն այստեղ լայն արձագանք չգտան:

Գ. Նապոլեոնը և Եվրոպայի միասնականացումը: Եվրոպական ամբողջի համապատկերում կարող ենք պնդել, որ Նապոլեոնը գործում էր ազգերի համագործակցության բարձրագույն խարսխված համակարգի ստեղծման և Եվրոպայի միասնականացման ուղղությամբ: Նապոլեոնի մոտեցմամբ՝ «եթե Եվրոպան բաղկացած լինի ազատորեն ձևավորված և ներքնապես ազատազգերից, խաղաղությանը պետությունների միջև կհեշտանա և **Եվրոպայի Միացյալ Նահանգների** ստեղծումը հնարավոր կդառնա... Ես ցանկանում էի հիմնել Եվրոպական համակարգ, Եվրոպական օրենսգիրք, Եվրոպական արդարադատությանը և կլինեի մեկ Եվրոպական ժողովուրդ»²³⁹:

Ըստ այդմ՝ ցանկանում ենք առանձնացնել և վերլուծել միասնականացման հինգ հարթություններ՝ Եվրոպական հալսքական հիշողության վերածնունդ, մայրցամաքային տնտեսական միության ասպիտակում, Եվրոպական ռազմական ներուժի և անվտանգության համակարգի միասնականացում, ընդհանուր օրենսդրության և միացյալ վարչաքաղաքական համակարգի ներդրում, ազգերի իբրև համագործակցության հիմնական միավորների ճանաչում:

1. Հալսքական հիշողության վերածնունդը մեծ նշանակություն ունի Եվրոպական աշխարհակարգի Նապոլեոնյան հարացույցում և

²³⁷ Kerautret M., Entrevue d'Erfurt. *Revue du Souvenir Napoléonien*, Société française d'histoire napoléonienne. N° 475, Avril-Mai-Juin 2008, pp. 31-38.

²³⁸ Տե՛ս Grab A., նշվ. աշխ., էջ 198-200:

²³⁹ McLynn F., Napoleon: A Biography. London, Sydney and Auckland: Pimlico, 1998, p. 664.

ընդգրկում էր այն պետությունները, որոնք իրենց ինքնիշխանությունը կառուցել էին Ֆրանկների կայսրության փլատակների վրա (Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա և այլուր): Այսպես. 1806 թ. հունիսի 16-ին 16 գերմանական պետությունները, լքելով Սրբազան հռոմեական կայսրությունը, Նապոլեոնի հովանավորությամբ ձևավորեցին Զռենոսյան համադաշնությունը²⁴⁰: Արդեն 1808 թ. Զռենոսյան համադաշնության անդամ պետությունների թիվը հասավ 39-ի՝ ներառելով Գերմանիայի մեծագույն մասը²⁴¹: Նապոլեոնը ստացավ **«Զռենոսյան համադաշնության պաշտպան»** (Protecteur de la Confédération du Rhin) տիտղոսը²⁴²: Այս կերպ Նապոլեոնը վերացրեց Սրբազան հռոմեական կայսրությունը, որը արդեն 18-րդ դարում Վոլտերի բնորոշմամբ «ո՛չ սրբազան էր, ո՛չ հռոմեական և ո՛չ էլ կայսրություն»²⁴³: 1006-ամյա կայսրությունը դադարեց գոյություն ունենալ: Նրավերջին կայսր Ֆրանց 2-րդը օգոստոսի 11-ին իրեն հռչակեց Ավստրիայի կայսր Ֆրանց 1-ին (1804-1835 թթ.)²⁴⁴, քանզի Նապոլեոնը ևս իշխում էր հռոմեական կերպարով և ավելի շատ էր «հռոմեական կայսր» քան ինքը: Իրեն հռչակելով Կարլոս Մեծի հետնորդ՝ Նապոլեոնը Վիեննային ցույց տվեց, որ իրենք իրավունք չունեն «ինչ-որ մի ավստրիական Երցհերցոգի» դնել Սրբազան հռոմեական կայսրության գլուխ: Այս քայլով Նապոլեոնը գերմանական և իտալական գործերին միջամտելու օրինականություն էր ապահովում: Ըստ այդմ, 1805 թ. մայիսի 28-ին Ֆրանսիացիների կայսրը հռչակվեց նաև Իտալիայի թագավոր: Ինքը՝ Նապոլեոնը, հաճախ հղում էր կատարում իր «Կառլոս Մեծի հետնորդը լինելու» հանգամանքին: Զատկանշական է՝ Զռոմի պապի հետ հակամարտության ընթացքում Նապոլեոնը գրում է. «Ասացե՛ք նրան, որ ես Կառլոս Մեծն եմ»²⁴⁵:

Ըստ այդմ, ինչպես նշվեց վերը, Զոլանդիայում թագավոր հռչակվեց Լուի Բոնապարտը, Վեստֆալիայում ժերոմ Բոնապարտը,

²⁴⁰ Տե՛ս Leggierre M. V., նշվ. աշխ., էջ 6-11:

²⁴¹ Տե՛ս Grab A., նշվ. աշխ., էջ 90-96, 110-111:

²⁴² Տե՛ս Զռենոսյան համադաշնության հիմնադիր պայմանագրի տեքստը՝ *Traité Portant Création De La Confédération Des Etats Du Rhin* (Paris, 12 Juillet 1806), Fondation Napoléon, Site officiel URL: http://www.napoleon.org/fr/salle_lecture/articles/files/traite_confederationrhin_12juillet1806.asp (13.12.2015).

²⁴³ Schneid F. C., նշվ. աշխ., էջ 38:

²⁴⁴ Տե՛ս Woolf S. J., նշվ. աշխ., էջ 25:

²⁴⁵ Жени Т., նշվ. աշխ., էջ 90-93:

Նապոլեոնը Իոնիոս Մյունխենը, Իսպանիայում ժողովրդականացրեց Ֆրանսիայի հեղափոխությունը, ինքը՝ Նապոլեոնը, ամուսնացավ Ավստրիայի կայսր Ֆրանց 1-ինի դստեր հետ: Եվ 1810 թ. դրությամբ Եվրոպայի մեծագույն մասը գտնվում էր Նապոլեոնի անմիջական կամ միջնորդավորված վերահսկողության տակ²⁴⁶: Ընդհանրացնելով կարող ենք ձևակերպել, որ Նապոլեոնը ըստ էության բեմադրում էր Եվրոպական ընտանիքի գաղափարը. իր ընտանիքը կառավարում էր Եվրոպական ազգերի ընտանիքը՝ սակայն հին դինաստիական հանդերձանքի ներքո:

2. Եվրոպայի տնտեսական միասնականացման քաղաքականության անկյունաքարը դարձավ Նապոլեոնի «մայրցամաքային համակարգը» կամ «մայրցամաքային շրջափակումը» (blocus continental), որը հռչակվեց իբրև արգելիչ ընդդեմ բրիտանական ապրանքների և Մեծ Բրիտանիայի հետ առևտրի: 1806 թ. նոյեմբերի 21-ին Նապոլեոնը հռչակեց «**Բեռլինի դեկրետը**»՝ արգելելով առևտուրը Եվրոպայի և Բրիտանական գաղութային կայսրության միջև²⁴⁷: 1807 թ. հունիսի 7-ի Տիլզիտի Ֆրանս-ռուսական պայմանագիրը դարձավ Նապոլեոնի «մայրցամաքային համակարգի» անկյունաքարերից մեկը. դաշնակիցները նաև պայմանավորվում էին համատեղ ջանքերով ստիպել չեզոք երկրներին՝ Դանիային, Շվեդիային և Պորտուգալիային, միանալ «մայրցամաքային դաշնությանը»²⁴⁸: Փակելով Եվրոպական շուկան Մեծ Բրիտանիայի համար՝ Նապոլեոնը մի կողմից նպատակ էր հետապնդում քայքայելու բրիտանական տնտեսությունը, սոցիալական հուզումներ հրահրելու և Մեծ Բրիտանիային իր խաղաղությունը պարտադրելու: Մյուս կողմից՝ «մայրցամաքային շրջափակման» քաղաքականությունը նպատակ ուներ Ֆրանսիան պաշտպանել Մեծ Բրիտանիայի հետ առևտրա-արդյունաբերական մրցակցությունից և Եվրոպայում ֆրանսիական տնտեսության համար գերիշխող դիրքեր ապահովել: 1809 թ. տնտեսությունը կարգավորելու համար Նապոլեոնը հատուկ մաքսային քաղաքականություն սկսեց. Մեծ Բրիտանիայի ու իր գաղութների հետ առևտրի համար սկսեցին վաճառվել հատուկ արտոնագրեր և ավելացվեցին մաքսային եկամուտները: 1810 թ.

²⁴⁶ Տե՛ս Hause S. and Maltby W., նշվ. աշխ., էջ 411-412:

²⁴⁷ Տե՛ս Schroeder P. W., The Transformation of European Politics, 1763-1848, pp. 307-310, 388-395.

²⁴⁸ Տե՛ս Woolf S. J., նշվ. աշխ., էջ 26-28:

սեպտեմբերին Նապոլեոնը հռչակեց **«Տիրանոնի հարկացուցակը»**²⁴⁹ թույլատրելով որոշ բրիտանական ապրանքների մուտքը կայսրությանը և նրանց համար սահմանելով չափազանց բարձր մաքսատուրքեր²⁴⁹: Նկատելի է ըստ երկրյան Նապոլեոնը հայտարարում էր **Ֆրանսիացիների կայսրության, արբանյակաբույսերի և դաշնակիցների մայրցամաքային «մաքսային միություն»** մասին, որը պետք է նպաստեր ֆրանսիայի առաջնորդությամբ **Եվրոպայի տնտեսական միասնականացմանը**: Հրամանագրի նախաբանում ասվում էր, որ այս քայլը կատարվում է քանզի Անգլիան չի ընդունում «ազգերի իրավունքը, որին հետևում են բոլոր քաղաքակիրթ ժողովուրդները»²⁵⁰:

3. Եվրոպական ռազմական ներուժի և անվտանգության համակարգի միասնականացման Նապոլեոնյան ծրագրերի մարմնավորումն էր ֆրանսիացիների **«Մեծ բանակը»** (Grande Armée), որը 1812 թ. ներխուժեց Ռուսաստան: «Մեծ բանակի» թվակաքանակն անցնում էր 600 հազարից: Բացի ֆրանսիացիներից, այն ներառում էր նաև զորամիավորումներ Նապոլեոնին ենթակա բոլոր եվրոպական ազգերից՝ գերմանացիներից, իտալացիներից, լեհերից, իսպանացիներից և այլն²⁵¹: Այս կերպ իրագործվում է նաև մի մեծ քարոզչական նպատակ. քաղաքակիրթ եվրոպան փորձում էր «ազատագրել» «վայրի ստրկության մեջ խարխափող» Ռուսաստանի ժողովրդին: Այդ **«համաեվրոպական բանակի»** ստեղծումը եվրոպայի

²⁴⁹ Տե՛ս Grab A., նշվ. աշխ., էջ 29-33: 1805 թ. հոկտեմբերի 21-ին Թրաֆալգարի ծովամարտում կորցնելով նավատորմը Մեծ Բրիտանիա ներխուժելու Նապոլեոնի ծրագրերը մնացին անիրագործելի: Ըստ այդմ Նապոլեոնը նախաձեռնեց «մայրցամաքային շրջափակումը»՝ հայտարարելով, որ այս քաղաքականությունը հաստատուն կերպով կշարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ Անգլիան չի ընդունել, որ «պատերազմի իրավունքը նույնն է՝ ինչպես ցամաքում, այնպես էլ ծովում» («le droit de la guerre est un et le même sur terre que sur mer»): Բացի նվաճված և արբանյակաբույսերից, Նապոլեոնի ճնշմամբ «մայրցամաքային շրջափակմանը» միացան նաև Ռուսաստանը (1807 թ.), Պրուսիան (1807 թ.), Ավստրիան (1810 թ.) և այլք: 1807 թ. ֆրանսիական ներխուժումը Պորտուգալիա ևս պայմանավորված էր վերջինիս «մայրցամաքային շրջափակմանը» միացնելու շարժառիթով: Ֆրանսիայի համար աշխարհաքաղաքական և որոշակի տնտեսական օգուտներից զատ այս քաղաքականությունը մեծ վնաս հասցրեց միջազգային առևտրին, և՛ բրիտանական, և՛ եվրոպական տնտեսություններին: Պաշտոնապես «մայրցամաքային շրջափակումը» շարունակվեց մինչև 1813 թ.:

²⁵⁰ **Décret - 11283. Camp impérial de Berlin, 21 novembre 1806**, Correspondance de Napoléon I^{er}. Tome 13 / publiée par ordre de l'Empereur Napoléon III. Paris: H. Plon et J. Dumaine, 1863, pp. 555-557.

²⁵¹ Տե՛ս Ashby R., նշվ. աշխ., էջ 11-13: Բացի «Մեծ բանակից» գործում էր նաև ազգային գվարդիան, իսկ կայսրության տարբեր տարածքներում՝ կայազորներ և պահեստային ուժեր: Ընդհանուր առմամբ Նապոլեոնի հրամանատարության տակ գտնվող զինված ուժերի թիվն անցնում էր 1 մլն-ից:

միավորման Նապոլեոնյան հարացույցի ամենացայտուն դրսևորումներից էր: Թեպետ պետք է նշենք, որ «համաեվրոպական բանակը» երևույթական և անարդյունավետ գտնվեց գործողության մեջ: Չինված ուժերի իրական միասնականացում չհաջողվեց իրականացնել²⁵²:

4. Եվրոպական օրենսդրության և վարչաքաղաքական համակարգի միասնականացման նապոլեոնյան նախագծի առանցքային դրսևորումն էր **Նապոլեոնի օրենսգիրքը**, որը հավակնում էր դառնալ **Եվրոպայի ընդհանուր օրենսգիրք**: Համաեվրոպական մակարդակում նապոլեոնյան իշխանությունը նշանավորվեց հին կարգերից դեպի արդի ժամանակաշրջան անցումով և եվրոպական պետությունների ու հասարակությունների արդիականացմամբ²⁵³: Նապոլեոնյան վարչաքաղաքական, իրավական, ռազմական, ֆինանսա-տնտեսական, կրթական և այլ կառուցվածքային բարեփոխումները, որոնք միտված էին ֆրանսիական հարացույցով եվրոպայի ինտեգրմանը, մեծապես նպաստեցին ազգային գաղափարաբանության վերելքին և ազգ-պետությունների զարգացմանը: Միակերպ օրենսդրական և վարչաքաղաքական բարեփոխումների համար հիմք հանդիսացան Նապոլեոնի «Օրենսգիրքն» ու ֆրանսիական համակեցական հարացույցը: 1809-1810 թթ. Նապոլեոնը միշտ քնված տարածքներ վերածեց սովորական ֆրանսիական պրովինցիաների: Ըստ էության Նապոլեոնի վերահսկողության տակ հայտնվեց ողջ եվրոպան բացի Ռուսաստանից և Մեծ Բրիտանիայից²⁵⁴: Նապոլեոնյան համակարգը Հռոմեական կայսրության ժամանակներից ի վեր եվրոպայի խոշորագույն քաղաքական համախմբումն էր²⁵⁵: Անշուշտ, ֆրանսիացիների վերահսկողության տակ գտնվող այս տարածքներն ու երկրներն ունեին տարբեր կարգավիճակներ և դիրքեր:

5. Նապոլեոնի եվրոպական համակարգում իբրև հիմնական բաղադրիչ միավորներ հանդես էին գալիս ազգերը: Գաղափարաբանական մակարդակում ճանաչվում էին **ազգային ինքնիշխանության, եղբայրական հավասարության** ու **ազատության**

²⁵² Տե՛ս Чубарьян А. О., նշվ. աշխ., էջ 160:

²⁵³ Տե՛ս **Գաապարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 13-43:

²⁵⁴ Տե՛ս Чубарьян А. О., նշվ. աշխ., էջ 159-160:

²⁵⁵ Տե՛ս Roberts A., Napoleon: A Life. New York: Penguin Publishing Group, 2014, p. 457.

սկզբունքները: Մեր դիտարկմամբ՝ Նապոլեոնյան Եվրոպան ներկայանում էր իբրև **միաբերված ազգերի համակարգ**: Ֆրանսիացիների գերիշխանությունը Եվրոպայում իր բարձրագույն աստիճանին հասավ 1810 թ.՝ ձգվելով Նիդերլանդներից մինչև Բալկաններ, Մադրիդից մինչև Վարշավա և Նեապոլից մինչև Զամբուրգ: Նապոլեոնյան «Մեծ կայսրությունը» կազմող այս տարածքները բաժանվում էին երեք խմբի՝ **միացված տարածքներ** (pays réunis), **նվաճված երկրներ** (pays conquis) և **դաշնակից պետություններ** (pays alliés)²⁵⁶:

Առաջին խումբը բաղկացած էր այն տարածքներից, որոնք միակցվել էին Ֆրանսիային և ուղղակիորեն կառավարվում էին Նապոլեոնի կողմից. սակայնում էր Ֆրանսիացիների կայսրության միջուկը: Երկրորդ խումբը կազմված էր արբանյակ-պետություններից, որոնք վստահվել էին Ֆրանսիացի կառավարիչների: Երրորդ խումբը դաշնակից պետություններն էին, որոնց տարածքները որոշ դեպքերում ընդարձակվել էին Նապոլեոնի կողմից և որոնցում թողնվել էին նախկին կառավարիչները²⁵⁷: Եվրոպական աշխարհակարգը վերակառուցվեց **«Նապոլեոնյան խաղաղության»** (Pax Napoleonica) հիմունքներով «հռոմեական խաղաղության» (Pax Romana) նմանությամբ²⁵⁸:

Ֆրանսիացիների կայսեր ձեռնարկումները Գերմանիայի ու Իտալիայի միավորման և իբրև ազգային պետությունների կայացման կարևոր փուլի հանդիսացան: Ինչպես նշվեց, 1806 թ. հուլիսին ստեղծվեց Զեյնոսյան համադաշնությունը, 1807 թ. Վեստֆալիայի թագավորությունը և այլն. գերմանական «անկախ պետությունների» թիվը 300-ից նվազեց մինչև 39-ի: Իտալիան ևս համախմբվեց. մինչև հեղափոխական տասը պետությունները միավորվեցին երեքի մեջ: 1807 թ. Վարշավայի դքսության ձևավորումը նպաստեց Լեհական ազգային ինքնորոշման ձգտումների զարգացմանը²⁵⁹:

²⁵⁶ Տե՛ս **Grab A.**, նշվ. աշխ., էջ 2, 17-18:

²⁵⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 2, 17-18:

²⁵⁸ Տե՛ս **Ghervas S.**, Antidotes to Empire: From the Congress System to the European Union, in *EUtROPEs: The Paradox of European Empire*, (Parisian Notebooks, 7), ed. John W. Boyer and Berthold Molden. Chicago: University of Chicago Press, 2014, p. 53.

²⁵⁹ Տե՛ս **Grab A.**, նշվ. աշխ., էջ 20-21, 209:

«Յարյուր օրերի» ընթացքում 1815 թ. ապրիլի 22-ին Փարիզում հրապարակվեց Բենժամեն Կոնստանի հեղինակած²⁶⁰ «Կայսրության սահմանադրությունների լրացուցիչ ակտը» (Acte additionnel aux constitutions de l'Empire): Որոշ տվյալներով սահմանադրական ակտի նախաբանը գրել էր Նապոլեոնը²⁶¹: Դրանում մասնավորապես ասվում էր. «Մեր նպատակը **Եվրոպական դաշնային մեծ համակարգի** (un grand système fédératif européen) ստեղծումն էր, որը, մենք հավատում էինք, կհամապատասխաներ դարաշրջանի ոգուն և կնպաստեր քաղաքակրթության առաջընթացին: Այս համակարգը կատարելագործելու, տարածելու և նրան կայունություն հաղորդելու նպատակով մենք հետաձգեցինք որոշ ներքին հաստատությունների ստեղծումը՝ նախատեսված պաշտպանելու քաղաքացիների ազատությունը»²⁶²: Նապոլեոնը մտադիր էր ստեղծել համաեվրոպական դատական և դրամական, չափերի ու կշիռների միասնական համակարգ: Արդեն Սուրբ Յեղիսե կղզում քսոթի ժամանակ նա ասում էր, որ այդպիսի բարեփոխումների շնորհիվ եվրոպական ազգի համար եվրոպան կդառնար «**մեծ ընդհանուր հայրենիք**... Այդժամ կարելի էր մտածել **Եվրոպական ազգերի ընտանիքի** համար կազմակերպություն և ստեղծելու մասին, որը համարժեք կլիներ ամերիկյան կոնգրեսին կամ հունական Ամփիկտոնյան լիգայի արդարադատության պալատին»²⁶³:

Այսպիսով, Նապոլեոնի եվրոպական քաղաքականությունը մեծապես նպաստեց եվրոպայի գաղափարաբանական, կառուցվածքային, քաղաքական և տնտեսական միասնականացմանը: Տրանսիական հեղափոխության արտահանման իր քաղաքականությունը և բարեփոխումների փաթեթով Նապոլեոնը նպաստում էր եվրոպայի ընդհանուր կերպափոխությանը. եվրոպական պետությունների ու հասարակությունների արդիականացմանը, համակարգային նույնականացմանը, իրավական միակերպությանը ու հաստատութենական ստանդարտացմանը: Նապոլեոնի այս

²⁶⁰ Տե՛ս Schom A., One Hundred Days: Napoleon's Road to Waterloo. New York, Oxford: Oxford University Press, 1992, pp. 131-135.

²⁶¹ Տե՛ս Чубарьян А. О., նշվ. աշխ., էջ 161:

²⁶² Acte additionnel aux Constitutions de l'Empire du 22 avril 1815, Conseil Constitutionnel de la République Française, Site officiel URL: <http://www.conseil-constitutionnel.fr/conseil-constitutionnel/english/la-constitution/les-constitutions-de-la-france/acte-additionnel-aux-constitutions-de-l-empire-du-22-avril-1815.5103.html> (20.19.2015).

²⁶³ Чубарьян А. О., նշվ. աշխ., էջ 162:

քաղաքականությունը իր իսկ խոսքերով պետք է հնարավոր դարձներ
Եվրոպայի միացյալ նահանգների (États-Unis d'Europe) ստեղծումը:

2.2 ՎԻԵՆԱՅԻ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԸ ԵՎ ՄԵՃ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ «ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆԸ»

Եվրոպայի միասնականացման բեկումնային նախագծում
պարտված Ֆրանսիան 1814 թ. մայիսի 30-ին դաշնակիցների հետ կնքեց
Փարիզի առաջին պայմանագիրը, որով նախատեսվում էր Վիեննայում
վեհաժողովը հրավիրել հետնապրլեոնյան աշխարհակարգի նախագծման
համար²⁶⁴: Հետադիմական միապետական ռեժիմների
մտադրությունները խիստ հակասում էին եվրոպական ազգերի
ազատագրական նպատակներին: Այդ «հակասությունները
միավորվեցին» հականապրլեոնյան խմբավորման տեսքով²⁶⁵:
Հականապրլեոնյան խմբավորումը հանդես էր գալիս իբրև
միապետության և հին կարգերի մյուս հաստատությունների
պաշտպան²⁶⁶: Այդ կերպ Ֆրանսիայում վերականգնվեց Բուրբոնների
գահը և թագավոր դարձավ Լուի 18-րդը, ում դաշնակիցները համարում
էին հակահեղփոխական դաշինքի անդամ. Ֆրանսիան կորցրեց
հեղափոխական շրջանի իր տարածքային ձեռքբերումները՝
պահպանելով 1792 թ. սահմանները²⁶⁷:

Նապրլեոնյան համակարգի անկումից հետո միապետները և
նրանց դիվանագետները հայտարարեցին եվրոպական
հավասարակշռությունը (l'équilibre européen) վերականգնելու իրենց
մտադրության մասին: Հետադիմական ուժերի ընդհանուր
ոգևորության պայմաններում՝ ոմանց թվում էր, թե Վիեննայի
վեհաժողովը կվերածվի «**թագավորների սենատի**» (“sénat de tous les rois”),
որի որոշումներին ականջալուր կլինի ողջ եվրոպան նաև
ապագայում²⁶⁸: Իրականում Վիեննայում կայացված որոշումները
հույժ ինքնաշահ էին: Վեհաժողովը (1814 թ. սեպտեմբերից 1815 թ.

²⁶⁴ Տե՛ս **Simpson G.**, Great Powers and Outlaw States: Unequal Sovereigns in the International Legal Order. New York: Cambridge University Press, 2004, p. 97.

²⁶⁵ Տե՛ս **Чубарьян А. О.**, նշվ. աշխ., էջ 167:

²⁶⁶ Տե՛ս **Hause S. and Maltby W.**, նշվ. աշխ., էջ 458:

²⁶⁷ Տե՛ս **Նուլլ** ն տեղում, էջ 459:

²⁶⁸ Տե՛ս **Lentz T.**, Le congrès de Vienne: Une refondation de l'Europe 1814-1815. Paris: éditions Perrin, 2013, pp. 35-38.

հունիս) կատարեց տարածքների վերաբաժանում և գծեց եվրոպայի նոր սահմանները:

Վիեննայում հավաքվել էին շուրջ երեք հարյուր պաշտոնական պատվիրակություններ, որոնցից հարյուրը ներկայացնում էին պետություններ կամ անկախ քաղաքական միավորներ: Դրանց թվում էին Փարիզի առաջին պայմանագիրը ստորագրած ութ տերությունները (Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Ռուսաստան, Ավստրիա, Պրուսիա, Իսպանիա, Շվեդիա և Պորտուգալիա), երեսուներեք գերմանական պետություններ և ազատ քաղաքներ, տասնյակ այլ եվրոպական ինքնիշխան քաղաքական միավորներ²⁶⁹: Սկզբում Վիեննայի վեհաժողովում որոշումները կայացվում էին հաղթանակած քառյակի (Մեծ Բրիտանիա, Ռուսաստան, Ավստրիա և Պրուսիա) կողմից: Ամրագրվեց պետությունների իրավական անհավասարությունը. «պետություններ՝ շահերի լայն ոլորտով» և «պետություններ՝ շահերի նեղ ոլորտով»²⁷⁰: Առաջ քաշվեց **«մեծ տերություն»** հղացքը. «մեծ» էին համարվում Նապոլեոնին հաղթած չորս տերությունները: Թալեյրանի ջանքերով Ֆրանսիան հաղթող պետությունների շարքում նույնպես ճանաչվեց իբրև «մեծ տերություն»²⁷¹: 1815 թ. հունվարին չորս մեծ տերությունները ընդունեցին նաև Ֆրանսիային և այս մեծ հնգյակի հանձնաժողովը դարձավ վեհաժողովի ուղղորդողը: Ըստ այդմ, Վիեննայի աշխարհակարգի հիմնական նախագծողներն էին Ավստրիայի արտգործնախարար իշխան Կլեմենտ ֆոն Մետերնիխը, ռուսաց կայսր Ալեքսանդր 1-ինը, Մեծ Բրիտանիայի արտգործնախարար լորդ Ռիբերտ

²⁶⁹ Տե՛ս **Lentz T.**, *Le congrès de Vienne: Une refondation de l'Europe 1814-1815*, pp. 49-53:

²⁷⁰ Տե՛ս **Зонова Т. В.**, *Вестфальская система*, с. 79. Ինչպես Վիեննայում Պրուսիայի արտակարգ և լիազոր դեսպան և նշանավոր իմաստասեր բարոն Վիլհելմ ֆոն Յոլմբոլդն էր մեկնաբանում, դրանք այն տերություններն էին, որոնք ունեին աշխարհագրորեն անդրանցային շահեր: Իբրև դիվանագետ Յոլմբոլդը կարևոր դերակատարություն ունեցող Վիեննայի վեհաժողովում:

²⁷¹ Տե՛ս նույն տեղում, էջ 80: Յետագայում մեծ տերությունների համաստեղությունը միացան Օսմանյան կայսրությունը (Ղրիմի պատերազմից հետո), Իտալիան (միավորումից հետո), Գերմանական կայսրությունը (Ֆրանս-պրուսական պատերազմից հետո), Ամերիկայի միացյալ Նահանգները (իսպանո-ամերիկյան պատերազմից հետո), Ճապոնիան (ռուս-ճապոնական պատերազմից հետո): 1856 թ. Փարիզի պայմանագրի 8-րդ հոդվածով Օսմանյան կայսրությունը նաև ընդգրկվեց «եվրոպայի հանրային իրավունքի և եվրոպական համերաշխության» շրջանակ: Տե՛ս **The Great European Treaties of the Nineteenth Century**. Edited by Oakes A. and Mowat R. B., With An Introduction by H. Erle Richards. Oxford: The Clarendon Press, 1918, 1930, pp. 158-176.

Քեսլրին, Ֆրանսիայի արտգործնախարար իշխան Շառլ Մորիս դե Թալեյրանը և Պրուսիայի կանցլեր իշխան Կառլ Ֆոն Յարդենբերգը²⁷²:

Յաղթանակած տերության ղեկավարների օրակարգում նաև եվրոպայում և նոր քաղաքական համակարգի ստեղծումն էր: Ինչպես արդեն անդրադարձել ենք, վերջին անգամ Վեստֆալյան խաղաղության պայմանագրով հաստատված եվրոպական համակարգը նորոգվել էր 1713 թ. Ուտրեխտյան պայմանագրերով, ուր եվրոպական հավասարակշռության հիմնական սկզբունքը *պետության ղեկավարների ինքնորոշման իրավունքն* էր: Վիեննայի վեհաժողովում Նապոլեոնին հաղթողները, վերականգնելով եվրոպական հավասարակշռությանը, ձգտում էին ձևավորել **«խաղաղության համակարգ»**՝ շրջանցելով այս սկզբունքը²⁷³:

Ուստի Վիեննայում եվրոպական համակարգի վերականգնումը կդիտարկենք ըստ հիմնարար հղացքների, սկզբունքների և հաստատության ղեկավարների: Վիեննայի աշխարհակարգը վերականգնվեց **մեծ տերության ղեկավարների համերաշխության** հղացքի շրջանակներում՝ հիմք ընդունելով **հավասարակշռության**, **«օրինականության»**, **վոլիտարիզմի** սկզբունքները և **«միջամտելու տեսությանը»**: Ձևավորվեց **«Սրբազան դաշինքը»**՝ եղած իրավիճակը պահպանելու և «եվրոպան ժողովրդավարությանը և իր անվտանգ դարձնելու համար»²⁷⁴:

Հավասարակշռության սկզբունքը: Վիեննայի վեհաժողովում հստակ սահմանազատում կարմեծ տերության ղեկավարների և մնացածի միջև. նրանց հարաբերության ղեկավարները աստիճանակարգային էին: «Մեծ տերություն» հղացքը գոյություն ուներ նաև մինչև Վիեննայի վեհաժողովը, բայց միայն որպես քաղաքական գաղափար. Վեհաժողովում այն ճանաչվեց իբրև իրավական կարգավիճակ²⁷⁵: Մեծ

²⁷² Տե՛ս **Lentz T.**, Le congrès de Vienne: Une refondation de l'Europe 1814-1815, pp. 59-75. Այս կերպ, Վեստֆալյան պայմանագրի ինքնիշխանության և իրավահավասարության սկզբունքներով հաստատված «դեմոկրատական» միջազգային համակարգը Վիեննայում փոխակերպվեց «օլիգարխիկ» միջազգային համակարգի: Այստեղ գործ ունենք միայնապիսի գործընթացի հետ, երբ հեղափոխական իրավիճակներում քաղաքական իրողության ղեկավարները կերպափոխվում են իրավական կանոնների: Տե՛ս **Եվրեմյան Ս.**, Վեստֆալյան աշխարհակարգի ձևավորման պատմությանը և իր անվտանգ դարձնելու և մշակույթի հայագիտական հանդես: Երևան, ԵՊՀ հրատ., 2014, էջ 219-227:

²⁷³ Տե՛ս **Ghervas S.**, Europe after Napoleon: the Congress of Vienna. *History Today* Vol. 64, Issue 9, September 2014, p. 31.

²⁷⁴ Տե՛ս **Simpson G.**, նշվ. աշխ., էջ 323:

²⁷⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 96: Տե՛ս նաև **Larkins J.**, From Hierarchy to Anarchy: Territory and Politics before Westphalia. New York: Palgrave Macmillan, 2010, pp. 3-4.

տերութիւններն այս կողմից իսկ ձևավորվեց հակամաքուլ տոնյան պատերազմների ընթացքում և հաստատութենականացվեց 1815 թ. Վիեննայի վեհաժողովում: Դեռևս 1814 թ. սկզբին չորս մեծ տերութիւնները Լանգրեսի գաղտնի պայմանագրով համաձայնվում էին կայացնել հետպատերազմյան վերականգնմանը վերաբերող բոլոր հիմնական որոշումները՝ հաստատելով, որ **ուժերի հավասարակշռութիւնն** է ժամանակի գլխավոր գաղափարը, այլ ոչ թէ **ինքնիշխան հավասարութիւնը**²⁷⁶:

*Առնուի թոյնքին ուժերի հավասարակշռութիւնը դիտարկում է իբրև մարտահրավերների և պատասխանների (challenge and response) պատմական միտումի արդյունք, որի համաձայն երբ հավասարակշռութիւնը վտանգ է սպառնում, որոշակի հակակշիռ միտումներ են առաջանում այն զսպելու համար*²⁷⁷:

Ուժերի հավասարակշռութիւնն եվրոպական համակարգը ընդգրկում էր հինգ մեծ տերութիւններ՝ Երկուսը (աշխարհագրորեն) եզրերում, երեքը կենտրոնում: Երկու եզրային տերութիւններից յուրաքանչյուրը տիրապետում էին ավելի մեծ ռեսուրսների, քան կենտրոնի տերութիւններից յուրաքանչյուրը առանձին: Եզրային տերութիւններից Ռուսաստանը ուներ ամենաընդարձակ տարածքը, ամենամեծ բնակչութիւնը և ամենամեծ մշտական ցամաքային բանակը, մինչդեռ Մեծ Բրիտանիան գերիշխում էր ծովերում, աշխարհի առաջատար արդյունաբերական պետութիւնն էր և ուներ ամենաընդարձակ գաղութային կայսրութիւնը: Այս երկու եզրային տերութիւնները ունեին նաև որոշակի աշխարհագրական անխոցելիութիւն, ինչպես դա ցույց տվեց Նապոլեոնի ծավալապաշտական ծրագրերի ձախողումը: Ուժերի տեղաբաշխումը Եվրոպայում այնպիսին էր, որ նույնիսկ կենտրոնի երեք մեծ տերութիւնները՝ Ֆրանսիայի, Ավստրիայի և Պրուսիայի, անհավանական համարվող դաշինքը չէր վտանգի եզրային մեծ տերութիւնների անվտանգութիւնը: Այս կերպ, Ռուսաստանը և Մեծ Բրիտանիան, ի տարբերութիւն կենտրոնի տերութիւնների, անվտանգութիւնն ապահովման տեսանկյունից կախած չէին դաշինքներից²⁷⁸:

²⁷⁶ Տե՛ս Simpson G., նշվ. աշխ., էջ 97-103:

²⁷⁷ Տե՛ս Bull H. (1977), The Anarchical Society: A Study of Order in World Politics, 3rd edition. New York: Palgrave, 2002, p. 100.

²⁷⁸ Տե՛ս Schroeder P. W., Did the Vienna Settlement Rest on a Balance of Power? *The American Historical Review*, Vol. 97, No. 3, The University of Chicago Press, Jun., 1992, pp. 686-687.

Մեծ տերություններից յուրաքանչյուրը «հավասարակշռություն» (équilibre) հղացքը յուրովի էր ընկալում²⁷⁹: Արդյունքում **ինքնիշխան հավասարություն** (sovereign equality) Վեստֆալյան սկզբունքը Վիեննայում կերպափոխվեց. այն այլևս գործում էր միայն մեծ տերությունների հարաբերություններում, որոնք եվրոպական համակարգում գործում էին սահմանադրված ներդաշնակությամբ: Ձ. Սիմփսոնն այս երևույթը բնորոշում է **«օրինականացված գերիշխանություն»** (“legalised hegemony”) եզրույթով. Վիեննայում մեծ տերությունների պարտադրած որոշումներն ընդունվում էին կրտսեր պետությունների ակտիվ համաձայնությամբ²⁸⁰: Այսպիսով, Վիեննայում ամրապնդվեց և երաշխավորվեց մեծ տերությունների գերակա կարգավիճակը²⁸¹:

Օրինականության սկզբունքը (principe de légitimité): Վիեննայի վեհաժողովում հիմնարար սկզբունքներից էր Թալեյրանի **«օրինականություն»** (լեգիտիմիզմի) գաղափարը, որի համաձայն՝ եվրոպական տերությունները տարածքների վերաբաժանում կատարելիս և հետպատերազմյան աշխարհակարգը նախագծելիս պետք է օրինական հիմք ընդունեին, այն ինչ գոյություն ունեցող միևնույն հեղափոխական պատերազմի սկիզբը (1792 թ.): Եթե Վիեննայի վեհաժողովում ղեկավարվեին «օրինականություն» սկզբունքով, ապա կերաշխավորվեր Ֆրանսիայի տարածքային ամբողջականությունը և միջազգային հեղինակությունը: Մյուս կողմից կսահմանափակվեին

²⁷⁹ Տե՛ս **Kissinger H. A.**, The Congress of Vienna: A Reappraisal. *World Politics*, Vol. 8, No. 2 (Cambridge University Press, Jan., 1956), pp. 266-267. Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի մինիստր Լորդ Քեսլրիի համար «հավասարակշռություն»-ը եվրոպայում որևէ մի տերության գերիշխանություն բացառումն էր: Մետերնիխի համար «հավասարակշռություն»-ը Գերմանիայում Պրուսիայի գերիշխանություն բացառումն էր: Քեսլրին ջանում էր ստեղծել կենտրոնական եվրոպա, որը բավականաչափ հզոր կլիներ դիմակայել ու հարձակումների և՛ արևելքից, և՛ արևմուտքից, բայց միաժամանակ այնքան թույլ կապակցված, որ ինքնուրույն նախաձեռնություն չցուցաբերեր: Տե՛ս **Kennedy P. M.**, The Rise and Fall of the Great Powers: Economic Change and Military Conflict from 1500 to 2000. London, Sydney and Wellington: Unwin Hyman, 1988, p. 74.

²⁸⁰ Տե՛ս **Simpson G.**, նշվ. աշխ., էջ 68: Ձերրի Սիմփսոնն իբրև «օրինականացված գերիշխանություն» սահմանում է. «Միջազգային հանրությունում հզոր պետությունների ընտրանու գոյությունը, որոնց գերակա կարգավիճակը իբրև քաղաքական փաստ ճանաչված է կրտսեր ուժերի կողմից, հանգեցնում է նրանց որոշակի սահմանադրական առավելությունների, իրավունքների և պարտականությունների առաջացմանը, և այդ ընտրանու մեջ փոխարաբերությունները որոշվում են ինքնիշխան հավասարության կոշտ սկզբունքով»:

²⁸¹ Տե՛ս **Schroeder P. W.**, The 19th-Century International System: Changes in the Structure. *World Politics*, Vol. 39, No. 1, Cambridge University Press, Oct., 1986, p. 13.

Ռուսաստանի և Պրուսիայի տարածքային հավակնությունները²⁸²: «Օրինականության» սկզբունքի մեջ թալեյրանը տեսնում էր եվրոպայի վերակազմակերպման իրավական հիմքերը²⁸³: Սկզբունքը ներառում էր նաև **սահմանների անխախտելիություն** գաղափարը²⁸⁴: Այս կերպ Վիեննայի վեհաժողովում պահպանողական ուժերը ձգտում էին վերականգնել մինչև հեղափոխական սոցիալական կարգերը, պետական սահմանները և միապետների իրավունքները²⁸⁵:

Փոխհատուցման սկզբունքը: Փոխհատուցման (compensation) սկզբունքի կիրառմամբ դաշնակից մեծ տերությունների քառյակը բռնակցեց տարածքներ առանց հաշվի առնելու օրինականության սկզբունքը: Ռուսաստանը ստացավ Ֆինլանդիան և Լեհաստանի մեծ մասը, իսկ Պրուսիան ստացավ Սաքսոնիայի մի մասը, Վեստֆալիան և մի քանի իշխանություններ Յոննոսի ավազանում: Շվեդիայի թագավորության ռեգենտ Բերնարդոտի (նախկինում Նապոլեոնի մարշալներից) ջանքերով ճանաչվեց Նորվեգիայի միացումը Շվեդիային²⁸⁶: Ավստրիան և Մեծ Բրիտանիան ևս պահանջեցին փոխհատուցում՝ հավասարակշռելու համար Ռուսաստանի և Պրուսիայի ձեռքբերումները, ինչը «երկուսն ընդեմ երկուսի» ճգնաժամ առաջացրեց մեծ տերությունների միջև, մինչև որ նրանց միացավ հինգերորդ կողմը՝ Ֆրանսիան, և պաշտպանեց Մեծ Բրիտանիայի և Ավստրիայի փոխհատուցման պահանջները: Ավստրիան վերականգնեց իր տիրույթները հյուսիսային Իտալիայում²⁸⁷: Մեծ Բրիտանիան ստացավ նոր գաղութներ Ասիայում, Աֆրիկայում և Ամերիկայում, ինչպես նաև Մալթան: «Օրինականության» սկզբունքը չկիրառվեց նաև Սրբազան հռոմեական կայսրության վերականգնման հարցում, որը համադաշնային սկզբունքով միավորում էր ավելի քան երկու հարյուր գերմանական պետություններ և կազմալուծվել էր 1806 թ.: Փոխարենը դաշնակիցները ստեղծեցին Գերմանական

²⁸² Տե՛ս **Schroeder P. W.**, Did the Vienna Settlement Rest on a Balance of Power? p. 696.

²⁸³ Տե՛ս **Lentz T.**, Le congrès de Vienne: Une refondation de l'Europe 1814-1815, pp. 78-80: Տե՛ս նաև **Kerautret M.**, Quelques réflexions sur l'historiographie française du Congrès de Vienne. *Napoleonica. La Revue* 2015/1 (N° 22), pp. 87-103.

²⁸⁴ Տե՛ս **Чубарьян А. О.**, նշվ. աշխ., էջ 170:

²⁸⁵ Տե՛ս **Գաապրյան Կ.**, Համընդհանուր խաղաղության պահպանման հայեցակարգը Վեստֆալի և Վիեննայի համակարգերում: Պատմության հարցեր-2, Տարեգիրք, խմբ.՝ Ա. Ստեփանյան: Երևան, «Չանգակ», 2013, էջ 65-71:

²⁸⁶ Տե՛ս **Lentz T.**, Le congrès de Vienne: Une refondation de l'Europe 1814-1815, pp. 150-151.

²⁸⁷ Տե՛ս **Kissinger H. A.**, The Congress of Vienna: A Reappraisal, pp. 274-278.

համադաշնությանը Ֆրանկոնրտ կենտրոնով և թույլ խորհրդարանով, որը միավորում էր 39 գերմանական պետությունների²⁸⁸:

Չնայած փոխատուցման սկզբունքին՝ ռուսաց կայսր Ալեքսանդր 1-ինը եվրոպական հավասարակշռության և ռուսական շահերի համար կարևոր էր համարում ուժեղ Ֆրանսիայի պահպանումը: Մյուս կողմից Թալեյրանը Վիեննայի վեհաժողովում իր գլխավոր խնդիրն էր համարում հակաֆրանսիական դաշինքի քայքայումը: Տարաբնույթ շահերի և ուժերի բախման ու հարաբերակցության արդյունքում այնպես ստացվեց, որ պարտված Ֆրանսիան կարողացավ հանդես գալ որպես «եվրոպական համերաշխության» լիիրավ մասնակից²⁸⁹:

Վիեննայի եզրափակիչ ակտը: 1815 թ. հունիսի 9-ին՝ Վաթեռլոյի եզրափակիչ ճակատամարտից օրեր առաջ, ստորագրվեց 121 հոդվածներից բաղկացած Վիեննայի եզրափակիչ ակտը²⁹⁰: Այստեղ գետեղվեցին Գերմանական համադաշնության, ինչպես նաև Բելգիայից ու Յուլանդիայից ձևավորված Նիդերլանդական թագավորության ստեղծման ակտերը: Լեհաստանը բաժանվեց Ռուսաստանի, Ավստրիայի և Պրուսիայի միջև: Իտալիան, որը Բոնապարտի բարեփոխումների շնորհիվ ըստ էության վեր էր ածվել ազգային և քաղաքական միավորի, կրկին իջեցվեց լոկալ խարհագրական հասկացության մակարդակի²⁹¹:

Վիեննայի եզրափակիչ ակտի ստորագրումից հետո Ֆրանսիան ևս երեք տարի շարունակեց օկուպացված մնալ դաշնակիցների բանակների կողմից: Սակայն եվրոպայի պահպանողական ուժերին շարունակում էին սպառնալ Ֆրանսիական հեղափոխության գաղափարները՝ *ազատության, հավասարության և ազգային ինքնիշխանության*²⁹²: Յետագայում Վաթեռլոյի ճակատամարտում հաղթանակած բրիտանական զորքերի հրամանատար դուքս

²⁸⁸ Տե՛ս **Hause S. and Maltby W.**, նշվ. աշխ., էջ 460-461:

²⁸⁹ Տե՛ս **Чубарьян А. О.**, նշվ. աշխ., էջ 171:

²⁹⁰ Տե՛ս **L'Acte final** fait à Vienne le 9 juin de l'an de grâce 1815 (extraits): Annexes par Lentz T., Le congrès de Vienne: Une refondation de l'Europe 1814-1815. Paris: éditions Perrin, 2013, pp. 328-351.

²⁹¹ Տե՛ս **Лависс Э., Рамбо А.** (под. ред.), История XIX века. пер. с фр., изд. под. ред. Е. В. Тарле, т. 3, Время реакции и конституционные монархии. Москва: ОГИЗ, 1938, с. 63-65. Տե՛ս **Սուրաբյան Մ., Մինասյան Է.**, Ռուսաց դիվանագիտությանը միջազգային հարաբերությանը համակարգում (XVIII-XIX դդ.): Երևան, Երևանի համալս. հրատ. 2005, էջ 219:

²⁹² Տե՛ս **Лависс Э., Рамбо А.**, նշվ. աշխ., էջ 68:

Վելլինգթոնը պետք է խոստովաներ, որ «Նապոլեոնը ոչ թե անձնավորությամբ, այլ սկզբունք»²⁹³:

Եվրոպական համերաշխությանը: 1815 թ. Նոյեմբերի 20-ի Փարիզի երկրորդ պայմանագրով Եվրոպական մեծ տերությունները համաձայնվում էին ապագա խնդիրները լուծել հավաքական-խորհրդակցային մեթոդներով և կանխարգելել նոր հեղափոխական շարժումները **«հանուն Եվրոպայի ընդհանուր հանգստության ու անվտանգության»**²⁹⁴: Հաստատվեց **«բազմակողմ դիվանագիտության և վեհաժողովների համակարգի»** անհրաժեշտությունը²⁹⁵: Վիեննայի վեհաժողովում մշակված աշխարհակարգում հավաքական գործողությունների իրավունքը պայմանավորված էր հինգ մեծ տերությունների փոխհամաձայնությամբ²⁹⁶: Ձևավորված աշխարհակարգը երաշխավորում էր մեծ տերությունների անվտանգությունը և կենսական շահերը²⁹⁷:

Վիեննայի վեհաժողովում **մեծ տերությունների գերիշխանության և պետությունների իրավահավասարության** գաղափարների բախումը վերածվեց «օրինականացված գերիշխանության» հղացքը և գործելակերպը: Այս համակարգը գոյատևեց (հարկավ, որոշակի փոփոխություններով) ընդհուպ մինչև Առաջին աշխարհամարտ (1914 թ.)²⁹⁸: Անշուշտ, ճգնաժամային իրավիճակներն ուղեկցում էին այս հարյուրամյա ժամանակահատվածը. ՆախՂրիմի պատերազմը (1853-1856 թթ.), ապա Ֆրանս-պրուսական (1870-1871 թթ.) ու ռուս-թուրքական (1877-1878 թթ.) պատերազմները և այլ: Այդուամենայնիվ, մեծ տերությունները կարողանում էին օգտագործել հնարավորությունները՝ (Փարիզում՝ 1856 թ., Ֆրանկֆուրտում՝ 1871 թ., Բեռլինում՝ 1878 թ. և այլուր)

²⁹³ **Roberts A.**, Napoleon and Wellington: The Battle of Waterloo- and the Great Commanders who Fought it. New York and London: Simon & Schuster, 2001, p. 272.

²⁹⁴ **Simpson G.**, նշվ. աշխ., էջ 114:

²⁹⁵ Տե՛ս **Ghervas S.**, La paix par le droit, ciment de la civilisation en Europe? La perspective du siècle des Lumières, p. 67.

²⁹⁶ Տե՛ս **Lentz T.**, Le congrès de Vienne: Une refondation de l'Europe 1814-1815, pp. 93-95:

²⁹⁷ Տե՛ս **Schroeder P. W.**, The 19th-Century International System: Changes in the Structure, p. 12.

²⁹⁸ Տե՛ս **Simpson G.**, նշվ. աշխ., էջ 104-109, 154: 1815 թ. Վաթենլոյի ճակատամարտից մինչև Առաջին աշխարհամարտ (1914 թ.) ընկած ժամանակահատվածում Մեծ Բրիտանիան գերիշխող դիրքեր գրավեց աշխարհում: Համաշխարհային պատմության այս շրջափուլը բնորոշվում է իբրև «բրիտանական խաղաղություն» (Pax Britannica): Տե՛ս **Lowe J.**, Britain and Foreign Affairs, 1815–1885: Europe and overseas. London and New York: Routledge, Taylor & Francis e-Library, 2005, p. 88.

Նորոգելու համար համակարգը²⁹⁹: Ըստ «Եվրոպական համերաշխության» հղացքի՝ միջազգային համակարգը կառավարվում էր մեծ տերությունների կողմից ջանքերով³⁰⁰:

Այսպիսով, «Եվրոպական հավասարակշռության» վերականգնումից զատ Վիեննայում կատարվեց կարևորագույն համակարգային փոփոխություն՝ ձևավորվեց մեծ տերությունների «Եվրոպական համերաշխության» հղացքը. պատերազմի և խաղաղության շատ հարցեր լուծվում էին պարբերական խորհրդաժողովների և դիվանագիտական համակարգի միջոցով³⁰¹: Վիեննայի աշխարհակարգն ի դեմս մեծ տերությունների հաստատության ու ներորոշակի ազգային-պետական հենք: Սակայն գաղափարախոսական և իրավապայմանագրային հարաբերությունների իմաստով Եվրոպան վերականգնվեց սկզբունքորեն այլ հենքի վրա, քան ենթադրում էր լուսավորական արդիությունը: Վիեննայի համակարգը այս ներքին կառուցվածքային հակասության արդյունքում հետադիմության ուժերի միավորումից զատ դնում էր միջազգային հավաքական գործողությունների ավանդույթի հիմքերը, որով պետք է ընթանային նաև ազգային-լիբերալ շարժումները³⁰²:

«Սրբազան դաշինքը»: 1815 թ. սեպտեմբերի 26-ին Փարիզում Ռուսաստանի կայսր Ալեքսանդր 1-ինի, Ավստրիայի կայսր Ֆրանց 1-ինի և Պրուսիայի թագավոր Ֆրիդրիխ-Վիլհելմ 3-րդի միջև կնքվեց «Սրբազան դաշինքը»³⁰³: Այն առաջնորդվում էր պահպանողականության գաղափարաբանությամբ և նպատակաուղղված էր վերացնելու նապոլեոնյան ազատական քաղաքականության ազդեցությունը³⁰⁴: 1815-1817 թթ. այս դաշինքին միացան Եվրոպայի

²⁹⁹ Տե՛ս Кортюнов С. В., նշվ. աշխ., էջ 75-117:

³⁰⁰ Տե՛ս Rosenau J. N. and Czempiel E.-O. (ed.), *Governance without Government: Order and Change in World Politics*. Cambridge, New York: Cambridge University Press, 2003, p. 34.

³⁰¹ Տե՛ս Schroeder P. W., *The 19th-Century International System: Changes in the Structure*, pp. 1-2.

³⁰² Տե՛ս Чубарьян А. О., նշվ. աշխ., էջ 184: 19-րդ դարի կեսերին Եվրոպական ազգային-լիբերալ շարժումների առաջնորդներից Ջուզեպպե Մաձինին կոչ էր անում կազմակերպել «Ազգերի Սուրբ դաշինք» և ստեղծել Եվրոպական հեղափոխական առաջնորդների անդրազգային ասոցիացիա, որը կհամակարգեր դիմադրության շարժումներն ու ապստամբություններն ընդդեմ բռնապետության և ներքին «Սուրբ դաշինքի»: Տե՛ս Mazzini G., նշվ. աշխ., էջ 24: Տե՛ս նաև Андерсон Б., Байэр О., Хрох М. и др., *Нации и национализм*. Пер с англ. и нем. Л. Е. Переяславцевой, М. С. Панина, М. Б. Гнедовского. Москва: Практис, 2002, с. 7-24.

³⁰³ Տե՛ս Лависс Э., Рамбо А., նշվ. աշխ., էջ 69-70:

³⁰⁴ Տե՛ս Ghervas S., *Antidotes to Empire: From the Congress System to the European Union*, pp. 56-59.

գրեթե բոլոր միապետությունները, բացառությամբ Մեծ Բրիտանիայի և Յուբի պապի: «Սրբազան դաշինքը», քողարկվելով քրիստոնեական եղբայրության, Սուրբ գրքի վարդապետության և «օրինականության» սկզբունքներով, իր գլխավոր խնդիրն էր համարում Եվրոպայի բոլոր պահպանողական ուժերի համախմբումն ընդդեմ հեղափոխական-ազգային շարժումների³⁰⁵: Նախագիծը հաջողված էր մինչև 1848 թ., երբ լիբերալ-ազգային հեղափոխությունների շարքը ցնցեց Եվրոպան³⁰⁶:

Պատմական հոլովոլյթում «Սրբազան դաշինքը» **համաեվրոպական միավորում** էր: Թեպետ, այս միությունն ուներ հետադիմական բնույթ. այն քաղաքական համաձայնագիր էր, որը սահմանում էր կնքած տերությունների ընդհանուր մտադրությունները, գործողությունների պայմաններն ու շրջանակները³⁰⁷: Յիմնադիր պայմանագրում Եվրոպան ներկայացվում էր որպես «քրիստոնեական ազգ»: Նշվում էր, որ կողմերը **«միևնույն քրիստոնեական ազգի անդամներ են»**` «նույն ընտանիքի ճյուղեր»: Միապետներն ինքնիշխանության ակունք էին հռչակում Աստուծոն ու իրենց ժողովուրդներին «խորհուրդ» էին տալիս «բարի խղճմտանքով» հետևելու Բարձրալի կողմից սահմանված սկզբունքներին և իրականացնելու իրենց «պարտականությունները»³⁰⁸: Ալեքսանդր 1-ինը ձգտում էր հաստատել **«հալերժական խաղաղություն»**` ձևավորելով **«եվրոպական դաշնություն»**, ուր Ռուսաստանին վերապահված կլինեին ոստիկանական պարտականություններ: Ալեքսանդր 1-ինը նախատեսում էր ստեղծել ինքնատիպ «ազգերի լիգա»` միավորված ինքնիշխան միապետների իշխանության ներքո: Արդյունքում ձևավորվեց **«միապետների լիգա»**: «Սրբազան դաշինքի» անդամ պետությունների զինված ուժերը պետք է համարվեին մեկ միասնական բանակի մասնաճյուղեր: «Սրբազան դաշինքը» ծնունդ

³⁰⁵ Տե՛ս Лависс Э., Рамбо А., նշվ. աշխ., էջ 71-72:

³⁰⁶ Տե՛ս Braudel F., նշվ. աշխ., էջ 330-331:

³⁰⁷ Տե՛ս Чубарьян А. О., նշվ. աշխ., էջ 173-174:

³⁰⁸ Տե՛ս Traité d'alliance des trois puissances Autrichienne, Prussienne et Russe, Projet d'une organisation politique pour l'Europe: Avant pour project de procurer aux souverains et aux peuples une paix général et perpétuelle et une bonheur inalterable. François Etienne Auguste comte de Paoli-Chagny. Hambourg: Perthes & Besser, 1818, pp. 274-277.

տվեց **վեհաժողովների համակարգին** (Congress System)³⁰⁹: Դաշնակիցները նաև պաշտպանելու էին պահպանողական կարգը՝ պլանավորելով կանոնավոր հանդիպումներ և վեհաժողովներ միջազգային խնդիրները քննարկելու համար³¹⁰:

Միջամտելու տեսությունը: Եթե Վիեննայի վեհաժողովում տեսականորեն հիմնավորվեց Թալեյրանի *օրինականության* գաղափարը, ապա «Սրբազան դաշինքի» վեհաժողովները Ախենում (1818 թ. սեպտեմբերի 20-ից նոյեմբերի 29-ը), Տրոպաուլյում (1820 թ. հոկտեմբերի 20-ից նոյեմբերի 19-ը), Լայբախում (1821 թ. հունվարի 26-ից մայիսի 12-ը), Վերոնայում (1822 թ. հոկտեմբերի 20-ից դեկտեմբերի 14-ը) *օրինականության* սկզբունքն ամրապնդեցին Մետերնիխի կողմից մշակված այլ պետությունների ներքին գործերին **միջամտելու տեսություն** միջոցով, ինչը գործնականում կիրառելի էր դարձնում հեղափոխական շարժումները ճնշելու և ռազմական ներխուժման օրինականությունը³¹¹: Ըստ այդմ, մեծ տերությունների ընդունված դիվանագիտական բոլոր փաստաթղթերը կազմվեցին «միջամտելու տեսության» շրջանակներում՝ հիմք ընդունելով օրինականության սկզբունքը: Այն ենթադրում էր միապետների օրինական իրավունքների վերականգնման սկզբունքը, որը միապետական պահպանողական ուժերի ձեռքին դարձավ գաղափարափրավական հզոր գեներալ-եվրոպայի քաղաքական քարտեզը վերածելու, նապոլեոնյան տարիներին «խախտված» սահմանները սեփական շահերին համապատասխան վերափոխելու համար³¹²:

1821 թ. Լայբախում և 1822 թ. Վերոնայում վերջնական տեսքի բերված **«միջամտելու տեսությունը»** հաստատում էր միապետների իրավունքը ամենուր, որտեղ **«օրինականությունը»** վտանգված էր

³⁰⁹ Տե՛ս **Ghervas S.**, *Antidotes to Empire: From the Congress System to the European Union*, pp. 60-62, 64-69. Ռուսաց կայսր Ալեքսանդր 1-ինի պաշտպանած «քրիստոնեական ազգ» հղացքը խորհրդանշում էր եվրոպայում կաթոլիկ, բողոքական և ուղղափառ քրիստոնեական հավատքների տիեզերական միությունը և, ըստ էության, հարված էր կաթոլիկ երկրների միասնության հազարամյա հղացքին: Կաթոլիկ Ավստրիան, բողոքական Պրուսիան և ուղղափառ Ռուսաստանը եվրոպայի քաղաքական կազմակերպությունը հռչակում էին ոչ դավանանքային: Ահա թե ինչու Յոն Գոթթեպեդը չմիացավ «Սրբազան դաշինքին»: «Սրբազան դաշինքի» միապետների բարձրացրած եվրոպայի իբրև «քրիստոնեական ընտանիքի» գաղափարը հակադրվում էր ազգային ինքնիշխանության ձգտումներին: Այդ իսկ պատճառով 1848 թվականից հետո այն իր տեղը գիջեց ազգ-պետությունների «եվրոպական ընտանիքի» գաղափարին:

³¹⁰ Տե՛ս **Hause S. and Maltby W.**, նշվ. աշխ., էջ 462:

³¹¹ Տե՛ս **Лависс Э., Рамбо А.**, նշվ. աշխ., էջ 73-85:

³¹² Տե՛ս **Մուրադյան Մ., Մինասյան Է.**, նշվ. աշխ., էջ 224-233:

կամ գտնվում էր խախտման սպառնալիքի ներքո, անհապաղ կիրառել ներգործման բոլոր միջոցները՝ ընդունալ զինված միջամտությանը³¹³: Յենց «օրինականության» սկզբունքով ու «միջամտելու տեսության» իրավունքով էր նեապոլիտանական թագին տիրացած Իոախիմ Մյունրատը 1815 թ. գահընկեց արվել, և վերականգնվել «օրինական» թագավոր Ֆերդինանդ 4-րդի իրավունքները³¹⁴: Կամ երբ 1823 թ. Ֆրանսիական էքսպեդիցիոն կորպուսը ճնշեց հեղափոխությանը Իսպանիայում և վերականգնեց Ֆերդինանդ 7-րդի իշխանությունը³¹⁵: Միապետական ռեժիմների և ֆեոդալական հետադիմության գլխավոր պաշտպանի դերում հանդես էր գալիս Ռուսաստանը: Ալեքսանդր 1-ինը «Սրբազան դաշինքի» գլխավոր ոգեշնչողներից էր՝ ձգտելով այն օգտագործել Եվրոպայի տարբեր հատվածներում «օրինական» միջամտության և հեղափոխական շարժումների ճնշման նպատակով: Մասնավորապես, Ռուսաստանը Ավստրիայի հետ միասին մասնակցեց 1848 թ. հունգարական հեղափոխության ճնշմանը³¹⁶:

Ամփոփելը: Ֆրանսիացիների գերիշխանության շրջանակում միասնականացած Նապոլեոնյան Եվրոպան ներկայանում էր իբրև **միաբերված ազգերի համակարգ**, ուր ճանաչվում էին **ազգային ինքնիշխանության, եղբայրական հավասարության** ու **ազատության** գաղափարները: Ժամանակաշրջանը հույժ կարևոր էր ազգերի ինքնորոշման իրավունքի ճանաչման տեսանկյունից: Ի հակադրություն Նապոլեոնյան համակարգի, Վիեննայում ընդունեցին սկզբունքորեն հակառակ որոշումներ՝ Եվրոպան

³¹³ Տե՛ս Simpson G., նշվ. աշխ., էջ 201:

³¹⁴ Տե՛ս Davis J. A., Naples and Napoleon Southern Italy and the European Revolutions 1780–1860. New York: Oxford University Press, 2006, pp. 263-266.

³¹⁵ Տե՛ս Лависс Э., Рамбо А., նշվ. աշխ., էջ 74-85:

³¹⁶ Տե՛ս Чубарьян А. О., նշվ. աշխ., էջ 180-183: Յեղափոխական շարժումները ճնշելու նախագիծը հետագայում պետք է շարունակվեր նաև ամերիկյան մայրցամաքի ապստամբած իսպանական գաղութներում: Նախագծին խիստ ընդիմացան Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ը՝ հանդես գալով նորանկախ պետությունների ինքնիշխանության իրավունքի պաշտպանությամբ: Միացյալ Նահանգները արձագանքեցին «Մոնրոյի դոկտրինով», որը հռչակվեց 1823 թ. դեկտեմբերի 2-ին Իսպանիային և «Սրբազան դաշինքի» երկրներին զգուշացնելու նպատակով: Եվ, երևի թե, այս ընթացքում, ինչպես Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար լորդ Կանինգհեմ էր հայտարարում «Մոնրոյի դոկտրինի» երաշխավորը դարձան բրիտանական թագավորական ռազմածովային ուժերը: Տե՛ս Kissinger H. A. (1994), Diplomacy, p. 36. Տե՛ս Monroe J., President's Annual Message. Washington: December 2, 1823. A Century of Lawmaking for a New Nation: U.S. Congressional Documents and Debates, 1774 - 1875, Annals of Congress, Senate, 18th Congress, 1st Session, pp. 12-24.

վերաբաժանելով այնպես, որ կարծես թե ազգեր գոյություն չունեն։
Ըստ այդմ՝ Եվրոպայի վերակառուցման համար հիմք ընդունվեցին
հալասարակչություն, «օրինակալություն» և փոխառուցման
սկզբունքները։ Իսկ Եվրոպայի միասնականացման նապրլեոնյան
նախագծին փոխարինեց **«մեծ սերունդների եվրոպական
համերաշխությունը»**։

ԳԼՈՒԽԵՐՐՈՐԴ

ՀՈՒԳՈ ԳՐՈՏԻՈՒՍ. ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հոլանդացի խոշոր մտածող և դիվանագետ Հոուգո Գրոտիուսը (1583-1645 թթ.) արդարացիորեն համարվում է արդի միջազգային իրավունքի և հարաբերությունների համակարգի գաղափարական հայրը³¹⁷: 17-րդ դարի կեսերին, երբ Եվրոպայի հիմնական քաղաքական միավորներ ճանաչվեցին պետությունները, Գրոտիուսը առաջարկեց միջազգային իրավունքի նոր նախագիծ, որն արտացոլում էր այդ նոր իրողությունը³¹⁸: Խոսքը վերաբերում է մասնավորապես հեղինակի **«Պատերազմի և խաղաղության իրավունքը»** (De Jure Belli ac Pacis, 1625) և **«Ազատ ծով»** (Mare Liberum, 1608) աշխատություններին, որոնք գաղափարների պատմության մեջ նոր ժամանակաշրջանի մեկնարկը տվեցին՝ «ուրվագծելով ազգերի խաղաղության ու ընդհանուր համաձայնության ուղիները»³¹⁹:

Ազգերի իրավունքի Գրոտիուսյան տեսությունը հիմնված է **ազգերի իրավահավասարության, պետությունների անկախության և տարածքային ինքնիշխանության** սկզբունքների վրա: Այն գործնականում կիրառվեց 1648 թ. Վեստֆալյան խաղաղությամբ: Գաղափարական առումով արդի աշխարհակարգի կայացումը հիմնավորվեց նաև ժամանակի այլ խոշոր իրավագետների և քաղաքական իմաստասերների աշխատություններում, ինչպիսիք էին Սեմուել Էլ Պուլֆենդորֆը և Էմեր դե Վատտելը³²⁰:

Այս գլխում դիտարկում ենք Գրոտիուսի գաղափարների դերը արդի աշխարհակարգի կայացման հոլովումը: Մասնավորապես քննության են առնված **«արդար պատերազմ»** և **«ճշմարիտ**

³¹⁷ Տե՛ս **Jeffery R.**, Hugo Grotius in International Thought. New York: Palgrave Macmillan, 2006, pp. 1-3.

³¹⁸ Տե՛ս **Scharf M. P.**, Seizing the “Grotian Moment”: Accelerated Formation of Customary International Law in Times of Fundamental Change. *Cornell International Law Journal*, Vol. 43 (2010), p. 443.

³¹⁹ Տե՛ս **Miller J.**, Hugo Grotius. *The Stanford Encyclopedia of Philosophy* (Spring 2014 Edition), Edward N. Zalta (ed.), URL = <http://plato.stanford.edu/archives/spr2014/entries/grotius/> (13.06.2014).

³²⁰ Տե՛ս **Pufendorf S.** (1673), *The Whole Duty of Man According to the Law of Nature*. Samuel Pufendorf; translated by Andrew Tooke, 1691; edited with an Introduction by Ian Hunter and David Saunders. Indianapolis: Liberty Fund, Inc., 2003. **Vattel E.** (1758), *The Law of Nations, or, Principles of the Law of Nature, Applied to the Conduct and Affairs of Nations and Sovereigns, with three early essays on the origin and nature of natural law and on luxury*. Emer de Vattel; edited and with an introduction by Bela Kapossy and Richard Whatmore; translated by Thomas Nugent. Indianapolis: Liberty Fund, Inc., 2008.

խաղաղութիւն» հղացքները, որոնք **ինքնիշխանութիւն** նոր հղացքի հետ միասին սահմանափակում էին պետութիւնների պատերազմի իրավունքը՝ պաշտպանութիւն և անվտանգութիւն հարցերի շրջանակում: Մեր խնդիրն է ցույց տալ, որ **ազգերի ինքնորոշման իրավունքի** և **ինքնիշխան ազգերի եվրոպական համագործակցութիւն** հղացքի տարրերն առկա էին դեռևս Յոսեփ Գրոտիուսի մոտ: Ըստ այդմ՝ հատուկ ուշադրութիւն ենք դարձնում հետազոտողների կողմից հաճախ անտեսված **ժողովրդական** և **ազգային ինքնիշխանութիւն** մասին Գրոտիուսի գաղափարներին: Դրանք դիտարկվում են **միջազգային հանրութիւն** կամ **ինքնիշխան ազգերի հանրութիւն** մասին նրա գաղափարների, ինչպես նաև **աշխարհակարգի տեսութիւն** հետնախորքում: Ի հավելումն, քննութիւն ենք ենթարկում նաև **Եվրոպայի միասնութիւն** վերաբերյալ հեղինակի գրեթէ չհետազոտված գաղափարները:

3.1 ՀՈՒԳՈ ԳՐՈՏԻՈՒՍԸ ԱՐԴԻ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԻ ՊՍՏՈՒԹՅԱՆ ՀՈՒՆՎՈՒՅԹՈՒՄ

Հոսեփ Գրոտիուսը ծնվել է 1583 թ. ապրիլի 10-ին Հոլանդիայի Դելֆտ քաղաքում Նիդերլանդական հեղափոխութիւն ընթացքում: 1594-1598 թթ. նա Լեյդենի համալսարանում ստանում է փայլուն հումանիստական կրթութիւն: Այստեղ նա հայտնվում է մի խումբ առաջավոր մտավորականների ուշադրութիւն կենտրոնում՝ այդ թվում՝ ֆրանսիացի նշանավոր հումանիստ և պատմաբան Ժոզեֆ Սկալիգերի, հոլանդացի պատմաբան Յոնստուս Լիփսիուսի ու մաթեմատիկոս Սիմոն Սթեվինի: 1598 թ. Գրոտիուսը միանում է Նիդերլանդների Մեծ փենսիոնար (համարժեք վարչապետին) Յոհան վան Օլդենբարնեվելտի դիվանագիտական առաքելութիւնը Ֆրանսիայի արքա Հենրի 4-րդի արքունիք՝ կանխելու ֆրանսիսպանական հաշտութիւն կնքումը, քանզի դեռևս շարունակվում էր Նիդերլանդների անկախութիւն պայքարը Իսպանիայի դեմ: Ֆրանսիայում 1598 թ. Գրոտիուսին շնորհվում է Օռլեանի համալսարանի իրավագիտութիւն պատվավոր դոկտորի կոչում³²¹: 1601 թ. Գրոտիուսը դառնում է **Հոլանդիայի պաշտնական պատմագիրը** և

³²¹ Տե՛ս Jeffery R., նշվ. աշխ., էջ 3-9:

շարադրում մի շարք աշխատություններ, որոնք միտված էին ցույց տալու իսպանական գահի դեմ **հոլանդական հեղափոխության օրինականությունը և արդարացիությունը**³²²: 1604 թ. Գրոտիուսը նշանակվում է Յոլանդական Արևելահնդկական ընկերության իրավաբան: Այս ժամանակահատվածը նշանավորվում էր հոլանդական առևտրի և գաղութային ծավալման գործընթացներով, որոնք հանգեցրին Պորտուգալիայի հետ շահերի բախման, երկիր, որն ընդհանուր գահ էր կիսում իսպանիայի հետ: Արդյունքում 1608 թ. հրատարակվեց հեղինակի «Ազատ ծով» աշխատությունը: 1607 թ. Գրոտիուսը նշանակվեց **Յոլանդիայի, Չեյնիայի և Վեստ-Ֆրիսլանդիայի գլխավոր փաստաբան**: 1612 թ. Գրոտիուսը դառնում է **Ռոտերդամի քաղաքապետ** և որը Նիդերլանդների միացյալ պրովինցիաների հանրապետության երկրորդ խոշոր քաղաքն էր³²³: 1618 թ. պետական հեղաշրջումից հետո Գրոտիուսը ձերբակալվում է և դատապարտվում ցմահ ազատազրկության: 1621 թ. Նա կարողանում է փախչել ամրոցից և հաստատվել Փարիզում, ուր 1625 թ. հրատարակում է իր գլուխգործոցը՝ «Պատերազմի և խաղաղության իրավունքը» աշխատությունը: Կարճ ժամանակ անց նրա համբավը տարածվեց ողջ կրթված եվրոպայում³²⁴:

Գրոտիուսի գաղափարների ազդեցությունը եվրոպական հասարակական-քաղաքական մտքի վրա անժխտելի է: «Պատերազմի և խաղաղության իրավունքը» ու «Ազատ ծով» աշխատություններով համակարգվեց միջազգային իրավունքը և մշակվեց **արդի աշխարհակարգի սեսությունն նախորինակը**³²⁵:

³²² Տե՛ս **Jeffery R.**, նշվ. աշխ., էջ 3-13:

³²³ **Wight M.**, Four Seminal Thinkers in International Theory: Machiavelli, Grotius, Kant, and Mazzini. Edited by Gabriele Wight and Brian Porter; Foreword by Sir Michael Howard, C.H. Introduction by David S. Yost. Oxford and New York: Oxford University Press, 2005, pp. 29-55.

³²⁴ «Պատերազմի և խաղաղության իրավունքը» գրքի առաջին հրատարակությունը լատիներենով էր՝ կրթված եվրոպայի ընդհանուր լեզվով, և շատ արագ սպառվեց ու լայնորեն տարածվեց: Իբրև ժամանակի նշանավոր իրավաբան, նա եվրոպական մտավորականների, միապետների և պետական գործիչների ու շարժումների կենտրոնում էր: Յետաքրքրական է՝ Շվեդիայի արքա Գուստավուս Ադոլփուսը Գրոտիուսի աշխատությունը Աստվածաշնչի հետ միասին պահում էր իր բարձիտակ: 17-18-րդ դարերում «Պատերազմի և խաղաղության իրավունքը» աշխատության բազմաթիվ հրատարակությունների և թարգմանությունների շնորհիվ էր, որ Գրոտիուսի գաղափարները տարածվեցին: Այն միջազգային իրավունքի և սկզբունքների վերաբերյալ ժամանակի ամենահամակարգված ու ամենահամապարփակ աշխատությունն էր: Տե՛ս **Bull H., Kingsbury B., Roberts A.** (eds), Hugo Grotius and International Relations. Oxford: Oxford University Press, 1992, p. 74.

³²⁵ Տե՛ս **Jeffery R.**, նշվ. աշխ., էջ 17-25:

1633 թ. Եվրոպական մի շարք երկրներ՝ Լեհաստանը, Դանիան, Իսպանիան, Անգլիան և Շվեդիան, գրեթե միաժամանակ, պետական ծառայության հրավերներ ուղարկեցին Նրան: Երեսնամյա պատերազմի վճռորոշ փուլում՝ 1634-1644 թվականներին, **Գրոտիուսը Շվեդիայի դեսպանն էր Փարիզում**: Նրա դեսպանության թերևս ամենակարևոր առաքելությունը դարձավ Շվեդիայի կանցլեր Օքսենստիերնայի և կարդինալ Ռիշելիեյի միջև բանակցությունները: Արդյունքում 1635 թ. ապրիլի 29-ին կնքվեց Ֆրանս-շվեդական դաշնագիրը, որով Ֆրանսիան մուտք գործեց Երեսնամյա պատերազմ՝ ի պաշտպանություն բողոքական խմբավորման³²⁶:

Երբ 1645 թ. Գրոտիուսը Ստոկհոլմից նավարկություն սկսեց դեպի Գերմանիա, Վեստֆալիայում՝ Մյունստերում և Օսնաբրյունկում, մեկնարկել էր Եվրոպական մեծ համաժողովը բանակցելու համար Երեսնամյա պատերազմի ավարտը: Հատկանշական է՝ այսպիսի համաժողովների գումարման գաղափարը առաջ էր քաշել հենց ինքը³²⁷: Սակայն Պոմերանիայի ափերի մոտ նավաբեկությունից հետո Գրոտիուսը հիվանդանում է և 1645 թ. օգոստոսի 28-ին կնքում մահկանացուն Ռոստոկում՝ չհասնելով Վեստֆալիա³²⁸: Հաջորդ շուրջ երկու հարյուրամյակների ընթացքում նա շարունակում էր համարվել ոչ միայն միջազգային իրավունքի և բարոյագիտության, այլև բնական իրավունքի և ընդհանրապես քաղաքական իմաստասիրության ամենաեղինակավոր ներկայացուցիչներից մեկը³²⁹:

Այժմ անցնենք Գրոտիուսի գաղափարների, հղացքների և տեսական շրջանակի առավել հանգամանալից քննարկմանը:

Ա Աշխարհակարգի այլ ընտրանքային հարացույցը: Վաղ արդի դարաշրջանի Եվրոպայում, երբ պետություններն ու տիրակալները ձգտում էին անկախության և ինքնիշխանության, իսկ Սրբազան

³²⁶ Տե՛ս **Vreeland H. Jr.**, Hugo Grotius, Diplomatist. The American Journal of International Law, Vol. 11, No. 3 (American Society of International Law, Jul., 1917), pp. 580-606.

³²⁷ Տե՛ս **Hill D. J.**, Introduction to “Hugo Grotius (1625), The Rights of War and Peace, Including The Law of Nature and of Nations,” translated from the original Latin of Grotius with notes and illustrations by A. C. Campbell, Adamant Media Corporation, Elibron Classics, 2005 (This Elibron Classics Replica Edition is an unabridged facsimile of the edition - Washington & London: M. Walter Dunne, 1901), p. 14.

³²⁸ Տե՛ս **Vreeland H. Jr.**, նշվ. աշխ., էջ 603-606:

³²⁹ Տե՛ս **Forde S.**, Hugo Grotius on Ethics and War. *The American Political Science Review*, Vol. 92, No. 3 (Sep., 1998), p. 639.

հռոմեական կայսրության և պապականության գերպետական հավանության ունենալը դուրս էին մղվել եվրոպական աշխարհակարգից, միջպետական հարաբերությունների **երկու հարսցույցեր** էին գերակայում: **Առաջինը** մաքիավելիի, Յոբսի և նրանց հետևորդների ուղենիշն էր, որով պետություններն ու տիրակալները դիտարկվում էին «բնական վիճակում», չկաշկանդված հանրային օրենքներով՝ ազատ հետևելու իրենց պետական շահերին³³⁰: Համաձայն **երկրորդ** ըմբռնման՝ պետություններն ու տիրակալները պետք է խուսափեին բնական վիճակի անկայունությունից՝ ենթարկվելով կենտրոնական վերպետական իշխանության: Այս մոտեցման կողմնակիցների մի մասը գտնում էր, որ անհրաժեշտ է վերականգնել Քրիստոնեական աշխարհի երկու կենտրոնական հաստատությունների՝ պապականության և կայսրության դերը: Մինչդեռ մյուսները կարծում էին, որ պետք էր ստեղծել արդի ժամանակների ոգուն համահունչ նոր հաստատություններ և այդպիսով հասնել «հավերժական խաղաղության»³³¹:

³³⁰ Յոբսյան կամ ռեալիստական տեսությունը միջազգային քաղաքականությունը դիտարկում էր իբրև պայքարի թատերաբեմ և պատերազմական վիճակ՝ «բոլորի պատերազմը բոլորի դեմ» (bellum omnium contra omnes), որում դերակատարները գործում են «փրկվի ով կարող է» (sauve qui peut) սկզբունքով: Ընդ որում պատերազմը այստեղ չի նշանակում միայն ռազմական գործողություններ, այլ նախև առաջ իրավիճակ: Յոբսյան տեսական ավանդույթը միջազգային քաղաքականությունը ներկայացնում է որպես պետությունների միջև հակամարտ վիճակ, քանզի պետությունները հույժ ինքնաշահ են: Ըստ այս մոտեցման կողմնակիցների՝ օրենքի գերակայության և բարոյականության գաղափարները գործում են միայն հասարակության դեպքում, իսկ միջազգային կյանքը հասարակության կապերից անդին է: Իսկ համաձայնագրերը պահվում են այնքան ժամանակ, քանի դեռ դրանք շահեկան են: Տե՛ս **Wight M.**, An Anatomy of International Thought. *Review of International Studies*, Vol. 13, No. 3, Cambridge University Press, Jul. 1987, p. 222. Տե՛ս **Bull H.** (1977), The Anarchical Society: A Study of Order in World Politics, 3rd edition. New York: Palgrave, 2002, p. 23, 44-45. Տե՛ս **Wendt A.**, Social Theory of International Politics. Cambridge, New York, Melbourne: Cambridge University Press, 1999, pp. 258-265, 309-315.

³³¹ Կանտյան կամ ունիվերսալիստական տեսությունը միջազգային քաղաքականությունը դիտարկում էր որպես մարդկության համայնքի ստեղծման հնարավորություն: Այն է՝ բարոյական նորմերը նպաստելու են, որ պետությունների համակարգը ի վերջո փոխարինվի աշխարհաքաղաքացիական կարգով: Ըստ Կանտի՝ խաղաղության վիճակը պետք է սահմանվի օրենքով: Իրավական վիճակ մուտք գործելու պարագային բարձրագույն ատյանի միջնորդությամբ կողմերը անվտանգության անհրաժեշտ երաշխիքներ են տալիս միմյանց: Կանտն ըստ մակարդակների առանձնացնում է երեք իրավական վիճակներ: Առաջին՝ ժողովրդի մակարդակում մարդկանց կարգավիճակը հիմնված է պետության **քաղաքացիական իրավունքի** (ius civitatis) վրա: Երկրորդ՝ միջազգային մակարդակում պետությունների կարգավիճակը հիմնված է **ազգերի իրավունքի** (ius gentium) վրա: Երրորդ՝ պետությունները և մարդիկ գտնվելով միմյանց միջև փոխհարաբերությունների մեջ պետք է դիտարկվեն իբրև համամարդկային պետության քաղաքացիներ, որոնց կարգավիճակը պետք է հիմնվի **աշխարհաքաղաքացիական իրավունքի** (ius cosmopolitanum) վրա: Տե՛ս **Kant I.** (1795), Toward

Գրոտիուսը զարգացրեց **երրորդ հարացույցը՝** ձևակերպելով «միջազգային հանրություն» հղացքը և ուղենշելով **այլ ընտանքի ուղին:** Այն է՝ ինքնիշխան պետություններն ու կառավարություններն միմյանց հարաբերություններում կապակցված են ընդհանուր կանոններով ու նորմերով և կազմում են միասնական հանրույթ: Ըստ այդմ, մի կողմից պետություններն ինքնիշխան են և ենթակա չեն կենտրոնական վերապետական իշխանության: Մյուս կողմից՝ նրանք դուրս են բնական վիճակից՝ մաս կազմելով «մարդկության մեծ համայնքին» (*magna communitas humani generis*): Այս կերպ՝ առանց կենտրոնական հաստատությունների, պետությունները, ազգերն ու նրանց կառավարությունները կարող էին միասին կազմել «անիշխան հանրույթ կամ հանրույթ առանց կառավարության»³³²: Մեր համոզմամբ Գրոտիուսն իր «ազգերի հանրույթ» հղացքի շրջանակներում նկատի ուներ առաջին հերթին **Եվրոպան և նրա միավորման հեռանկարները:** Ընդունված կարծիք է՝ նրա հենց այս գաղափարն էլ ընկած է արդի աշխարհակարգի և միջպետական հարաբերությունների հիմքում:

Բ. Ազգերի իրավունքը (*Jus Gentium*): Գրոտիուսը վերաձևում է ազգերի իրավունքն այնպես, որ այն հետագայում դառնում է միջազգային իրավունքի հիմքը: Մտածողն առանձնացնում է իրավունքի երկու հիմնական աղբյուր՝ բնական իրավունք և կամավոր իրավունք³³³: Կամավոր իրավունքն ընդգրկում է և՛ աստվածային, և՛ մարդկային օրենքները: Աստվածային (*lex divinis*) և բնական օրենքները (*lex naturale*) տրված են ողջ մարդկային ցեղին: Մարդկային կամավոր օրենքները ներառում են քաղաքացիական իրավունքը և ազգերի իրավունքը: Միջնադարյան ազգերի իրավունքն ընդհանուր էր քրիստոնյա ազգերի համար և գործում էր ողջ քրիստոնեական աշխարհում: Քրիստոնեական աշխարհի «ազգերի իրավունքը» ձևավորվեց 12-13-րդ դարերում՝ հռոմեական իրավունքի

Perpetual Peace and Other Writings on Politics, Peace, and History. Edited and with an introduction by Pauline Kleingeld; translated by David L. Colclasure. New Haven and London: Yale University Press, 2006, pp. 72-73, 76-79. Տե՛ս նաև **Wight M.**, *International Theory: the Three Traditions*. Ed. by Gabriele Wight and Brian Porter. Leicester: Leicester University Press, 1994. Տե՛ս **Bull H.**, նշվ. աշխ., էջ 24-25:

³³² **Bull H., Kingsbury B., Roberts A.** (eds), նշվ. աշխ., էջ 72:

³³³ Տե՛ս **Forde S.**, նշվ. աշխ., էջ 642-643:

հղացքների և քրիստոնեական վարդապետության ներքին միաձուլումով³³⁴:

Գրոտիուսն ընդլայնեց ազգերի իրավունքի կիրառելիության հնարավորությունը քրիստոնեական աշխարհի շրջանակներից անդին³³⁵: Ըստ էության նրա ձևակերպած ազգերի իրավունքը նախ և առաջ միջազգային իրավունք է, որը հիմնված է ազգերի համաձայնության վրա և արտահայտում է ազգերի ընդհանուր կամքը³³⁶: Թեև «միջազգային իրավունք» եզրույթը Գրոտիուսը չի օգտագործում, այդուամենայնիվ, իր աշխատություններով դրեց միջազգային իրավունքի հիմքերը:

Գ. Պատերազմի իրավունքը: Գրոտիուսի աշխատությունները մի կողմից նշանավորում են ինքնիշխանության արդի ըմբռնումի սկիզբը, իսկ մյուս կողմից ինքնիշխանության և արդար պատերազմի գաղափարի միջնադարյան ըմբռնումների ավարտը³³⁷: Առանցքային փոփոխություններից էր **արդար պատերազմի** գաղափարը, որը ինքնիշխանության նոր հղացքի հետ միասին սահմանափակում էր

³³⁴ Տե՛ս **Johnson J. T.**, Grotius and His Impact: The Westphalian Settlement, the Idea of the “law of Nations,” and the Emergence of the Territorial Idea of Sovereignty. Sovereignty: Moral and Historical Perspectives. Washington: Georgetown University Press, 2014, p. 81.

³³⁵ Տվյալ ժամանակաշրջանում եվրոպայում և եվրոպական պետությունների տիրապետության տակ գտնվող տարածքներում ինքնիշխանության օրինականության սկզբունքները ձևավորվում էին կրոնական, դինաստիական, աշխարհագրական հայտնագործության և այլ ընկերային ու գաղափարաբանական ազդակների միջոցով: Երբ Գրոտիուսը գրեց իր «Ազատ ծով» աշխատությունը, նա ձգտում էր ցույց տալ Իսպանիայի իրավունքների անվավերությունը Նոր աշխարհի նկատմամբ, որոնք հիմնված էին Յոնի պապի իրավարար կամքի վրա: Գրոտիուսը պնդում էր. «Պապի իշխանությունը բացարձակապես ոչ մի ուժ չունի բնության և ազգերի հավերժական իրավունքի հանդեպ, քանզի դրանցից է եկել ազատությունը, որին վիճակված է տևել հավիտենա՛ս հավիտենից»: Յայսմ՝ նա մերժում էր պապականության՝ իբրև եվրոպական վերաբնակության հաստատության իրավունքը միջպետական պայմանագրերի վավերությունը մերժելու, հաստատելու կամ մեկնաբանելու հարցերում: Կաթոլիկ եկեղեցին դատապարտեց և՛ Գրոտիուսի աշխատությունները, և՛ Վեստֆալյան պայմանագրերը: Յաջորդ շուրջ երեք հարյուրամյակների ընթացքում Կաթոլիկ եկեղեցին շարունակում էր դատապարտել միջազգային իրավունքի գաղափարը՝ այն համարելով բողոքական գիտություն: Նույնիսկ 1899 թ. Վատիկանը՝ ի դեմս Լեո 13-րդ պապի, մերժեց Յազայի խաղաղության խորհրդատու դոկտրինայի պատվիրակությունն ուղարկելու հարցում, քանզի Գրոտիուսի «Պատերազմի և խաղաղության իրավունքը» աշխատությունը դեմս նրա կողմից արգելված գրքերի ցուցակում էր: Արգելքը հանվեց միայն 1901 թ.: **Grotius H.** (1608), The Freedom of the Seas or the Right Which Belongs to the Dutch to Take Part in the East Indian Trade. Translated with A Revision of the Latin Text of 1688 by Ralph Van Deman Magoffin, Edited with an Introductory Note by James Brown Scott. New York: Oxford University Press, 1916 (This is version 1.0 of the Frellock Book Series edition, Oslo: 2008), p. 66. Տե՛ս **Bull H., Kingsbury B., Roberts A.** (eds), Նշվ. աշխ., էջ 77: Տե՛ս **Clark I.**, Legitimacy in International Society. Oxford and New York: Oxford University Press, 2005, p. 44.

³³⁶ Տե՛ս **Bull H., Kingsbury B., Roberts A.** (eds), Նշվ. աշխ., էջ 61-64:

³³⁷ Տե՛ս **Johnson J. T.**, Նշվ. աշխ., էջ 85-87:

պետությունների պատերազմի իրավունքը **պաշտպանության և անվտանգության** շրջանակում:

Յարկ է նշել, որ պատերազմի իրավունքի (Jus ad bellum) միջնադարյան ավանդական մոտեցումը սկզբունքորեն տարբեր էր այն պատկանում էր ինքնիշխան տիրակալներին, որոնց բարոյական պատասխանատվությունն էր կախված **ուժի կիրառման արդարությունը**³³⁸:

Գրոտիուսը զարգացնում է ճիշտ հակառակ մոտեցումը՝ պատերազմի իրավունքը վերագրելով «քաղաքական հանրությաններին» և պետություններին, զինված ուժերի կիրառման արդարության առանցքում դնելով **պաշտպանության իրավունքի** (defensio) առաջնայնությունը: Այս կերպ **ազգային անվտանգության** (պետության տարածքի և ժողովրդի պաշտպանության) գաղափարը դրվեց պատերազմի, խաղաղության և արդարության հայեցակարգերի հիմքում: Յենց այս մոտեցումն էլ դարձավ Վեստֆալյան համակարգի հիմնաքարերից մեկը³³⁹:

Պատերազմը, ըստ հեղինակի, չի արգելվում ո՛չ բնական իրավունքով և ո՛չ էլ աստվածային օրենքներով: Այդուհանդերձ, նա առանձնացնում է արդար պատերազմներն անարդար պատերազմներից: **Արդար պատերազմների** շարքին է դասում պաշտպանողական պատերազմները, իսկ **անարդարի** թվին՝ նվաճողական պատերազմները³⁴⁰: Ըստ Գրոտիուսի՝ արդարությունն առկա չէ պատերազմի սահմանման մեջ, քանզի մարդկանց խնդիրն է որոշել, «թե երբ է պատերազմն արդար, և որ պատերազմը կարող է այդպիսին համարվել: Ուստի, մենք պետք է տարբերակենք պատերազմն ինքնին և նրա արդարությունը: Իրավունքն է արտահայտում արդարությունը, ուստի իրավունքն այն է, ինչը անարդար չէ: Իսկ անարդար է այն, ինչը հակասում է բնական էակների միջավայրում հաստատված հասարակության կարգին»³⁴¹:

³³⁸ Տե՛ս **Linklater A., Suganami H.**, The English School of International Relations: A Contemporary Reassessment. Cambridge, New York, Melbourne: Cambridge University Press, 2006, pp. 60-61.

³³⁹ Տե՛ս **Johnson J. T.**, նշվ. աշխ., էջ 83: Տե՛ս նաև **Donelan M.**, Grotius and the Image of War. *Millennium: Journal of International Studies*, September 1983, Vol. 12, No. 3, pp. 233-243.

³⁴⁰ Տե՛ս **Чубарьян А. О.**, նշվ. աշխ., էջ 95:

³⁴¹ **Grotius H.** (1625), The Rights of War and Peace: Including The Law of Nature and of Nations. Translated from the original Latin of Grotius with notes and illustrations by A. C. Campbell, with an introduction by David J. Hill, Adamant Media Corporation, Elibron Classics, 2005 (This Elibron Classics Replica Edition is an unabridged facsimile of the

Գրոտիուսը տարբերակում է **պատերազմի երեք տեսակ՝** հանրային, մասնավոր և խառը: **Հանրային պատերազմը** վարվում է հանրային ինքնիշխանությունը ներկայացնող անձի կողմից: **Մասնավոր պատերազմը՝** մասնավոր անձանց կողմից կամ առանց պետության լիազորության: **Խառը պատերազմը** վարվում է, մի կողմից, հանրային լիազորությամբ և մյուս կողմից՝ մասնավոր անձանց կողմից³⁴²:

Գրոտիուսը տարանջատում է նաև **հանրային և մասնավոր պայմանագրերը**: Հանրային պայմանագրերից են խաղաղության պայմանագրերը: Հանրային պայմանագրերը կնքվում են ինքնիշխան իշխանության կողմից կամ նրանում նից՝ տարբերակելով դրանք ոչ միայն մասնավոր անձանց, այլ նաև ինքնիշխան տիրակալների անձնական մասնավոր համաձայնագրերից³⁴³: Ավելի, խաղաղության պայմանագրերը պետք է արտահայտեն «ինքնիշխան իշխանությունը»³⁴⁴: Գրոտիուսը սահմանում է. «Պատերազմներն ավարտելու առաջնային միջոցը պայմանագրերն են: Այն անձը, ով պատերազմ սկսելու իշխանություն ունի, միակն է ում կարող է պատշաճ կերպով պատկանել և խաղաղություն կնքելու իրավունքը»³⁴⁵: Բացի այդ բնական արդարությունը պահանջում է, որ բոլոր պայմանագրերում լինի **պայմանների հավասարություն և** կողմերից չպահանջվի ավելի, քան պահանջում է արդարությունը³⁴⁶: Վեստֆալյան խաղաղության Ֆրանսիայի և Սրբազան հռոմեական կայսեր միջև պայմանագրի 37-րդ հոդվածը սահմանում էր, որ «հարկադրանքի կամ սպառնալիքի» ներքո անօրինական կերպով պետություններին կամ նրանց հպատակներից «շորթված» բոլոր

edition - Washington & London: M. Walter Dunne, 1901), pp. 18, 28-31. Արդարության սահմանման համար կարևորվում է նաև բնական իրավունքը, «քանզի բնական իրավունքը հավերժ է և անփոփոխ, հակասական ոչինչ չի կարող պատվիրվել Աստծո կողմից, ով երբեք անարդար չէ»:

³⁴² Տե՛ս **Grotius H.** (1625), *The Rights of War and Peace*, pp. 55-57.

³⁴³ Տե՛ս **Grotius H.** (1625), *The Rights of War and Peace*, p. 166.

³⁴⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 167:

³⁴⁵ Նույն տեղում, էջ 386: Գրոտիուսը նկատում է. «կառավարման ժողովրդական կամ արիստոկրատական ձևերի դեպքում պատերազմի և խաղաղության իրավունքը որպես կանոն պատվիրակված է որևէ հանրային մարմնի կամ խորհրդի, ուր ձայների մեծամասնությունը կարող է ընդունել պայմանագրեր, համաձայնագրեր կամ բանաձևեր, որոնք պարտադիր կլինեն նաև այդպիսի խորհրդի անդամ այլախոհ փոքրամասնության համար: Եվ բոլոր նրանք, ովքեր պարտավորված են խաղաղության պայմանագրով, անկախ նրանից՝ ընդունում են դաթե ոչ, իրավունք ունեն դրաբարիքներից օգտվելու»:

³⁴⁶ Տե՛ս **Grotius H.** (1625), *The Rights of War and Peace*, pp. 147-149.

համաձայնագրերը, պայմանագրերը, գործարքները և պարտավորությունները պետք է չեղյալ հայտարարվեն³⁴⁷:

Այսպիսով, Գրոտիուսը ճանաչում էր **ուժի իրավունքը** (ius gladii)³⁴⁸: Պատերազմն ինքնիշխան պետության (կամ հանրային իշխանության) ամբօժտված տիրակալի իրավունքն է: Մասնավոր (\$եռդալ ական, ծովահենային) պատերազմներն օրենքից դուրս էին³⁴⁹: Չինված ուժերի կիրառման բարոյական չափումը, որն ավանդականորեն վերապահված էր տիրակալների կամքին, այժմ վերանում է: Ուժի կիրառման իրավունքը Գրոտիուսը փոխադրում է իրավական հարթություն: Ըստ այդմ՝ **արդար պատերազմն այլևս օրինական պատերազմն էր**: Ինքնիշխանությունը նույնպես դադարում էր բարոյական կատեգորիա լինելուց³⁵⁰: Հայսմ՝ բնական իրավունքի, ազգերի իրավունքի և արդար պատերազմի տեսության Գրոտիուսի նորարարական վերածնակերպումները հեղափոխական նշանակություն ունեցան եվրոպական աշխարհակարգի համար³⁵¹: Եվ առաջին հերթին դազգալի էր Վեստֆալյան պայմանագրերում:

Դ. Գրոտիուսը և Վեստֆալյան խաղաղությունը: Որոշակի ներդաշնակություն կա Վեստֆալյան պայմանագրերի և «Պատերազմի և խաղաղության իրավունքը» աշխատության միջև³⁵²: Գրոտիուսը մեծապես ազդված էր Երեսնամյա պատերազմից: Սակայն նախ և առաջ մտահոգ էր Նիդերլանդական հեղափոխության և հոլանդացիների անկախության պատերազմով ընդդեմ իսպանական գահի, որն

³⁴⁷ Տե՛ս Article XXXVII - **Treaty of Westphalia**: Peace Treaty between the Holy Roman Emperor and the King of France and their respective Allies.

³⁴⁸ Տե՛ս **Tuck R.**, The Rights of War and Peace: Political Thought and the International Order from Grotius to Kant. Oxford and New York: Oxford University Press, 2002, pp. 81-82, 89.

³⁴⁹ Տե՛ս **Forde S.**, նշվ. աշխ., էջ 644-645:

³⁵⁰ Տե՛ս **Johnson J. T.**, նշվ. աշխ., էջ 84: Մասնավոր անձերը կարող էին զենք վերցնել միայն իրենց սեփական անձի կամ ունեցվածքի պաշտպանության համար: Միայն հանրային իշխանությունն իրավունք ուներ պատժիչ գործողությունների, այն էլ միայն պետության տարածքի շրջանակներում: Եթե քաղաքական համայնքի սահմանը խախտվել էր, ուժ կարելի էր կիրառել միայն իրավախախտի մտադրությունը ճշտելուց հետո:

³⁵¹ Տե՛ս **Keene Ed.**, Beyond the Anarchical Society: Grotius, Colonialism and Order in World Politics. Cambridge: Cambridge University Press, 2002, pp. 29-31.

³⁵² Տե՛ս **Hill D. J.**, նշվ. աշխ., էջ 14-15: Ավելի ն, Գրոտիուսը իր աշխատություններով դրեց արդի միջազգային իրավունքի հիմքերը, որը պաշտոնապես մարմին և կառույց ստացավ 1899 և 1907 թթ. Հաագայի ու 1949 թ. Ժնևի կոնվենցիաներով: Հաագայի միջազգային ատյանի հիմնումը ևս կապված էր Գրոտիուսի կողմից առաջ քաշված գաղափարի հետ. այն է՝ հանուն խաղաղության հրավիրված միջազգային համաժողովները և հակամարտությունների խաղաղ կարգավորմանը միտված բանակցությունները պետք է զուգորդվեն մշտական միջազգային տրիբունալի գործունեությամբ:

ավարտվեց 1648 թվականին՝ մաս կազմելով Վեստֆալյան խաղաղությանը: Գաղափարների պատմության հետազոտողները հիմնականում համաձայնվում են, որ Վեստֆալյան խաղաղությունն ըստ էության Գրոտիուսի տեսական սխեմայի գործնական իրականացումն էր³⁵³:

Ինչպես արդեն նշել ենք, Վեստֆալյան պայմանագրերը, բացի մասնակից պետությունների տարածքային վեճերի և հակամարտ շահերի կարգաբերումից, հաստատեցին որոշակի տարածքի և բնակչության նկատմամբ պետությունների ինքնիշխանության իրավունքը: Իբրև հակակշիռ դրան գուգահեռ ճանաչվեց նաև **դավանական ազատ ինքնորոշում** (Liberty of the Exercise of Religion) սկզբունքը³⁵⁴:

16-17-րդ դարերում պետական իշխանությունների կողմից պետություններում կրոնական միատարրությունն ապահովելու հանձնառությունների հիմքում ընկած էր սեփական հասարակությունների միասնությունն ու համերաշխությունն ամրապնդելու գաղափարը և ձգտումը: Այս համատեքստում Աուգսբուրգի հաշտության պայմանագրի «ում տարածքը, նրա դավանանքը» սկզբունքը և Վեստֆալյան խաղաղության պայմանագրի սկզբունքի վերանայումը Եվրոպայի համար հիմնարար քայլ էր, թեև այն չէր նախատեսում հասարակություններում մարդու անձնական ազատությունները: 1648 թվականից հետո էլ պետությունները շարունակեցին միակերպ և համերաշխ հասարակություններ ձևավորելու իրենց ներքին քաղաքականությունը, որը նրանց ինքնիշխան իրավունքն էր³⁵⁵:

Ըստ էության Վեստֆալյան պայմանագրերը գործնականում իրականացրեցին այն, ինչ Գրոտիուսը ձևակերպել էր տեսության մեջ. այն է՝ պետությունների ինքնիշխանության սկզբունքը համահունչ է օրենքի գերակայության և միջազգային համայնքում նրանց ընդհանուր պարտավորությունների սկզբունքներին³⁵⁶:

³⁵³ Տե՛ս **Jahn B.** (ed.), *Classical Theory in International Relations*. Cambridge, New York, Melbourne: Cambridge University Press, 2006, pp. 244, 242-249.

³⁵⁴ Տե՛ս Article XLIX - **Treaty of Westphalia**: Peace Treaty between the Holy Roman Emperor and the King of France and their respective Allies.

³⁵⁵ Տե՛ս **Johnson J. T.**, նշվ. աշխ., էջ 93-96:

³⁵⁶ Տե՛ս **Clark I.**, նշվ. աշխ., էջ 61:

Մտածողը գտնում էր, որ անկախ նրանից թե ինչ պայմաններով է խաղաղությունը կնքվել, այն պետք է խստորեն պահպանվի, իսկ մարդասիրության բոլոր նկատառումներից զատ ազգային շահերն անխուսափելիորեն կհանգեցնեն խաղաղության³⁵⁷:

Վեստֆալյան խաղաղության մեջ իր արտահայտությունը գտավ նաև Գրոտիուսի առաջադրած միջազգային հանրության հղացքը: Իսկ կարդինալ Ռիշելիեի առաջադրած քաղաքական պայմանները հնարավոր դարձրեցին այն: Այստեղ էր, որ եվրոպական պետություններն առաջին անգամ ընդունեցին միմյանց միջև հարաբերությունները կարգավորող ընդհանուր նորմերը, կանոնները, հաստատությունները և դրանք պահպանելու ընդհանուր շահն ու հավաքական հանձնառությունը³⁵⁸:

Ե. «Ազգերի հանրույթ» հղացքը: Գրոտիուսյան տեսությունը միջպետական հարաբերությունները դիտարկում էր «ազգերի հանրույթի» կամ «միջազգային հանրության» համատեքստում, ուր պետություններն ընդունում են համագործակցության ընդհանուր կանոնները³⁵⁹: Միջազգային համակարգը ներկայացվում է իբրև պետությունների **ընկերային և տնտեսական հարաբերությունների միջակայք**: Ըստ Գրոտիուսի՝ բոլոր պետությունները միմյանց հետ հարաբերություններում փոխկապակցված են իրենց ներառող միջազգային հանրության կանոններով և այդ կանոնների որոշարկման ու կիրարկման համերաշխությամբ: Մյուս կողմից պետությունների վարքագիծը սահմանափակված է նաև միջազգային իրավունքով և բարոյագիտությամբ³⁶⁰:

³⁵⁷ Տե՛ս **Grotius H.** (1625), *The Rights of War and Peace*, p. 418. Վեստֆալյան խաղաղության գլխավոր կողմերը՝ Սրբազան կայսերական Մեծությունը (His Sacred Imperial Majesty) և Ամենաքրիստոնյա թագավորական Մեծությունը (His Most Christian Majesty (այսպես էր կոչվում Ֆրանսիայի թագավորը)) իրենց և իրենց դաշնակիցների անունից հռչակում էին **«քրիստոնեական ու համընդհանուր խաղաղություն, և հավերժական, ճշմարիտ անկեղծ բարեկամություն»** (“a Christian and Universal Peace, and a perpetual, true, and sincere Amity”): **Treaty of Westphalia: Peace Treaty between the Holy Roman Emperor and the King of France and their respective Allies**, *Yale Law School; Lillian Goldman Law Library, The Avalon Project: Documents in Law, History and Diplomacy*. [URL:// http://avalon.law.yale.edu/17th_century/westphal.asp](http://avalon.law.yale.edu/17th_century/westphal.asp) (28.05.2015).

³⁵⁸ Տե՛ս **Bull H., Kingsbury B., Roberts A.** (eds), նշվ. աշխ., էջ 75:

³⁵⁹ Տե՛ս **Der Derian J.**, *Critical Practices in International Theory: Selected Essays*. London and New York: Routledge, Taylor & Francis e-Library, 2009, pp. 16, 299. Գրոտիուսյան տեսական հոսանքը զբաղեցնում է Յոհան և Կանտյան մոտեցումների միջակայքը: **Wight M.**, *An Anatomy of International Thought*, p. 224.

³⁶⁰ Տե՛ս **Bull H.**, նշվ. աշխ., էջ 25-26:

Ազգերի հանրույթի ընկերային հարթություն համատեքստում Գրոտիուսը շեշտում էր, որ խաղաղության հաստատման, մարդկության փոխադարձ կապի և ազգերի հանրության գոյության համար հիմնաքարային է **«բարի կամքը»**: Նա գրում է. «Բարի կամք պահպանելու ի թիվս այլ պատճառների պակաս կարևոր չէ նաև խաղաղության հույսը վառ պահելու ցանկությունը՝ նույնիսկ պատերազմի ընթացքում: Քանզի բարի կամքը, Կիկերոնի խոսքով, ոչ միայն առաջնային կապն է, որով բոլոր կառավարությունները շահկապված են միմյանց, այլև այն անկյունաքարն է, որով միավորված է ազգերի ավելի լայն հանրությունը: Ոչնչացրու դա, ասում է Արիստոտելը, և կոչնչացնես մարդկության կապը»³⁶¹: Ըստ այդմ մտածողը կենտրոնական նշանակություն էր տալիս միջազգային հարաբերությունների ընկերային բնույթին³⁶²: Ըստ հեղինակի՝ միջազգային հանրությանը մաս են կազմում ոչ միայն պետություններն ու նրանց կառավարությունները, այլև ազգերը, ժողովուրդները, առանձին ընկերային խմբերն ու անհատ մարդիկ: Այն է՝ միջազգային հանրությունը ոչ թե միայն պետությունների հանրություն է, այլև **«մարդկության մեծ համայնք»**³⁶³:

Այդուհանդերձ, Գրոտիուսը միջազգային հանրությունում արտոնյալ տեղ և լիազոր դեր է հատկացնում ինքնիշխան պետություններին: Նրանց հարաբերությունների կարգավորման դերը հատկացնում է կայուն օրենքներին: Նա գրում է. «Վեճերը առաջանում են նրանց միջև, ովքեր իրենց տարածայնությունները լուծելու համար կապված չեն ընդհանուր քաղաքացիական օրենքներով...»³⁶⁴:

*Չախաբակյան անվտանգության հղացքի համապատկերում
հատկանշական է Գրոտիուսի հետևյալ մոտեցումը. «Այլոց համար*

³⁶¹ **Grotius H.** (1625), *The Rights of War and Peace*, p. 417.

³⁶² Ազգերի հասարակության Գրոտիուսյան տեսության մեջ էական նշանակություն ունի բնական իրավունքը, քանզի այն անձնավորում է իրավական միավորներին: Այսպես. տիրակալները, ժողովուրդները և պետությունները դասակարգվում են իբրև միավորներ կամ անձինք, որոնք բոլորն էլ հավասարապես ենթակա են բնական օրենքի կանոններին, որը բոլոր անձանց կապակցում է «մարդկության մեծ համայնքի» շրջանակներում: Գրոտիուսյան այս սխեմայի ներսում բնական օրենքը գործում է իբրև «բարոյական կանոնների միավորում հայտնի բոլոր բանական էակներին, ընդդեմ որի կարող է չափվել պետությունների լոկ կամքը կամ գործելակերպը»: **Wilson E.**, *Mare Liberum and Opinio Juris: A Grotian Reading of the North Sea Continental Shelf Cases. Monash University Law Review*, Vol. 28, No 2, 2002, pp. 311-312.

³⁶³ Տե՛ս **Bull H., Kingsbury B., Roberts A.** (eds), *Նշվ. աշխ.*, էջ 83-84:

³⁶⁴ **Grotius H.** (1625), *The Rights of War and Peace*, p. 17.

պատերազմելու երրորդ պատճառն այն է, երբ բարեկամական իշխանությունը քակցությունն չի խոստացված, այն պետք է տրվի ի հաջիվ բարեկամության, եթե կարող է իրականացվել առանց անհարմարության... Յոնմեացիների դեպքում ամենևին էլ արտասովոր չէր պատերազմներ սկսելը կամ գոնե պատերազմներով սպառնալը ոչ միայն ի պաշտպանություն դաշնակիցների, որոնց հետ նրանք կապված էին պայմանագրով, այլև բարեկամների: Վերջին և ամենամեծ շարժառիթը մեկ ընդհանուր բնույթի ընդհանուր կապն է, ինչը միայն բավարար է պարտավորեցնելու մարդկանց, որ օգնեն միմյանց»³⁶⁵:

Գրոտիուսը պնդում էր, որ ազգերի իրավունքը բխում է «... բոլոր ազգերի կամ գոնե շատերի համաձայնությունից: Ծառերի, որովհետև հազվագյուտ իրավունք կարող է գտնվել ընդհանուր բոլոր ազգերի համար, բացառությամբ բնական իրավունքի, որն ինքնին նույնպես սովորաբար կոչվում է ազգերի իրավունք»³⁶⁶: Ըստ նրա՝ իրավունքը միջպետական հարաբերություններում ձևավորվում է պետությունների փոխադարձ համաձայնությամբ: Նկատելի է ազգերի իրավունքի շուրջ համաձայնությունը կախված է ընդհանուր գաղափարների առկայությունից:

Մեկնարկելով ազգերի հանրույթի ընկալումից՝ Գրոտիուսը, ինչպես արդեն նշել ենք, առանձնացնում է միջազգային իրավունքի գոյացման երկու աղբյուր՝ **բնական իրավունք** (jure natural)³⁶⁷ և **ազգերի կամալոր իրավունք** (jure gentium voluntaris): Վերջինս իր **պարտավորեցնող ուժը ստանում է ազգերի մեծամասնության հավաքական կամքից**: Յեղիսակը կիրառում է «ազգերի իրավունք» եզրույթը երկու իմաստով՝ առաջին, բոլոր այն օրենքները, որոնք ղեկավարում են ինքնիշխան տիրակալների կամ ազգերի միջև հարաբերությունները, և երկրորդը ենթադրում է համընդհանրական օրենք, որ ծագում է **«մարդկության մեծ համայնքի» հավաքական կամքի արտահայտությունից»**³⁶⁸:

Ազգերի հանրույթի տնտեսական հարթությունը քննարկելիս Գրոտիուսը զարգացնում է **ազատ ծովերի տեսությունը**: Յեղիսակի ընկալմամբ ծովը կոչվում է «ոչ ոքի սեփականություն» (res nullius) կամ «ընդհանուր տիրույթ» (res communis), «հանրային տիրույթ» (res

³⁶⁵ Grotius H. (1625), The Rights of War and Peace, pp. 287-288.

³⁶⁶ Նույն տեղում, էջ 25:

³⁶⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 31:

³⁶⁸ Տե՛ս Wilson E., նշվ. աշխ., էջ 319:

publica), որը չի կարող դառնալ մասնավոր սեփականություն³⁶⁹: Այս առնչությամբ նա առաջ է քաշում **ազգերի իրավահավասարության** և **առևտրի ազատության** սկզբունքները: Հակառակ Իսպանիայի³⁷⁰ պահանջներին, նա փորձում էր ցույց տալ, որ հոլանդացիները՝ Միացյալ Նիդերլանդների քաղաքացիները, իրավունք ունեն ազատ նավարկելու Արևելահնդկաստան (Իստ Ինդիա) և առևտրի մեջ մտնել այնտեղի ժողովրդի հետ³⁷¹: Իր փաստարկը նա հիմնում է «Ազգերի իրավունքի այն աքսիոմի վրա, որ կոչվում էր առաջնային կանոն կամ սկզբունք, այն է՝ «Յուրաքանչյուր ազգ ազատ է ճանապարհորդելու յուրաքանչյուր այլ ազգի մոտ և առևտուր անելու նրա հետ»³⁷²: Այս սկզբունքն իր արտահայտությունը գտավ Վեստֆալյան խաղաղության Ֆրանսիայի և կայսեր միջև պայմանագրի 70-րդ հոդվածում, որն ամրագրում էր «առևտրի ազատությունը, ծովային և ցամաքային ուղիների անվտանգությունը»³⁷³:

Ըստ Գրոտիուսի՝ «առևտրի ազատությունը հիմնված է ազգերի առաջնային իրավունքի վրա, որն ունի բնական և հարատև հիմք, այնպես որ այդ իրավունքը չի կարող ոչնչացվել, կամ էլ կարող է ոչնչացվել բոլոր ազգերի համաձայնությամբ: Քանզի ոչ մի ազգ չի կարող արդարացիորեն որևէ կերպ ընդդիմանալ երկու այլ ազգերի,

³⁶⁹ Տե՛ս **Grotius H.** (1608), *The Freedom of the Seas*, pp. 22, 34.

³⁷⁰ Հարկ է նշել, որ այդ ժամանակ Իսպանիայի և Պորտուգալիայի գահերը միավորված էին և հոլանդացիներն ըստ էության հակամարտության մեջ էին մեկ միացյալ տերության հետ: Գրոտիուսի «Ազատ ծով» աշխատության գլխավոր փաստարկն էր, որ ո՛չ Իսպանացիները և ո՛չ էլ պորտուգալացիները կամ այլ պետությունն չունեին բացառիկ իրավունքներ նավարկության, ձկնորսության կամ անդրծովյան տարածքներում առևտրի ոլորտներում: Հետևաբար նրանք չէին կարող սահմանափակել հոլանդացիների համանման իրավունքները հայտնագործության, նվաճումի, հռոմի պապի իրավարարության կամ նվիրատվության հիմքով: Տե՛ս **Bull H., Kingsbury B., Roberts A.** (eds), նշվ. աշխ., էջ 71:

³⁷¹ Ազատ ծովերի տեսության (Mare Liberum Theory) համապատկերում Գրոտիուսը հիմնավորում է նաև միջազգային ռեժիմի անհրաժեշտությունը: Միջազգային ռեժիմներն իբրև ընկերային հաստատություններ բաղկացած են չորս բաղադրիչներից՝ սկզբունքներ, նորմեր, կանոններ, որոշումների կայացման ու իրագործման ընթացակարգեր: Ֆ. Կրատքվիլը միջազգային ռեժիմները սահմանում է իբրև կառավարման մեխանիզմներ՝ կոչված համակարգելու և կազմակերպելու պետությունների ակնկալիքներն ու վարքագծի նորմերը տարբեր բնագավառներում: Օրինակները ներառում են առևտրի ռեժիմները, արժույթի ռեժիմները, օվկիանոսների ռեժիմները և այլն: Տե՛ս **Kratochwil F. and Ruggie J.**, *International Organization: A State of the Art on an Art of the State. International Organization*, Vol. 40, No. 4 (MIT Press, Autumn, 1986), pp. 759-769. Տե՛ս **Onuf N.**, *The Constitution of International Society. European Journal of International Law*, Vol. 5, N 1, 1994, pp. 1-19.

³⁷² **Grotius H.** (1608), *The Freedom of the Seas*, p. 7.

³⁷³ Տե՛ս Article LXX - **Treaty of Westphalia**: Peace Treaty between the Holy Roman Emperor and the King of France and their respective Allies.

որոնք ցանկանում են պայմանագիր կնքել միմյանց հետ»³⁷⁴: Նա նաև գտնում էր, որ «ո՛չ հայ տնագործությունը, ո՛չ էլ նվաճումը» չպետք է վկայակոչվեն այս խնդրի քննարկման համար, քանզի առևտուր անելու իրավունքը մարմնական չէ, որպեսզի ֆիզիկապես առգրավվի³⁷⁵: Բնական է և համահունչ բարձրագույն Օրենքին՝ ինչպես նաև արդարությանը այն, որ օգուտը հասանելի է բոլորի համար. «Ո՞վ կգնահատեր արհեստավորին, ով դժգոհում էր, թե մեկ այլ արհեստավոր տանում է իր շահույթը նույն արհեստով զբաղվելով»: Յետևաբար, ըստ հեղինակի, հոլանդացիների շարժառիթը բնական է, «քանզի նրանց առավելությունն այս հարցում կապված է ողջ մարդկային ցեղի առավելության հետ»³⁷⁶:

Մարդկության ընկերային կապի գաղափարին գուճահեռ Գրոտիուսը հիմնավորում է ազգերի բնական և տնտեսական փոխկախվածության տեսությունը. «Աստվածային արդարության որոշմամբ է պայմանավորված, որ մի ժողովուրդ մատակարարելու է մյուսի կարիքները, որպեսզի, ինչպես հռոմեացի գրող Պլինիոսն է ասում, այս կերպ, ինչ էլ որ արտադրվել է որևէ տեղում, կարծես թե նախատեսված էր լինելու բոլորի համար: Ուստի նրանք, ովքեր մերժում են այս օրենքը, ոչնչացնում են մարդկային ընկերակցության այս ամենաողջունելի կապը, վերացնում փոխադարձ ծառայություն կատարելու հնարավորությունները, մի խոսքով՝ բռնություն գործադրում բնության նկատմամբ: Ուստի այս իրավունքը պատկանում է հավասարապես բոլոր ազգերին»³⁷⁷:

Այսպիսով, ձևակերպելով *մարդկության ընդհանուր սեփականության* գաղափարը՝ Գրոտիուսը բարձրացնում է համաշխարհային նշանակության խնդիրներ և փորձում պատասխանել դրանց: Նա ձևակերպում է այն դրույթը, որն այսօր անվանում են «համաշխարհային հանրային շահ»³⁷⁸: Այս դիրքորոշումը պետք է արդարացներ և բնականացներ տարասեռ բարոյական ու քաղաքական

³⁷⁴ **Grotius H.** (1608), *The Freedom of the Seas*, pp. 9, 63, 64. Հղելով Ֆրանցիսկոս Վիկտորիային ((1480-1546 թթ.) իսպանացի իմաստասեր, իրավաբան, Սալամանկայի համալսարանի աստվածաբանության պրոֆեսոր) Գրոտիուսը մատնանշում է. «Իսպանացիները կարող էին ցույց տալ ացտեկների և Ամերիկայի հնդկացիների դեմ պատերազմելու արդար պատճառներ, անշուշտ, ավելի արժանահավատ պատճառներ, քան առաջ էին քաշվում, եթե նրանց իրոք խոչնդոտել էին ճանապարհորդելու կամ այդ ժողովուրդների մոտ ժամանակավոր բնակվելու, և մերժվել էր նրանց իրավունքը կիսելու այն ամենը, ինչը Ազգերի իրավունքով կամ սովորույթով ընդհանուր է բոլորի համար, և, վերջապես, եթե նրանք զրկվել էին առևտրից»:

³⁷⁵ Տե՛ս **Grotius H.** (1608), *The Freedom of the Seas*, p. 65.

³⁷⁶ Նույն տեղում, էջ 69-70:

³⁷⁷ Նույն տեղում, էջ 7-8: Ըստ Գրոտիուսի՝ սա անհրաժեշտ էր մարդկային ընկերությանը փոխադարձ կարիքներով և ռեսուրսներով կապակցելու համար. «հակառակ դեպքում, իրենց լիովին ինքնաբավ համարելով՝ մարդիկ կցուցաբերեին ինքնավոլոնտարություն (unsociable)»:

³⁷⁸ Տե՛ս **Mathias R.**, *On Global Justice*. Princeton and Oxford: Princeton University Press, 2012, pp. 90-94.

հետաքրքրությունը ունենր ունեցող ազգերի մոտեցումներն ընդհանուր խնդիրների շուրջ: Բնական իրավունքի տեսության և ընդհանուր սեփականության գաղափարի միավորմամբ Գրոտիուսը վեր է հանում **մոլորակի նկատմամբ մարդկությանը և ընդհանուր սեփականատիրության** գաղափարը:

2. Գրոտիուսի ժառանգությունը և արդիականությունը:

Գրոտիուսի գաղափարները խոշոր ազդեցություն ունեցան ինչպես պետական գործիչների, այնպես էլ գիտնական-տեսաբանների աշխարհայացքների վրա: *Յասարակական դաշինքի և ազգերի հանրույթի* մասին նրա պատկերացումները կարևոր ազդեցություն ունեցան նաև 20-րդ դարում ձևակերպված միջազգային հարաբերությունների տեսության և կառույցի վրա: Ի մասնավորի, արդի **կոնստրուկտիվիստական տեսությունները**³⁷⁹ նշանակալիորեն հիմնված են այն գաղափարների վրա, որոնք ժամանակին վեր էր հանել Գրոտիուսը³⁸⁰:

Երկրորդ աշխարհամարտից հետո միջազգային հարաբերությունների տեսականացման համար իբրև շրջանակ էին ծառայում ռեալիզմը³⁸¹ (իրապաշտություն), մարքսիզմը և լիբերալիզմը՝ ելակետ ընդունելով ուժը, շահը (դասակարգային, պետական կամ ազգային) և հաստատությունները: Թեպետ այս տեսությունների ջատագովները տարածայնություններ ունեն այս ելակետերի հարաբերական կշիռների վերաբերյալ, սակայն նրանք մեծ մասամբ համաձայն են, որ այս երեք գործոնները միասին («նյութական» գործոնները), բացառում են միջազգային գործընթացների ելքերի մեծ մասը³⁸²: Ի հակադրություն այս մատերիալիստական մոտեցումների՝ մի շարք ուսումնասիրողներ աստիճանաբար սկսեցին ընդգծել չորրորդ գործոնը՝ «գաղափարները»³⁸³: Այն է՝ գաղափարները ունակ են փոխել ու

³⁷⁹ Տե՛ս **Zehfuss M.**, *Constructivism in International Relations: The politics of reality*. New York: Cambridge University Press, 2004, pp. 7-11.

³⁸⁰ Տե՛ս **Եփրեմյան Տ.**, Կոնստրուկտիվիզմի ակունքներում. Յուրաքանչյուր Գրոտիուս: ՎԷՄ համահայկական հանդես, 2(ԺԲ) տարի, թիվ 4 (48), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2014, էջ 179-199:

³⁸¹ Տե՛ս **Waltz K.**, *Theory of International Politics*. London, Amsterdam and Sydney: Addison-Wesley Publishing Company, 1979, pp. 102-161.

³⁸² Տե՛ս **Wendt A.**, *Social Theory of International Politics*, p. 94.

³⁸³ Տե՛ս նույն տեղում, էջ 92: Տե՛ս նաև **Onuf N.**, *World of Our Making: Rules and Rule in Social Theory and International Relations*. Columbia: University of South Carolina Press, 1989.

միջազգային հարաբերությունների բնույթը՝ ձևավորելով ընկերային կառույցներ և սահմանելով դերակատարներին ըստ որոշակի ինքնուրույնների և շահերի:

Հատկանշական է՝ Գրոտիուսն իր «Պատերազմի և խաղաղության իրավունքը» աշխատությունը ավարտում է հետևյալ տողերով. «Եվ թող Աստված, ում պատկանում է ինքնիշխան արքաների և իշխանների հակումների ու ցանկությունների տնօրինումը, դրոշմի այս սկզբունքները նրանց սրտերում և մտքերում, որ միշտ հիշեն, որ ամենավեհ ծառայությունը, որի ծիրում մարդ կարող է ներգրավվել, մարդկանց կառավարությունն է...»³⁸⁴: Հայսմ՝ հեղինակը հավատում էր, որ **աշխարհակարգը ընկերային կառույց է, և գաղափարները ունակ են փոխել ու դրա բնույթը**: Ըստ այս մոտեցման՝ քաղաքական կարգը և դերակատարները ոչ թե մեկընդմիջ տրված են բնույթամբ, այլ ընկերային կյանքի իրողություններ են: Կարևորելով գաղափարների դերը՝ Գրոտիուսը առանձնակիորեն ընդգծում էր նաև բանական ընտրության դերը. «բանականության հետ այդ համաձայնությունը, որը պատշաճության հիմքն է, պետք է ունենա ավելի մեծ կշիռ, քանզի բնության սկզբունքները առաջադրում են ճշմարիտ բանականությունն իբրև կանոն, որ պետք է լինի ավելի բարձրարժեք, քան մերկ բնագործ»³⁸⁵:

Հենվելով տարբեր սոցիալական տեսությունների վրա (քննադատական տեսություն, արստմոդեռնիզմ, պատմական ինստիտուցիոնալիզմ, սոցիոլոգիական ինստիտուցիոնալիզմ և այլն)՝ հետազոտողներն աստիճանաբար ընդունել են «կոնստրուկտիվիզմի» երկու հիմնական դրույթներ. առաջին, ընկերային կառույցները նախևառաջ որոշարկվում են ընդհանուր գաղափարներով, քան նյութական ազդակներով, և երկրորդ, դերակատարների ինքնուրույնն ու շահերը կառուցված են ընդհանուր գաղափարներով, քան տրված են բնույթամբ: Առաջինը իդեալիստական մոտեցում է ընկերային կյանքի նկատմամբ: Երկրորդը՝ «հոլիստական» կամ «ստրուկտուրալիստական»³⁸⁶:

³⁸⁴ Grotius H. (1625), The Rights of War and Peace, p. 418.

³⁸⁵ Նույն տեղում, էջ 31:

³⁸⁶ Wendt A., Social Theory of International Politics, pp. 1, 125: Ծաները սահմանող գաղափարները իրենց հերթին սահմանված են միջազգային համակարգի մշակույթով կամ ընդհանուր գաղափարներով: Գաղափարներն այս մակրո մակարդակում հասնում են

Միջազգային հարաբերություններում այս մոտեցման մեջ կենտրոնական տեղ ունի Ալեքսանդր Վենտի *ստրուկտուրալ կոնստրուկտիվիզմի* տեսությունը: Վենտի աշխատություններից բացի կոնստրուկտիվիզմի կառուցարկման մեջ կարևոր դեր են խաղացել նաև Ն. Օնաֆի և Ֆ. Կրատքվիլի տեսությունասիրությունները³⁸⁷:

Կոնստրուկտիվիզմի ընդհանրական սահմանման փորձ է կատարել Է. Ադլերը. «*Կոնստրուկտիվիզմը նյութական աշխարհի դինամիկ, նորմատիվ և իմացական մեկնաբանություններից կախված այն կերպն է և հայացքը, որում նյութական աշխարհը ձևավորում է և ձևավորված է մարդկային գործակցության մեջ փոխգործակցության մեջ*»³⁸⁸: Այն է՝ անգամ ամենաամուր ընկերային կառույցները հիմնված են հավաքական ըմբռնումների վրա. դրանք մարմնական կառույցներ են, որոնք մի ժամանակ ծնվել են մարդկային գաղափարներից և ապատարածվել ու համախմբվել: Ինչևէ, կոնստրուկտիվիզմը առաջարկում է միջազգային հարաբերությունների ըմբռնման ընդհանուր շրջանակ, որում կարող են տեղավորվել մի շարք մոտեցումներ և տեսություններ: Ըստ այդմ, կոնստրուկտիվիստական ճամբարը տարասեռ է և չունի ընդհանուր սահմանում³⁸⁹:

Հայսմ՝ այն տեսությունները, որոնց համաձայն միջազգային հարաբերությունների կառույցը և սոցիալապես բաշխվող հիմնարար գիտելիքը ազդում են (փոխադարձաբար կառուցիկ են) ոչ միայն պետությունների վարքագծի, այլև ինքնությունների և շահերի վրա, համարվում են «կոնստրուկտիվիստական»³⁹⁰:

Նման մոտեցումներ է որդեգրել նաև Գրոտիուսյան տեսական ավանդույթի շարունակող **միջազգային հարաբերությունների տեսության «անգլիական դարոց»-ը** (հայնտի է նաև որպես

պետությունների գլուխներին և վերածվում շահերի արդեն այլ, միջազգային կառույցի ավելի միկրոմակարդակում:

³⁸⁷ Տե՛ս Zehfuss M., նշվ. աշխ., էջ 10-11:

³⁸⁸ Adler E., Seizing the Middle Ground: Constructivism in World Politics. *European Journal of International Relations*, London: SAGE Vol. 3(3), p. 322.

³⁸⁹ Տե՛ս Zehfuss M., նշվ. աշխ., էջ 10-11:

³⁹⁰ Տե՛ս Цыганков П. А. (Рук. авт. колл.), *Международные отношения: социологические подходы*. Москва: Гардарика, 1998, с. 84-85.

«**Գրոտիոնյան դպրոց**»³⁹¹: Այս տեսաբանական դպրոցն ասոցացվում է նշանավոր անգլիացի տեսաբաններ Յեդլի Բուլլի (1932-1985 թթ.) և Մարտին Ուայթի (1913-1972 թթ.) հետ: Թեև այս դպրոցն ունի էական ընդհանրությունն արդի կոնստրուկտիվիզմի հետ՝ շնորհիվ գաղափարների դերի մասին ընդհանուր համոզմունքի: Այդուամենայնիվ, «անգլիական դպրոց»-ի տեսության շրջանակներն ավելի լայն են, մեկնողական ու ամբողջընկալական և սկիզբ են առնում Գրոտիոնյան «ազգերի հանրույթ» և «մարդկության մեծ համայնք» հղացքներից: Այս տեսության առանձնահատկություններից են *մեթոդաբանական բազմազանությունը* (methodological pluralism), *պատմականությունը* (historicism) և փոխկապակցված երեք հղացքները՝ *միջազգային համակարգ*, *միջազգային հանրություն* և *համաշխարհային հասարակություն*: Այն կենտրոնական նշանակություն է տալիս *միջազգային հանրությանը*, ուր ինքնիշխան պետությունները համաձայնության են գալիս ընդհանուր կանոնների, նորմերի ու հաստատությունների շուրջ և ընդունում են դրանք պահպանելու ընդհանուր շահն ու հանձնառությունը: Ըստ նշանավոր տեսաբան Բարի Բուզանի՝ «անգլիական դպրոց»-ի տեսության **հիստորիցիզմը** և **մեթոդաբանական բազմազանությունը** հնարավորություն են ընձեռում ամրապնդել կապերը «**համաշխարհային պատմություն**» և «**միջազգային հարաբերություններ**» գիտակարգերի միջև³⁹²:

Գրոտիոնյան «մարդկության մեծ համայնք» հղացքի ու կոնստրուկտիվիստական տեսության հարթությունում կարող ենք դիտարկել նաև «**մտավորական մարքսիզմի**» ներկայացուցիչների շեղումը մատերիալիստական ընկալումներից և մշակույթի

³⁹¹ Միջազգային հարաբերությունների տեսության «անգլիական դպրոց»-ն («Գրոտիոնյան դպրոց») բաց կերպով չի անդրադառնում պետական ինքնությունների ձևավորմանը, բայց միջազգային համակարգին մոտենում է որպես հանրության, որը կարգավորվում է ընդհանուր նորմերով: Կոնստրուկտիվիստական է համարվում նաև Ս. Յանթինգթոնի Քաղաքակրթությունների բախման տեսությունը: Տե՛ս **Jahn B.** (ed.), նշվ. աշխ., էջ 250: Տե՛ս նաև **Kingsbury B.**, A Grotian Tradition of Theory and Practice?: Grotius, Law, and Moral Skepticism In The Thought Of Hedley Bull. *Law Review Association of Quinipiac Collage*, Vol.17:3, N. 1, Spring 1997, pp. 3-33. Տե՛ս **Buzan B.**, From International to World Society? English School Theory and the Social Structure of Globalisation. Cambridge, New York, Melbourne: Cambridge University Press, 2004, pp. 6-62. **Huntington S. P.**, The Clash of Civilizations and the Remaking of World Order. New York: Simon & Schuster, 1996. Տե՛ս **Linklater A.**, **Suganami H.**, նշվ. աշխ., էջ 12-43:

³⁹² Տե՛ս **Buzan B.**, The English School: An Underexploited Resource in IR. *Review of International Studies*, Vol. 27, No. 3, Cambridge University Press, Jul., 2001, pp. 471-488.

կարևորումը: Այս գործում հույժ կարևոր դերակատարում ունեցավ իտալացի ականավոր մարքսիստ Անտոնիո Գրամշին (1891-1937 թթ.)՝ ձևակերպելով **գերիշխանության** տեսությունը, կարևորելով **գաղափարաբանության** դերը և ըստ այդմ հանդես գալով **պատմական միավորման** գործնառնական **բազիսի** ու **վերնաշենքի** փոխհարաբերության նորարարական մեկնաբանության մեջ³⁹³: Այս առումով բազիսի և վերնաշենքի փոխհարաբերության ներքին դիալեկտիկան ընդհանրացնում են Ս. Յոզիանիսյանը և Ն. Մկրտչյանը. «գաղափարաբանության մեջ հաստատված ներդաշնակ հարաբերության ներքին տարածությունը ըմբռնումների կայուն ձևաչափեր է սահմանում ...», որը «... շատ ավելի մեծ ընդգրկում է ապահովում՝ մինչև մարդկության շրջանակ»³⁹⁴:

Ընկերային ներգրավվածության հղացքը Գրամշին տարածում էր նաև ազգերի հարաբերության ներքին վրա, որը միտված է ընդգրկելու բազմազան ընկերային խմբեր «ի շրջանս մարդկության» իբրև **«ծայրահեղ աստիճանակազության հաղթահարման հարսնույց»**: Ըստ այս տրամաբանության՝ մարդկության շրջանակի մեջ պարամոլոլ ազգերը և պետությունները պետք է որդեգրեն «բանական ինքնասահմանափակումը՝ ըստ օրենքի, արդարության և ողջամտության»³⁹⁵: Ինչպես նկատում է պրոֆեսոր Ա. Ստեփանյանը, «բացի այս գուտ մտավոր շառավիղից, հիմնախնդիրն ուներ նաև իր կոնկրետ իրավաբանական շառավիղը՝ հեղինակված արդի միջազգային իրավունքի հայր հանդիսացող Յուզո Գրոտիուսից: Իբրև համակցական արժեքների հաստատագրման միջավայր այն ճանաչում էր **մարդկության համընդհանուր շրջանակը**: Մոտեցում, որ հույժ արդյունական է նաև մեր օրերում»³⁹⁶:

³⁹³ Տե՛ս Gramsci A., Selections from the Prison Notebooks. Edited and translated by Quentin Hoare and Geoffrey Nowell. London: Smith Lawrence & Wish art, 1971, pp. 336-399, 445-556.

³⁹⁴ **Մերջեան Ա., Յոզիանիսյան Ա., Մկրտչյան Ն.**, Գրամշիի *Մարդկության շրջանակը* և Յայաստանը: Խմբ.՝ **Ա. Ա. Ստեփանյան**: Երևան, «ՓրինթինՖո», 2016, էջ 43-69:

³⁹⁵ **Ստեփանյան Ա.**, Պատմության ու տոպիան և ողբերգությունը. Մերջեան Ա., Յոզիանիսյան Ա., Մկրտչյան Ն., Գրամշիի *Մարդկության շրջանակը* և Յայաստանը: Խմբ.՝ **Ա. Ա. Ստեփանյան**: Երևան, «ՓրինթինՖո», 2016, էջ 12: Կոնստրուկտիվիստական համարվում են Ռոբերտ Քոքսի **«Ներգրամշխական մարքսիզմը»**, որը միջազգային հարաբերության ներքին մարքսիստական տեսություններից ավելի շատ է հետաքրքրված գաղափարաբանության դերով: Տե՛ս **Cox R.**, Social Forces, States and World Orders: Beyond International Relations Theory. *Millenium* 10/2 (1981), pp. 126-155.

³⁹⁶ **Ստեփանյան Ա.**, Պատմության ու տոպիան և ողբերգությունը, նշվ. աշխ., էջ 15:

Ընդհանրացնենք: Աշխարհակարգի Գրոտիուսյան տեսության հիմնադրույթներն են՝ *ազգերի հանրույթը, ազգերի իրավունքի գերակայությունը, պետական ինքնիշխանությունը, ազգերի ինքնիշխանությունը, ինքնիշխան պետությունների իրավահավասարությունը* և *առևտրի ազատությունը*: Վեստֆալյան խաղաղությունը գործնականում ցույց տվեց, որ պետությունների անկախությունը և ինքնիշխանությունը համատեղելի է օրենքի գերակայության ու ազգերի համակեցական պատասխանատվության Գրոտիուսյան գաղափարներին:

3.2 ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՐՈՏԻՈՒՍՅԱՆ ԸՄԲՈՒՆՈՒՄԸ ԵՎ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՔԻ ՊՍՏՄԱԿԱՆ ՅԵՏԱԳԻՃԸ

Ներկա ենթազվիտում կփորձենք սահմանել **ազգերի ինքնիշխանության իրավունքի** վերաբերյալ Գրոտիուսի ըմբռնումները, որոնք, ցավոք, հետազոտողների կողմից պատշաճ ուշադրության չեն արժանացել: Նկատենք, որ այս հիմնախնդրի վերաբերյալ Գրոտիուսի մոտեցումները միանշանակ չեն, ինչի համար հեղինակն արժանացել է այլ իմաստասերների և հետազոտողների քննադատությանը, ավելի հաճախ էլ՝ անտարբերությանը: Ուստի ընդհանրական մոտեցման կառուցման ճանապարհին մենք կառանձնացնենք ուսումնասիրության երեք հարթություն՝ **ժողովուրդ, ազգ** և **պետություն**: Այնուհետև կուրվագծենք **ազգերի ինքնորոշման միջազգային հիմնարար իրավունքի** զարգացման և ձևակերպման պատմական հետազոտող ընդհուկուպՅելսինկյան եզրափակիչ ակտ (1975 թ.):

Ա Գրոտիուսյան ըմբռնումը: Յուրաքանչյուր Գրոտիուսի աշխատությունները նշանավորում են ինքնիշխանության արդի ըմբռնումի սկիզբը: Գրոտիուսը մտահոգված էր այս հիմնախնդիրներով, քանզի ցանկանում էր հիմնավորել հոլանդացիների պայքարը իսպանական գահի դեմ³⁹⁷, որը ոտնահարել

³⁹⁷ Դեռևս 1610 թ. իրատարակվել էր Յուրաքանչյուր Գրոտիուսի «Բատավիական հանրապետության հնությունը» (De Antiquitate Reipublicae Batavicae) աշխատությունը, որտեղ հեղինակը պաշտպանում էր Նիդերլանդների հանրապետության ինքնիշխանության իրավունքը և հոլանդացիների պայքարն անկախության համար: Այստեղ Գրոտիուսը ներկայացնում է Յուրաքանչյուրի պատմությունը սկսած հռոմեական ժամանակներից՝ ցույց տալով, որ հոլանդացիները և բատավիացիները

Էր հոլանդացի ժողովրդի «հնագույն իրավունքներն ու արտոնությանը»³⁹⁸: Այս մտավոր ճիգի արդյունքը դարձավ ինքնիշխանության նոր հղացքը, ուր կենտրոնական տեղ էին զբաղեցնում ժողովուրդների իրավունքները: Նոր մոտեցումը պետք է փոխարիներ համայնքի առաջ տիրակալի իրավական և բարոյական պատասխանատվության միջնադարյան ըմբռնմանը: Այս մոտեցումը մարմնավորում ստացավ Վեստֆալյան խաղաղությանը, իսկ հետագայում դարձավ նորմատիվային նախ Եվրոպայում ապանանալ խարհում³⁹⁹:

Ազգային ինքնիշխանության Գրոտիուսյան գաղափարները նվազ ցածրով են ուսումնասիրված: Համաձայն մտածողի՝ պետությունը ձևավորվում է անհատանձանց կամավոր միություն: Իսկ ձևավորված քաղաքացիական հասարակությունը, որն ունի համապատասխան ներկայացուցչական հաստատություններ, հանրապետություն է: Այս կերպ նա պաշտպանում էր հոլանդացիների պայքարն ընդդեմ իսպանական տիրապետության՝ պնդելով, որ Նիդերլանդների միացյալ պրովինցիաների իշխանությունները ներկայացնում են հոլանդացի ազգին⁴⁰⁰: Գրոտիուսի բանաձևմամբ «...քաղաքացիական իրավունքն այն է, ինչը բխեցվում է քաղաքացիական իշխանությունից: Քաղաքացիական իշխանությունը պետության ինքնիշխան իշխանությունն է»⁴⁰¹: Նիդերլանդների համար երեսնամյա պատերազմն անկախության պատերազմի (1568-1648 թթ.) նոր շրջափուլ էր, երբ հոլանդացիները պետք է պաշտպանեին իրենց

պատմականորեն քաղաքականապես ինքնիշխան և անկախ են եղել, և որ իենց կառավարման կերպը մշտապես եղել է արիստոկրատական, քան միապետական: Այս կերպ Գրոտիուսն օգտագործում էր պատմական հետնախորքն իր քաղաքական տեսակետներն հիմնավորելու նպատակով: Տե՛ս **Grotius H.** (1610), *The Antiquity of the Batavian Republic*. With the notes by Petrus Scriverius. Ed. & transl. by Jan Waszink et al. Assen: Van Gorcum, 2000. Տե՛ս **Waszink J.**, Tacitism in Holland: Hugo Grotius' *Annales et Historiae de rebus Belgicis*. In Rhoda Schnur (ed.), *Acta Conventus Neo-Latini Bonnensis: Proceedings of the 12th International Congress of Neo-Latin Studies (Bonn 2003)*. *Medieval & Renaissance Texts & Studies*, vol. 315, 2006.

³⁹⁸ Տե՛ս **Johnson J. T.**, նշվ. աշխ., էջ 82:

³⁹⁹ **Jeffery R.**, նշվ. աշխ., էջ 4-5: Իսկ այդժամ Եվրոպական միապետները հապաղում էին ճանաչել Նիդերլանդների ինքնիշխանության իրավունքը: Ֆրանսիայի արքա Հենրի 4-րդը, ով Գրոտիուսին ողջունում էր որպես «Հոլանդիայի հրաշք», Նիդերլանդական հանրապետությանը համարում էր «ազատ, բայց ոչ ինքնիշխան» (“libres mais non pas souverain”):

⁴⁰⁰ Տե՛ս **Tuck R.**, *The Rights of War and Peace: Political Thought and the International Order from Grotius to Kant*, pp. 82-84: Նիդերլանդական պրովինցիաների միությունը ձևավորվել էր 1579 թ. Ուտրեխտի պայմանագրով իսպանական գահին դիմակայելու նպատակով: Միության գործերը կառավարում էին Գլխավոր շտաբները (արիստոկրատական ժողովները), որոնք գումարվում էին Հաագայում:

⁴⁰¹ **Grotius H.** (1625), *The Rights of War and Peace*, p. 25.

ինքնիշխանության իրավունքը⁴⁰²: Իրավիճակը նույնական էր նաև շվեյցարական կանտոնների համար:

Մեր աշխատանքի տեսանկյունից առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում «**Ժողովուրդ**», «**ազգ**» և «**աֆսուլյուն**» հասկացությունների Գրոտիուսյան ըմբռնումը: Թեև նրա աշխատություններում բացակայում է «**Ժողովուրդ**» և «**ազգ**» հասկացությունների հստակ սահմանումը, այդուհանդերձ, ընդհանրացնելով մտածողի աշխարհընկալման համալիրը՝ կարող ենք ակնդել. **Ժողովուրդը (populus) որոշակի տարածաշրջանում միավորված մարդկային համայնքն է, որը մեկ ամբողջություն է կազմում: Ազգը (gens)՝ ընդհանուր ծագում և ոգի ունեցող կազմակերպված քաղաքական համայնքն է, որը մեկ քաղաքացիական ամբողջություն է կազմում և ունի ինքնիշխանության իրավունք:** Այս առումով Գրոտիուսը գրում է. «...ազգը կարող է կորցնել իր գոյությունը երկու դեպքում՝ իր անդամների իսպառվերացումով կամ իր ձևի և ոգու կորստով: Այս կերպ նաև՝ յուրաքանչյուր համայնքի դեպքում: Ազգը կորցնում է իր ձևը՝ կորցնելով իր բոլոր կամ կարևորագույն ընդհանուր իրավունքները, և սատեղի է ունենում, երբ ամենքը ստրկացված է... կամ երբ, թեպետև պահպանում է իր անձնական ազատությունը, բայց զրկված է ինքնիշխանության իրավունքներից»⁴⁰³: Այսպիսով, **կարող ենք ակնդել, որ ազգերի նկատմամբ Գրոտիուսի մոտեցումը իդեալիստական և հուլիստական է: Ըստ այս մոտեցումների՝ աֆսուլյունները կամ ազգերը համախմբված են ընդհանուր համոզմունքներով և կազմակերպական կառույցներով:**

Մասնավորեցնելով իր ասելիքը ազգերի ինքնության և կառույցի վերաբերյալ՝ Գրոտիուսը գրում է. «Ազգը... չնայած իր քաղաքիչ մասնիկների փոփոխությանը, չի կորցնում ինքնությունը այնքան ժամանակ, քանի դեռ ընդհանուր ձևը պահպանվում է... Այնպես որ ազգը ներկայումս նույնն է, ինչ որ եղել է հարյուր տարի առաջ, այնքան ժամանակ, քանի դեռ ոգին, որը սկզբում ձևավորեց և հետո պահեց մարմինը միասնական, պահպանում է իր ինքնությունը, թեպետև նախորդ շրջանի իր անդամներից ոչ մեկը այժմ չի գոյատևում: Այսպես սովորույթ է առաջացել՝ ներկայումս ապրողներին վերագրել ու բազում դարեր առաջ եղածը, ինչը կարելի է տեսնել և՛ հեթանոս պատմիչների մոտ, և՛ սուրբ գրքերում: Այսուհետև՝ Տակիտուսի մոտ, Անտոնիուս Պրիմուսը, ծառայելով

⁴⁰² Տե՛ս Johnson J. T., նշվ. աշխ., էջ 90-92:

⁴⁰³ Grotius H. (1625), The Rights of War and Peace, pp. 118-119.

Վեսպասիանուսին, երրորդ լեգիոնի զինվորներին հիշեցնում է նախորդ ժամանակներում իրենց արարների մասին, թե ինչպես են նրանք Մարկուս Անտոնիուսի հրամանատարությամբ հաղթել պարթևներին, և Կորբուլոնի հրամանատարությամբ՝ հայերին: Ավելի շատ նախապաշարմունք կար, քան ճշմարտությունն նաև Պիզոնի՝ իր ժամանակի պթենացիներին ուղղված նախատիևքի մեջ, որը մերժում էր նրանց համարել պթենացիներ, քանզի նրանց տեսակը վերացել էր բազում աղետներից, և նրանք ավելի ինչ էին, քան երկրի բոլոր ազգերի խառնուրդ: Թեպետայ դպիսի խառնուրդը կարող էր նվազեցնել արժանապատվությունը, այն էր կարող ոչնչացնել ազգի գոյությունը: Քանզի բաղադրիչ մասերի փոփոխությունը չի կարող ոչնչացնել ազգի ինքնությունը, ոչ էլ անգամ հազարամյակը ...»^{404,405}

Հարկ ենք համարում նշել, որ «ժողովուրդ» և «ազգ» հասկացությունների Գրոտիուսի ըմբռնումները ընդհանուր առմամբ համընկնում են Իմմանուել Կանտի սահմանումների հետ⁴⁰⁶:

Փոխարենը Գրոտիուսը հստակ սահմանում է **«ԱՖՏՈՒԹՅՈՒՆ»** հասկացությունը. **«ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԸ ԱՂԱՏ ՄԱՐԴԿԱՆԳ ԿԱՏԱՐՅԱԿ ՄԱՐՄԻՆ Է, ՄԻԱՎՈՐՎԱԾ ՄԻԱԽՆ ՎԱՅ ԵՆ ԵՆՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»**⁴⁰⁷: Ավելի, նա հիմնավորում է ազգերի ինքնիշխանության կամ ինքնորոշման իրավունքն ինքնիշխան տիրակալների հարաբերությամբ՝ այն ներկայացնելով իբրև «փոխադարձ ենթակայության երևակայական շրջանակ»: Ըստ այդմ՝ «ժողովուրդը պարտավորված է ենթարկվել թագավորին, քանի դեռ նալավ է կառավարում, զի նրա կառավարումը ենթակա է ժողովրդի տեսչությանը և վերահսկողությանը»⁴⁰⁸:

Գրոտիուսն ընդգծում է **ազգային ինքնիշխանության իրավունքը** նաև ինքնիշխանության ժառանգության դիտանկյունից: Ըստ նրա՝ եթե ինքնիշխան տիրակալը մահանում է առանց հայտարարելու իր կամքը և չունի արյունակից ժառանգորդներ,

⁴⁰⁴ Նույն տեղում:

⁴⁰⁵ Խմբային համոզմունքները հաճախ դրոշմված են «հավաքական հիշողության», առասպելների, պատումների և ավանդույթների մեջ, որ սահմանում են, թե ով է խումբը, և ինչպես է այն հարաբերվում ուրիշներին: Այս պատումները սոսկ ընդհանուր համոզմունքներ չեն, որ կրում են անհատները (թեպետ և կախված են այդ համոզմունքներից), այլ պատմական իրողությունն են, որը պահպանվել է սոցիալիզացիայի և ծիսակարգերի շարունակական գործընթացներով: Այսպիսի հիշողությունների շնորհիվ է, որ խմբերը ժամանակի ընթացքում ձեռք են բերում շարունակականություն և ինքնություն: Դրանք կարող են օգնել բացատրելու ամփոփ վարքագծի մոդելները: Տե՛ս **Wendt A.**, *Social Theory of International Politics*, p. 163.

⁴⁰⁶ Տե՛ս **Kant I.** (1798), *Anthropology from a Pragmatic Point of View*. Translated and edited by Robert B. Louden. Cambridge, New York, Melbourne: Cambridge University Press, 2006, p. 213.

⁴⁰⁷ **Grotius H.** (1625), *The Rights of War and Peace*, p. 25.

⁴⁰⁸ Նույն տեղում, էջ 69:

«նրա ունեցած բոլոր իրավունքները վերանում են՝ վերադառնալով ազգին, բացառությամբ օրենքով հակառակը սահմանված դեպքերի: Յիմնավորման այս նույն եղանակը վերաբերում է ազգին»⁴⁰⁹:

Համաձայն Գրոտիուսի տեսության՝ ինքնիշխան քաղաքական միավորը նույնականացվում է ըստ ինքնիշխանության կամ գերագույն իշխանության դրսևորումների (actus summae potestatis): Ի տարբերություն Բոդենյան մոտեցման, ով պաշտպանում էր միասնական և անբաժան ինքնիշխանության բացարձակապետական գիծը, Գրոտիուսն ինքնիշխանությունը համարում էր բաժանելի: Նա պնդում էր, որ ինքնիշխանության դրսևորումները կարող են բաժանվել մի քանի ճյուղերի⁴¹⁰: Հղում կատարելով Արիստոտելին՝ Գրոտիուսը նշում է, որ «պետության ինքնիշխանությունը **խորհրդակցական** (deliberative), **գործադիր** (executive) և **դատական** (judicial) իշխանությունների իրագործման մեջ է»⁴¹¹: Խորհրդակցական ճյուղին է վերագրվում պատերազմի և խաղաղության իրավունքը, պայմանագրերի հաստատումը կամ չեղարկումը, օրենքների մշակումն ու ընդունումը և այլն: Դատական ճյուղի լիազորությունների շրջանակներում են դրվում ոչ միայն հանցանքների ու զանցանքների պատժումը, այլև վնասների փոխհատուցումը: Գործադիր իշխանությունն իրականացնում է հանրային կառավարման գործառույթներ: Ինքնիշխանության բոլոր դրսևորումները պետք է իրագործվեն հանուն պետության բարեկեցության⁴¹²:

Ըստ այդմ՝ **ինքնիշխանության երեք տարբերակիչ նշաններն են** պետական պաշտոնյաների նշանակման իրավունքը, օրենքների կիրարկման ու չեղարկման իրավունքը և պատերազմի ու խաղաղության իրավունքը, ինչպես նաև արդարադատության իրագործումը և գլխավոր խորհուրդներ (general councils) իրավիրելու իրավունքը: Գրոտիուսը ընդգծում է. «ճշգրիտ սահմանումն

⁴⁰⁹ Նույն տեղում, էջ 117:

⁴¹⁰ Տե՛ս **Jeffery R.**, նշվ. աշխ., էջ 5-6: Նկատենք, որ ինքնիշխանության բաժանելիության ըմբռնումը թույլ էր տալիս Գրոտիուսին պնդել, որ հոլանդական ապստամբությունն օրինական էր և արդարացված, քանզի այն կոչված էր պաշտպանելու ինքնիշխանության օրինական ակտը, մասնավորապես հարկերը բարձրացնելու իրավունքը, որը վիճարկվել էր Նիդերլանդներում իսպանական զահի ներկայացուցիչ Ալբայի դոմբսի կողմից:

⁴¹¹ **Grotius H.** (1625), *The Rights of War and Peace*, p. 61.

⁴¹² Տե՛ս նույն տեղում:

ընդգրկում է իշխանության ամեն հնարավոր ճյուղ, որ կարող է ծագել ինքնիշխան կառավարման հաստատումից և իրագործումից»⁴¹³:

Եզրակացնենք՝ այն ազգերը, որոնք ենթարկեցված կամ հնազանդեցված են այլ իշխանության դուրս են մտնում տվյալ սահմանման շրջանակներից: Յետևաբար այդ ազգերն ինքնիշխան չեն և չեն ներկայացնում ինքնիշխան պետություններ, այլ մեծ պետության ենթակա բաղադրիչներ են: Հայսմ՝ ազգերը կամ պետությունները կարող են կորցնել իրենց տեղը միջազգային հանրությունում՝ զրկվելով ինքնիշխանության իրավունքներից:

Խոսելով Արևելահնդկաստանի, ինչպես նաև Արևմտահնդկաստանի (Ամերիկայի) ժողովուրդների, և մասնավորապես ացտեկների ինքնիշխանության իրավունքի, կաթոլիկ եկեղեցու, իսպանացիների և պորտուգալացիների գաղութային քաղաքականության մասին՝ Գրոտիուսը պաշտպանում է տեղաբնիկների ինքնորոշման իրավունքը: Յեղիսակը հիմնավորում է. «Իրենց անհավատության պատճառով նրանք չպետք է զրկվեն իրենց տարածքների նկատմամբ ինքնիշխանությունից՝ քանզի ինքնիշխանությունը դրական իրավունքի խնդիր է, և անհավատությանը՝ աստվածային իրավունքի, որը չի կարող խախտել դրական իրավունքը... Ամերիկացիները պետք է դարձվեն քրիստոնեական հավատքին ոչ թե պատերազմի, այլ խրատի և ճշմարիտ խոսքի միջոցով, և, անգամ, նրանց ազատությունը, որը գողացվել է հավատքի անվան տակ, պետք է վերականգնվի... Արևելահնդկաստանի ազգերը (East Indian nations) պորտուգալացիների շարժական գույքը չեն, նրանք ազատ մարդիկ են⁴¹⁴ և իրենք իրենց անունից հանդես գալու իրավունք ունեն (sui juris)»⁴¹⁵:

Ազգերի ինքնորոշման իրավունքի կապակցությամբ Գրոտիուսը պնդում է, որ ամենևին էլ տարբերություն չկա, թե ինչպիսին է կառավարման ձևը՝ միապետական, արիստոկրատական, թե դեմոկրատական. «...հռոմեական ազգը նույնն էր՝ անկախ թագավորական, կոնսուլական, թե կայսերական կառավարումից... Երբ

⁴¹³ Նույն տեղում:

⁴¹⁴ Գրոտիուսը հայտնում է, որ այս մոտեցումն ընդունելի է եղել անգամ Հռոմի պապ Պողոս 3-րդի և Սրբազան հռոմեական կայսրու Իսպանիայի թագավոր Կառլոս 5-րդի համար: Ուստի առևտրի ազատության տեսության համապատկերում նա քննադատում էր նաև Ամերիկայի ժողովուրդների և նրանց տարածքների նկատմամբ գաղութային իշխանությունն հաստատելու եվրոպական պետությունների քաղաքականությունը: Թեև Գրոտիուսը գտնում էր, որ «...ազգերի իրավունքի կանոնները կիրառելի են միայն նրանց նկատմամբ, ովքեր ընդունակ են քաղաքական և առևտրային հարաբերությունների...»: Յեղիսակը նկատում է, որ բարբարոսներին քաղաքակրթելու առաքելությունը ևս դարձել էր պատրվակ ազրեսիայի համար: Այլոց ունեցվածքի նկատմամբ ազահ ձգտումը հաճախ թաքնվում էր նման պատրվակի հետևում: Ազգերին իրենց կամքին հակառակ քաղաքակրթական ավելի բարձր մակարդակի բարձրացնելու պատրվակը, որը ժամանակին օգտագործվել էր Ալեքսանդր Մեծի կողմից, Գրոտիուսն անարդար է համարում: Տե՛ս **Grotius H.** (1608), *The Freedom of the Seas*, pp. 14, 18, 21. **Grotius H.** (1625), *The Rights of War and Peace*, pp. 269-270. Տե՛ս նաև **Mathias R.**, նշվ. աշխ., էջ 100:

⁴¹⁵ **Grotius H.** (1608), *The Freedom of the Seas*, pp. 20-21.

թագավորը կամ թագավորական ընտանիքը վերանա, ինքնիշխանության իրավունքները կվերադառնան ընկերային հանրության, քանզի **ինքնիշխանությունը ներհատուկ է թագավորին՝ իբրև գլխի, ազգին՝ իբրև մարմնի և, հետևաբար, նաև ընտրովի կառավարությանը**»⁴¹⁶:

Ուստի, կարող ենք նշել, որ Գրոտիուսի գաղափարները կարևոր նշանակություն ունեցան ինչպես արդի միջազգային, այնպես էլ ներազգային ընկերային կառույցների ձևակերպման տեսանկյունից: Համաձայն Ջեյմս Դեր Դերյանի՝ **հասարակական դաշինքի Գրոտիուսյան պարկերացումները** արմատական ազդեցություններ ունեցան ազգերի և միջազգային հարաբերությունների կառույցի վրա: Ինքնիշխանության և սեփականատիրության միջև հարաբերությունների սահմանազատումը ճանապարհ հարթեց կառավարիչների ու կառավարվողների միջև նոր տեսակի հարաբերությունների համար, ուր ինքնիշխանությունն իր հարակից իրավունքներով և ունեցվածքն ու սեփականատիրության իրավունքները կարող էին ձեռք բերվել կամ փոխանցվել մեկից մյուսին: Այսպիսի գործընթացը պետք է հիմնված լիներ մի կողմից բնական կամարտահայտության և մյուս կողմից բնական, քաղաքացիական կամ միջազգային իրավունքի վրա⁴¹⁷:

Այսպես կոչված պետության **տարածքային ամբողջականություն** և **հասկացությունը** Գրոտիուսի մոտ թույլ է ձևակերպված և ամենևին բացարձակեցված չէ: Ավելին, այն ստորադաս է ազգերի ինքնիշխանության իրավունքին: Մասնավորապես, նագտնում է, որ «հանրային տիրույթի [պետության – հստակեցումը մերն է՝ Տ. Ե.] առանձին հատվածի կարգավիճակի փոփոխության համար անհրաժեշտ է ինչպես ամբողջական մարմնի, այնպես էլ այդ մասնավոր հատվածի համաձայնությունը»⁴¹⁸: Գրոտիուսի տեսաիրավական հայեցակարգում ազգերի ինքնորոշման իրավունքի առկայության մեր առաջարկած հիպոթեզի ապացուցման տեսանկյունից կիրարկելի է մտածողի այն մոտեցումը, ըստ որի «քաղաքացիական

⁴¹⁶ Grotius H. (1625), The Rights of War and Peace, p. 120.
⁴¹⁷ Տե՛ս Der Derian J., նշվ. աշխ., էջ 16-17:
⁴¹⁸ Grotius H. (1625), The Rights of War and Peace, p. 386.

պատերազմները հաճախ ծնունդ են տալիս նոր իրավունքների՝ խախտելով նախկին կանոնները»⁴¹⁹: Ընդհանրացնելով հեղինակի դիտարկումները՝ սահմանենք. **պետությանը միաժամանակ կարող է բաղկացած լինել երկու ազգերից, որոնցից յուրաքանչյուրը հակամարտության դեպքում ինքնորոշման իրավունք ունի**⁴²⁰:

Քննարկելով ինքնիշխան պետությունների նկատմամբ ագրեսիան արդարացնելու պատրվակները և «իրավական հիմքերը»՝ Գրոտիուսը պնդում է, որ ուժի կիրառումից առաջ նախ պետք է արդարացի և պատշաճ պահաջ ներկայացվի տվյալ պետությանը: Պատշաճ կերպով ներկայացված արդար պահանջի մերժման դեպքում միայն ինքնիշխան պետությունը կարող է ենթարկվել ներխուժման: Թեև բնական իրավունքը չի նախատեսում, թե երբ է պետք այդպիսի պահանջներ ներկայացնել, այնուամենայնիվ, ըստ Գրոտիուսի՝ «մարդկության և արդարության ընդհանուր սկզբունքները հորդորում են օգտագործել ցանկացած միջոց պատերազմի արհավիրքը կանխելու համար: Մենք գիտենք Քսենոփոնից՝ երբ Կյուրոսը գնաց հայերի երկիրը, նա բանազնացներ ուղարկեց հայերի թագավորի մոտ՝ պահանջելով տուրք և գորքեր, որոնք նախատեսված էին պայմանագրով»⁴²¹:

Կարող ենք արձանագրել, որ **երե ժողովուրդների ինքնորոշման իրավունքի քննարկումները Գրոտիուսի մոտ զուտ տեսաիրավական հարթությանում էին և գրեթե աղերսներ չունեին ժամանակաշրջանի գործնական քաղաքականության հետ, ապապետական ինքնիշխանության սկզբունքն արդեն 1648 թ. Վեստֆալյան խաղաղությանը լիովին կիրառելի էր**: Ինչպես հեղինակն է ձևակերպում, «բնական իրավունքով և ընկերային կարգով սահմանված, ինչպես նաև պատմական վկայություններով հաստատված կանոն է, որ յուրաքանչյուր ինքնիշխան արքագերագույն դատավոր է իր թագավորությանում և իր հպատակների համար, որոնց վեճերին ոչ մի օտար իշխանություն չի կարող արդարացիորեն միջամտել»⁴²²:

⁴¹⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 203:

⁴²⁰ Տե՛ս նույն տեղում:

⁴²¹ Նույն տեղում, էջ 318: Ի հավելումս, Գրոտիուսը պնդում է, որ ազգերի իրավունքով սահմանված պատերազմի իրավունքներից օգտվելու համար անհրաժեշտ է նաև պատերազմի պաշտոնական հայտարարությունը:

⁴²² Նույն տեղում, էջ 288:

Արդեն նշել ենք, որ, մեր կարծիքով, **ժողովուրդների ինքնորոշման իրավունքի ճանաչման նախօրինակ կարելի է դիտարկել Վեստֆալյան խաղաղության և Նիդերլանդների հանրապետության և Շվեյցարական համադաշնության անկախության ու ինքնիշխանության ճանաչումը**: Վեստֆալյան խաղաղության 1648 թ. հունվարի 30-ի Նիդերլանդների և Իսպանիայի միջև Մյունստերի անջատ հաշտության պայմանագրով ճանաչվեց Նիդերլանդների հանրապետության ինքնիշխանությունը: Վեստֆալյան խաղաղության Ֆրանսիայի և Սրբազան հռոմեական կայսեր միջև պայմանագրի 63-րդ հոդվածով ճանաչվում էր Շվեյցարական կանտոնների ինքնիշխանության իրավունքը և «Կայսրությունն ից նրանց ամբողջական ազատությունն ու անկախությունը»⁴²³:

Հանդերձ այսու, հարկավոր է նշել, որ **ժողովրդական ինքնիշխանության տեսության** Գրոտիուսի դիտարկումները խիստ զգուշավոր են: Նա մերժում էր ժողովրդի իր օրինական տիրակալի դեմ ապստամբելու կամ պատերազմելու իրավունքը: Բանն այն է, որ Գրոտիուսը հստակ սահմանազատում էր ժողովրդի ու իր տիրակալի և քաղաքական համայնքի ու իր կառավարչի (կամ միապետի) միջև տարբերությունները: **Ուստի, ընդհանրացնելով մտածողի ըմբռնումները, կարող ենք ձևակերպել, որ ըստ նրա՝ ապստամբելու իրավունք ուներ միայն կազմակերպված քաղաքական համայնքը՝ ազգը, և ոչ թե պարզապես ժողովուրդը**: Տվյալ դեպքում կազմակերպված քաղաքական համայնքի օրինակ էր հոլանդական պրովինցիաների միությունը, որն օրինական պատերազմ էր մղում իր իրավունքները ոտնահարած Իսպանիայի թագավորի դեմ⁴²⁴:

Ավելի նաև, խառնաշփոթից և առավել մեծ չարիքից խուսափելու համար՝ Գրոտիուսը մերժում է **ժողովրդական ինքնիշխանության** բացարձակեցումը և իշխանության չարաշահման համար արքաներին պատժելու ժողովրդի իրավունքը, թեև ընդունում է բացառությունների հնարավորությունը⁴²⁵: Այս հարցում հետագայում նա պետք է քննադատության ենթարկվեր ժան ժակ

⁴²³ Տե՛ս Article LXIII - **Treaty of Westphalia**: Peace Treaty between the Holy Roman Emperor and the King of France and their respective Allies.

⁴²⁴ Տե՛ս **Bull H., Kingsbury B., Roberts A.** (eds), նշվ. աշխ., էջ 86:

⁴²⁵ Տե՛ս **Grotius H.** (1625), *The Rights of War and Peace*, p. 63.

Ռուսսոյի կողմից⁴²⁶: Սակայն պետք է հաշվի առնել, որ մտածողն ապրել և իր աշխատությունները գրել է Երեսնամյա պատերազմի ընթացքում՝ մի կողմից կարևորելով Քրիստոնեական աշխարհի միասնության հղացքը, մյուս կողմից հիմնավորելով ինքնիշխան պետությունների (ի դեմս միապետների) համակարգի անհրաժեշտությունը: Գրոտիուսի կողմից մշակված միջազգային հանրության հղացքը միտված էր կառուցարկելու եվրոպական խաղաղությանը «Քրիստոնեական աշխարհի ապամիասնականացման» պայմաններում⁴²⁷: Բացի այդ պետք է նկատի ունենալ, որ իր գլուխգործոցը՝ «Պատերազմի և խաղաղության իրավունքը» աշխատությունը, Գրոտիուսը շարադրել և հրատարակել է Փարիզում՝ այն ձոնելով Ֆրանսիայի արքա Լուի 13-րդին, ում հովանավորությունն էր վայելում:

Մինչև Ֆրանսիական մեծ հեղափոխության ժամանակաշրջանը (1789 թ.) եվրոպայում ինքնիշխանության օրինականության սկզբունքը գրեթե բացառապես դինաստիական էր, որով որոշվում էին միջազգային հանրությանը անդամակցության, ինքնիշխանության իրավունքի կամ դրա փոխանցման հարցերը: Յեղափոխությունից հետո միջազգային օրինականության սկզբունքը սկսեց ազգային երանգստանալ, ինչը ճանապարհ հարթեց հանրաքվեների միջոցով ազգերի կամարտահայտման և ազգերի ինքնորոշման իրավունքներին⁴²⁸: Ժամանակագրական առումով,

⁴²⁶ Տե՛ս **Rousseau J. J.** (1762), *On the Social Contract*. Translated by G. D. H. Cole. New York: Dover Publications, 2003, pp. 2-5, 8, 17, 70-80. Ռուսսոն գրում է, թե Գրոտիուսը հերքում է, որ իշխանությունը պետք է հաստատվի կառավարվողների օգտին: Նկատելով թե Գրոտիուսի մտածողությունը հիմնված է փաստացի հաստատված իրավունքի ճանաչման վրա՝ Ռուսսոն պնդում է, թե սա ձեռնտու է բռնակալներին: Այնուհետև Ռուսսոն գրում է. «Գրոտիուսը նույնիսկ կարծում է, թե յուրաքանչյուր մարդ կարող է վերանայել իր անդամությունը իր իսկ սեփական պետությանը և վերականգնել իր բնական ազատությունն ու իր բարիքները՝ լքելով երկիրը: Անհեթեթություն կլինի կարծել, թե բոլոր քաղաքացիները հավաքական կերպով չեն կարող նույնը անել»:

⁴²⁷ Տե՛ս **Der Derian J.**, նշվ. աշխ., էջ 17-18, 26:

⁴²⁸ Ազգերի ինքնորոշման իրավունքը որպես կանոն մեկնաբանվում է իբրև ազգերի կողմից սեփական պետությունների ձևավորման իրավունք. պետությունները պետք է լինեն ազգ-պետություններ, և ազգերը պետք է դառնան պետություններ: Ստեղծելով գաղութային կայսրություններ և նվաճելով մնացյալ աշխարհի մեծագույն մասը՝ եվրոպական ազգ-պետությունները աշխարհի տարբեր մասեր արտահանեցին նաև պետականության իրենց հղացքը: Այդ հղացքն էլ արտացոլվեց իրենց դեմ, երբ գաղութացված երկրները պահանջեցին ինքնիշխանություն: Այս կերպ առաջ եկավ ազգերի ինքնորոշման իրավունքը, որը ամրապնդվեց Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությամբ: Տե՛ս **Bull H.**, նշվ. աշխ., էջ 33: Տե՛ս **Цыганков П. А.** (Рук. авт. колл.), նշվ. աշխ., էջ 197-198: Տե՛ս **Bull H., Kingsbury B., Roberts A.** (eds),

հարկավ, Ամերիկյան անկախության պայքարը և ազգի ինքնորոշման իրավունքի կենսագործումը (1765-1783 թթ.) նախորդում էր ֆրանսիական բնօրինակին: Սակայն չպետք է մոռանալ, որ դրանք ընթանում էին ֆրանսիական գաղափարների ներքո:

Բ. Ինքնորոշման գաղափարից ինքնորոշման իրավունք: 18-19-րդ դարերում *ազգերի ինքնորոշման գաղափարը* սկսեց դիտարկվել *հավերժական խաղաղության* հաստատման համատեքստում: Ինքնիշխան ազգերի միջև խաղաղությունը հաստատելու համար Ի. Կանտն առաջարկում էր, որ «յուրաքանչյուր ազգ հանուն իր անվտանգության» այլ ազգերի հետ մեկտեղ կամավոր մուտք գործի խտորեն հաստատության ակնարկով միջազգային դաշնության մեջ՝ ստեղծելով ***խաղաղության դաշնություն*** (*foedus pacificum*)⁴²⁹: Ջ. Մաձինիս պնդում էր, որ **ժողովրդավարության և ազգերի ինքնորոշման իրավունքի** տարածումը երկարաժամկետ հեռանկարում խաղաղություն կհաստատի: Նրա քաղաքական մտքի ազդեցությունն էր կրում նաև ԱՄՆ-ի նախագահ Վոլդերո Վիլսոնը, ով հետագայում ազատական ինտերնացիոնալիզմը բարձրացրեց բացահայտ արտաքին քաղաքական դոկտրինի մակարդակի⁴³⁰: Ըստ Մաձինիի՝ ազատական ժողովրդավարությունները հակված են խաղաղության միայն միմյանց միջև փոխհարաբերություններում, մինչդեռ կշարունակեն բախվել բռնապետական ռեժիմների հետ: Ի տարբերություն Մաձինիի ***ժողովրդավարական խաղաղության տեսության***, Կանտը չէր պնդում, թե *խաղաղության դաշնության* մեջ պետք է ընդգրկվեին միայն ժողովրդավարությունները և հանրապետությունները⁴³¹: Այսպիսով, ժողովրդավարական ազգերի

նշվ. աշխ., էջ 86-87: Չարկ է նշել, որ Ամերիկյան հեղափոխությունը և ԱՄՆ-ի անկախությունը համարվում է ազգերի ինքնորոշման իրավունքի «հիմնադիր օրինակ» (seminal example): Տե՛ս **DeConde Al.** (ed.), *Encyclopedia of American Foreign Policy: Studies of the Principal Movements and Ideas*, 2nd ed., Vol 3, New York: Gale Group, 2002, pp. 461-462.

⁴²⁹ Տե՛ս **Kant I.** (1795), նշվ. աշխ., էջ 80:

⁴³⁰ Տե՛ս **Mazzini G.**, *A Cosmopolitanism of Nations: Giuseppe Mazzini's Writings on Democracy, Nation Building, and International Relations (1805–1872)*. Edited and with an introduction by Stefano Recchia and Nadia Urbinati; translations by Stefano Recchia. Princeton and Oxford: Princeton University Press, 2009, pp. 1-3.

⁴³¹ Ընդհակառակը, ըստ Կանտի՝ ոչ-հանրապետական պետությունները այդպիսի դաշնության մաս կազմելով կարող են զարգացնել հանրապետական կարգեր և միջազգային խաղաղությունն առավել համախուսմբ դարձնել: Տե՛ս **Kant I.** (1795), նշվ. աշխ., էջ 74-77:

միջև անջատ խաղաղության հնարավորությունը առաջինը հստակորեն ուրվագծեց ոչ թե Կանտոն, այլ Մաձինին⁴³²:

Գրոտիուսի, Կնաուի և Մաձինիի գաղափարները իրենց իրավաքաղաքական և տեսաիրավական ազդեցությունը ունեցան հասկապես Առաջին համաշխարհային պատերազմի արդյունքում: Սակայն եվրոպայում հավերժական խաղաղության հասնելու գաղափարները ավելի շատ տիրապետող էին հասարակայնության մեջ, քան քաղաքական շրջանակներում: ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնը փորձեց իրագործել այդ իմաստասիրական թեզը: **Ազգերի և իգայի** հիմնադրումը (1919 թ.) թույլ տվեց համաշխարհային քաղաքացիական կարգի նախագիծը բարձրացնել գործնական քաղաքականության օրակարգ և սկսել միջազգային իրավունքի սահմանադրականացումը⁴³³:

Նախագահ Վիլսոնի արտաքին քաղաքական հայեցակարգը նշանավորվեց **«ազգերի ինքնորոշման»** իրավունքի շեշտադրմամբ, **«հավաքական անվտանգության»** հղացքով և **«ժողովրդավարության արտահանման»** քաղաքականությամբ⁴³⁴: Այս նոր մոտեցումը դրսևորվեց 1917 թ. ապրիլի 2-ին, երբ նախագահը դիմեց ԱՄՆ-ի Կոնգրեսին՝ առաջարկելով պատերազմ հայտարարել Գերմանիային. «Չեզոքությունն արդեն անհնարին է և անցանկալի, երբ խոսքը ամբողջ աշխարհի խաղաղության և նրա ժողովուրդների ազատության մասին է... Աշխարհը պետք է անվտանգ դառնա ժողովրդավարության համար, այն պետք է կայանա քաղաքական ազատության հիմքի վրա... Արդարությունն ավելի թանկ է, քան խաղաղությունը, և մենք կպայքարենք... ժողովրդավարության համար, մարդու իրավունքների համար, փոքր ազգերի իրավունքների և ազատության համար...»⁴³⁵:

Ըստ Ի. Ուոլերսթայնի՝ 1917 թվականը արդի աշխարհի համակարգի պատմության մեջ գաղափարաբանական առումով շրջադարձային էր: Այդ շրջադարձը նշանավորեցին մի կողմից Վիլսոնի դոկտրինի հռչակումը և մյուս կողմից բոլշևիկյան հեղափոխությունը: Վիլսոնի դոկտրինը հիմնված էր ազատական գաղափարաբանության վրա և համընդհանրական բնույթ ունեւր: Այստեղ կենտրոնականը

⁴³² Տե՛ս **Mazzini G.**, նշվ. աշխ., էջ 21-22:

⁴³³ Տե՛ս **Хабермас Ю.**, Расколотый Запад. Пер. с нем. Москва: Изд. Весь Мир, 2008 г., с. 146.

⁴³⁴ Տե՛ս **DeConde A.I.** (ed.), Encyclopedia of American Foreign Policy, Vol. 3, p. 617.

⁴³⁵ **Wilson W.**, Address of the President of the United States Delivered at a Joint Session of the Two Houses of Congress, April 2, 1917. Washington: Government Printing Office, 1917, pp. 3-8. Տե՛ս նաև **Գաապարյան Կ.**, ԱՄՆ արտաքին քաղաքականությունը Առաջին Զամաշխարհային պատերազմի տարիներին. 1914-1917 թթ.: Երևան, ԵՊՀ իրատ., 2016, էջ 10-43:

ինքնորոշման գաղափարն էր, որը անձի ազատության իրավունքից վերածվեց ազգերի ինքնորոշման իրավունքի: Բոլշևիկները Վ. Ի. Լենինի գլխավորությամբ ևս հայտարարում էին ազգերի ինքնորոշման մասին: Սակայն ի տարբերություն Վիլսոնի, ով պաշտպանում էր այդ իրավունքի իրականացման սահմանադրական ուղին, Լենինը հանդես էր գալիս հեղափոխության դիրքերից⁴³⁶:

1918 թ. հունվարի 8-ին Կոնգրեսի լիազուրկար նիստին ուղված իր ուղերձում Վիլսոնը հանդես եկավ **«տասնչորս կետերից»** բաղկացած խաղաղության ծրագրով: Այստեղ առանցքային էր 14-րդ կետը՝ Ազգերի լիզայի ստեղծումը. «Ազգերի ընդհանուր ընկերակցությունն պետք է ստեղծվի հատուկ ուխտի ներքո մեծ և փոքր պետություններին համահավասար կերպով քաղաքական անկախության և տարածքային ամբողջականության փոխադարձ երաշխիքների ընձեռնման նպատակով»⁴³⁷: Յետևաբար նոր աշխարհակարգի կառուցման համապատկերում ժողովրդավարության անվտանգությունն ապահովելու համար Վիլսոնը առաջադրում էր ազգերի համագործակցության ու պետությունների իրավահավասարության գաղափարները և «հավաքական անվտանգության» հղացքը, որի իրականացմանը պետք է միտված լինեին Ազգերի Լիգայի գործունեությունը⁴³⁸:

Սույն փաստաթղթի 12-րդ կետն անմիջականորեն վերաբերում էր հայության և Յայաստանի ապագային⁴³⁹: Այն միանշանակորեն շեշտում էր Օսմանյան կայսրության ոչ թուրք ժողովուրդների ազատորեն ապրելու և սեփական ճակատագիրը տնօրինելու իրավունքը⁴⁴⁰:

Վիլսոնը գտնում էր, որ կայսրությունները պետք է փլուզվեն և պաշտպանում էր ազգերի ինքնորոշման իրավունքը: Սակայն նրա և

⁴³⁶ Տե՛ս **Валлерстайн И.**, Анализ мировых систем и ситуация в современном мире. Пер. с англ. П. М. Кудюкина. Под ред. Б. Ю. Кагарлицкий. Санкт Петербург: Издательство «Университетская книга», 2001, с. 151-153. Ազգերը կամ ժողովուրդները, ըստ մարքսիզմի տեսության, երկարաժամկետ դերակատարներ չէին. ենթադրվում էր, որ նրանք, ինչպես և պետությունները, ի վերջո վերանալու են: Սակայն կարճաժամկետ հեռանկարում ազգերը կամ ժողովուրդները իրողություններ էին, որոնց օգտագործումը մարտավարական առումով ձեռնտու էր:

⁴³⁷ **Wilson W.**, Address of the President of the United States Delivered at a Joint Session of the Two Houses of Congress, January 8, 1918. Washington: Government Printing Office, 1918, pp. 5-7.

⁴³⁸ Տե՛ս **Богатурова А. Д.** (ред.), Системная история международных отношений в двух томах. Т. Первый, События 1918-1945 годов. М.: Культурная история, 2009, с. 36.

⁴³⁹ Տե՛ս **Պայան Ա.**, Յայոց պահանջատիրության իրավական հիմունքները (հոդվածների ժողովածու): Երրորդ, լրամշակված հրատարակություն: Երևան, 2009, էջ 38-39: Տե՛ս նաև **Махмуриян Г.**, Лига Наций, Армянский вопрос и Республика Армения. Ин-т истории НАН Армении. Ред. проф. Калифорнийского университета Лос-Анджелеса акад. Р. Ованнисян. Ереван: Артагерс, 1999. **Շիրինյան Լ.**, Վիլսոնյան նախագիծը և Թուրքիան: «21-րդ ԴԱԲ», թիվ 4 (22), 2008, էջ 97-112:

⁴⁴⁰ Տե՛ս **Wilson W.**, Address of the President of the United States Delivered at a Joint Session of the Two Houses of Congress, January 8, 1918. Washington: Government Printing Office, 1918, pp. 5-7.

Եվրոպացի գործիչների այս տեսլականը սահմանափակված էր միայն Եվրոպական ազգերով, որոնք կազմում էին Ավստրո-Յուգոսլավական, Ռուսական և Օսմանյան կայսրությունների մաս⁴⁴¹: Քանզի, ըստ նրանց, Եվրոպական ազգերը գտնվում էին զարգացման համապատասխան մակարդակի վրա, հետևաբար կարող էին պատասխանատվություն վերցնել սեփական ճակատագրի նկատմամբ: Մյուս ժողովուրդների համար նախատեսվում էր **Ազգերի լիգայի** կանոնադրության 22-րդ հոդվածով սահմանված **մանդատային համակարգի կիրառումը** (Mandatories on behalf of the League)⁴⁴²: Ըստ էության, Ազգերի լիգայի մանդատային համակարգը փոխզիջումային միջանկյալ քայլ էր ազգերի ինքնորոշման համընդհանրական իրավունքի ձևակերպման ճանապարհին⁴⁴³:

Ականավոր բրիտանացի պատմագետ Առնոլդ Թոյնբին թուրքական կառավարության կողմից իրագործվող հայոց ցեղասպանության կապակցությամբ իր աշխատության մեջ պնդում է, որ հայերը նույնքան Եվրոպացի են որքան Արևմտյան Եվրոպայի բնակիչները, և տերությունները պետք է միջամտեն հոգուտհայերի: Ըստ Թոյնբիի՝ Օսմանյան կայսրության հպատակության տակ մնացած ազգերից հայերը միակն էին, որ ի գործ էին ինքնուրույն կառուցելու «քաղաքակիրթ, արդի պետություն» (civilized, modern state): Թոյնբին նաև գրում է. «Անատոլիական [Յայկական – ընդգծումը մերն է՝ Տ. Ե.] բարձրակնիցը ֆիզիոլոգիապես նույնական է և մերձավոր (akin) Եվրոպային, իսկ հայերը, որ բնակվում են այնտեղ, ոչ միայն Եվրոպացիներ են իրենց քաղաքակրթությամբ (Europeans in their civilization), այլ և սովոր են և գտնվում են իրապես Եվրոպական կլիմայական գոտում՝ նույն կլիման, որ գերիշխում է Բալկանյան թերակղզում կամ Ավստրո-Յուգոսլավիայում»⁴⁴⁴:

Առաջին աշխարհամարտի արդյունքում փլուզվեցին Գերմանական, Ռուսական, Ավստրո-Յուգոսլավական և Օսմանյան կայսրությունները: Յատկանշական է՝ այս փուլում ազգերի ինքնորոշման իրավունքը հիմնականում ճանաչվում էր Եվրոպական ազգերի դեպքում: Արդյունքում Արևելյան Եվրոպայում առաջացան միշտաբնոր ինքնիշխան պետություններ՝ Ֆինլանդիան, Էստոնիան,

⁴⁴¹ Տե՛ս **DeConde Al.** (ed.), Encyclopedia of American Foreign Policy: Studies of the Principal Movements and Ideas, 2nd ed., Vol. 1, New York: Gale Group, 2002, p. 55. Տե՛ս նաև **Lynch A.**, Woodrow Wilson and the Principle of ‘National Self-Determination’: A Reconsideration. *Review of International Studies*, Vol. 28, No. 2 (Apr., 2002), pp. 419-436.

⁴⁴² Տե՛ս **The Covenant of the League of Nations** (Including Amendments adopted to December, 1924). Yale Law School, Lillian Goldman Law Library, The Avalon Project: Documents in Law, History and Diplomacy. URL: http://avalon.law.yale.edu/20th_century/leagcov.asp (08.01.2016).

⁴⁴³ Տե՛ս **Papian A.**, On the Principles of Self-Determination and So-Called “Territorial Integrity” In Public International Law (The Case of Nagorno-Karabakh). «21st Century», № 2 (8), 2010, p. 22.

⁴⁴⁴ **Toynbee A. J.**, The Armenian Atrocities: the Murder of a Nation, with a speech delivered by Lord Bryce in the House of Lords. London: Hodder & Stoughton, 1915, pp. 58-59, 70, 102, 116.

Լատվիան, Լիտվան, Լեհաստանը, Չեխոսլովակիան, Ռուկրափնան, Վրաստանը, Հայաստանը և այլք: Վիլսոնը հայտարարում էր, որ միջազգային հարաբերությունների համակարգը պետք է կառուցվի ազգերի ինքնորոշման սկզբունքի հիման վրա⁴⁴⁵, և որի անվտանգությունը պետք է կախված լինի ոչ թե ուժերի հավասարակշռությունից, այլ՝ ուժերի միավորումից և հավաքական գործողություններից⁴⁴⁶: Հատկանշական է, որ ներգրավվելով Առաջին աշխարհամարտի մեջ (1917 թ. ապրիլի 6)՝ ԱՄՆ-ը չմիացավ Անտանտի երկրներին, այլ իրեն հռչակեց նրա սոսկ ասոցիատիվ անդամ: Շնորհիվ դրա ամերիկյան կառավարությունը մի կողմից ընդգծում էր հավաքական անվտանգության հղացքը, մյուս կողմից իրավաբանորեն ազատ էր մնում միջդաշնային փոխադարձ պարտավորություններից⁴⁴⁷:

1919 թ. հունիսի 28-ին կնքվեց Վերսալի պայմանագիրը, որի բաղկացուցիչ մասն էր Ազգերի Լիգայի ստեղծման կոնվենցիան⁴⁴⁸: Ազգերի Լիգայի կանոնադրության տասներորդ հոդվածով ամրագրվում էր «արտաքին ագրեսիայից Լիգայի բոլոր անդամ պետությունների տարածքային ամբողջականության և գոյություն ունեցող քաղաքական անկախության պահպանումը»⁴⁴⁹: Ավելին, 11-րդ հոդվածը սահմանում էր, որ յուրաքանչյուր պատերազմի կամ պատերազմի սպառնալիքի դեպքում Ազգերի Լիգան պետք է համապատասխան գործողություններ նախաձեռնի **«ի պաշտպանություն և ազգերի խղճողություն»**⁴⁵⁰:

Այսպիսով, Փարիզյան կարգավորումներն արտահայտում էին **փոխհատուցման, հավաքական անվտանգության և ազգերի ինքնորոշման** սկզբունքները, սակայն հաշվի չէին առնում «եվրոպական հավասարակշռությունը»: 1919-1922 թթ. ձևավորված **Վերսալ -Վաշինգտոնյան աշխարհակարգը**, որը պարառում էր ողջ

⁴⁴⁵ Տե՛ս DeConde Al. (ed.), Encyclopedia of American Foreign Policy, Vol. 3, pp. 464-466. Վիլսոնի համար ինքնորոշումը հավասարազոր էր ժողովրդական ինքնիշխանության գաղափարին, որն արտահայտված է լատիներեն ասացվածում՝ «ժողովրդի ձայնը Աստծու ձայնն է» (*vox populi vox dei*):

⁴⁴⁶ Տե՛ս Шлезингер А., նշվ. աշխ., էջ 82:

⁴⁴⁷ Տե՛ս Богатунова А. Д. (ред.), նշվ. աշխ., էջ 35:

⁴⁴⁸ Տե՛ս Remini R. V., A Short History of the United States. New York: HarperCollins Publishers Inc., 2008, p. 203.

⁴⁴⁹ Article 10. The Covenant of the League of Nations (Including Amendments adopted to December, 1924).

⁴⁵⁰ Տե՛ս Article 11. The Covenant of the League of Nations (Including Amendments adopted to December, 1924).

մոլորակը և ըստ էության առաջին համաշխարհային աշխարհակարգն էր, գոյատևեց ընդամենը շուրջ երկու տասնամյակ:

Երկրորդ աշխարհամարտից հետո ձևավորվեց **Յաթա-Պոստդամյան աշխարհակարգը**: Այն երկբևեռ աշխարհակարգ էր, որում երկու գերտերությունները՝ Միացյալ Նահանգները և Խորհրդային Միությունը, գերիշխող դիրքեր էին զբաղեցնում և մրցակցում միմյանց հետ⁴⁵¹: Սառը պատերազմը նախ և առաջ հիմնված էր գաղափարաբանական սկզբունքների վրա. և՛ լիբերալիզմը, և՛ կոմունիզմը (համայնավարություն) համընդհանրական գաղափարներ լինելով հանդերձ միաժամանակ իրարամերժ էին⁴⁵²: Այս երկբևեռ աշխարհակարգի համար բնութագրական էր «սահմանափակ ինքնիշխանությունը». ըստ էության լիարժեք ինքնիշխան էին գրեթե միայն հակամարտ գերտերությունները: Այս առումով Յաթա-Պոստդամյան աշխարհակարգը հիմնարար մարտահրավեր էր Վեստֆալյան համակարգին⁴⁵³:

Նոր աշխարհակարգում գլխավոր միջազգային հաստատությունը դարձավ **Միավորված ազգերի կազմակերպությունը** (ՄԱԿ): Այն հիմնադրվեց 1945 թ. հոկտեմբերի 24-ին, երբ 51 հիմնադիր անդամ պետություններին մեծ մասն արդեն վավերացրել էին Կանոնադրությունը: ՄԱԿ-ը փոխարինելու եկավ Ազգերի լիգային և կոչված էր պահպանելու **«միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը**, զարգացնելու բարեկամական հարաբերություններ ազգերի միջև, նպաստելու սոցիալական առաջընթացին ու խթանելու մարդու իրավունքների պաշտպանությունը»⁴⁵⁴: Այն պետք է դառնար **«ազգերի գործողությունների համաձայնեցման կենտրոն»** այդ ընդհանուր նպատակներն իրագործելու ճանապարհին: Առաջին անգամ միջազգային կարևորագույն փաստաթղթում հիմնարար կերպով ձևակերպվեց ազգերի ինքնորոշման իրավունքը: ՄԱԿ-ի կանոնադրության առաջին հոդվածի բ. կետը հռչակում է.

⁴⁵¹ Տե՛ս **Baylis J. and Smith S.** (ed.), *The Globalization of World Politics: An Introduction to International Relations*, 2nd edition. New York: Oxford University Press, 2001, pp. 74-77.

⁴⁵² Տե՛ս **Kennedy P. M.**, *The Rise and Fall of the Great Powers: Economic Change and Military Conflict from 1500 to 2000*. London, Sydney and Wellington: Unwin Hyman, 1988, pp. 365, 372.

⁴⁵³ Տե՛ս **Karpovich O.**, *Global Governance: Past, Present and Future*. Bloomington: AuthorHouse, 2013, p. 106.

⁴⁵⁴ Տե՛ս **Baylis J. and Smith S.** (ed.), նշվ. աշխ., էջ 332-335:

«Չարգացնել ազգերի բարեկամական հարաբերություններ՝ հիմնված **ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի** (the principle of equal rights and self-determination of peoples) հարգանքի վրա և այլ համապատասխան միջոցներ ձեռնարկել հանուն համընդհանուր խաղաղության ամրապնդման»⁴⁵⁵: Ուստի ազգերի ինքնորոշման իրավունքը համարվում է բարեկամական հարաբերությունների և համընդհանուր խաղաղության հիմքերից մեկը⁴⁵⁶: Այսպիսով, թեև ինքնորոշումը որպես գաղափար և սկզբունք ունի երկարատև պատմություն, այնուամենայնիվ, ինքնորոշումը որպես միջազգային իրավունք համեմատաբար նոր ծագում ունի:

Հատկանշական է՝ Կանոնադրության երկրորդ հոդվածի ա. կետը բոլոր անդամ պետությունների համար շեշտում է նաև **«ինքնիշխան հավասարություն»** (sovereign equality) վեստֆալյան սկզբունքը: Նկատելի է, որ այս դրույթը շեշտվում էր «սահմանափակ ինքնիշխանության» պայմաններում: Ըստ էության ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի հինգ մշտական անդամներն «ավելի ինքնիշխան» էին քան մյուսները: Իսկ երկրորդ հոդվածի դ. կետը հռչակում է միմիայն հետևյալը. «Բոլոր անդամները միջազգային հարաբերություններում պետք է ձեռնպահ մնան որևէ պետության տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության դեմ ուժի կիրառումից կամ դրա սպառնալիքից կամ Միավորված ազգերի նպատակներին անհամապատասխան որևէ այլ քայլերից»⁴⁵⁷: Այն հայտ է, որ այս հիմնադրույթը չի բացարձակեցնում **«տարածքային ամբողջականություն»** սկզբունքը: Այն պարզապես մերժում է արտաքին ագրեսիան կամ ռազմական ներխուժումը և հանդիսանում է **«ուժի գործադրման արգելք»**՝ կոչ անելով ձեռնպահ մնալ ուժի գործադրման միջոցով մեկ այլ պետություն կամ այլ պետությանը

⁴⁵⁵ Chapter I. Purposes and Principles, Article 1(2) - **Charter of the United Nations and Statute of the International Court of Justice**. San Francisco, 1945, pp. 2-3.

⁴⁵⁶ ՄԱԿ-ի կանոնադրության 24-րդ հոդվածի 2-րդ կետը ամրագրում է, որ «Անվտանգության խորհուրդը պետք է գործի Միավորված ազգերի նպատակներին և սկզբունքներին համահունչ»: Տե՛ս Chapter V. The Security Council, Functions and Powers, Article 24(2) - **Charter of the United Nations and Statute of the International Court of Justice**. San Francisco, 1945, p. 7.

⁴⁵⁷ Chapter I. Purposes and Principles, Article 2(1) - **Charter of the United Nations and Statute of the International Court of Justice**. San Francisco, 1945, p. 3.

պատկանող տարածք նվաճելուց կամ նրա կառավարությունը տապալելուց⁴⁵⁸:

Եվրոպայում աշխարհակարգի հիմնարար սկզբունքների վերանայման կամ վերահաստատման հաջորդ կարևոր գործընթացը սկսվեց 1973 թ. իբրև **«Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդաժողով»** (ԵԱՅԽ): Երկու տարվա խորհրդակցություններից հետո 1975 թ. հունիսին ԵԱՅԽ-ն ՅԵԼՍԻՆԿԻՈՒՄ արձանագրեց եզրափակիչ արդյունքները: Այն նպատակաուղղված էր թուլացնելու Սառը պատերազմի վարվածությունը և մերձեցնելու կողմերին ընդհանուր արժեքների շուրջ: 1975 թ. օգոստոսի 1-ին ստորագրվեց ՅԵԼՍԻՆԿԻԻ եզրափակիչ ակտը (Helsinki Final Act)⁴⁵⁹: Այս կերպ ԵԱՅԽ մասնակից պետությունները հռչակագիր ընդունեցին իրենց միջև հարաբերությունները ղեկավարող սկզբունքների մասին⁴⁶⁰:

ՅԵԼՍԻՆԿԻԱՆ ԵԶՐԱՓԱԿԻՋ ԱԿՏԻ ԿԻՄՆԱՐԱՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ԵՆ՝ ա ինքնիշխան հավասարություն, ինքնիշխանությանը հատուկ իրավունքների հարգում, **բ.** ուժ կամ ուժի սպառնալիք չկիրառելը, **գ.** սահմանների անխախտելիություն, **դ.** պետությունների տարածքային ամբողջականություն, **ե.** վեճերի խաղաղ կարգավորում, **զ.** ներքին գործերին չմիջամտելը, **է.** մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգում՝ ներառյալ մտքի, խղճի, կրոնի կամ դավանանքի ազատությունը, **ը.** ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման իրավունքներ, **թ.** պետությունների համագործակցություն, **ժ.** միջազգային

⁴⁵⁸ Տե՛ս Papiian A., նշվ. աշխ., էջ 21:

⁴⁵⁹ Ակտի ստորագրմամբ մեկնարկեց դրանում ամրագրված սկզբունքների և հանձնառությունների խթանման գործընթացը՝ «ՅԵԼՍԻՆԿԻԱՆ գործընթացը»: Յայաստանը միացավ ԵԱՅԽ-ին 1992 թ.՝ անմիջապես իր անկախության հռչակումից հետո: 1994 թ. դեկտեմբերի Բուդապեշտի գագաթնաժողովում, հիմքում ունենալով անվտանգության ընդգրկուն հայեցակարգ, ԵԱՅԽ-ն անվանափոխվեց ԵԱՅԽ՝ «Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության» (Organization for Security and Co-operation in Europe (OSCE)): 1975 թ. ԵԱՅԽ մասնակից պետությունները 35-ն էին՝ ԱՄՆ-ը, Կանադան, բոլոր եվրոպական պետությունները բացի Ալբանիայից: Այժմ ԵԱՅԽ մասնակից պետությունները 57-ն են՝ ընդգրկելով գրեթե ողջ ՅՆՍԻՍԱՅԻՆ կիսագունդը՝ Վանկուվերից մինչև Վլադիվոստոկ: Տե՛ս **Organization for Security and Co-operation in Europe (OSCE): History. Official website, URL: <http://www.osce.org/history>** (10.07.2016).

⁴⁶⁰ Տե՛ս **Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդաժողով. Եզրափակիչ ակտ ՅԵԼՍԻՆԿԻ 1975:** Յայ երես թարգմանության նույնականությունը հաստատվել է ՅՅ արտգործնախարարության կողմից: Երևան, ՅՅ ԱԳՆ, 2005, էջ 4-10:

իրավունքով ստանձնած պարտավորությունների բարեխիղճ կատարում⁴⁶¹:

Մասնավորապես, Յել սինկիի եզրափակիչ ակտի ը.՝ «ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման իրավունքներ», կետում սահմանվում է. «Մասնակից պետությունները կհարգեն ժողովուրդների իրավահավասարությունը և ինքնորոշման իրավունքը՝ մշտապես գործելով ըստ ՄԱԿ-ի կանոնադրության նպատակների ու սկզբունքների և միջազգային իրավունքի համապատասխան նորմերի՝ ներառյալ նրանք, որոնք վերաբերում են պետությունների տարածքային ամբողջականությանը: Ելնելով ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման իրավունքի սկզբունքից՝ բոլոր ժողովուրդները միշտ իրավունք ունեն լիակատար ազատության պայմաններում, երբ և ինչպես նրանք ցանկանում են, որոշել իրենց ներքին ու արտաքին քաղաքական կարգավիճակը՝ առանց արտաքին միջամտության, և սեփական հայեցողությամբ իրականացնել իրենց քաղաքական, տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումը: Մասնակից պետությունները վերահաստատում են ժողովուրդների իրավահավասարության և նրանց ինքնորոշման իրավունքի հարգման և արդյունավետ իրականացման համընդհանուր նշանակությունը՝ նրանց միջև, ինչպես նաև բոլոր պետությունների միջև բարեկամական հարաբերություններ զարգացնելու համար. նրանք նաև ընդժուլմ են այդ սկզբունքի խախտման ցանկացած ձևը վերացնելու կարևորությունը»⁴⁶²:

Այսպիսով, **Ազգերի ինքնորոշման գաղափարը, ձևավորվելով իբրև իմաստահարական հղացք և ապա վերախիղճվելով քաղաքական հայեցակարգի, 20-րդ դարում վերաճեց միջազգային հիմնարար իրավունքի:** Աստիճանաբար զարգանալով՝ այն վեր է ածվել մարդու իրավունքների հիմնահարցի⁴⁶³: Ինչպես վերը քննարկեցինք՝ տարածքային ամբողջականության պահպանությանն էին վերաբերվում Ազգերի լիգայի կանոնադրության տասներորդ հոդվածը, ՄԱԿ-ի կանոնադրության երկրորդ հոդվածի դ. կետն ու Յել սինկիի եզրափակիչ ակտի գ. և դ. կետերը: Միանգամայն պարզ է, որ բոլոր այս միջազգային հիմնարար փաստաթղթերը դատապարտում են միայն միջամտությունը, ներխուժումը, արտաքին ագրեսիան, արտաքին ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառումը պետության տարածքային ամբողջականության դեմ և երբեք չեն բացարձակեցրել պետությունների տարածքային ամբողջականությունը⁴⁶⁴: Այլ որե՛ն՝ տարածքային ամբողջականությունն իբրև հիմնարար սկզբունք

⁴⁶¹ Տե՛ս նույն տեղում, էջ 11-16:

⁴⁶² Տե՛ս նույն տեղում, էջ 15:

⁴⁶³ Տե՛ս Papias A., նշվ. աշխ., էջ 25-26:

⁴⁶⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 32-33: Տե՛ս նաև **Պայան Ա.**, Հայրենասիրություն. Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները և հարակից հարցեր (հոդվածների ժողովածու): Երևան: Մոդուս վիվենդի կենտրոն, 2012, էջ 51-60:

ձևակերպվել է արտաքին ազրե սիայից պետության ներքին ապահովագրման համար և չի հակասում կամ սահմանափակում ազգերի ինքնորոշման իրավունքին:

«Ժողովուրդների ինքնորոշում» և «պետության ներքին տարածքային ամբողջականություն» հղացքները հաճախ են գործածվում Արցախյան հակամարտության կապակցությամբ⁴⁶⁵: Չամաձայն գործող միջազգային իրավունքի՝ միջազգային հանրությանը գտնվում է իրավական և բարոյական պատասխանատվության ներքո՝ ճանաչելու Արցախի ժողովրդի ինքնորոշումը⁴⁶⁶: Բացի այդ Արցախի Չանրապետության անկախության տարիների ընթացքում կայացել է որպես փաստացի (de facto) պետություն⁴⁶⁷: Ավելի ն, 2003 թվականից սկսած «Ֆրիդոմ Հաուս» (Freedom House) միջազգային հեղինակավոր կազմակերպության կողմից ժողովրդավարության, քաղաքացիական իրավունքների և ազատության ներքին բնագավառում այն մշտապես ճանաչվել է առաջատար Ադրբեյջանից, նաև տարածաշրջանի այլ պետություններից⁴⁶⁸:

2002 թ. ինքնորոշման իրավունքի կիրառմամբ 21-րդ դարի առաջին նորաստեղծ պետությունը դարձավ Արևելյան Թիմորը՝ անկախանալով Ինդոնեզիայից և դառնալով ՄԱԿ-ի անդամ⁴⁶⁹:

Այդուհանդերձ, միջազգային հանրության առաջատար տերությունները, ելնելով աշխարհաքաղաքական

⁴⁶⁵ Տե՛ս **Kotcharian Ch.**, Perceptions arméniennes: Pourquoi le conflit du Haut-Karabagh n'est toujours pas réglé? Prévention des crises et promotion de la paix (Vol.III), Ed. Jean-Pierre Vettovaglia. Déterminants des conflits et nouvelles formes de prévention, Bruylant, septembre 2013, pp. 569-593. Տե՛ս նաև **Գալ սոյան Խ**, Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հեռանկարները. «21-րդ ԴԱՐ», թիվ 4 (10), 2005, էջ 64-69: Տե՛ս նաև **Թորոսյան Ս. Ս.**, Ինքնորոշման իրավունքի կարգավիճակը, կիրառման չափանիշներն ու պայմանները. Լրաբեր Չասարակական Գիտությունների, № 1, 2008, էջ 18-37:

⁴⁶⁶ Տե՛ս **Papian A.**, նշվ. աշխ., էջ 35-36: Տե՛ս նաև **De Waal T.**, Black Garden: Armenia and Azerbaijan through Peace and War. New York and London: New York University Press, 2003, pp. 237-240.

⁴⁶⁷ Տե՛ս **Kolsto P., Blakkisrud H.**, De facto States and Democracy: The case of Nagorno-Karabakh. *Communist and Post-Communist Studies*, Vol.45, Issues 1–2, March–June 2012, pp. 141–151. Տե՛ս նաև **Nalbandian E.**, Nagorno-Karabakh: Is A Solution Visible? *Politique Internationale*, N-146, winter 2014-2015, RA MFA Official website (10.01.2015), pp. 1-11. Տե՛ս **Avakian Sh.**, Nagorno Karabagh: Legal Aspects, 4th Edition. Yerevan: Tigran Mets Publishing House, 2013, pp. 33-38. Տե՛ս նաև **Yepremyan T.**, Nagorno-Karabakh in the Eastern European Security Complex. *New Eastern Europe Magazine: Articles and Commentary*, Published on Wednesday, 06 April 2016 09:16, <http://neweasterneurope.eu/articles-and-commentary/1944-nagorno-karabakh-in-the-eastern-european-security-complex> (10.01.2017).

⁴⁶⁸ Տե՛ս **Freedom in the World 2015: Nagorno-Karabakh**. Freedom House, URL: <https://freedomhouse.org/report/freedom-world/2015/nagorno-karabakh> (10.01.2015).

⁴⁶⁹ Տե՛ս **Council endorses proposal to declare East Timor's Independence 20 May 2002**. *United Nations* (Press release). Security Council. 31 October 2001. URL: <http://www.un.org/press/en/2001/sc7192.doc.htm> (14.01.2017).

նպատակահարմարությունն է, երբեմն կիրառում են երկակի ստանդարտներ: Այս կերպ 2008 թ. ԱՄՆ-ը և ԵՄ մի շարք երկրներ ճանաչեցին Կոսովոյի ինքնորոշումը, Ռուսաստանը ճանաչեց Աբխազիան ու Չարապային Օսիան և 2014 թ. ինքնորոշման իրավունքի կիրառմամբ միացրեց Ղրիմը, իսկ Արցախի ժողովրդի ինքնորոշման փաստի ճանաչումը դեռևս մնում է առկախված⁴⁷⁰: Ազգերի ինքնորոշման իրավունքի իրացման և ճանաչման վերջին ցայտուն նախադեպ կարելի է համարել նաև 2014 թ. սեպտեմբերի 18-ի Շոտլանդիայի անկախության հանրաքվեն և ժողովրդավարական հանրաքվեով անկախության մերժումը⁴⁷¹:

3.3 ԵՎՐՈՊԱՅԻ ՄԻԱՆՈՒԹՅԱՆ ԳՐՈՏԻՈՒ ՍՅԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Եվրոպայի միասնության գաղափարների պատմության վերաբերյալ բազմաթիվ աշխատություններ են գրվել՝ գերազանցապես հիմք ընդունելով լուսավորականության դարաշրջանի մտածողներին: Հետազոտողների կողմից գրեթե անտեսվել է **եվրոպական միասնության մասին Յ. Գրոտիուսի գաղափարները**: Սույն ենթագլխում մենք ցույց կտանք, որ եվրոպական միասնության արդի գաղափարների հիմքերը առկա էին դեռևս Գրոտիուսի մոտ: Ըստ այդմ՝ նրա արտահայտած տարբեր գաղափարներից ցանկանում ենք հատկանշել **ինքնիշխան ազգերի եվրոպական համայնք** հղացքը, ինչը կարելի է անվանել **եվրոպայի միասնության Գրոտիուսյան սեսլական**: Այնուհետև կներկայացնենք եվրոպայի միասնության գաղափարի հետագա զարգացումները:

Եվրոպայի առաջին և գրեթե ամբողջական միավորումը կապված էր Հռոմեական կայսրության հետ: Արևմուտքում բարբարոսների հետ հակամարտության արդյունքում կայսրության անկումն ու սկսված «մոլթ» դարաշրջանն ավարտվեց Ֆրանկական միապետության գերակայությանը: Հավատար, որ «հռոմեական խաղաղության նր» (Pax Romana) Արևմտյան եվրոպայում վերականգնվելու է Կառլոս Մեծի (768-814 թթ.) կողմից: Սակայն Սրբազան հռոմեական կայսրությունը (800-1806 թթ.) երբեք չկարողացավ վերականգնել Հռոմի իշխանությունն ու «հռոմեական խաղաղության նր»: Ընդհանրական

⁴⁷⁰ Տե՛ս **Եվրոպայի S.**, Ազգերի ինքնորոշման իրավունքի պատմական հետազոտություն՝ Վեստֆալյան խաղաղությունից մինչև Արցախյան հիմնահարց: ՎԷՄ համահայկական հանդես, Ը(ԺԴ) տարի, թիվ 4 (56), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2016, էջ 9-32:

⁴⁷¹ Տե՛ս **Scotland Votes No**: Scotland has voted against becoming an independent country by 55% to 45%. *BBC News*, URL: <http://www.bbc.com/news/events/scotland-decides/results> (11.08.2016).

կայ սրու թյան այս փորձառությունը ձախողվեց հատկապես Ռեֆորմացիայի արդյունքում առաջացած կրոնական հակամարտության և ազգային միապետությունների վերելքի համապատկերում⁴⁷²:

Ա. Գրոտիուսյան տեսլականը: Ինչպես բազմիցս անդրադարձել ենք, 15-17-րդ դարերում Արևմտյան քրիստոնեական աշխարհի ընդհանրական աստիճանակարգված կառույցը ապամիասնականացման, իսկ արդի պետութայնությունները ձևակերպման գործընթացում էին: Եվ ժամանակի մտածողները փորձում էին նախանշել այլ ընտրանքի ուղին: Այս խնդրում հատկապես առանձնացան մի խումբ մտածողներ, որոնք հանդես էին գալիս բնական իրավունքի տեսության դիրքերից՝ իրավաչափ համարելով առանձին արքաների և իշխանների ներքին ու արտաքին ինքնիշխանության նկրտումները: Այստեղ առանցքային դեր ունեցավ Յ. Գրոտիուսը: Ըստ նրա՝ բնական իրավունքը պայմանավորված է **«մարդկության ողջ պտհության»** (common sense of mankind), որը գործում է քաղաքակիրթ ազգերի շրջանում⁴⁷³: Բնական իրավունքի այս ժամանակաշրջանի ջատագովներից էին նաև Վիկտորիան, Սուարեսը, Ջենտիլիեն և Պուֆենդորֆը: Եվրոպական միջազգային հանրությունը նրանք ընկալում էին նախ և առաջ քրիստոնեական արժեքների համատեքստում: Այս մտածողներից ոչ ոք չէր ընդունում, թե քրիստոնեական պետությունների հարաբերությունները նույն հարթությունում էին գտնվում, ինչ նրանց հարաբերությունները ոչ քրիստոնեա պետությունների հետ: Թեպետ ըստ Գրոտիուսի **«ողջ մարդկության լայն շրջանակը»** կապակցված էր բնական իրավունքի սկզբունքներով, այնուամենայնիվ, նրա համար գոյություն ունեցող նաև **Քրիստոնեական աշխարհի ավելի նեղ շրջանակը**՝ կապակցված աստվածային օրենքներով, քրիստոնեական արժեքներով և ազգերի դրական իրավունքով⁴⁷⁴:

Գրոտիուսն իր աշխատություններում ընդամենը մի քանի անգամ է օգտագործում **«Եվրոպա»** եզրույթը և գրեթե ոչ մի անգամ առանձնահատուկ կերպով չի անդրադառնում Եվրոպային որպես քաղաքական միավորի: Նկատելի է, որ **Գրոտիուսի համար Եվրոպան իբրև քաղաքակրթական ընդհանրություն ու քաղաքական միավոր նախ և**

⁴⁷² Տե՛ս Hill D. J., նշվ. աշխ., էջ 2-3:

⁴⁷³ Տե՛ս Grotius H. (1625), The Rights of War and Peace, p. 24.

⁴⁷⁴ Տե՛ս Bull H., նշվ. աշխ., էջ 26-27:

առաջ «Քրիստոնեական աշխարհն» ⁴⁷⁵: Իսկ նրա մշակած միջազգային իրավունքի համակարգը առաջին հերթին վերաբերում էր քրիստոնյա ազգերին:

Արդեն անդրադարձել ենք, որ միջնադարյան վերազգային ընդհանրականության փլուզման պայմաններում պապականության փոխարեն համաեվրոպական հիմնախնդիրների կարգավորման համար նոր հաստատության ներքին կարիք առաջացավ: Գրոտիուսը գտնում էր, որ միջազգային ընկերային հարաբերությունների կարգավորումը աշխարհակարգի ամենահիմնարար խնդիրներից է, քանզի այն խորապես ազդում է բոլոր տեսակի մյուս ընկերային հարաբերությունների վրա. եթե մարդիկ մտադրված են ոչնչացնելու կամ նվաճելու միմյանց, նրանք չեն համագործակցի առևտրի կամ այլ բնագավառներում⁴⁷⁶: Ազգերի շրջանում վեճերի լուծման կարգավորիչ դերը պատկանում է ազգերի իրավունքին, որի իշխանությունը բխում է ազգերի հանրույթի հավաքական կամքից⁴⁷⁷:

Մեր դիտարկմամբ՝ ինքնիշխան ազգերի եվրոպական համակարգի ձևակերպման և կենսագործունեության համար կառուցիկ դեր ունեցան Գրոտիուսի առաջարկած երկու⁴⁷⁸ հիմնական մեթոդները, որոնցով անկախ ազգերը կարող էին կարգավորել իրենց վեճերն ու համաեվրոպական հիմնախնդիրները առանց դիմելու պատերազմի իրավունքին:

Առաջին մեթոդը խորհրդաժողովն (conference) է: Ըստ դրա՝ հակամարտությունները պետք է լուծվեն բանակցային ճանապարհով և փոխզիջման միջոցով⁴⁷⁹: Փոխզիջում (compromise) պետք է կայանա նրանց միջև, ովքեր չունեն ընդհանուր դատավոր: Վեճերի լուծման և հավակնությունների ու ուժերի հավասարակշռման այս եղանակը Գրոտիուսը համարում է պատշաճ միջոց քրիստոնյա թագավորների և պետությունների համար⁴⁸⁰: Ի հավելումն, կողմերին խորհուրդ է տրվում փոխզիջումը հղել չեզոք իրավարարի, որի

⁴⁷⁵ Տե՛ս Clark I., նշվ. աշխ., էջ 66:

⁴⁷⁶ Տե՛ս Wendt A., Social Theory of International Politics, p. 8.

⁴⁷⁷ Տե՛ս Grotius H. (1625), The Rights of War and Peace, p. 25.

⁴⁷⁸ Հակամարտությունները խաղաղ ճանապարհով լուծելու Գրոտիուսի առաջարկած երրորդ մեթոդը վիճակահանությունն էր, որը լայն կիրառում ունեցրեց հին աշխարհում: Տե՛ս նույն տեղում, էջ 277:

⁴⁷⁹ Տե՛ս Grotius H. (1625), The Rights of War and Peace, p. 276.

⁴⁸⁰ Տե՛ս նույն տեղում:

պարկեշտութեանը կարելի է վստահել: Թեպետ քաղաքացիական իրավունքը թույլ է տալիս ներազդել իրավարարների գործունեության վրա կամ բողոքարկել նրանց ընդունած անարդար վճիռները, այս մեթոդը չէր կարող գործել թագավորների կամ ազգերի միջև իրավարարության դեպքում: Քանզի այստեղ չկար գերագույն իշխանություն, որը կարողանար պարտադրել կամ հանդարտեցնել կողմերին: Այդ իսկ պատճառով Գրոտիուսը սահմանում էր, որ միջազգային «**իրավարար վճիռները պետք է լինեն վերջնական և անբեկանելի**»⁴⁸¹: Իրավարարության պետք էր դիմել իրավարար վճռին ենթարկվելու փոխադարձ համաձայնությունն ից հետո՝ անկախ այդ վճռի արդար կամ անարդար լինելուց: Ազնիվ իրավարարության առաջարկը մերժելու դեպքում բոլոր մյուս միապետներն ու ազգերը իրավունք ունեին իրենց համակցված ռեսուրսներով ճնշում գործադրելու խաղաղության առաջարկը մերժողի նկատմամբ իբրև բոլորի թշնամու⁴⁸²: Ընդգծենք, որ այս մեթոդն արդի միջնորդական առաքելության գործառույթի նախորինակն է:

Գրոտիուսը, բացահայտելով հասարակական իրողության համակցական բնույթի անխուսափելիությունը և հղում կատարելով Սենեկային, գրում է.

«Մարդկային մարմնի բոլոր անդամները համաձայնում են միմյանց, քանզի յուրաքանչյուրի պահպանումը նպաստում է ամբողջի բարօրությանը, այնպես որ մարդիկ պետք է զգուշանան փոխադարձ վնասներից, քանզի նրանք ծնվել են հասարակության համար, որը չի կարող ասրել, քանի դեռ իր բոլոր մասերը պաշտպանված չեն փոխադարձ զսպվածությամբ և բարի կամքով: Բայց քանի որ գոյություն ունի մի տեսակի ընկերային կապ՝ հիմնված հավասարության վրա, օրինակ՝ եղբայրների, քաղաքացիների, ընկերների, դաշնակիցների միջև, և այլ՝ հիմնված գերակայության վրա, ինչպես Արիստոտելն է դասակարգում, այն գոյություն ունի ծնողների և երեխաների, տերերի և ծառաների, ինքնիշխանների և հպատակների, Աստծո և մարդկանց միջև: Այսպես, արդարությունը

⁴⁸¹ Նույն տեղում, էջ 398:

⁴⁸² Տե՛ս **Grotius H.** (1608), *The Freedom of the Seas*, p. 6. Հետագայում միջազգային դատարանների (տրիբունալ) ստեղծումը, որոնք վճիռ են կայացնում համաձայն գործող միջազգային իրավունքի, հիմնված էր Գրոտիուսի այս առաջարկի վրա: Պետությունների միջև ծագած վեճերը չեզոք իրավարարի վճռով լուծելու Գրոտիուսյան գաղափարն իր արտահայտությունը գտավ Ազգերի լիգայի կանոնադրության 12-րդ և 13-րդ հոդվածներում: Այն կիրառվեց նաև Հայաստան-Թուրքիա սահմանի վերաբերյալ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի տեսքով: Տե՛ս **ARTICLE 12-13. The Covenant of the League of Nations** (Including Amendments adopted to December, 1924). Yale Law School, Lillian Goldman Law Library, The Avalon Project: Documents in Law, History and Diplomacy. URL: http://avalon.law.yale.edu/20th_century/leagcov.asp (08.01.2016).

իրականանում է կամ հավասարների շրջանում, կամ կառավարողների և կառավարվողների միջև՝ անկախ իրենց աստիճանի տարբերությունից: Սրանցից նախորդը, եթե ես չեմ սխալվում, կարելի է կոչել հավասարության իրավունք, և հաջորդը՝ ավագության իրավունք»⁴⁸³:

Երկրորդ մեթոդը քրիստոնյա պետությունների ընդհանուր կոնգրեսների (general congresses of Christian powers) գումարումն է՝ կոչված կարգաբերելու համաեվրոպական հարաբերությունները⁴⁸⁴: Այս կոնգրեսները համաեվրոպական մակարդակում պետք է կատարեին միապետների կամ ազգերի սենատի դեր՝ կարգաբերելով նրանց շահերի բազմազանությունը և նպաստելով հարատև ու արդար խաղաղության պահպանմանը: Քրիստոնեական աշխարհի կառավարիչները համաեվրոպական կոնգրեսներում պետք է հիմնվեին բարի կամքի, փոխզիջման ձգտումի, հավաքական անվտանգության և իրենց ուժերը հավասարակշռելու անհրաժեշտության գիտակցումի վրա: «**Քրիստոնեական աշխարհի կառավարիչներին և ազատ ու անկախ ազգերին**»⁴⁸⁵ ուղղված իր ուղերձում Գրոտիուսը գրում է. «Եթե որևէ մեկը ըմբոստանում է օրենքի և կարգի այս սկզբունքների դեմ, դուք իրավասու եք վրդովվելու և, անգամ, այդ իրավախախտմանը համապատասխան պատիժներ վճռելու: Եթե թագավորը թագավորի դեմ անարդարացիորեն և բռնությամբ է գործում, և ազգը ազգի, նման գործողությունը հանգեցնում է **ընդհանրական պետության** (universal state, [Քրիստոնեական աշխարհի]) խաղաղության խաթարմանը...»⁴⁸⁶: **Ուստի, կարող ենք ձևակերպել, որ եվրոպական աշխարհակարգի Գրոտիուսյան հարացույցը հիմնված է ինքնիշխան ազգերի համայնքի կազմակերպման վրա**

Ընդհանուր արժեքները որպես կանոնի գորու են կարգավորել աշխարհակարգի ընկերային խնդիրները, բայց երբեմն անկարող են այդ անել քաղաքական խնդիրների նկատմամբ⁴⁸⁷: Յատկանշական է՝ Երեսնամյա պատերազմի ընթացքում **Եվրոպան որպես քաղաքական միավոր և հղացք** սկսեց ավելի ու ավելի շատ վկայակոչվել

⁴⁸³ Grotius H. (1625), The Rights of War and Peace, p. 19.

⁴⁸⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 277:

⁴⁸⁵ «Քրիստոնեական աշխարհի կառավարիչներին և ազատ ու անկախ ազգերին» Յուզոն Գրոտիուսի ուղերձը տե՛ս հավելված 2, էջ VII-VIII:

⁴⁸⁶ Grotius H. (1608), The Freedom of the Seas, p. 3.

⁴⁸⁷ Տե՛ս Wendt A., Social Theory of International Politics, pp. 254-255.

դիվանագիտական քարոզչության մեջ: Ռիշելիեն պնդում էր, որ Յաքսբուրգների գերիշխանությունն իր պաշտպանելու է ոչ միայն գերմանական իշխանությունների ազատությունները, այլև Եվրոպան⁴⁸⁸: Թեպետ իրավագետների խոսույթում *ազգերի իրավունքի* շուրջ դեռևս գերակշռում էին հռոմեական կամ Յին Կտակարանի նախադեպերը: Սակայն հանգամանքներն այլևս աննպաստ էին, քանզի Կայսրությունը և պապականությունը իբրև համընդհանրական վերազգային հաստատություններ փաստորեն դադարեցին գործել: Իլրումն այս նոր իրադրության՝ Գրոտիուսը նախագծեց անցումը ազգերի իրավունքից միջազգային իրավունքին (*jus gentium* → *jus inter gentes*)⁴⁸⁹: Նա ձգտում էր ցույց տալ, որ այս նոր իրավիճակում պետությունների շահերից է բխում օրենքի գերակայությունը, քանզի իրենց գոյության համար անհրաժեշտ է կազմակերպված **ազգերի համայնք**⁴⁹⁰:

Ավելին, Գրոտիուսը մատնանշում է **մարդկության ընդհանուր շահերի** գոյությունը, որը կապակցված է բնական օրենքներով (*sufficit humanae naturae communio*): Այս հիմքով պայմանագրային հարաբերությունները ոչ քրիստոնյա ազգերի կամ պետությունների հետ ևս օրինական էին համարվում: Քանզի գոյություն ունի **«ազգերի միջև համակեցական դաշինք»** (*mutua gentium inter se societas*), այն է՝ **«մարդկային հասարակությունների համայնք»** (*communis societas generis humani*): Թեպետ, ըստ հեղինակի, մարդկության մեծ համայնքում կամի մասնավոր շրջան, որը միավորում է քրիստոնյա

⁴⁸⁸ Տե՛ս **Cooper J. P.** (ed.), նշվ. աշխ., էջ 5-6: Այդուհանդերձ, պետք է նկատի ունենալ, որ Ռիշելիեն պաշտպանում էր այս գաղափարը Գերմանիայի մասնատվածությունը ապահովելու և Եվրոպայում Ֆրանսիայի գերիշխանության ճանապարհին հակակշիռներից ձերբազատվելու նպատակով:

⁴⁸⁹ Անցումն ավարտվեց, երբ «ազգերի իրավունք» եզրույթն իր տեղը զիջեց «միջազգային իրավունք» եզրույթին, որը ձևակերպվեց 1789 թ. բրիտանացի նշանավոր իրավագետ Երեմիա Բենթամի կողմից: Տե՛ս **Bull H.**, նշվ. աշխ., էջ 34:

⁴⁹⁰ Ընդգծելով հավաքական ինքնության իրողությունը՝ Գրոտիուսը պնդում էր. «Նրանց կարծիքը, ովքեր մտածում են, թե ընկերությունը ծագում է միայն անհրաժեշտությունից, իբրև կեղծ մերժված է ավելի ողջամիտ իմաստասերների կողմից, քանզի մենք գգում ենք ինքնաբուխ և բնական հակում դեպի ընկերային հարաբերությունը: Գթությունը հաճախ հորդորում է և որոշ դեպքերում պատվիրում մեզ նախընտրել ընդհանուր բարիքը մեր անհատական օգուտից»: Պետությունները պետք է ունենան հավասար իրավունքներ, նույնիսկ եթե նրանք չունեն դրանք պաշտպանելու հավասար ուժեր: Այս սկզբունքները նպաստեցին ազգերի եվրոպական համայնքի զարգացմանը: Իսկ Վեստֆալյան խաղաղությունը ուղեշեջեց անցումը քրիստոնեական աշխարհից Եվրոպային: Տե՛ս **Grotius H.** (1625), *The Rights of War and Peace*, p. 80. Տե՛ս **Wendt A.**, *Social Theory of International Politics*, p. 106. Տե՛ս **Cooper J. P.** (ed.), նշվ. աշխ., էջ 6: Տե՛ս **Wight M.**, *Systems of States*. Edited with an introduction by Hedley Bull. Bristol: Leicester University Press, 1977, p. 113.

ազգերին: Եվ այս սկզբունքը վերաբերվում է ինչպես անհատներին, այնպես էլ ժողովուրդներին ու թագավորներին⁴⁹¹:

Գրոտիուսը նկատում է, որ բոլոր քրիստոնյա ազգերն ու հանրային իշխանության մեծությամբ միապետները համարվում են **«մեկ մարմնի անդամներ»** և, հետևաբար, պարտավոր են զգալու միմյանց հոգսերը: Նա գրում է. «Եվ որոշ դեպքերում ոչ բարեպաշտ թշնամու սպառնալիքին կարող է դիմակայել միայն **քրիստոնյա թագավորների և կառավարության ներքին հաստատուն դաշինքը**»⁴⁹²: Ըստ Գրոտիուսի՝ «...երբ երկու տարբեր ազգեր միավորվում են, նրանց՝ իբրև առանձին պետությունների իրավունքները չեն կորսվի, այլ կփոխկապակցվեն միմյանց: Նույն դատողությունը վերաբերում է այն պետություններին, որոնք միավորված են, ոչ թե դաշնային միության մեջ, այլ ունեն մեկ ինքնիշխան տիրակալ իբրև իրենց ղեկավար»⁴⁹³:

Գրոտիուսն առանձնացնում է ազգերի իրավունքը բնական իրավունքից: Ըստ նրա, եթե բնական իրավունքն ընդհանուր է ողջ մարդկության համար, ապա ազգերի իրավունքը գործում է կամ կարող է գերակայել աշխարհի միայն որոշակի մասերում, քանզի բխում է ազգերի կամքից: Մտածողը նաև նկատում է, որ **որոշ ժողովուրդների միջև դաշինքը** (foedus) կարող է ստեղծել **ավելի կոռու հասարակություն, քան մարդկության մեծ համայնքն է**⁴⁹⁴: Հենց այս դեպքում է նա օգտագործում **«համակարգ»** (systema) բառը. «Այնպես կարող է պատահել, որ շատ պետություններ կարող են կապված լինել սերտագույն դաշնային միության մեջ, որը Ստրաբոնն անվանում է **համակարգ, թեև յուրաքանչյուրը պահպանում է մասնակի պետության կատարյալ կարգավիճակը**»⁴⁹⁵:

Սրան գուցե ընթաց նաև նկատում է, որ կարող է պատահել, որ մի շարք ժողովուրդներ ունենան մեկ գլուխ, չնայած այն հանգամանքին, որ այդ ժողովուրդներից յուրաքանչյուրը առանձին

⁴⁹¹ Տե՛ս **Wight M.**, *Systems of States*, pp. 126-127. Ըստ Գրոտիուսի՝ քրիստոնյաների միջև կապն ավելի սերտ է և ավելի ամուր քան հին հույներից ու հին հունական քաղաք-պետությունների համակարգը: Թեև Ամփիկտոնյան համաձայնությունը հին հունական քաղաք-պետությունների պարտավորեցնում էր, որ ոչ մի հունական քաղաք չպետք է ավերվի իրենց վարած պատերազմներում:

⁴⁹² **Grotius H.** (1625), *The Rights of War and Peace*, pp. 172-173.

⁴⁹³ Նույն տեղում, էջ 121:

⁴⁹⁴ Տե՛ս **Wight M.**, *Systems of States*, pp. 127-128.

⁴⁹⁵ **Grotius H.** (1625), *The Rights of War and Peace*, p. 62.

կազմում է կատարյալ համայնք: Այստեղ հեղինակը հավանաբար նկատի ունի «ինքնիշխանությունների այն փուլը», որը գտնվում էր Յաբսբուրգների իշխանության ներքո⁴⁹⁶: Իսկ «Քրիստոնեական աշխարհին» Գրոտիուսը վերաբերվում է իբրև **քրիստոնյա տիրակալների և ազգերի լիգայի**: Ինչպես Մարտին Ուայթն է նկատում, «Գրոտիուսը ներկայացնում է **միջազգային հանրության երկակի կամ համակենտրոն հղացքը**» (“dual or concentric conception of international society”): Գոյություն ունի արտաքին շրջան, որը բնական իրավունքի ներքո ընդգրկում է **ողջ մարդկությունը**, և ներքին շրջան՝ **քրիստոնեական համախումբը** (corpus Christianarum)...»⁴⁹⁷:

Յիշեցնենք՝ **1648 թ. Վեստֆալի և 1815 թ. Վիեննայի խաղաղության կոնգրեսները**⁴⁹⁸ **Եվրոպայի համար հանդիսացան «միապետների սենատ», որոնց ընդունած նորմերը, համաձայնագրերը, պայմանագրերը և եզրապակիչ ակտերը պետք է ծառայեին իբրև միջազգային հանրային օրենսգիրք և կարգաբերելին եվրոպական ազգերի ընկերային հարաբերությունները**: Չնայած կարգավիճակների և շահերի բազմազանությանը՝ Եվրոպայի պետությունները կիսում էին էական ընդհանրություններ՝ շնորհիվ հավաքական ինքնության, ինչն առաջացնում էր **«ընդհանրական ազգային շահեր»** (“universal national interests”)⁴⁹⁹: Ըստ այդմ, քրիստոնյա պետությունների կոնգրեսներն իբրև **«ընդհանրական պետություն» սենատ** պետք է ապահովեին ինքնությունների ու շահերի հարաբերականորեն կայուն ամբողջություն և փոխզիջման

⁴⁹⁶ Նույն տեղում:

⁴⁹⁷ **Wight M.**, Systems of States, p. 128.

⁴⁹⁸ Վեստֆալի և Վիեննայի համաժողովներում եվրոպական պետությունները հասել էին որոշակի հավաքական ինքնագիտակցության և առաջնորդվում էին որոշակի կանոններով ու նորմերով, թեպետ դեռևս գոյություն ունեցող միջազգային իրավունքի հաստատված կառույցը: Չնավորվող այս հավաքական ինքնագիտակցությունը իր արտահայտությունն է գտնում միջազգային հանրության «հանրային ոլորտում»՝ տարածություն, որտեղ պետություններն ապավինում են հանրային բանականությանը միմյանց հաշվետու պահելու և իրենց հավաքական հարաբերությունները կարգավորելու համար: Սա հնարավորություն է ստեղծում միջազգային հանրությանը բանական չափման և վերահսկողության տիրույթում ներգրավելու համար: Ըստ Վենտի՝ անհատական մակարդակում սա կարելի է կոչել «կերպարի պլանավորում» (“character planning”), միջազգային հանրության դեպքում՝ «սահմանադրական նախագծում» (“constitutional design”): Ինքնությունները և այսպիսի հավաքական իմացությունները գոյություն ունենում են մեկը մյուսից անջատ. դրանք փոխադարձաբար կառուցիկ են: Տե՛ս **Wendt A.**, Social Theory of International Politics, pp. 375-376.

⁴⁹⁹ Տե՛ս **Wendt A.**, Social Theory of International Politics, p. 233.

հնարավորություն⁵⁰⁰: Այլ որե՛ն ասած՝ իբրև հարկադրանքի ընկերային գործիքներ հաստատությունները հակադրվում էին անհատներին, սակայն շարունակում էին գործել ըստ հավաքական սկզբունքների: Ըստ այդմ, եվրոպական համակարգի հաստատութենականացումը քաղաքական նոր ինքնությունների և շահերի յուրացման, ինչպես նաև պետությունների վարքագծի վրա ազդող գործընթաց էր: Ըստ այս ըմբռնման՝ հաստատությունները կարող են խրախուսել համագործակցություններ սում և լինել հակամարտող ուժ «ուրիշների» հետ: Այսպես, եվրոպական պետությունները միմյանց միջև հարաբերություններում առաջնորդվում էին որոշակի կանոններով և բարոյական նորմերով, որոնք չէին կիրառվում օտարի նկատմամբ: Ինչպես արդեն նշել ենք, այդ տարբերակումը կար նաև քրիստոնյա ազգերի հանրության պարագային ոչ քրիստոնյա հասարակությունների նկատմամբ⁵⁰¹:

18-19-րդ դարերում *միջազգային հանրությունն* իր արժեքներով և մշակույթով սկսեց դիտարկվել իբրև ավելի շատ եվրոպական, քան թե քրիստոնեական: Քրիստոնեական աշխարհի կամ աստվածային իրավունքի մասին հիշատակումները սկսեցին սրբագրվել: Փոխարենը եվրոպան որպես քաղաքական և մշակութային ընդհանրություն սկսեց ավելի ու ավելի շատ հիշատակվել⁵⁰²:

⁵⁰⁰ Տե՛ս **Wendt A.**, Anarchy is what States Make of it: The Social Construction of Power Politics. *International Organization*, Vol. 46, No. 2, MIT Press, Spring, 1992, pp. 397-398.

⁵⁰¹ Տե՛ս **Wendt A.**, Anarchy is what States Make of it: The Social Construction of Power Politics, p. 399. Տե՛ս **Bull H.**, նշվ. աշխ., էջ 32: Գրոտիուսի ինքնիշխան ազգերի համերաշխության հղացքում, ի լրումն պատերազմի վարման ձևերին և հումանիտար կանոններին, առաջին հերթին ընդգծվում է ընդհանուր արժեքների դերը: Շեշտվում է, որ անհատ մարդիկ ևս միջազգային հանրության անդամ են, իսկ պետությունների հասարակության (society of states) օրինականությունը բխում է Գրոտիուսի «մարդկության մեծ համայնք» (magna communitas humani generis) հղացքից: Այստեղից էլ գալիս է միջազգային հարաբերություններում մարդու իրավունքների և հումանիտար առաքելության հղացական հիմքը: Տե՛ս **Zaum D.**, The Sovereignty Paradox: The Norms and Politics of International Statebuilding. Oxford and New York: Oxford University Press, 2007, pp. 10-11.

⁵⁰² Պատմականորեն միջազգային համակարգերը ձևավորվում են որոշակի մշակութային կամ քաղաքակրթական միասեռության հետևախորքի վրա, ինչն անհրաժեշտ է համակարգի արդյունավետ գործունեության համար: Տե՛ս **Linklater A., Suganami H.**, նշվ. աշխ., էջ 74-76: Ակադեմիկոս Ա. Չոլբարյանը ենթադրում է, որ «Յուգոսլավիայի Գրոտիուսի տեսություններն ու առաջարկությունները նպատակ ունեն համակարգել միջպետական հարաբերությունների նորմերը և եվրոպական տերությունների կոնցերտի համար մշակել փոխհարաբերությունների որոշակի իրավական սկզբունքներ»: **Чубарьян А. О.**, Европейская идея в истории. Проблемы войны и мира. Москва: Междунар. отношения, 1987, с. 97. Կարող ենք արձանագրել, որ Վեստֆալի համաժողովն իր համապարփակ կարգավորումներով սահմանել էր եվրոպական համակարգի սահմանադրական հիմքերը: Մինչև Ֆրանսիական հեղափոխության ժամանակաշրջանը եվրոպական պետությունների միջև կնքված բոլոր

Միասնական Եվրոպայում ընդհանրական աստիճանակարգված աշխարհակարգի վերականգնման հնարավորության վերաբերյալ հատկանշական է Գրոտիուսի հետևյալ մոտեցումը. «Թեպետ **ընդհանուր կայսրության** (universal empire) գոյությունը շահեկան է մարդկության համար, այնուամենայնիվ, դրա բոլոր առավելությունները հակակշռված են նույնչափ մեծ թերություններով: Քանզի ինչպես նաև կարող է չափից ավելի մեծ չափերով կառուցված լինել, բայց դժվար կառավարելի, այնպես էլ կայսրությունը կարող է իր բնակչության և տարածքով չափազանց ընդարձակ լինել մեկ գլխից կառավարվելու և ուղորդվելու համար: Սակայն միայն նպատակահարմարությունը չի կարող ընդհանրական կայսրությանն այնպիսի իրավունք վերապահել, ինչպիսին կարող է ձեռք բերվել միայն պայմանագրով կամ նվաճումով»⁵⁰³:

Ինչպես մենք վերը ցույց տվեցինք, Եվրոպայի միասնության Գրոտիուսի տեսլականը գերազանցապես սահմանափակված է ինքնիշխան ազգերի եվրոպական համայնքի ձևավորման շրջանակներում: Համաձայն Գրոտիուսի հայեցակարգի՝ պետությունները կընդիմանան համընդհանրական կայսրության կամ աստիճանակարգված վերազգային կառավարության հաստատմանը, սակայն միջազգային կարգի սահմանադիր սկզբունքներին համահունչ և **ընդհանուր համաձայնության** պայմաններում նրանք կձգտեն միմյանց միջև փոխգործակցության ավելի սերտացմանը՝ **ամուր ընկերակցությամբ** փոխարինելով աստիճանակարգված կառավարությանը: **Ընդհանուր առմամբ կարող ենք փաստել, որ Հուգո Գրոտիուսի աշխատությունները ազգերի և պետությունների իրավունքների համակարգման առաջին համապարփակ փորձն էր, որը իրավական-տեսական հիմնարար ազդեցություն ունեցավ ինքնիշխան ազգերի եվրոպական համակարգի կազմակերպման վրա**

Բ. Գաղափարի հետագա զարգացումները: Եվրոպայի միասնականացման գաղափարը արդի դարաշրջանում առաջին անգամ օրակարգային դարձավ շնորհիվ Նապոլեոն Բոնապարտի Ֆրանսիական հեղափոխության արտահանման քաղաքականության, որի նպատակն իր

խաղաղության պայմանագրերը հղում էին կամ հաստատում վեստֆալյան կարգավորումները: Տե՛ս Bull H., Kingsbury B., Roberts A. (eds), նշվ. աշխ., էջ 76:
⁵⁰³ Grotius H. (1625), The Rights of War and Peace, p. 271.

իսկ խոսքերով Ֆրանսիայի ուղորդմամբ Եվրոպական ազգերի համագործակցության, այնուհետև Եվրոպայի Միացյալ Նահանգների ստեղծումն էր⁵⁰⁴: Մեր համոզմամբ, 18-19-րդ դարերում աշխարհիկ արժեքների հիմքով Եվրոպայի միասնականացման նախագծերի կարևոր նախապայմաններից էր սոցիալ-պատմական նոր իրողության՝ ազգ-պետությունների մուտքը Եվրոպական քաղաքականության: Մյուս կողմից տարբեր պետությունների ազգային շահերի հակադրությունը խոչընդոտում էր որևէ վերազգային միավորման հաստատմանը⁵⁰⁵: **Մեր դիտարկմամբ՝ Եվրոպայի միասնականացման նաարլեոնյան փորձառության ձախողումը ցույց տվեց Զ. Գրոտիուսի մոսեցման ճշմարտացիությունը. անհնար է միավորել մայրցամաքը որևէ առանձին պետության գերիշխանության միջոցով: Եվ պատահական չէ, որ Եվրոպայի միության մասին նախագծերի մեծամասնության հիմքում ընկած են ազգային կամ պետական ինքնիշխանության գաղափարները:**

Գրոտիուսից հետո Եվրոպական խորհրդարանի հիմնադրման գաղափար էր զարգացրել նաև ամերիկյան Փենսիլվանիա գաղութի հիմնադիր, անգլիացի իմաստասեր Ուիլիամ Փենը (1644-1718 թթ.): Եվրոպայում անվտանգության և հարատև խաղաղության հաստատման նպատակով Փենը առաջարկում էր հիմնել **«Եվրոպական լիգա կամ համադաշնություն»** (European League, or Confederacy), որը կկառավարվեր Եվրոպայի բոլոր ինքնիշխան քաղաքական միավորները ներկայացնող **«Եվրոպական խորհրդարանի»** (European Dyet, Parliament) միջոցով⁵⁰⁶:

Ազգերի Եվրոպական համագործակցության հղացքը հիմնավորվել և զարգացվել էր պահպանողականության տեսության հիմնադիրներից անգլիացի մտածող Էդմունդ Բըրքը (1729-1797 թթ.): Անգլիայում պահպանողականության գաղափարաբանության ձևավորումը, մի կողմից, կապված էր այդ երկրի պատմական, մշակութային և սոցիալ-տնտեսական առանձնահատկությունների

⁵⁰⁴ Տե՛ս **McLynn F.**, Napoleon: A Biography. London, Sydney and Auckland: Pimlico, 1998, p. 664.

⁵⁰⁵ Տե՛ս **Чубарьян А. О.**, նշվ. աշխ., էջ 172, 184:

⁵⁰⁶ Տե՛ս **Penn W.** (1693), An Essay Towards the Present and Future Peace of Europe. Washington: The American peace society, 1912, pp. 11-13, 19-21.

հետ, մյուս կողմից՝ արձագանք էր Ֆրանսիական հեղափոխությանը⁵⁰⁷: Բըրքը կարևորում է եվրոպական իրավական կարգի միասնության գաղափարը: Ըստ այդմ կենտրոնական նշանակություն էր տրվում **«Եվրոպայի հանրային օրենքին»** (Public Law of Europe), քանզի վերջինս հանդիսանում է եվրոպական միջպետական հարաբերությունների իրավական հենքը: Ժամանակաշրջանի մտածողների համար ելակետային էր հին հռոմեական «ազգ» (natio) եզրույթը, որը հարստացվեց նոր բովանդակությամբ՝ ընդհանուր ծագում, լեզու, որոշակի տարածք, հավատք, մտակեցվածք, մշակույթ, քաղաքական կառույց և տնտեսություն: Ըստ Բըրքի՝ այս ամենը միավորում է մարդկանց հաճախ առանց նրանց գիտակցության, հաճախ էլ՝ նրանց մտադրություններին հակառակ: Նա գրում է. «Մարդիկ միմյանց կապված չեն թղթերով և կնիքներով: Նրանք մերձենում են իրենց նմանություններով, համապատասխանություններով և փոխադարձ ըմբռնումներով: Այդպես է նաև ազգերի պարագայում: Ոչինչ այնպես ամուր չի փոխկապակցում ազգերին միմյանց, ինչպես օրենքների, սովորույթների, բարքերի և կենսակերպի համապատասխանությունը: Սրանք ավելին են քան պայմանագրերի ուժը»⁵⁰⁸:

Այսպիսով, եվրոպական ազգերի համայնքը Բըրքը դիտարկում է իբրև ընդհանուր արժեքներ կիսող **մեծ հասարակություն**: Ըստ նրա՝ եվրոպական պետությունները մեկ համայնքի անդամներ էին և ունեին որոշակի ընդհանուր կենսակերպ: Մասնավորապես նա գրում է. «Եվրոպայի ոչ մի քաղաքացի չի կարող իրեն օտար զգալ դրանք հատվածում... իր պետության սահմաններից դուրս նա երբեք իրեն չի զգում արտերկրում»⁵⁰⁹: Մյուս կողմից եվրոպական ազգերի միջև տարբերությունները ևս նշանակալի իրողություններ էին, որոնք պետք է կարգավորվեին **«հարևանության օրենքով»** (Law of Neighbourhood): Բըրքը գտնում էր, որ հարևանության օրենքը ինչպես մարդկանց, այնպես էլ ազգերին սահմանափակում է իրենց գործողությունների մեջ: Քանզի, ըստ նրա, ոչ մի գործողություն չպետք է բխի միայն

⁵⁰⁷ Տե՛ս **Սկրուջան Տ.**, Էդմունդ Բըրքը որպես անգլիական հակաժողովրդավարականության գաղափարախոս: Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն 141.6, Երևան, 2013, էջ 54-60:

⁵⁰⁸ **Burke E.**, Select Works of Edmund Burke: a new imprint of the Payne edition. Foreword and biographical note by Francis Canavan. Vols. 1- 3 originally published: Oxford: Clarendon Press, 1874-1878. This edition is published: Indianapolis: Liberty Fund, Inc., 1999, p. 132.

⁵⁰⁹ **Burke E.**, նշվ. աշխ., էջ 133-134:

«մարդու անհատական ազատությանը ունից և մասնավոր սեփականության իրավունքից, եթե այն վնասում է հարևանին»⁵¹⁰: Այս կերպ **Եվրոպական հարևանությանը** ենթադրում էր որոշակի պարտավորություններ: Ահա այստեղից էր բխում նաև Եվրոպայում **«ուժերի հավասարակշռության»** պահպանման անհրաժեշտության բըրքյան մոտեցումը, որը հակադրվում էր Ֆրանսիական հեղափոխության արտահանմանը: Ըստ հեղինակի՝ ուժերի հավասարակշռության սկզբունքը Եվրոպական հանրային իրավունքի կենսագործունեության և խաղաղության պահպանման առանցքային նախապայմաններից էր⁵¹¹:

Եվրոպական քաղաքական իմաստասիրության մեջ Եվրոպայի միասնականացման և հավերժական խաղաղության հաստատման գաղափարներ մշակվել էին դեռևս 18-րդ դարում Շառլ-Իռենե Կաստել դե Սեն Պիեռի, Ժան Ժակ Ռուսսոյի և այլոց կողմից⁵¹²: Յակերժական խաղաղության⁵¹³ հաստատման համապարփակ նախագիծը և ամենազդեցիկ իմաստասիրական հղացքը մշակել էր Իմմանուել Կանտը՝ իր **«Դեպի հավերժական խաղաղություն»** (1795 թ.) աշխատության մեջ: Ըստ Կանտի՝ բնական վիճակից դուրս գալու, խաղաղություն և հաստատելու և խաղաղության անվտանգությունն ապահովելու համար պետություններն այլ ճանապարհ չունեն քան անհատ մարդկանց օրինակով հրաժարվել իրենց վայրի (ապօրինի) ազատությունից ու կապակցել միմյանց հանրային պարտադիր օրենքներով և այդպիսով ձևավորել **«ազգերի պետություն»** (civitas gentium): Եվ քանզի պետությունները համաձայն միջազգային իրավունքի իրենց հղացքի ամենևին չեն ցանկանում **«համաշխարհային հանրապետության»** այս դրական գաղափարը, միայն կայուն, շարունակաբար ընդլայնվող և պատերազմները կանխող դաշնության բացասական փոխանորդը կարող է սաճախարել

⁵¹⁰ Նույն տեղում, էջ 135-137:

⁵¹¹ Տե՛ս նույն տեղում, էջ 245-250:

⁵¹² Տե՛ս **Rousseau J. J.**, Extrait du Projet de Paix perpétuelle de Monsieur l'Abbé de Saint-Pierre. Geneve, 1761. **Saint-Pierre Ch.-I.**, Projet pour rendre la paix perpétuelle en Europe. Utrecht: A. Schouten, 1713. Տե՛ս նաև **Ghervas S.**, La paix par le droit, ciment de la civilisation en Europe? La perspective du siècle des Lumières, in Antoine Lilti et Céline Spector (éds.), Penser l'Europe au XVIIIe siècle: Commerce, Civilisation, Empire. Oxford: Voltaire Foundation, 2014, pp. 51-57.

⁵¹³ Պետությունների միջև հավերժական խաղաղության մասին պայմանագրի Կանտյան նախագծի մեր կողմից աշխատությունից առանձնացված հոդվածները տե՛ս հավելված 3, էջ IX-X:

անօրինական և թշնամական մտադրությունները՝ պահպանելով դրանց դրսևորման մշտական վտանգը⁵¹⁴:

Կանտը նկատում է, որ թեև նախորդ դարերում և իր ժամանակներում բարձրագույն միջազգային առյան չի եղել, այնուամենայնիվ, իրավունքը շարունակել է մնալ իբրև միջազգային հարաբերությունների գործոն: Քանզի «Գրոտիուսը և այլ իրավագետ-իմաստասերներ շարունակվել են հղվել պատերազմների արդարացման համար, թեև իրենց կողմից ստեղծված իմաստասիրական և դիվանագիտական օրենսգիրքը չունի և չի էլ կարող ունենալ օրենքի ուժ, քանզի պետությունները ենթական չեն ընդհանուր արտաքին հարկադրանքի: Ուստի իրավունք հասկացության նկատմամբ պետությունների հարգանքը, թեկուզ միայն խոսքային մակարդակում, արդյունք է մարդկային բարոյական չափման, որոնք հույս ունեն նույնը ակնկալելու նաև ուրիշներից»⁵¹⁵: Կանտի մոտ Գրոտիուսի մասին հիշատակումները թույլ են տալիս ենթադրել, որ նա լավ ծանոթ էր վերջինիս աշխատանքներին և, հավանաբար, **քրիստոնյա պետությունների ընդհանուր կոնգրեսների և ազգերի համագործակցության** գաղափարները հենց Գրոտիուսի փոխանցմամբ զարգացվեցին Կանտի կողմից իբրև համաշխարհային հաստատության անհրաժեշտություն: 20-րդ դարում այս գաղափարը պետք է իրագործվեր նախ **Ազգերի լիգայի**, և ապա **ՄԱԿ**-ի տեսքով:

Եվրոպայի միասնականացման և **«Եվրոպայի Միացյալ Նահանգների»** ստեղծման գաղափարը կրկին բարձրացվեց 1849 թ. օգոստոսին Ֆրանսիացի նշանավոր մտավորական Վիկտոր Զյուգոյի կողմից Փարիզի խաղաղության կոնգրեսում⁵¹⁶: Կոնգրեսին մասնակից էր նաև Իտալական ազգային վերածննդի առաջնորդներից Ջուզեպպե Մաձինին: Նա պնդում էր, որ եվրոպական քաղաքական համակարգը պետք է վերածնակերպվի ժողովրդավարության և ազգերի ինքնորոշման սկզբունքների հիմքով: Մաձինին համոզված էր, որ միայն ազգ-պետությունը կարող է հնարավոր դարձնել

⁵¹⁴ Տե՛ս **Kant I.** (1795), նշվ. աշխ., էջ 79-81:

⁵¹⁵ Նույն տեղում, էջ 76-79:

⁵¹⁶ Տե՛ս **Viegnes M.**, The French Vision of Europe from Victor Hugo's United States of Europe to the No to the Constitution, Europe's Journal of Psychology Vol 1, No 4 (2005), p. 1.

քաղաքացիական կրթությունը և իրական ժողովրդավարական մասնակցությունը⁵¹⁷: Ի տարբերություն Կանտի, Մաձինինին պետական ինքնիշխանության սկզբունքը ստորադասում էր ազգային ինքնիշխանության գաղափարին: Նրա համար **ազգը անհրաժեշտ միջնորդ քայլ էր դեպի մարդկության ընկերակցություն**: Ազգը առաջին հերթին քաղաքական միավոր էր իբրև սահմանադրության ներքո հավասարների ժողովրդավարական ընկերակցություն: Մաձինին կարծում էր, որ Եվրոպայի ազգերը մի օր կարող են միանալ և միասին հիմնել «Եվրոպայի Միացյալ Նահանգներ»⁵¹⁸:

20-րդ դարի երկրորդ կեսին Եվրոպայում հարաբերությունների կարգաբերման համար կարևոր տեղ ստացան համաեվրոպական կառույցները և մեկնարկեց միասնականացման ժամանակակից գործընթացը **Եվրոպական Միության** տեսքով: **Մեր կարծիքով համաեվրոպական վեհաժողովների գումարման Գրոսիուսի գաղափարի ժամանակացից դրսևորում կարելի է համարել 1949 թ. հիմնված Եվրոպայի խորհուրդն ու Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը** (Parliamentary Assembly of the Council of Europe), որը տեղակայված է Ստրասբուրգում և ներկայումս ունի 47 անդամ պետություններ. անդամակցում են Եվրոպայի բոլոր պետությունները բացի Բելոռուսից և Վատիկանից: Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի ընդունած որոշումներն ունեն խորհրդատվական բնույթ⁵¹⁹: Այս առումով **Եվրոպայի խորհուրդն ըստ էության մարմնավորում է ինքնիշխան ազգերի համագործակցության Գրոսիուսյան գաղափարը**: Եվրոպայի խորհրդի կանոնադրության (1949 թ. մայիսի 5-ի Լոնդոնի պայմանագիր) նախաբանում հայտարարվում էր, որ կողմերը, «համոզված լինելով, որ արդարության և միջազգային համագործակցության վրահիմնված խաղաղության ձգտումը կենսական է քաղաքակրթության և մարդկային հասարակության պահպանման համար, վերահաստատելով իրենց նվիրվածությունը այն հոգևոր և բարոյական արժեքներին,

⁵¹⁷ Տե՛ս **Mazzini G.**, նշվ. աշխ., էջ 1-2:

⁵¹⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 1-3:

⁵¹⁹ Տե՛ս **The Statute of the Council of Europe**, *European Treaty Series – No. 1*, London/Londres, 5.V. 1949. The Official Website of the Council of Europe, URL: <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=0900001680306056> (05.02.2016).

որոնք իրենց ժողովուրդների ընդհանուր ժառանգություն են... հավատալով, որ այս գաղափարների պահպանման ու իրագործման, ինչպես նաև տնտեսական ու սոցիալական առաջընթացի համար կարիք կա **Եվրոպայի բոլոր համակարծիք երկրների առալել սերտ միություն**, որոշեցին ստեղծել մի կառույց, որը կբերի **Եվրոպական պետություններին առալել սերտընկերակցություն»**⁵²⁰:

Ամփոփենք: 3. Գրոտիուսի «Պատերազմի և խաղաղության իրավունքը» հիմնարար աշխատությունն ըստեություն ուղենշեց մի հարացույց, որը վճռական նշանակություն ունեցավ արդի աշխարհակարգում միջպետական հարաբերությունների և դրանց վերաբերյալ գաղափարների զարգացման վրա: Մասնավորապես, նրան հաջողվեց հիմնական գծերով կառուցարկել 1648 թ. Վեստֆալյան խաղաղության գաղափարական շրջանակը, հիմնավորել ազգերի ինքնիշխանության իրավունքը և ուղենշել Եվրոպայի միասնության այլ ընտրանքային ճանապարհը: Գրոտիուսի գաղափարներից հարացույցային դարձավ հատկապես «միջազգային հանրություն» հղացքը:

⁵²⁰ **The Statute of the Council of Europe**, *European Treaty Series – No. 1*, London/Londres, 5.V. 1949, p. 2.

ԵՁՐԱԿԱՅՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ

Վեստֆալյան պայմանագրերը դարակազմիկ նշանակություն ունեցան Եվրոպայի արդի պատմության մեջ: Պատմական հեռանկարում Վեստֆալյան խաղաղությունը ուղենշեց անցումը **միջնադարյան քրիստոնեական աշխարհից** դեպի **վաղ արդիական Եվրոպային**: Այս անցումը իրավաբանորեն հիմնավորեց Յուզո Գրոտիուսը: 17-19-րդ դարերի ընթացքում *Արևմտյան քրիստոնեական աշխարհի* վերապրուկները վերացան, և Եվրոպական արդի պետությունը ձևակերպվեց սկզբում իր բացարձակապետական, իսկ այնուհետև ազգ-պետության մակարդակով: Գրոտիուսն իր **«ինքնիշխան ազգերի հանրույթ»** հղացքով նախանշել էր **Եվրոպական աշխարհակարգի այլընտրանքի ուղին**, որը փոխարինելու էր համընդհանրական աստիճանակարգված աշխարհակարգին:

Յանրագումարի բերելով ատենախոսության հիմնական արդյունքները՝ ցանկանում ենք հատկանշել հետևյալ եզրահանգումները, որոնք մեր կարծիքով առավել կարևոր են.

Ա 1648 թ. Վեստֆալի խաղաղության պայմանագրերը հաջողությամբ ամփոփեցին համաեվրոպական Երեսնամյա պատերազմը՝ ներկայացնելով **իրավահավասար և ինքնիշխան պետությունների համագոյակցության նոր հարացույցը՝ իբրև Եվրոպայի կազմակերպման օրինական միջոց**: Վեստֆալյան համաձայնագրերը խորհրդանշում են միջնադարյան ընդհանրական աստիճանակարգված աշխարհակարգի փոխակերպումը տարածքային ինքնիշխան պետությունների հորիզոնական կարգի: Եվրոպայում փոխարաբերությունների կարգավորման նոր սկզբունքները ձևակերպվեցին ըստ **պետական (կամ ազգային) շահ և ուժերի հավասարակշռություն** հղացքների: Վեստֆալյան խաղաղությամբ **քաղաքական համայնքների ինքնորոշման** ճանաչման ակտերը հիմնարար նշանակություն ունեցան ինքնորոշման գաղափարի զարգացման տեսանկյունից: Այդուհանդերձ, **Վեստֆալյան խաղաղության հիմնական գաղափարը խաղաղությունն էր, ոչ թե ինքնորոշումը**:

Բ. Վեստֆալյան խաղաղության ամբ հաստատված եվրոպական համակարգը նորոգվեց 1713 թ. Ուտրեխտյան պայմանագրերով, ուր հավասարակշռության սկզբունքը դարձավ ճանաչված նորմ: Կարող ենք ձևակերպել, որ, **ի տարբերություն Վեստֆալյան խաղաղության, այստեղ ուժերի հավասարակշռության հիմնական գաղափարը պետությունների ինքնորոշման իրավունքն էր, ոչ թե խաղաղությունը:** Ըստ այդմ, **եվրոպական հավասարակշռության հիմնական գաղափարին ձուգահեռ հաստատվում էր պետությունների ինքնորոշման իրավունքը:**

Գ. Լուսավորականության դարաշրջանում բարեշրջության ենթարկվեցին եվրոպայի՝ իբրև ընդհանրական քաղաքական միավորի մասին գաղափարները, որոնցում գերակշռող էին հումանիստական միտումները և խաղաղության հաստատման տեսլականները: 18-րդ դարի վերջին Ֆրանսիական մեծ հեղափոխությունը որակապես նոր իրավիճակ սահմանեց եվրոպայում՝ հռչակելով **ազգերի ինքնիշխանության իրավունքը:** Հեղափոխության արտահանման քաղաքականությունը (1795-1814 թթ.) նշանավորվեց **ազգերի ինքնորոշման և ազգային ինքնիշխանության գաղափարների տարածմամբ:** 18-19-րդ դարերում աշխարհիկ արժեքների հիմքով եվրոպայի միասնականացման նախագծերի կարևոր նախապայմաններից էր սոցիալ-պատմական նոր իրողության՝ ազգ-պետությունների կայացումը: Ըստ այդմ **եվրոպայի միության մասին նախագծերի հիմքում հայտնվեց ազգային ինքնիշխանության գաղափարը:**

Դ. Եվրոպայի միասնականացման գաղափարը արդի դարաշրջանում առաջին անգամ օրակարգային դարձավ շնորհիվ Նապոլեոն Բոնապարտի Ֆրանսիական հեղափոխության արտահանման քաղաքականության, որի նպատակը Ֆրանսիայի ուղորդմամբ եվրոպական ազգերի համագործակցության, այնուհետև **«Եվրոպայի Միացյալ Նահանգների»** ստեղծումն էր: Նապոլեոնի օրենսգիրքը իրավական ձևակերպում տվեց հեղափոխությամբ հաստատված համակեցության նոր իրողություններին, իսկ ենթարկեցված երկրներում Ֆրանսիական մոդելի ներդրումը խթանեց մայրցամաքի ընդհանուր կերպափոխությունը: **Եվրոպական աշխարհակարգի Նապոլեոնյան հարստույցի** բնութագրիչները դարձան **Ֆրանսիայի**

ուղղորդմամբ եվրոպական ազգերի համագործակցությամբ, ազգերի ինքնիշխանության հռչակումը և եվրոպայի միասնականացումը:

Ե. Ի հակադրություն **եվրոպական աշխարհակարգի Նապոլեոնյան հարստության**, ուր Ֆրանսիական հեղափոխության գաղափարներին համահունչ ընթանում էր ազգերի համախմբման և ազգային սահմանների ընդգծման գործընթաց, Վիեննայի վեհաժողովում (1814-1815 թթ.) ընդունեցին սկզբունքորեն հակառակ որոշումներ՝ եվրոպան վերաբաժանելով այնպես, որ կարծես թե ազգեր գոյություն ունենան: Ըստ այդմ, եվրոպայի վերակառուցման համար հիմք ընդունվեցին **հավասարակշռություն, օրինականություն, փոխառուցման սկզբունքները և միջամտելու սեսությունը**: Իսկ եվրոպայի միասնականացման Նապոլեոնյան նախագծին փոխարինեց **«մեծ տերությունների եվրոպական համերաշխություն»** հղացքը:

2. Գրոտիուսի աշխատությունները նշանավորում են ինքնիշխանության արդի ընկալումների սկիզբն ու միջնադարյան ըմբռնումների ավարտը: Մեր դիտարկմամբ՝ **մարդու բնական և ընկերային իրավունքների, ազգերի ինքնիշխանության իրավունքի, ինքնիշխանության բաժանելիություն, իշխանությունների տարանջատման և հասարակական դաշինքի վերաբերյալ գաղափարները նրա փոխանցմամբ մեծապես ներազդեցին լուսավորական մտքի վրա** Նա ընդգծում է ժողովրդական (հանրային) ինքնիշխանության կամ ինքնորոշման իրավունքն ինքնիշխան տիրակալների հարաբերությամբ՝ այն ներկայացնելով իբրև **«փոխադրված ենթակայություն երևակայական շրջանակ»**: Թեև Գրոտիուսի աշխատություններում բացակայում է **«ժողովուրդ»** և **«ազգ»** հասկացությունների հստակ սահմանումը, այդուհանդերձ, ընդհանրացնելով մտածողի աշխարհընկալման համալիրը, կարող ենք սահմանել. **ժողովուրդը որոշակի տարածաշրջանում միավորված մարդկային համայնքն է, որը մեկ ամբողջություն է կազմում: Ազգը՝ ընդհանուր ծագում և ոգի ունեցող կազմակերպված քաղաքական համայնքն է, որը մեկ քաղաքացիական ամբողջություն է կազմում և ունի ինքնիշխանության իրավունք:**

Ե. **Աշխարհակարգի Գրոտիուսյան սեսություն** հիմնադրույթներն են՝ **ազգերի հանրության** գոյությունը, ազգերի

իրավունքի գերակայ ությունը, պետական ինքնիշխանության սկզբունքը, ազգերի ինքնիշխանության իրավունքը, ինքնիշխան պետությունների իրավահավասարությունը, ինքնիշխան ազգերը կամ պետություններն իբրև միջազգային հարաբերությունների հիմնական միավորներ, առևտրի ազատությունը և հավաքական անվտանգությունը: **Շնորհիվ Վեստֆալյան համաձայնագրի խաղաղության՝ միջազգային հանրության Գրոտիուսյան գաղափարը ստացավ համահունչ և ազդեցիկ ձև, քանզի ինքնիշխան պետությունները ճանաչվեցին եվրոպական քաղաքականության հիմնական միավորներ:** 20-րդ դարում միջազգային հանրության գաղափարը իր բարոյագիտական-արժեքային մակարդակից փոխադրվեց ազգերի իրավական համագործակցության գործառնության հարթություն և ամրագրվեց **Ազգերի լիգայի** (1919 թ.) ու **Միավորված ազգերի կազմակերպության** (1945 թ.) ստեղծման հռչակագրերում:

Ը. Եվրոպայի միասնության արդի գաղափարների հիմքերը առկա էին դեռևս Գրոտիուսի մոտ: Նրա տեսլականը, մեր ձևակերպմամբ, գերազանցապես սահմանափակված էր ***ինքնիշխան ազգերի եվրոպական համայնքի*** կազմակերպման շրջանակներում: **Ընդհանուր առմամբ կարող ենք փաստել, որ Գրոտիուսի գաղափարները իրավասեսական հիմնարար ազդեցություն ունեցան ինքնիշխան ազգերի եվրոպական համակարգի ձևավորման վրա Մեր կարծիքով՝ Եվրոպայի միասնականացման Նապոլեոնի փորձառության ձախողումը ցույց տվեց Գրոտիուսի մոտեցման ճշմարտացիությունը. անհնար է միավորել մայրցամաքը որևէ պետության գերիշխանությամբ:** Համերաշխ եվրոպական միջազգային հանրության Գրոտիուսյան հղացքում ընդգծվում է ընդհանուր արժեքների դերը: Շեշտվում է, որ անհատ մարդիկ ևս միջազգային հանրության անդամ են, իսկ պետությունների հանրության օրինականությունը բխում է Գրոտիուսի **«մարդկության մեծ համայնք»** (magna communitas humani generis) հղացքից. այստեղից էլ՝ մարդու իրավունքների և պետությունների հումանիտար առաքելության հիմքը: Գրոտիուսը համոզված էր, որ **«ողջ մարդկության ընդլայն շրջանակը»** կապակցված է **«մարդկության ողջ փոհություն»** պայմանավորված բնական իրավունքի սկզբունքներով: Այդուամենայնիվ, նրա համար

գոյություն ունենալ և քրիստոնեական (եվրոպական) աշխարհի ավելի նեղ շրջանակը՝ կապակցված ընդհանուր արժեքներով և ազգերի դրական իրավունքով:

Թ. Ինքնիշխան ազգերի եվրոպական համակարգի կազմակերպման և կենսագործունեության համար կառուցիկ դեր ունեցավ Գրոտիուսի առաջարկած մոտեցումը՝ **«քրիստոնյա աստվածությունների ընդհանուր կոնգրեսների գումարումը»**, որով անկախ ազգերը կարող էին կարգավորել իրենց վեճերն ու համաեվրոպական հիմնախնդիրները առանց դիմելու պատերազմի իրավունքին: **Այս համաժողովները համաեվրոպական մակարդակում պետք է կատարեին ազգերի սենատի դեր՝ կարգաբերելով նրանց շահերի բազմազանությունը և նպաստելով հարառև ու արդար խաղաղությանը:** Քրիստոնեական աշխարհի կառավարիչները համաեվրոպական կոնգրեսներում պետք է հիմնվեին **բարի կամքի, փոխզիջման ձգտումի, հավասարակշռության և իրենց ուժերը հավասարակշռելու անհրաժեշտության գիտակցման վրա** Զամաեվրոպական համաժողովների գումարման Գրոտիուսյան գաղափարի ժամանակակից դրսևորում կարող ենք համարել 1949 թ. հիմնված Եվրոպայի խորհուրդն ու **Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը:**

Ժ. **Ազգերի ինքնորոշումն իբրև գաղափար և իմաստասիրական հղացք** ձևավորվելով 17-րդ դարում և, ապա, վերափոխվելով քաղաքական հայեցակարգի՝ 20-րդ դարում վերաճեց **միջազգային հիմնարար իրավունքի՝** հաստատվելով ՄԱԿ-ի կանոնադրության մեջ: Եվրոպայում աշխարհակարգի հիմնարար սկզբունքների վերահաստատման կարևորագույն հանգրվանը դարձավ 1975 թ. ԵԱՀԽ ՅԵԼՍԻՆԿԻԻ եզրափակիչ ակտը: **Ազգերի ինքնորոշման իրավունքին** զուգահեռ հաստատվեց այն չսահմանափակող և չհակասող **տարածքային ամբողջականությունն** իբրև հիմնարար սկզբունք՝ արտաքին ագրեսիայից պետությունների ապահովագրման նպատակով: Ուստի, հիմք ընդունելով միջազգային իրավունքը և 20-21-րդ դարերում դրա կիրառմամբ ճանաչված նոր պետությունների բազմազան նախադեպերը, կարող ենք պնդել, որ միջազգային հանրությունն ունի իրավական պարտավորություն և բարոյական պատասխանատվություն՝ ճանաչելու Արցախի ժողովրդի

ինքնորոշումը և Արցախի Հանրապետությունն փաստացի (de facto) պետությունը:

Ընդհանրացնելով ավածը՝ կարող ենք արձանագրել: Արդի աշխարհակարգի պատմության հունվոլոյթում Հոկո Գրոտիոլսի տեսությունը և Վեստֆալյան խաղաղության պրակտիկան դարակազմիկ նշանակություն ունեցան: Նախ կիրառություն գտնելով Եվրոպայում՝ հետագայում այն դարձավ *համաշխարհային պատմական կարգի նոր հարացույցի* հիմքը: **Ազգերի և ազգերի հանրոլթի հանդեպ Գրոտիոլսի իդեալիստական և հոլիստական (ամբողջընկալական) մոտեցումները նոր ժամանակաշրջան ուրվագծեց՝ ստեղծելով ընդհանրական սկզբունքների համակարգ և կառուցարկելով նոր՝ միջազգային իրողությունը, որը փոխարինեց Կայսրություն և Եկեղեցու ասիճանակարգոլթյամբ պայմանալորված միջնադարյան Եվրոպայի համընդհանրական աշխարհակարգին:** Գրոտիոլսը հասարակական իրողության համակեցուլթային բնոլթի անխուսափելիությունը տարածում է ազգերի և պետությունների վրա՝ առաջ քաշելով «**ինքնիշխան ազգերի հանրոլթ**» հղացքը և համակարգելով արդի միջազգային իրավունքը, որի շուրջ համաձայնությունը ընդհանուր գաղափարների և որոշակի հավաքական ինքնության գործառուլթ է: **Վեստֆալյան խաղաղությունը գործնականում ցույց տլեց, որ պետությունների անկախությունը և ինքնիշխանությունը համառեղելի է օրենքի գերակայության ու ազգերի համակեցական պատախանալոլթյան Գրոտիոլսյան գաղափարներին:**

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. **Եվրոպայի ու մանվտանգության և համագործակցության խորհրդատու ղո՞վ. Եզրախակիչ ակտ, Հելսինկի 1975:** Հայերեն թարգմանության նույնականությանը հաստատվել է ՀՀ արտգործնախարարության կողմից: Երևան, ՀՀ Արտաքին գործերի նախարարության, 2005, 64 էջ:
2. **A Collection of Treaties between Great Britain and Other Powers.** Edited by Chalmers G., London: J. Stockdale, 1790, 538 p.
3. **Burke E.,** Select Works of Edmund Burke: a new imprint of the Payne edition / foreword and biographical note by Francis Canavan. Vols. 1-3 originally published: Oxford: Clarendon Press, 1874-1878. This edition is published - Indianapolis: Liberty Fund, Inc., 1999, 434 p.
4. **Bodin J.** (1576), Six Books of the Commonwealth (Les Six livres de la République). Abridged and translated by M. J. Tooley. Oxford: Blackwell, 1955, 212 p.
5. **Charter of the United Nations and Statute of the International Court of Justice.** San Francisco, 1945, 30 p.
6. **Grotius H.** (1625), The Rights of War and Peace, Including The Law of Nature and of Nations. Translated from the original Latin of Grotius with notes and illustrations by A. C. Campbell, with an introduction by David J. Hill, Adamant Media Corporation, Elibron Classics, 2005 (This Elibron Classics Replica Edition is an unabridged facsimile of the edition - Washington & London: M. Walter Dunne, 1901), 423 p.
7. **Grotius H.** (1608), The Freedom of the Seas or the Right Which Belongs to the Dutch to Take Part in the East Indian Trade. Translated with A Revision of the Latin Text of 1688 by Ralph Van Deman Magoffin, Edited with an Introductory Note by James Brown Scott. New York: Oxford University Press, 1916 (This is version 1.0 of the Frelck Book Series edition, Oslo: 2008), 83 p.
8. **Grotius H.,** Commentary on the Law of Prize and Booty. Edited and with an Introduction by Martine Julia van Ittersum (The text of this edition is a reprint of the translation of *De Jure Praedae* by Gwladys L. Williams originally published by the Carnegie Endowment for International Peace: Oxford: Clarendon Press, 1950). Indianapolis: Liberty Fund, Inc., 2006, 632 p.
9. **Grotius H.** (1610), The Antiquity of the Batavian Republic. With the notes by Petrus Scriverius. Ed. & transl. by Jan Waszink et al. Assen: Van Gorcum, 2000, 184 p.
10. **Kant I.** (1795), Toward Perpetual Peace and Other Writings on Politics, Peace, and History. Edited and with an introduction by Pauline Kleingeld; translated by David L. Colclasure. New Haven and London: Yale University Press, 2006, 265 p.
11. **Kant I.** (1798), Anthropology from a Pragmatic Point of View. Translated and edited by Robert B. Louden. Cambridge, New York, Melbourne, Madrid, Cape Town, Singapore, San Paulo: Cambridge University Press, 2006, 239 p.
12. **Locke J.,** Two Treatises of Government. Edited by Thomas Hollis. London: A. Millar et al., 1764, 416 p.

13. **Machiavelli N.** (1513), *The Prince*. Translated with an introduction by Harvey C. Mansfield. - 2nd ed. Chicago and London: The University of Chicago Press, 1998, 184 p.
14. **Montesquieu Ch. S.** (1748), *The Spirit of Laws*. Translated by Thomas Nugent (1752). Kitchener: Batoche Books, 2001, 726 p.
15. **Mazzini G.**, *A Cosmopolitanism of Nations: Giuseppe Mazzini's Writings on Democracy, Nation Building, and International Relations (1805–1872)*. Edited and with an introduction by Stefano Recchia and Nadia Urbinati; translations by Stefano Recchia. Princeton and Oxford: Princeton University Press, 2009, 249 p.
16. **Monroe J.**, *President's Annual Message*. Washington: December 2, 1823. *A Century of Lawmaking for a New Nation: U.S. Congressional Documents and Debates, 1774 - 1875*, Annals of Congress, Senate, 18th Congress, 1st Session, pp. 12-24.
17. **Penn W.** (1693), *An Essay Towards the Present and Future Peace of Europe*. Washington: The American peace society, 1912, 27 p.
18. **Pufendorf S.** (1673), *The Whole Duty of Man According to the Law of Nature*. Samuel Pufendorf; translated by Andrew Tooke, 1691; edited with an Introduction by Ian Hunter and David Saunders. Indianapolis: Liberty Fund, Inc., 2003, 381 p.
19. **Rousseau J. J.** (1762), *On the Social Contract*. Translated by G. D. H. Cole. New York: Dover Publications, 2003, 97 p.
20. **Richelieu**, *Political Testament* (extracts from Louis Andre's edition, Paris, 1947). In *The Thirty Years' War: Problems of Motive, Extent, and Effect*. Problems in European Civilization, Edited with an Introduction by Theodore K. Rabb, Harvard University. Boston: D. C. Heath & Company, 1964, pp. 76-80.
21. **The Great European Treaties of the Nineteenth Century**. Edited by Oakes A. and Mowat R. B., With An Introduction by H. Erle Richards. Oxford: The Clarendon Press, 1930, 403 p.
22. **Treaty of Westphalia: Peace Treaty between the Holy Roman Emperor and the King of France and their respective Allies**. Yale Law School, Lillian Goldman Law Library, The Avalon Project: Documents in Law, History and Diplomacy. URL: http://avalon.law.yale.edu/17th_century/westphal.asp (28.05.2015).
23. **The Covenant of the League of Nations** (Including Amendments adopted to December, 1924). Yale Law School, Lillian Goldman Law Library, The Avalon Project: Documents in Law, History and Diplomacy. URL: http://avalon.law.yale.edu/20th_century/leagcov.asp (08.01.2016).
24. **The Statute of the Council of Europe**. *European Treaty Series – No. 1*, London/Londres, 5.V. 1949. The Official Website of the Council of Europe, URL: <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=0900001680306056> (05.02.2016).
25. **The Text of the Declaration of Independence**. Philadelphia: July 4, 1776. *A Century of Lawmaking for a New Nation: U.S. Congressional Documents and Debates, 1774 - 1875*, Journals of the Continental Congress, Vol. 5, pp. 510-515.
26. **Voltaire**, *The Age of Louis XIV* (extracts from Everyman's Library Edition, translated by Martyn P. Pollack). In *The Greatness of Louis XIV: Myth or Reality?* Problems in European Civilization, Edited with an Introduction by William F. Church, Brown University. Boston: D. C. Heath & Company, 1959, pp. 34-48.
27. **Vattel E.** (1758), *The Law of Nations, or, Principles of the Law of Nature, Applied to the Conduct and Affairs of Nations and Sovereigns, with three early essays on the origin and nature*

- of natural law and on luxury. Emer de Vattel; edited and with an introduction by Bela Kapossy and Richard Whatmore; translated by Thomas Nugent. Indianapolis: Liberty Fund, Inc., 2008, 867 p.
28. **Wilson W.**, Address of the President of the United States Delivered at a Joint Session of the Two Houses of Congress, April 2, 1917. Washington: Government Printing Office, 1917, 8 p.
 29. **Wilson W.**, Address of the President of the United States Delivered at a Joint Session of the Two Houses of Congress, January 8, 1918. Washington: Government Printing Office, 1918, 8 p.
 30. **Acte de médiation** fait par le Premier Consul de la République française, entre les partis qui divisent la Suisse. Paris, 19 février 1803, 112 p.
 31. **Acte additonnel aux Constitutions de l'Empire du 22 avril 1815.** Conseil Constitutionnel de la République Française, Site officiel URL: <http://www.conseil-constitutionnel.fr/conseil-constitutionnel/english/la-constitution/les-constitutions-de-la-france/acte-additonnel-aux-constitutions-de-l-empire-du-22-avril-1815.5103.html> (20.19.2015).
 32. **Décret - 11283. Camp impérial de Berlin, 21 novembre 1806.** Correspondance de Napoléon I^{er}. Tome 13 / publiée par ordre de l'Empereur Napoléon III. Paris: H. Plon et J. Dumaine, 1863, pp. 555-557.
 33. **Déclaration des Droits de l'Homme et du Citoyen de 1789.** Conseil Constitutionnel de la République Française, Site officiel URL: <http://www.conseil-constitutionnel.fr/conseil-constitutionnel/francais/la-constitution/la-constitution-du-4-octobre-1958/declaration-des-droits-de-l-homme-et-du-citoyen-de-1789.5076.html> (02.03.2016).
 34. **L'Acte final** fait à Vienne le 9 juin de l'an de grâce 1815 (extraits): Annexes par Lentz T., Le congrès de Vienne: Une refondation de l'Europe 1814-1815. Paris: éditions Perrin, 2013, pp. 328-351.
 35. **Nothomb J.-B.**, Traité de paix entre la Belgique et la Hollande du 23 janvier 1839: discours prononcé dans la séance de la chambre des représentans du 4 mars. Bruxelles: Chez Deltombe Imprimeur, 1839, 47 p.
 36. **Rousseau J. J.**, Extrait du Projet de Paix perpétuelle de Monsieur l'Abbé de Saint-Pierre. Geneve, 1761, 84 p.
 37. **Saint-Pierre Ch.-I.**, Projet pour rendre la paix perpétuelle en Europe. Utrecht: A. Schouten, 1713, 423 p.
 38. **Traité d'alliance des trois puissances Autrichienne, Prussienne et Russe.** Projet d'une organisation politique pour l'Europe: Avant pour project de procurer aux souverains et aux peuples une paix général et perpétuelle et une bonheur inalterable. François Etienne Auguste comte de Paoli-Chagny. Hambourg: Perthes & Besser, 1818, pp. 274-277.
 39. **Traité Portant Création De La Confédération Des Etats Du Rhin** (Paris, 12 Juillet 1806). Fondation Napoléon, Site officiel URL: http://www.napoleon.org/fr/salle_lecture/articles/files/traite_confederationrhin_12juillet1806.asp (13.12.2015).
 40. **Гоббс Т.**, Левиафан, или Материя, форма и власть государства церковного и гражданского. Сочинения, в 2 томах, т. 2. Пер. с лат. и англ., сост. ред., авт. примеч. В. В. Соколов. Москва: Мысль, 1991, 731 с.
 41. **Спиноза Б.** Избранные произведения: в 2-х томах. Т. 2. Политический трактат. Пер. с лат. С. М. Роговина и Б. В. Чредина, ред. Ф. Стронгина. Москва: Госполитиздат, 1957, 727 с.

Բ. ՀԵՏԱԶՈՏՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ

42. **Բախչիսյան Ա. Հ.**, Նապոլեոն Բոնապարտը և հայերը: Երևան, ԳԱԹ. հրատ., 2003, 152 էջ:
43. **Գասպարյան Ա.**, Ֆրանսիան Նապոլեոն Բոնապարտի կառավարման տարիներին (1799-1814) (Կառավարման համակարգի արդիականացման մոդելը): Երևան, ԵՊՀ հրատ., 2013, 48 էջ:
44. **Գասպարյան Կ.**, ԱՄՆ արտաքին քաղաքականությունը Առաջին Համաշխարհային պատերազմի տարիներին. 1914-1917 թթ.: Երևան, ԵՊՀ հրատ., 2016, 49 էջ:
45. **Չուլալյան Մ. Կ.**, Հայ ժողովրդի XIII—XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների [Պատ. խմբ. Վ. Ա. Բայբուրդյան]; ՀՀ ԳԱ Պատմ. ին-տ. Գիրք Ա: Երևան, ՀՀ ԳԱ հրատ., 1990, 364 էջ:
46. **Մերջեան Ա., Հովհաննիսյան Ս., Մկրտչյան Ն.**, Գրամշիի *Մարդկության շրջանակը* և Հայաստանը: Խմբ.՝ **Ա. Ա. Ստեփանյան:** Երևան, «Փրինթինֆո», 2016, 156 էջ:
47. **Սանֆրեդ Ա. Զ.**, Նապոլեոն Բոնապարտ: Երևան, Հայաստան հրատ., 1975, 796 էջ:
48. **Մուրադյան Մ., Մինայան Է.**, Ռուսաց դիվանագիտությունը միջազգային հարաբերություններին համակարգում (XVIII-XIX դդ.): Երևան, Երևանի համալս. հրատ. 2005, 562 էջ:
49. **Պապյան Ա.**, Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները (հոդվածների ժողովածու): Երրորդ, լրամշակված հրատարակություն: Երևան, 2009, 185 էջ:
50. **Պապյան Ա.**, Հայրենատիրություն. Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները և հարակից հարցեր (հոդվածների ժողովածու): Երևան, Սոդուս վիվենդի կենտրոն, 2012, 487 էջ:
51. **Anderson B.**, Imagined Communities Reflections on the Origin and Spread of Nationalism, Revised Edition. London and New York: Verso, 1991, 224 p.
52. **Anderson P. R.**, Lineages of the Absolutist State. London and New York: Verso, 1979, 573 p.
53. **Asbach O. and Schröder P.** (ed.), War, the State, and International Law in Seventeenth-Century Europe. Farnham, Burlington: Ashgate Publishing, 2010, 273 p.
54. **Avakian Sh.**, Nagorno Karabagh: Legal Aspects, 4th Edition. Yerevan: Tigran Mets Publishing House, 2013, 102 p.
55. **Ashby R.**, Napoleon against Great Odds: the Emperor and the Defenders of France. Santa Barbara: ABC-CLIO, 2010, 230 p.
56. **Bull H.** (1977), The Anarchical Society: A Study of Order in World Politics. 3rd edition, New York: Palgrave, 2002, 329 p.
57. **Bull H., Kingsbury B., Roberts A.** (eds), Hugo Grotius and International Relations. Oxford: Oxford University Press, 1992, 331 p.
58. **Backman C. R.**, The Worlds of Medieval Europe. New York: Oxford University Press, 2003, 462 p.
59. **Black J.** (ed.), War in the Early Modern World 1450-1815. London and New York: Routledge, Taylor & Francis, 2005, 280 p.
60. **Bromley J. S.** (ed.), The New Cambridge Modern History Vol. VI: The Rise Of Great Britain And Russia 1688-1715/25. Cambridge: Cambridge University Press, 1971, 972 p.

61. **Behr H.**, *A History of International Political Theory: Ontologies of the International*. London, New York: Palgrave Macmillan, 2010, 336 p.
62. **Braudel F.**, *A History of Civilisations*. Translated by Richard Mayne. New York, London, Auckland: The Penguin Press, 1994, 600 p.
63. **Beitz Ch. R.**, *Political Theory and International Relations: With a New Afterword by the Author*, 1999. Princeton, New Jersey: Princeton University Press, 1979, 248 p.
64. **Bonney R.**, *The Thirty Years' War 1618-1648*. Oxford: Osprey Publishing, 2002, 95 p.
65. **Buzan B.**, *From International to World Society? English School Theory and the Social Structure of Globalisation*. Cambridge, New York, Melbourne: Cambridge University Press, 2004, 294 p.
66. **Bendix R.**, *Max Weber: An Intellectual Portrait, with an Introduction by Bryan S. Turner*, Vol. 2. London and New York: Routledge, 1998, 480 p.
67. **Bernard S.** (ed.), *The Code Napoleon and the Common-law World*. New Jersey: The Lawbook Exchange, 1998, 438 p.
68. **Broers M., Hicks P. and Guimerá A.** (eds.), *The Napoleonic Empire and the New European Political Culture*. Basingstoke, Hampshire: Palgrave Macmillan, 2012, 332 p.
69. **Baylis J. and Smith S.** (ed.), *The Globalization of World Politics: An Introduction to International Relations*, 2nd edition. New York: Oxford University Press, 2001, 648 p.
70. **Cooper J. P.** (ed.), *The Decline of Spain and the Thirty Years War 1609-48/59: The New Cambridge Modern History Vol. IV*. Cambridge: Cambridge University Press, 1970, 831 p.
71. **Conner S. P.**, *The Age of Napoleon*. Westport, London: Greenwood Press, 2004, 218 p.
72. **Clark I.**, *Legitimacy in International Society*. Oxford and New York: Oxford University Press, 2005, 278 p.
73. **Creveld M.**, *The Rise and Decline of the State*. Cambridge and New York: Cambridge University Press, 2004, 439 p.
74. **Der Derian J.**, *Critical Practices in International Theory: Selected Essays*. London and New York: Routledge, Taylor & Francis e-Library, 2009, 316 p.
75. **Dekker I. F., Werner W. G.**, *Governance and International Legal Theory*. Leiden and Boston: Martinus Nijhoff Publishers, 2004, 379 p.
76. **Dwyer P. G. and McPhee P.** (eds.), *The French Revolution and Napoleon: A sourcebook*. London and New York: Routledge, Taylor & Francis e-Library, 2003, 213 p.
77. **Davis J. A.**, *Naples and Napoleon: Southern Italy and the European Revolutions 1780–1860*. New York: Oxford University Press, 2006, 372 p.
78. **DeConde Al. [et al.]** (ed.), *Encyclopedia of American Foreign Policy: Studies of the Principal Movements and Ideas*, 2nd ed., Vol 1. New York: Gale Group, 2002, 559 p.
79. **DeConde Al. [et al.]** (ed.), *Encyclopedia of American Foreign Policy: Studies of the Principal Movements and Ideas*, 2nd ed., Vol 3. New York: Gale Group, 2002, 642 p.
80. **De Waal T.**, *Black Garden: Armenia and Azerbaijan through Peace and War*. New York and London: New York University Press, 2003, 337 p.
81. **Esdaile Ch. J.**, *The French Wars, 1792-1815*. London and New York: Routledge, Taylor & Francis e-Library, 2005, 95 p.
82. **Grab A.**, *Napoleon and the Transformation of Europe*. New York: Palgrave Macmillan, 2003, 249 p.
83. **Gramsci A.**, *Selections from the Prison Notebooks*. Edited and translated by Quentin Hoare and Geoffrey Nowell. London: Smith Lawrence & Wish art, 1971, 846 p.

84. **Hause S. and Maltby W.**, *Western Civilization: A History of European Society*, 2nd edition. Thomson Wadsworth, 2004, 681 p.
85. **Huntington S. P.**, *The Clash of Civilizations and the Remaking of World Order*. New York: Simon & Schuster, 1996, 367 p.
86. **Jeffery R.**, *Hugo Grotius in International Thought*. New York: Palgrave Macmillan, 2006, 216 p.
87. **Jahn B.** (ed.), *Classical Theory in International Relations*. Cambridge, New York, Melbourne: Cambridge University Press, 2006, 309 p.
88. **Johnson J. T.**, "Grotius and His Impact: The Westphalian Settlement, the Idea of the "law of Nations," and the Emergence of the Territorial Idea of Sovereignty." In *Sovereignty: Moral and Historical Perspectives*. Washington: Georgetown University Press, 2014, 192 p.
89. **Kissinger H. A.**, *Diplomacy*. New York, London, Toronto, Sydney, Tokyo, Singapore: Simon & Schuster, 1994, 912 p.
90. **Kennedy P. M.**, *The Rise and Fall of the Great Powers: Economic Change and Military Conflict from 1500 to 2000*. London, Sydney and Wellington: Unwin Hyman, 1988, 677 p.
91. **Karpovich O.**, *Global Governance: Past, Present and Future*. Bloomington: AuthorHouse, 2013, 502 p.
92. **Keene E.**, *Beyond the Anarchical Society: Grotius, Colonialism and Order in World Politics*. Cambridge: Cambridge University Press, 2002, 165 p.
93. **Larkins J.**, *From Hierarchy to Anarchy: Territory and Politics before Westphalia*. New York: Palgrave Macmillan, 2010, 269 p.
94. **Linklater A., Suganami H.**, *The English School of International Relations: A Contemporary Reassessment*. Cambridge, New York, Melbourne: Cambridge University Press, 2006, 302 p.
95. **Leggierre M. V.**, *Napoleon and Berlin: the Franco-Prussian War in North Germany, 1813*. Vol. 1, Campaigns and Commanders series. Norman: University of Oklahoma Press, 2002, 384 p.
96. **Lowe J.**, *Britain and Foreign Affairs, 1815–1885: Europe and overseas*. London and New York: Routledge, Taylor & Francis e-Library, 2005, 95 p.
97. **McLynn F.**, *Napoleon: A Biography*. London, Sydney and Auckland: Pimlico, 1998, 739 p.
98. **McKay D. and Scott H. M.**, *The Rise of the Great Powers 1648-1815, 2nd edition*. London and New York: Routledge, Taylor & Francis Group, 2014, 392 p.
99. **Mortimer G.**, *The Origins of the Thirty Years War and the Revolt in Bohemia, 1618*. London: Palgrave Macmillan, 2015, 293 p.
100. **Mathias R.**, *On Global Justice*. Princeton and Oxford: Princeton University Press, 2012, 465 p.
101. **Mann M.**, *The Sources of Social Power, Vol. II, The Rise of Classes and Nation-States, 1760-1914*. Cambridge and New York: Cambridge University Press, 2006, 823 p.
102. **Manas J.**, *Napoleon on Project Management: Timeless Lessons in Planning, Execution, and Leadership*. Nashville, Tennessee: Thomas Nelson, Inc., 2006, 271 p.
103. **Neiberg M. S.**, *Warfare in World History (Themes in World History)*. London and New York: Routledge, Taylor & Francis Group, 2001, 114 p.
104. **Onuf N.**, *World of Our Making: Rules and Rule in Social Theory and International Relations*. Columbia: University of South Carolina Press, 1989, 341 p.
105. **Po-chia H. R.** (ed.), *A Companion to the Reformation World*. Melbourne: Blackwell Publishing, 2004, 572 p.

106. **Parker G.** (ed.), *The Thirty Years' War*, Second edition. London and New York: Routledge, Taylor & Francis e-Library, 2006, 336 p.
107. **Ringmar E.**, *Identity, Interest and Action: A Cultural Explanation of Sweden's Intervention in the Thirty Years War*. Cambridge, New York, Melbourne: Cambridge University Press, 1996, 236 p.
108. **Richter M., Baehr P.** (eds.), *Dictatorship in History and Theory: Bonapartism, Caesarism, and Totalitarianism*. Cambridge, New York: Cambridge University Press, 2004, 308 p.
109. **Rosenau J. N. and Czempiel E. O.** (ed.), *Governance without Government: Order and Change in World Politics*. Cambridge, New York: Cambridge University Press, 2003, 311 p.
110. **Roberts A.**, *Napoleon and Wellington: The Battle of Waterloo and the Great Commanders who fought it*. New York and London: Simon & Schuster, 2001, 384 p.
111. **Roberts A.**, *Napoleon: A Life*. New York: Penguin Publishing Group, 2014, 926 p.
112. **Remini R. V.**, *A Short History of the United States*. New York: HarperCollins Publishers Inc., 2008, 373 p.
113. **Sonnino P.**, *Mazarin's Quest: the Congress of Westphalia and the coming of the Fronde*. Cambridge, Massachusetts, London: Harvard University Press, 2008, 307 p.
114. **Schwarzfuchs S.**, *Napoleon, the Jews and the Sanhedrin*. London, Boston and Henley: Routledge & Kegan Paul, 1979, 218 p.
115. **Schroeder P. W.**, *The Transformation of European Politics, 1763-1848*. Oxford History of Modern Europe. New York, Oxford: Oxford University Press, 1999, 894 p.
116. **Schneid F. C.**, *Napoleon's Conquest of Europe: the War of the Third Coalition*. Westport and London: Praeger Publishers, 2005, 192 p.
117. **Simpson G.**, *Great Powers and Outlaw States: Unequal Sovereigns in the International Legal Order*. New York: Cambridge University Press, 2004, 391 p.
118. **Schom A.**, *One Hundred Days: Napoleon's Road to Waterloo*. Oxford and New York: Oxford University Press, 1992, 398 p.
119. **Treasure G.**, *The Making of Modern Europe, 1648–1780*. London and New York: Routledge, Taylor & Francis e-Library, 2003, 595 p.
120. **Teschke B.**, *The Myth of 1648: Class, Geopolitics, and the Making of Modern International Relations*. London and New York: Verso, 2003, 308 p.
121. **Tilly Ch.**, *Coercion, Capital, and European States, AD 990–1990*. Cambridge, MA: Basil Blackwell, 1990, 269 p.
122. **Tilly Ch.** (ed.), *The Formation of National States in Western Europe*. Princeton, New Jersey: Princeton University Press, 1975, 711 p.
123. **Tuck R.**, *The Rights of War and Peace: Political Thought and the International Order from Grotius to Kant*. Oxford and New York: Oxford University Press, 2002, 243 p.
124. **Tuck R.**, *Natural Rights Theories: Their Origin and Development*. Cambridge and New York: Cambridge University Press, 1981, 185 p.
125. **Toynbee A. J.**, *The Armenian Atrocities: the Murder of a Nation, with a speech delivered by Lord Bryce in the House of Lords*. London: Hodder & Stoughton, 1915, 117 p.
126. **Weber M.**, *The Protestant Ethic and the Spirit of Capitalism*. Translated by Talcott Parsons with an introduction by Anthony Giddens. London and New York: Routledge Taylor & Francis e-Library, 2005, 271 p.

127. **Weber M.** (1922), *Economy and Society: An Outline of Interpretive Sociology*. Edited and translated by Guenther Roth and Claus Wittich. Los Angeles and London: University of California Press, 1978, 1470 p.
128. **Wilson P. H.**, *The Thirty Years War: Europe's Tragedy*. Cambridge, Massachusetts: Harvard University Press, 2009, 996 p.
129. **Wilson P. H.**, *The Thirty Years War: A Sourcebook*. London and New York: Palgrave Macmillan, 2010, 384 p.
130. **Wendt A.**, *Social Theory of International Politics*. Cambridge, New York, Melbourne: Cambridge University Press, 1999, 429 p.
131. **Ward W. R.**, *Christianity under the Ancien Régime, 1648–1789. New Approaches to European History*, series editors William Beik and T. C. W. Blanning. Cambridge: Cambridge University Press, 2004, 269 p.
132. **Waltz K.**, *Theory of International Politics*. London, Amsterdam and Sydney: Addison-Wesley Publishing Company, 1979, 251 p.
133. **Wight M.**, *Four Seminal Thinkers in International Theory: Machiavelli, Grotius, Kant, and Mazzini*. Edited by Gabriele Wight and Brian Porter; Foreword by Sir Michael Howard, C.H. Introduction by David S. Yost. Oxford and New York: Oxford University Press, 2005, 166 p.
134. **Wight M.**, *Systems of States*. Edited with an introduction by Hedley Bull. Bristol: Leicester University Press, 1977, 232 p.
135. **Wight M.**, *International Theory: the Three Traditions*. Ed. by Gabriele Wight and Brian Porter. Leicester: Leicester University Press, 1994, 286 p.
136. **Woolf S. J.**, *Napoleon's Integration of Europe*. London and New York: Routledge, Taylor & Francis e-Library, 2003, 336 p.
137. **Woloch I.**, *Napoleon and His Collaborators: The Making of a Dictatorship*. New York and London: Norton & Company, 2001, 281 p.
138. **Wilson Ch.**, *The Transformation of Europe, 1558-1648*. Berkeley and Los Angeles: University of California Press, 1976, 301 p.
139. **Zehfuss M.**, *Constructivism in International Relations: The Politics of Reality*. New York: Cambridge University Press, 2004, 289 p.
140. **Zaum D.**, *The Sovereignty Paradox: The Norms and Politics of International Statebuilding*. Oxford and New York: Oxford University Press, 2007, 282 p.
141. **Lentz T.**, *Le congrès de Vienne: Une refondation de l'Europe 1814-1815*. Paris: éditions Perrin, 2013, 385 p.
142. **Lentz T.**, *Napoléon Diplomate. Ouvrage publié sous la direction de Guy Stavridès*. Paris: CNRS Éditions, 2012, 267 p.
143. **Андерсон Б., Бауэр О., Хрох М. и др.**, *Нации и национализм*. Пер с англ. и нем. Л. Е. Переяславцевой, М. С. Панина, М. Б. Гнедовского. Москва: Праксис, 2002, 416 с.
144. **Валлерстайн И.**, *Анализ мировых систем и ситуация в современном мире*. Пер. с англ. П. М. Кудюкина. Под ред. Б. Ю. Кагарлицкий. Санкт Петербург: Издательство «Университетская книга», 2001, 416 с.
145. **Веджвуд С. В.**, *Тридцатилетняя война*. Пер. с англ. И. В. Лобанова. Москва: АСТ, Астрель, Полиграф-издат, 2012, 571 с.
146. **Ведюшкин В. А., Юсим М. А.** (отв. ред.), *Мир в раннее Новое время: Т. 3 – 2013. Всемирная история: В 6 т. / гл. ред. А. О. Чубарьян; Ин-т всеобщ. истории РАН*. Москва: Наука, 2011, 854 с.

147. **Зюганов Г. А.**, География победы: Основы российской геополитики. Москва, 1997, 304 с.
148. **Калхун К.**, Национализм. Пер. А. Смирнова. Москва: Издательский дом «Территория будущего», 2006, 288 с.
149. **Карп С. Я.** (отв. ред.), Мир в XVIII веке, Т. 4 - 2013. Всемирная история: В 6 т., гл. ред. А. О. Чубарьян; Ин-т всеобщ. истории РАН. Москва: Наука, 2011, 787 с.
150. **Лависс Э., Рамбо А.** (под ред.), История XIX века. Пер. с фр., изд. под ред. Е. В. Тарле, т. 3, Время реакции и конституционные монархии. Москва: ОГИЗ, 1938, 631 с.
151. **Ленц Т.**, Наполеон. Пер. с фр. Е. Калантаровой. Москва: АСТ, Астрель, 2008, 160 с.
152. **Махмурян Г.**, Лига Наций, Армянский вопрос и Республика Армения. Ин-т истории НАН Армении. Ред. проф. Калифорнийского университета Лос-Анджелеса акад. Р. Ованнисян. Ереван: Артагерс, 1999, 176 с.
153. **Скирбекк Г., Гилье Н.**, История философии. Пер. с англ. В.И. Кузнецова; Под ред. С.Б. Крымского. Москва: Гуманит. изд. центр ВЛАДОС, 2003, 800 с.
154. Системная история международных отношений в двух томах. Под ред. **А. Д. Богатурова**, Т. Первый, События 1918-1945 годов. Москва: Культурная история, 2009, 520 с.
155. **Хабермас Ю.**, Вовлечение другого. Очерки политической теории. Пер. с немецкого Ю. С. Медведева, под ред. Д. В. Складнева. Санкт Петербург: Наука, 2001, 417 с.
156. **Хабермас Ю.**, Расколотый Запад. Пер. с нем. Москва: Весь Мир, 2008, 192 с.
157. **Хардт М., Негри А.**, Империя, Пер. с англ., под ред. Г. В. Каменской, М. С. Фетисова. Москва: Праксис, 2004, 440 с.
158. **Цыганков П. А.** (Рук. авт. колл.), Международные отношения: социологические подходы. Москва: Гардарика, 1998, 352 с.
159. **Чубарьян А. О.**, Европейская идея в истории. Проблемы войны и мира. Москва: Междунар. отношения, 1987, 352 с.
160. **Шлезингер А.**, Циклы Американской Истории. Пер. с англ. Москва: «Прогресс-Академия», 1992, 688 с.

Գ. ԳԻՏԱԿԱՆ ՀՈՂՎԱՃՆԵՐ

161. **Գալստյան Կ.**, Համընդհանուր խաղաղության պահպանման հայեցակարգը Վեստֆալի և Վիեննայի համակարգերում: Պատմության հարցեր-2, Տարեգիրք: Խմբ.՝ Ա. Ստեփանյան: Երևան, «Չանգակ», 2013, էջ 65-71:
162. **Գալստյան Խ**, Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հեռանկարները. «21-րդ ԴԱՐ», թիվ 4 (10), 2005, էջ 63-82:
163. **Եփրեմյան Տ.**, Նապոլեոն Բոնապարտը և ազգերի ինքնորոշման իրավունքը՝ ընդդեմ մեծ տերությունների եվրոպական համերաշխության: Վեմ համահայկական հանդես, Է(ԺԳ) տարի, թիվ 4 (52), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2015, էջ 97-119:
164. **Եփրեմյան Տ.**, Ազգերի ինքնորոշման իրավունքի պատմական հետազոծը՝ Վեստֆալյան խաղաղությունից մինչև Արցախյան հիմնահարց: Վեմ համահայկական հանդես, Ը(ԺԴ) տարի, թիվ 4 (56), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2016, էջ 9-32:

165. **Եվրեմյան Տ.**, Կոնստրուկտիվիզմի ակունքներում. Հոլոգո Գրոթիոս: Վեմ համահայկական հանդես, 2(ԺԲ) տարի, թիվ 4 (48), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2014, էջ 179-199:
166. **Եվրեմյան Տ.**, Վեստֆալյան համալսարանը իբրև արդի եվրոպական քաղաքականության շրջադարձային հանգրվան: Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն, № 3 (18), 2015, էջ 31-47:
167. **Եվրեմյան Տ.**, Վեստֆալյան աշխարհակարգի ձևավորման պատմությունը: Պատմություն և մշակույթ հայագիտական հանդես: Երևան, ԵՊՀ հրատ., 2014, էջ 219-227:
168. **Թորոսյան Տ. Ս.**, Ինքնորոշման իրավունքի կարգավիճակը, կիրառման չափանիշներն ու պայմանները: Լրաբեր Հասարակական Գիտությունների, № 1, 2008, էջ 18-37:
169. **Մկրտչյան Տ.**, Էդմունդ Բըրքը որպես անգլիական հակառակորդականության գաղափարախոս: Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն 141.6, Երևան, 2013, էջ 54-60:
170. **Շիրինյան Լ.**, Վիլսոնյան նախագիծը և Թուրքիան: «21-րդ ԴԱԲ», թիվ 4 (22), 2008, էջ 97-112:
171. **Adler E.**, Seizing the Middle Ground: Constructivism in World Politics. *European Journal of International Relations*, London: SAGE Vol. 3(3), pp. 319–363.
172. **Burkhardt J.**, Wars of States or Wars of State-Formation? In *War, the State, and International Law in Seventeenth-Century Europe*. Edited by Olaf Asbach and Peter Schröder. Farnham, Burlington: Ashgate Publishing, 2010, pp. 17-34.
173. **Buzan B.**, The English School: An Underexploited Resource in IR. *Review of International Studies*, Vol. 27, No. 3, Cambridge University Press, Jul., 2001, pp. 471-488.
174. **Croxtan D.**, The Peace of Westphalia of 1648 and the Origins of Sovereignty. *The International History Review*, Vol. 21, No. 3, Taylor & Francis, Sep., 1999, pp. 569-852.
175. **Cox R.**, Social Forces, States and World Orders: Beyond International Relations Theory. *Millenium* 10/2 (1981), pp. 126-155.
176. **Donelan M.**, Grotius and the Image of War. *Millennium: Journal of International Studies*, September 1983, vol. 12, No. 3, pp. 233-243.
177. **Findley C. V.**, A Quixotic Author and His Great Taxonomy: Mouradgea D’Ohsson and His Tableau General De L’empire Othoman, 19th International Congress of Historical Sciences 6-13 August 2000, University of Oslo, pp. 1-64. URL: <http://www.oslo2000.uio.no/program/papers/m1b/m1b-findley.pdf> (20.02.2015).
178. **Forde S.**, Hugo Grotius on Ethics and War. *The American Political Science Review*, Vol. 92, No. 3 (Sep., 1998), pp. 639-648.
179. **Ghervas S.**, Antidotes to Empire: From the Congress System to the European Union, in *EUtROPEs: The Paradox of European Empire*, (Parisian Notebooks, 7), ed. John W. Boyer and Berthold Molden. Chicago: University of Chicago Press, 2014, pp. 49-81.
180. **Ghervas S.**, The Congress of Vienna: A Peace for the Strong (Europe after Napoleon). *History Today* Vol. 64, Issue 9, September 2014, pp. 30-32.
181. **George C. T.**, The Eroica Riddle: Did Napoleon Remain Beethoven's Hero? A Great Myth: Beethoven the Democrat vs. Napoleon the Tyrant. *Beethoven: Letters, Journals and Conversations. Napoleonic Scholarship: The Journal of the International Napoleonic Society*,

- Vol. 1, N. 2, December 1998 (Էջ աղբյուրումը բացակայում է). URL: http://www.napoleon-series.org/ins/scholarship98/c_eroica.html (28.05.2016).
182. **Hassan D.**, The Rise of the Territorial State and the Treaty of Westphalia. *Yearbook of New Zealand Jurisprudence*, ed. Gay Morgan, Vol. 9, 2006, pp. 62-70.
 183. **Kingsbury B.**, A Grotian Tradition of Theory and Practice?: Grotius, Law, and Moral Skepticism in the Thought of Hedley Bull. *Law Review Association of Quinnipiac Collage*, Vol. 17:3, N. 1, Spring 1997, pp. 3-33.
 184. **Kissinger H. A.**, The Congress of Vienna: A Reappraisal. *World Politics*, Vol. 8, No. 2. Cambridge University Press, Jan., 1956, pp. 264-280.
 185. **Kampmann Ch.**, “Peace Impossible? The Holy Roman Empire and the European State System in the Seventeenth Century.” In *War, the State, and International Law in Seventeenth Century Europe*. Edited by Olaf Asbach and Peter Schröder. Farnham, Burlington: Ashgate Publishing, 2010, pp. 197-210.
 186. **Kolstø P., Blakkisrud H.**, De facto States and Democracy: The case of Nagorno-Karabakh. *Communist and Post-Communist Studies*, Vol. 45, Issues 1–2, March–June 2012, pp. 141–151.
 187. **Kratochwil F., Ruggie J.**, International Organization: A State of the Art on an Art of the State. *International Organization*, Vol. 40, No. 4, MIT Press, Autumn, 1986, pp. 753-775.
 188. **Lesaffer R.**, The Peace of Utrecht, the Balance of Power and the Law of Nations. *Tilburg Law School Legal Studies Research Paper Series* No. 05/2014, pp. 1-35.
 189. **Lewis B.**, The Impact of the French Revolution on Turkey: Some Notes on the Transmission of Ideas. *Journal of World History*, Vol. I, N 1, Juillet 1953, pp. 105-125.
 190. **Lynch A.**, Woodrow Wilson and the Principle of ‘National Self-Determination’: A Reconsideration. *Review of International Studies*, Vol. 28, No. 2 (Apr., 2002), pp. 419-436.
 191. **Moita L.**, A Critical Review on the Consensus around the Westphalian System. *JANUS.NET e-journal of International Relations*, Vol. 3, No. 2, fall 2012, pp. 17-42.
 192. **Mardin S.**, The Influence of the French Revolution on the Ottoman Empire. *International Social Science Journal*, Vol. 41, issue 1, 1989, pp. 17-31.
 193. **Nalbandian E.**, Nagorno-Karabakh: Is A Solution Visible? *Politique Internationale*, N-146, winter 2014-2015, RA MFA Official website URL: http://www.mfa.am/u_files/file/politic/Edward%20Nalbandian's%20article%20in%20the%20Politique%20Internationale%20magazine.pdf (10.01.2015), pp. 1-11.
 194. **Onuf N.**, The Constitution of International Society. *European Journal of International Law*, Vol. 5, N 1, 1994, pp. 1-19.
 195. **Papian A.**, On the Principles of Self-Determination and So-Called “Territorial Integrity” In Public International Law (The Case of Nagorno-Karabakh). «21st Century», № 2 (8), 2010, pp. 21-37.
 196. **Rowen H. H.**, The Peace of Westphalia Revisited. *The Journal of Modern History*, Vol. 33, No. 1, The University of Chicago Press, Mar., 1961, pp. 53-56.
 197. **Rayapen L. and Anderson G.**, Napoleon and the Church. *International Social Science Review*, Vol. 66, No. 3 (summer 1991), pp. 117-127.
 198. **Straumann B.**, The Peace of Westphalia as a Secular Constitution. *Constellations* Vol. 15, Number 2, Blackwell Publishing Ltd., 2008, pp. 173-188.
 199. **Schroeder P. W.**, The 19th-Century International System: Changes in the Structure. *World Politics*, Vol. 39, No. 1, Cambridge University Press, Oct., 1986, pp. 1-26.

200. **Schroeder P. W.**, Did the Vienna Settlement Rest on a Balance of Power? *The American Historical Review*, Vol. 97, No. 3, The University of Chicago Press, Jun., 1992, pp. 683-706.
201. **Stock P.**, Imposing on Napoleon: the Romantic appropriation of Bonaparte. *Journal of European Studies*, 36 (3), SAGE Publications 2006, pp. 363-388.
202. **Scharf M. P.**, Seizing the “Grotian Moment”: Accelerated Formation of Customary International Law in Times of Fundamental Change. *Cornell International Law Journal*, Vol. 43 (2010), pp 439-469.
203. **Vreeland H. Jr.**, Hugo Grotius, Diplomatist. *The American Journal of International Law*, Vol. 11, No. 3, American Society of International Law, Jul., 1917, pp. 580-606.
204. **Viegnes M.**, The French Vision of Europe from Victor Hugo’s United States of Europe to the No to the Constitution. *Europe’s Journal of Psychology* Vol 1, No 4, 2005 (Էջ աղբյուրումը բացակայում է). URL: <http://ejop.psychopen.eu/article/view/376/html> (28.05.2016).
205. **Waszink J.**, Tacitism in Holland: Hugo Grotius’ *Annales et Historiae de rebus Belgicis*. In *Acta Conventus Neo-Latini Bonnensis: Proceedings of the 12th International Congress of Neo-Latin Studies* (Bonn 2003). Ed. by Rhoda Schnur, Medieval & Renaissance Texts & Studies vol. 315, 2006, pp. 881-892.
206. **Wendt A.**, Anarchy is what States Make of it: The Social Construction of Power Politics. *International Organization*, Vol. 46, No. 2, MIT Press, Spring, 1992, pp. 391-425.
207. **Wight M.**, An Anatomy of International Thought. *Review of International Studies*, Vol. 13, No. 3, Cambridge University Press, Jul. 1987, pp. 221-227.
208. **Watson A.**, Systems of States. *Review of International Studies*, Vol. 16 / Issue 02 / April 1990, pp 99-109.
209. **Wendt R.**, The Principle of “Ultima Ratio” And/Or the Principle of Proportionality. *Oñati Socio-Legal Series*, Vol. 3, N. 1 (2013), pp. 81-94.
210. **Wilson E.**, Mare Liberum and Opinio Juris: A Grotian Reading of the North Sea Continental Shelf Cases. *Monash University Law Review* Vol. 28, No 2, 2002, pp. 299-326.
211. **Yepremyan T.**, “Nagorno-Karabakh in the Eastern European Security Complex,” *New Eastern Europe Magazine: Articles and Commentary*, Published on Wednesday, 06 April 2016, (Էջ աղբյուրումը բացակայում է). URL: <http://neweasterneurope.eu/articles-and-commentary/1944-nagorno-karabakh-in-the-eastern-european-security-complex> (10.01.2017).
212. **Ghervas S.**, La paix par le droit, ciment de la civilisation en Europe? La perspective du siècle des Lumières, in Antoine Lilti et Céline Spector (éds.), *Penser l’Europe au XVIIIe siècle: Commerce, Civilisation, Empire*. Oxford: Voltaire Foundation, 2014, pp. 47-69.
213. **Jamgocyan O.**, La Révolution française vue et vécue de Constantinople (1789-1795). *Annales historiques de la Révolution française*, N°282, 1990, pp. 462-469.
214. **Kotcharian Ch.**, Perceptions arméniennes: Pourquoi le conflit du Haut-Karabagh n'est toujours pas réglé? *Prévention des crises et promotion de la paix* (Vol. III), Ed. Jean-Pierre Vettovaglia. Déterminants des conflits et nouvelles formes de prévention, Bruylant, septembre 2013, pp. 569-593.
215. **Kerautret M.**, Entrevue d’Erfurt. *Revue du Souvenir Napoléonien*, Société française d’histoire napoléonienne, N° 475, Avril-Mai-Juin 2008, pp. 31-38.
216. **Kerautret M.**, Quelques réflexions sur l’historiographie française du Congrès de Vienne. *Napoleonica. La Revue*, 2015/1 (N° 22), pp. 87-103.
217. **Minnerath R.**, Le concordat de Bonaparte et son actualité. *Napoleonica. La Revue* 2015/2 (N° 23), pp. 4-20.

218. **Nicolaidis D.**, La France et les Grecs sous la Révolution et l'Empire, étude d'une représentation à l'échelle de peuples. In: *Annales historiques de la Révolution française*, N° 286, 1991. pp. 515-537.
219. **Soutou G.-H.**, L'identité de l'Europe du point de vue de l'historien. *Outre-Terre* 2004/2 (no 7), pp. 31-42.
220. **Зонова Т. В.**, Духовные основы и идеологические постулаты российской дипломатии. Под ред. А. Чубарьяна, Религия и политика в XX веке. Москва, 2006, с. 260-281.
221. **Зонова Т. В.**, Вестфальская система. *Вестник МГИМО – №1*, 2008, с. 78-80.
222. **Кортунов С. В.**, Крушение Вестфальской системы международных отношений и становление нового мирового порядка. В кн.: *Мировая политика*. Москва: Изд. дом ГУ-ВШЭ, 2007, с. 75-117.
223. **Лебедева М. М.**, Что угрожает Вестфалю? Международные процессы: *Журнал теории международных отношений и мировой политики* Т. 6, №1(16), январь-апрель 2008, с. 117-121.

Դ. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒ ՐՆԵՐ

224. **Council endorses proposal to declare East Timor's Independence 20 May 2002.** *United Nations* (Press release). Security Council. 31 October 2001. URL: <http://www.un.org/press/en/2001/sc7192.doc.htm> (14.01.2017).
225. **Freedom in the World 2015: Nagorno-Karabakh.** Freedom House, URL: <https://freedomhouse.org/report/freedom-world/2015/nagorno-karabakh> (10.01.2015).
226. **Miller J.**, Hugo Grotius. *The Stanford Encyclopedia of Philosophy* (Spring 2014 Edition), Edward N. Zalta (ed.). URL: <http://plato.stanford.edu/archives/spr2014/entries/grotius/> (13.06.2014).
227. **Organization for Security and Co-operation in Europe (OSCE):** History. Official website, URL: <http://www.osce.org/history> (10.07.2016).
228. **Scotland Votes No:** Scotland has voted against becoming an independent country by 55% to 45%. *BBC News*, URL: <http://www.bbc.com/news/events/scotland-decides/results> (11.08.2016).

ገ ለሃይሉ ሃላፊ

ՀԱՎԵԼ ՎԱՃ 1. ՀՈՒԳՈ ԳՐՈՏԻՈՒՄԻ ՀԱԿԻՐՃ ԿԵՆՍԱԳՐՈՒ ԹՅՈՒՆԸ

Հոուգո Գրոտիուսը (հոլանդերեն՝ Huig de Groot, լատիներեն՝ Hugo Grotius) ծնվել է 1583 թ. ապրիլի 10-ին Հոլանդիայի Դելֆտ քաղաքում Յան դե Գրոտի և Ալիդավան Օվերսիփ ընտանիքում, Նիդերլանդական հեղափոխության ընթացքում: Հայրը՝ Յան դե Գրոտը, ուսյալ անձնավորություն էր և վաղ տարիքից հոգ էր տանում որդու հումանիստական և Արիստոտելյան ոգով կրթության համար: 1594 թ. դեռևս տասնմեկամյա պատանի Հոուգոն սկսում է իր ուսումը Լեյդենի համալսարանում և ստանում փայլուն հումանիստական կրթություն: Ծուռով նա հայտնվում է մի խումբ առաջավոր մտավորականների ուշադրության կենտրոնում՝ այդ թվում ֆրանսիացի նշանավոր հումանիստ և պատմագետ Ժոզեֆ Սկալիգերի, հոլանդացի պատմագետ Յոուստուս Լիփսիուսի ու մաթեմաթիկոս Սիմոն Սթեվինի: Համալսարանը ավարտելուց անմիջապես հետո 1598 թ. Գրոտիուսը միանում է Նիդերլանդների Մեծ փենսիոնար (համարժեք վարչապետի պաշտոնին՝ անգլ. Grand Pensionary, հոլ. raadspensionaris) Յոհան վան Օլդենբարնեվելտի և ծովակալ կոմս Յոուստին վան Նասսաուի դիվանագիտական առաքելությանը դեպի Ֆրանսիայի արքա Հենրի 4-րդի արքունիք: Նիդերլանդական պատվիրակության կազմում Գրոտիուսը ճանապարհորդում է Ֆրանսիա: Առաքելության նպատակն էր կանխել ֆրանս-իսպանական հաշտության կնքումը, քանզի դեռևս շարունակվում էր Նիդերլանդների միացյալ պրովինցիաների անկախության համար պայքարը Իսպանիայի դեմ: Նիդերլանդներն իրենց անկախության համար պայքարում զգում էին ֆրանսիական օգնության կարիքը: Գրոտիուսը դիվանագիտական բանակցություններում չունեի պաշտոնական դեր և գործընթացին մասնակցում էր իբրև Օլդենբարնեվելտի օգնական (protégé): Առաքելությունը ձախողվեց: Սակայն մինչև Նիդերլանդներ վերադարձը Գրոտիուսը ներկայացվեց Ֆրանսիայի արքա Հենրի 4-րդին և արժանացավ նրա ընդունելությանը: Դիմելով Գրոտիուսին՝ արքան բացականչում է. «Ահա Հոլանդիայի հրաշքը»: Այս որակումը պետք է ուղեցկեր նրան նաև իր կյանքի հետագա տարիներին: Ավելի, 1598 թ. մայիսի 5-ին Հոուգո Գրոտիուսին շնորհվեց Օռլեանի համալսարանի իրավագիտության պատվավոր դոկտորի կոչում:

1601 թ. Գրոտիուսը դարձավ Յոլանդիայի պաշտոնական պատմագիրը և շարադրեց մի շարք աշխատանքներ, որոնք հասցեագրված էին ցույց տալու իսպանական գահի դեմ հոլանդական հեղափոխության և Լեգիտիմությանը և արդարացիությանը: Այս շարքում առանձնանում է 1610 թ. հրատարակված նրա «Բատավիական հանրապետության հնությանը» (*De Antiquitate Reipublicae Batavae*) աշխատանքները:

1604 թ. Գրոտիուսը նշանակվում է Յոլանդական Արևելահնդկական ընկերության իրավաբան: Այս ժամանակահատվածը նշանավորվում էր հոլանդական առևտրային և գաղութային ծավալման միջոցով հեղափոխության ճյուղավորմամբ, երբ շահերի բախում տեղի ունեցավ Պորտուգալիայի հետ, որը ընդհանուր գահեր կիսում Իսպանիայի հետ: Այս կերպ Գրոտիուսը ներգրավվեց արտոգալական «Սանտա Կատերինա» նավի շուրջ առաջացած դատական գործին, որը 1603 թ. Մալակայի նեղուցում ազդարարվել էր Յոլանդական Արևելահնդկական ընկերության կողմից: Արդյունքում ծնվեց Գրոտիուսի «Մեկնաբանությունն ավարի իրավունքի մասին» (*De Jure Praedae Commentarius*, 1604)⁵²¹ նշանավոր աշխատանքները, որը չհրատարակվեց իր կենդանության օրոք: Գրոտիուսի այս ձեռագիր աշխատանքները հայտնաբերվեց միայն 1864 թ. աճուրդի ժամանակ: Գրոտիուսի կենդանության օրոք իբրև առանձին գիրք հրատարակվեց և լայնորեն շրջանառության մեջ մտավ միայն այս աշխատանքի 12-րդ գլուխը՝ վերնագրված «Ազատ ծով» (*Mare Liberum*, 1608): Աշխատանքի մեջ Գրոտիուսը պաշտպանում և հիմնավորում էր Յոլանդական Արևելահնդկական ընկերության առևտրային իրավունքները Իսպանիայի ու Նիդերլանդների միջև բանակցություններում և 1609 թ. Տասներկուամյա հաշտության պայմանագրի կնքմանն ընդառաջ:

1607 թ. Գրոտիուսը նշանակվում է Յոլանդիայի, Չեյնայի և Վեստ-Ֆրիսլանդիայի գլխավոր փաստաբան (*Attorney-General*): Գրոտիուսը հեղինակել է մի շարք աշխատանքներ աստվածաբանության

⁵²¹ Տե՛ս **Grotius H.**, *Commentary on the Law of Prize and Booty*. Edited and with an Introduction by Martine Julia van Ittersum (The text of this edition is a reprint of the translation of *De Jure Praedae* by Gwladys L. Williams originally published by the Carnegie Endowment for International Peace: Oxford: Clarendon Press, 1950). Indianapolis: Liberty Fund, Inc., 2006.

բնագավառում, այդ թվում՝ «Յոլանդիա և Վեստ-Ֆրիսլանդիա նահանգների կրոնականությունը» (Ordinum Hollandiae ac Westfriesiae Pietas, 1613) ու «Քրիստոնեական հավատքի ճշմարտությունը» (De Veritate Religionis Christianae, 1627) աշխատությունները: Նա հանդես էր գալիս աստվածաբանական կոնսենսուսի, էկոլմենիկ միության և հանդուրժողականության խաղաղեցնող դիրքերից՝ «անցնելով Ռեֆորմացիայի սահմաններից անդին և գրելով ողջ Քրիստոնեական աշխարհի համար»⁵²²: Իր աստվածաբանական հայացքներով Գրոտիուսը ասոցացվում էր Արմինիուսյան ազատական կալվինականության (Arminian liberal Calvinism) հետ:

1608 թ. Գրոտիուսն ամուսնանում է Մարիա վան Ռեյգերսբերգենի հետ: Նրանք ունենում են ութ երեխաներ, որոնցից չափահասության տարիքը հաղթահարում են միայն չորսը: 1612 թ. Գրոտիուսը դառնում է Ռոտերդամի քաղաքագլուխ, որը Նիդերլանդների միացյալ պրովինցիաների հանրապետության երկրորդ խոշոր քաղաքն էր: 1613 թ. նա դիվանագիտական առաքելությամբ մեկնում է Անգլիայի արքա Ջեյմս 1-ինի արքունիք՝ քննարկելու ծովերում նավարկության ազատության և եկեղեցական ու դավանանքային հարաբերությունների խնդիրներ: Այդժամ Գրոտիուսն արդեն բավականին հայտնի էր նաև միջազգային ասպարեզում:

1618 թ. խառնակ քաղաքական իրադրության պայմաններում, երբ Նիդերլանդական փոքր պրովինցիաները պայքարում էին ավելի մեծերի գերիշխանության դեմ և վերսկսվել էր նաև իսպանական գահի դեմ պատերազմը, իսկ ուղղափառ կալվինիստները պայքարում էին կալվինիստական մեկ այլ՝ առավել հանդուրժողական Արմինիուսյան ճյուղի ներկայացուցիչների դեմ, կատարվեց պետական հեղաշրջում: Գրոտիուսը ձերբակալվեց և դատապարտվեց ցմահ ազատազրկության: 1619-1621 թվականներին Գրոտիուսն իր կնոջ, երեխաների և գրքերի հետ միասին պահվում էր Լուվեշտեյն ամրոցում: Այս ընթացքում Գրոտիուսը գրում է մի քանի աշխատանքներ, որոնցից նշանավոր էր «Ծանոթություն Յոլանդիայի

⁵²² **Wight M.**, Four Seminal Thinkers in International Theory: Machiavelli, Grotius, Kant, and Mazzini. Edited by Gabriele Wight and Brian Porter; Foreword by Sir Michael Howard, C.H. Introduction by David S. Yost. Oxford and New York: Oxford University Press, 2005, pp. 29-55.

իրավագիտությանը» (Inleiding tot de Hollandsche Rechtsgeleertheyd): Աշխատությունը հիմնարար նշանակություն ունեցավ հոլանդական ու հարավ-աֆրիկյան իրավական համակարգերի հաստատման և ընդհանրապես իրավագիտության տեսության հետագա զարգացման համար: 1921 թ. իր կնոջ՝ Մարիայի, օգնությամբ գրապահարանի մեջ թաքնված նա կարողանում է փախչել Լոնդոն տեղն ամրոցից և հաստատվել Փարիզում:

Փարիզում Գրոտիուսն ընդունելության է արժանանում Ֆրանսիայի արքա Լուի 13-րդի արքունիքում: Ֆրանսիական գահը նրան շնորհում է տարեկան 3000 լիվր թոշակ, որն ի վեջո դադարեցվեց կարդինալ Ռիշելյեի կողմից: 1621-1631 թթ. Գրոտիուսն աղքատության մեջ ապրում և ստեղծագործում է Փարիզում:

Ընթանում էր համաեվրոպական երեսնամյա պատերազմը (1618-1648 թթ.), երբ 1622 թ. նա սկսում է շարադրել իր գլուխգործեցը՝ «Պատերազմի և խաղաղության իրավունքը» (De Jure Belli ac Pacis, 1625) հիմնարար աշխատությունը, որը 1625 թ. հրատարակվում է Փարիզում: Գիրքը Գրոտիուսը ձևում է Ֆրանսիայի արքա Լուի 13-րդին: Մեկ տարի անց՝ 1626 թ., Ֆրանկոսրտում լույս է տեսնում գրքի երկրորդ հրատարակությունը: 1631 թ. Ամստերդամում լույս է տեսնում Գրոտիուսի «Պատերազմի և խաղաղության իրավունքը» աշխատության երրորդ լրամշակված հրատարակությունը: Այստեղ կատարված փոփոխություններով հեղինակը փորձել էր շահել նաև Նիդերլանդների կալվինիստ դեկալարության բարեհաճությունը՝ ձգտելով հայրենիք վերադառնալ ու թույլ տվություն ստանալ: Մտադրություն, որն այդպես էլ նրան չհաջողվեց իրականացնել⁵²³: Թեպետ 1631 թ. Գրոտիուսը մեկնեց Ամստերդամ և փորձեց զբաղվել իրավագիտությամբ, սակայն կարճ ժամանակ անց նա կրկին ստիպված էր հեռանալ, այս անգամ ընդմիջտ:

1632 թ. Գրոտիուսը հաստատվեց Գերմանիայի Յամբուրգ քաղաքում, որը սահմանամերձ էր Շվեդիական տերությանը: Շվեդիայի արքա Գուստավուս Ադոլփուսը Գրոտիուսի գաղափարական համակիրներից էր և առաջարկեց նրան ստանձնելու Ֆրանսիայում Շվեդիայի դեսպանի պաշտոնը: 1634 թ.՝ արդեն արքայի մահից հետո,

⁵²³ Տե՛ս **Jeffery R.**, Hugo Grotius in International Thought. New York: Palgrave Macmillan, 2006, pp. 7-13.

Շվեդիայի կանցլեր Աքսել Օքսենսիերնաս Գրոտիուսին նշանակեց այդ պաշտոնում: 1635 թ. Գրոտիուսը վերադարձավ Փարիզ իբրև Շվեդիայի դեսպան՝ մեծապես նպաստելով Երեսնամյա պատերազմի ընթացքում ֆրանս-շվեդական դաշինքին և ռազմավարական համագործակցությանը:

1645 թ. Շվեդիայի թագուհի Բրիստինայի և կանցլեր Օքսենսիերնայի կողմից նահետկանչվեց Ստոկհոլմ: Նույն տարում Վեստֆալիայի Մյունստեր և Օսնաբրյուկ քաղաքներում մեկնարկել էր եվրոպական մեծ համաժողովը բանակցելու համար Երեսնամյա պատերազմի ավարտը: Յետագոտողները ենթադրում են, որ հենց Վեստֆալի խաղաղության կոնգրեսին մասնակցելու նպատակով էր 1645 թ. Գրոտիուսը Ստոքհոլմից նավարկությանը սկսել դեպի Գերմանիա: Սակայն Պոմերանիայի ափերի մոտ նավաբեկությանից հետո Յուլիոս Գրոտիուսը հիվանդանում է և 1645 թ. օգոստոսի 28-ին մահանում Ռոստոկում⁵²⁴: Նրա աճյունն ամփոփված է իր ծննդավայրում՝ Յուլիանդիայի Դելֆտ քաղաքի Նիյուվեկերկ (Nieuwe Kerk) եկեղեցում: Գրոտիուսի տապանագիրը, որի հեղինակը ևս ինքն է, ասում է. «Ահա նա՝ Յուլիոս Գրոտիուսը, հոլանդացի բանտարկյալը և աքսորյալը, Շվեդիայի Մեծ թագավորության դեսպանը» (“Grotius hic Hugo est, Batavum captivus et exul, Legatus Regni, Suecia magna, tui”): 1886 թ. սեպտեմբերի 17-ին Նիյուվեկերկ եկեղեցու դիմաց կանգնեցվեց Յուլիոս Գրոտիուսի արձանը՝ թիկունքով եկեղեցուն և դեմքով դեպի արդարադատության պալատը: Ըստ արժանահավատ ավանդության՝ նրա վերջին խոսքերն են եղել. «Ձեռնարկելով շատ գործեր՝ ես իրագործեցի նվազագույնը» (“By undertaking many things I have accomplished little”)⁵²⁵:

⁵²⁴ Տե՛ս **Vreeland H. Jr.**, Hugo Grotius, Diplomatist. *The American Journal of International Law*, Vol. 11, No. 3 (American Society of International Law, Jul., 1917), pp. 603-606.

⁵²⁵ **Wight M.**, Four Seminal Thinkers in International Theory: Machiavelli, Grotius, Kant, and Mazzini, pp. 29-55.

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՀՈՒԳՈ ԳՐՈՏԻՈՒՄԻ ՈՒՂԵՐՁԸ «ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻՆ ԵՎ ԱՉՍՏ ՈՒ ԱՆԿԱՆԱՉԳԵՐԻՆ» (ՀԱՏՎԱԾ)⁵²⁶

«... Չկա ձեզանից մեկը, ով բացեիքաց չի հայրարարում, որ ամեն մարդ իրավունք ունի կառավարելու և տնօրինելու իր սեփականությունը, չկա ձեզանից մեկը, ով չի պնդում, որ բոլոր քաղաքացիներն ունեն հավասար և ոչ խտրական իրավունք օգտագործելու գետերն ու հանրային տարածքները, ձեզանից մեկը, ով իր ողջ գործությամբ չի պաշտպանում ճանապարհորդության և առևտրի ազատությունը:

Եթե համարենք, որ փոքր հասարակությունը, որ մենք պետություն ենք կոչում, չի կարող գոյատևել առանց այս սկզբունքների կիրառման (և, իհարկե, այն չի կարող), ապա ինչու՞ այդ նույն սկզբունքները անհրաժեշտ չեն լինի ողջ մարդկային ցեղի ընկերային կառույցը պաշտպանելու և, այդպիսով, պահպանելու ներդաշնակությունը: Եթե որևէ մեկը ըմբոստանում է օրենքի և կարգի այս սկզբունքների դեմ, դուք իրավասու եք վրդովվելու և, անգամ, իրավախախտման մեծությամբ համապատասխան պատիժներ վճռելու, քանզի բացի այդ ոչ մի այլ պատճառով կառավարությունը չի կարող հանգիստ լինել, որտեղ այս տեսակ ապօրինություններ են թույլատրվում: Եթե թագավորը թագավորի դեմ անարդարացիորեն և բռնությամբ է գործում, և ազգը ազգի, նման գործողությունը հանգեցնում է այդ համընդհանրական պետության խաղաղության խանգարմանը և հանդիսանում է ոտնձգություն Գերիշխանի դեմ, այնպես չէ՞ ...

Հին ժամանակներում առավել քաղաքակիրթ ազգերի միջավայրում բոլոր հանցագործություններից ամենամեծն էր համարվում պատերազմելը նրանց դեմ, ովքեր պատրաստ էին իրենց դժվարությունների կարգավորման համար դիմելու իրավարարության, սակայն նրանց դեմ, ովքեր մերժել էին այդքան արդար առաջարկը, բոլոր մյուսներն էին շրջվում և իրենց

⁵²⁶ **Grotius H.** (1608), *The Freedom of the Seas or the Right Which Belongs to the Dutch to Take Part in the East Indian Trade*. Translated With A Revision of the Latin Text of 1688 by Ralph Van Deman Magoffin, Edited With an Introductory Note by James Brown Scott, Carnegie Endowment for International Peace. New York and London: Oxford University Press, 1916. This is version 1.0 of the Frellock Book Series edition, Oslo, 2008, pp. 1-6.

համակցված ռեսուրսներով ճնշում նրանց, ոչ որպես որևէ մի ազգի թշնամիների, բայց իբրև իրենց բոլորի թշնամիների: Այսու՝ մենք տեսնում ենք, որ այս նպատակով են պայմանագրերը կնքվում և իրավարարները նշանակվում: Թագավորներն իրենք և հզոր ազգերը սովոր էին կարծելու, թե ոչինչ այնքան ասպետական կամ այնքան ազնվական չէ, որքան ամբարտավանին սանձելը և թուլլին ու անմեղին օգնելը:

Եթե այսօր հաշվի առնենք այն սովորույթը, թե մարդկությանը առնչվող ամեն բան առնչվեր նաև յուրաքանչյուրի անձին, մենք վստահորեն կապրեինք շատավելի խաղաղ աշխարհում: Քանզի շատերի ինքնավստահությունը կնվազեր, և նրանք, ովքեր հիմա անտեսում են արդարությունը նպատակահարմարության պատրվակով, կմոռանային անարդարության դասը ի վնաս իրենց:

Մենք զգացել ենք, որ, հավանաբար, մենք չէինք տածում անխոհեմ հույս մեր խնդրում: Բոլոր դեպքերում մենք վստահ ենք, որ դուք բոլորդ կճանաչեք փաստերը պատշաճ կերպով կշռադատելուց հետո, այն դեպքում, որ խաղաղության ձգձգումները չեն կարող այլևս մեր առջև դրվել, քան կարող են պատերազմի պատճառները, և ինչպես մինչ այժմ եք եղել հանդուրժող, անգամբարյացակամորեն տրամադրված մեր նկատմամբ, մենք վստահ ենք, որ դուք ոչ միայն կմնաք այս կարծիքին, այլև նույնիսկ ավելի բարեկամական կլինեք մեր նկատմամբ ապագայում: Ոչինչ ավելի ցանկալի չէ, որքան սակարող էլ ինել այն մարդկանց համար, ովքեր կարծում են, որ երջանկության առաջին պայմանը լավ գործերն են, երկրորդը՝ բարի համբավը»:

ՀԱՎԵԼ ՎԱՃ 3. ՊԵՏՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ԽԱՂԱՂՈՒ ԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՆՏՅԱՆ ՆԱԽԱԳԻՃԸ

«ԴԵՊԻ ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ԽԱՂԱՂՈՒ ԹՅՈՒՆ. ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԻՃ»⁵²⁷

«ՆԱԽՆԱԿԱՆ ՀՈՂՎԱՃՆԵՐ»⁵²⁸

1. Ոչ մի խաղաղու թյան պայմանագիր, որը կնքման ժամանակ գաղտնի կերպով պահպանում է նոր պատերազմի համար հիմքեր, չպետք է վավերական համարվի:
2. Ոչ մի անկախ պետություն (մեծ թե փոքր նշանակություն ունի) ո՛չ ժառանգություն, ո՛չ փոխանակման, վաճառքի կամ նվիրատվության արդյունքում չի կարող ձեռք բերվել այլ պետության կողմից:
3. Մշտական բանակները աստիճանաբար պետք է ամբողջությամբ վերացվեն:
4. Պետական պարտքերը չպետք է օգտագործվեն արտաքին քաղաքականության նպատակների համար:
5. Ոչ մի պետություն չպետք է բռնի կերպով միջամտի այլ պետության սահմանադրական կարգի և կառավարման մեջ:
6. Ոչ մի պետություն պատերազմի ժամանակ ուրիշի նկատմամբ չպետք է դիմի այնպիսի թշնամական գործողությունների, որոնք անհնարին կդարձնեն փոխադարձ վստահությունը ապագայում խաղաղության ժամանակ: Այնպիսի գործողությունները կարող են ներառել գաղտնի մարդասպանների, թունավորողների ուղարկումը, կապիտուլացիայի պայմանների խախտումը, թշնամական պետությունում դավաճանության հրահրումը և այլն:

⁵²⁷ Է. Կանտի աշխատությունն ից հավերժական խաղաղության նախագծի հիմնական դրույթները մենք առանձնացրել, թարգմանել և իբրև պայմանագրի նախագիծ ներկայացրել ենք վերը: Տե՛ս **Kant I.**, (1724–1804), *Toward Perpetual Peace and Other Writings on Politics, Peace, and History*. Edited and With an Introduction by Pauline Kleingeld, Translated by David L. Colclasure. New Haven and London: Yale University Press, 2006, pp. 67-93.

⁵²⁸ Կանտը այս դրույթներից մի քանիսը դասում է խիստ օրենքների (*leges strictae*) շարքին, որոնք անկախ հանգամանքներից ենթական են անհապաղ իրականացման: Դրանք են 1-ին, 5-րդը և 6-րդը: Մյուսների՝ 2-րդի, 3-րդի և 4-րդի, իրականացումը որոշ սյուբեկտիվ գործոնների առկայության դեպքում նա համարում է հետաձգելի (*leges latae*), որպեսզի շտապողականության պատճառով չտուժի գլխավոր նպատակը: Տե՛ս **Kant I.**, նշվ. աշխ., էջ 71:

ԵԶՐԱՓՈՒԿ ԶՈՂԱՆՆԵՐ

ՉԱՎԵՐԺԱԿԱՆ ԽԱՂԱՂՈՒ ԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԵԶՐԱՓՈՒԿ ԶՈՂԱՆՆԵՐ

Յուրաքանչյուր պետության քաղաքացիական սահմանադրությունը, պետք է լինի հանրապետական:

ՉԱՎԵՐԺԱԿԱՆ ԽԱՂԱՂՈՒ ԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԵԶՐԱՓՈՒԿ ԶՈՂԱՆՆԵՐ

Միջազգային իրավունքը պետք է հիմնված լինի ազատ պետությունների ֆեդերալ իզմի վրա:

ՉԱՎԵՐԺԱԿԱՆ ԽԱՂԱՂՈՒ ԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԵԶՐԱՓՈՒԿ ԶՈՂԱՆՆԵՐ

Աշխարհաքաղաքացիական իրավունքը պետք է սահմանափակված լինի համընդհանուր հյուրընկալության պայմաններով»: